



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 14

Р. М. ТОРОСЯН

РАННЕЗЕМЛЕДЕЛЬЧЕСКОЕ
ПОСЕЛЕНИЕ ТЕХУТА

(IV ТЫС. ДО Н. Э.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

№ 14

Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԹԵՂՈՒՏԻ ՎԱՂ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

(Մ. Թ. Ա. IV ՀԱԶԱՐԱՄՅԱԿ)

Աշխատությունը նվիրված է Քեղուտի էներջիթյան բնակավայրի պեղումներին: Ներկայացված են բնակելի և տնտեսական համակառույցները, տնտեսության և արհեստների առանձին ճյուղերը, որոնք զարգացել են արտադրող տնտեսության ձևավորման հետևանքով: Առանձին բաժնում ուսումնասիրվում են բնակավայրի շերտագրության և ժամանակագրության հարցերը, որոնք դիտված են Առաջավոր Ասիայի և Կովկասի նյութական մշակույթի պատմա-հնագիտական ֆոնի վրա:

ԷՆԵՈՒԹԻ ՊՐՈԲԼԵՄԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՑՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՐՄ

Նախնադարյան համայնական հասարակության զարգացման կարևորագույն փուլերից մեկը վաղ երկրագործական-անասնապահական տնտեսության և համապատասխան մշակույթի առաջացման ու զարգացման ժամանակաշրջանն է, որի ընթացքում Առաջավոր Ասիայի առավել զարգացած ցեղերն ու ցեղախմբերը հավաքչական, որսորդական թափառաշրջիկ կամ կիսանըստակյաց տնտեսությունից անցան նստակյաց երկրագործական արտադրող տնտեսաձևին:

Առաջավոր Ասիայի որոշակի շրջաններում կատարվող պատմական այս կարևորագույն փոփոխությունները (մ.թ.ա. VIII—VI հազարամյակներ) պայմանավորված էին ինչպես բնական էկոլոգիական բարենպաստ նախադրյալներով, այնպես էլ հասարակական զարգացման միջավայրում ստեղծված իրադրություններով:

Անցման փուլի (մ.թ.ա. VIII—VI հազարամյակներ) արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ասպարեզում կատարված առաջընթացը այնքան վիթխարի ու կարևոր էր, որ մեծավաստակ հնագետ Գ. Չայլդը, իսկ այնուհետև այլ հնագետներ այդ փուլը անվանեցին «Նորքարեզարյան հեղափոխություն»¹:

Տնտեսական մի կացութաձևից մյուսին անցնելը ներպարփակ պրոցես չէ, այն պայմանավորված է որոշակի նախադրյալներով, որոնք իրենց բնութթով, համապատասխանաբար, կարող են բաժանվել երկու խմբի՝ բնական և հասարակական:

Չարգացման այս ընթացքի մեջ կարևոր դեր է խաղում նախ և առաջ աշխարհագրական միջավայրը: Հարուստ բուսական և կենդանական աշխարհի առկայությունը հիմք է դառնում կուլտուրական բույսերի ու ընտանի կենդանիների առաջացման համար:

Հին աշխարհում կուլտուրականացվող բույսերի աճման համար շատ բարենպաստ պայմաններ կային հյուսիսային լայնության 20 և 40 աստիճանների միջև ընկած տարածություններում², որոնց համար բնորոշ է լեռնային լանդշաֆտի արտակարգ տարածվածությունը, կլիմայի շորությունը, բարձր և տևական ջերմաստիճանը, երկարատև վեգետատիվ ժամանակաշրջանի և լեռնային հովիտների բարեբեր ալյուվիալ հողերի առկայությունը:

¹ Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1955, էջ 167—268:

² Н. И. Вавилов, Центры происхождения культурных растений, Л., 1936, էջ 135—

Վայրի հացաբույսերի և ընտելացվող կենդանիների տեսակների գոյության պայմաններում, ինտենսիվ հավաքչական և որսորդական տնտեսության պահանջների, բույսերի ու կենդանիների նկատմամբ տաժաժ նախնական խնամքն ու հոգատարությունը ի վերջո հանգեցնում են երկրագործության ու անասնապահության սկզբնավորմանը:

Նախնադարյան համայնական հասարակության զարգացման շարժիչ ուժերի մեջ վճռական նշանակություն ունեն նյութական բարիքների արտադրության համար օգտագործվող աշխատանքային գործիքները, դրանց ֆունկցիոնալ տարբերությունները, բարդությունները, դրանք օգտագործելու բավարար գիտելիքները և փորձը: Պակաս կարևոր նշանակություն չունեին նաև զարգացման բարձր մակարդակի հասած որսորդական հավաքչական տնտեսությունը, բնակչության բավարար խտությունը, տոհմական հասարակության անդամների փոխհարաբերությունների որոշակի ձևերը և նրանց համապատասխանող տոհմ-ցեղային կազմակերպման միավորները:

Այսպիսի բնական և հասարակական գործոնների փոխադարձ ներգործությունը ի վերջո հանգեցնում է տնտեսության նոր տիպի առաջացմանը:

Հնագիտական բազմաթիվ փաստերով այժմ ապացուցված է, որ անցման երկարատև ընթացքը նախնադարյան հասարակության պատմության մեջ ամենից վաղ իրագործվել է Առաջավոր Ասիայի լայնածավալ տարածքում, որը իր ավարտին է հասնում մշակութային տարբեր օջախներում մ.թ.ա. VI—IV հազարամյակների ընթացքում³:

Ինչպես հասարակական կյանքի ամեն մի երևույթ, այնպես էլ նստակյաց արտադրող տնտեսության առաջացումն ունի սաղմնավորման, ձևավորման և ավարտի փուլեր, որոնց ներհատուկ տնտեսական և մշակութային օրինաչափությունները բացահայտվում են նշված ժամանակաշրջանի հուշարձանների հնագիտական, հնէակենդանաբանական, հնէաբուսաբանական և երկրի անցյալի բնությունն ու կլիման ուսումնասիրող բազմաթիվ գիտությունների համատեղ ջանքերով:

Արևմտյան Ասիայում երկրագործական տնտեսության ամենավաղ փուլերը ներկայացնող բնակատեղիները՝ Միջերկրականի արևելյան ափերին նատուֆյան մշակույթի հուշարձանները Պաղեստինում (Երիքոն, նախակերամիկական շերտ, էինան, էլ-վադի, Վադի-Ֆալահ), Իրաքում (Կարիմ-Շահիր, Մալեֆաթ, Զավի-Չեմի-Շանիդար, Զառոն, Սարաբ, Թեփե-Գուրան), Իրանում (Ալի-կոշը, Թեփե-Ասիաբը), Անատոլիայում (Չաթալ-հույուկի ստորին շերտերը), ցույց են տալիս, որ առաջավորասիական բնական միջավայրում նոր՝ երկրագործական տնտեսության կազմավորումը ունեցել է բազմակենտրոն բնույթ, և որ նրա օջախները մինչև մ.թ.ա. 6500—6000 թվականները զարգացել են գրեթե իրարից մեկուսացած⁴:

Այս հնավայրերի ուսումնասիրություններով բացահայտված է հավաքչական տնտեսությունից դեպի արտադրող տնտեսության անցման կայուն էվոլյուցիան⁵:

³ Հ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան, Հայաստանի էնեոլիթյան մշակույթի մեկնաբանման հարցի շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 3, էջ 52:

⁴ B. M. Masson, Средняя Азия и Древний Восток, М.—Л., 1964, էջ 116—120:

⁵ D. A. E. Garrod. The Natufian Culture: The life and Economy of a Mesolithic people in the Near East. Proceedings of the British Academy, v. XLIII, 1957, p. 216.

Տնտեսության հիմքում ունենալով երկրագործությունը և անասնապահությունը, հին աշխարհի տոհմերն ու ցեղերը ժամանակի կարճ հատվածում հասնում են տնտեսական-մշակութային նոր մակարդակի, որը դրսևորվում է Միջագետքում Թել-Հասսուննա⁶, Թել-Հալաֆ⁷, Միջերկրականի ափերին Ջուդեյդե, Թել-Կուրդու, Ռաս-Շամրա⁸, Յումուկ-Յեփե⁹ (ստորին շերտեր), Կենտրոնական Անատոլիայում Զաթալ-հույուկ, Հաջիլար¹⁰, Իրանում Սիալկ I—II¹¹, Միջին Ասիայում Ջեյթուն, Նամազգ I—II¹² և այլ հնավայրերի նյութերով:

Նշված բնակավայրերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. VII—V հազարամյակներում երկրագործությունը մտնում է իր զարգացման հունի մեջ, որի համար բնորոշ է պարզագույն ոռոգման առաջացումը: Վերջին հանգամանքը հաստատվում է նրանով, որ այս դարաշրջանի հուշարձանները հայտնաբերված են արհեստական ոռոգման կարիք ունեցող վայրերում՝ Հյուսիսային Միջագետքի նախալեռնային և տափաստանային շրջաններում, Անտիոքի դաշտում, Կենտրոնական Անատոլիայի Կոնիայի դաշտում:

Հենց այս շրջաններն էլ մեծ առավելություններ ունեին անասնապահության զարգացման համար, որը ապահովում էր մսեղեն ու կաթնեղեն սննդի, ինչպես նաև նոր զարգացող արհեստների որոշակի ճյուղերի հումքի պահանջները:

Հատկապես նկատելի են խոշոր եղջերավոր անասնապահության բնագավառում կատարված տեղաշարժերը:

Այս փուլում կայուն նստակյաց երկրագործական-անասնապահական տնտեսության կենտրոնները ներկայանում են որպես խոշոր բազմաշերտ բնակատեղ-բլուրներ, որոնց ստորին հորիզոններին բնորոշ են առանձին կառուցված բնակարանները, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանի շերտերին՝ բազմանդամ, մեծ ընտանիքներին պատկանող բազմասենյակ շինարարական

K. M. Kenyon. Jericho and its setting in Near Eastern History, Antiquity, No 120, p 184—195, 1956. Earliest Jericho, Antiquity, No 129, 1959. R. J. Braidwood, B. Howe and oth. Prehistoric investigations in Iraq! Kurdistan, Studies Oriental Civilizations, No 31, Chicago, 1960. R. J. Braidwood and L. S. Braidwood, Excavations in the Plain of Antioch, I. The Earlier Assemblages' Phases. A-J-OLP, LXI, 1960: J. Mellaart, Earliest Civilizations of the Near East: p 18—46, London, 1965: L. Perkins; The Comparative Archeology of Early Mesopotamia. Chicago, 1960.

⁶ S. Lloyd. F. Safar. Tell-Hassuna, Excavations by the Iraq! Government Directorate General of Antiquities in 1943 and 1944. Journal of Near Eastern Studies vol. IV, No4 Chicago, 1945, p 255—289.

⁷ V. Oppenheim. Der Tell-Halaf, Berlin, 1943.

⁸ R. J. Braidwood and L. S. Braidwood. OLP. R. J. Braidwood. The Earliest Village Materials of Syro-Cilicia. P: P, S. 1965 p 72—75.

⁹ J. Garstang. Prehistoric Mersin. Oxford, 1953.

¹⁰ J. Mellaart. Excavations at Catal Hüyük, First, Second and Third Preliminary reports. „Anatolian Studies“, XII, p 41—66, 1962, XIII p 43—104, 1963, XIV p 39—120, 1964; J. Mellaart. „Excavations at Hacilar, First, Second and Third, Fourth Preliminary Reports“. „Anatolian Studies“, VIII, p. 127—156, IX, p 51—65, 1959, X, p. 81—104, 1960, XI p. 39—143, 1961.

¹¹ R. Ghirshman, Foules de Stalk, pres de Koshan, Paris, 1938.

¹² B. M. Массон, Новые раскопки на Джейтуне и Кара-тепе. СА, 1962, № 3
* հույնի Средняя Азия и Древний Восток, էջ 17—33.

համալիրները, որոնք երբեմն շրջափակված են պաշտպանական կառույցով (Երիբոն¹³, Հաջիլար¹⁴):

Նորքարեղարյան վաղ փուլի կոպիտ, հասարակ խեցեղենը շատ շուտով իր տեղը զիջում է խնամքով պատրաստված շքեղ և գունազարդ տեսակներին, որոնք վկայում են նախնադարյան խեցեգործական արհեստի մեջ ձեռք բերած բարձր վարպետությունը և թրծման հատուկ վառարանների առաջացումը: Մեծ առաջընթաց են ապրում նաև արհեստի այլ ճյուղերը՝ խսիրագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը և այլն:

Նախնադարյան կարգերի մշակութային-տնտեսական-հասարակական առաջընթացը նպաստում է նաև բարդ համայնական շինությունների և սրբատեղիների հանդես գալուն (Չաթալ-հույուկ¹⁵, Օբեյդ-էրիդու XIV¹⁶): Այս դարաշրջանը աչքի է ընկնում նաև հասարակական կյանքի բարդացմամբ և հարեվան մշակութային շրջանների հետ փոխանակային կապերի ինտենսիվացմամբ:

Տնտեսական կյանքի վերը հիշատակված հասույթների հիման վրա վերջնականապես ձևավորվում են վաղ երկրագործական տնտեսության հիմնական ճյուղերը և արհեստների որոշակի բնագավառները:

Նախնադարյան տեխնիկայի ասպարեզում այս շրջանի ամենանշանակալից հայտնագործությունների թվին են պատկանում մետաղահանքի մշակումը, մետաղաձուլության առաջացումը և անիվի օգտագործումը:

Երկրագործության, անասնապահության, մետաղամշակության և այլ արհեստների համընդհանուր զարգացումը ի վերջո հասցնում է ինչքի դիֆերենցիայի ու հասարակական հարաբերությունների է՛լ ավելի բարդացմանը, որի հիման վրա էլ Եգիպտոսում և Միջագետքում համակողմանի նախադրյալներ են ստեղծվում վաղ դինաստիական հարաբերությունների սաղմնավորման և ապա դասակարգային պետությունների ձևավորման համար: Եգիպտոսում մ.թ.ա. IV, իսկ Միջագետքում III հազարամյակներում առաջ են գալիս վաղ պետական կազմավորումներ: Առաջավոր Ասիայի մնացյալ շրջաններում շարունակվում է նախնադարյան զարգացման ավանդական ընթացքը:

Ինչպես վերը նշվեց, Առաջավոր Ասիայում երկրագործական-անասնապահական տնտեսության առաջացումն ու զարգացումը բազմակենտրոն բնույթ է կրում, որի հիմնական օջախները տեղավորված են Միջերկրականի արևելյան ափին, Կենտրոնական Փոքր Ասիայում, Տիգրիս և Եփրատ գետերի վերին հոսանքներում, Ջագրոսի արևմտյան լանջերին, Պարսկական սարահարթի հյուսիս-արևմտյան շրջաններում և այլուր:

Մշակութային զարգացման նկարագրված փուլերը ներկայացնող օջախները համարյա բոլոր կողմերից շրջափակում են Հայկական լեռնաշխարհը, որն իր բնակլիմայական առանձնահատկություններով առանձնապես շէր տարբերվում վերը հիշատակված տարածքներից: Հայկական լեռնաշխարհի լայնա-

¹³ K. M. Kenyon, Earliest Jericho, Antiquity, vol, XXXIII, No129, p 5—9.

¹⁴ J. Mellaart, Excavations at Hacilar, Anat. St. v: X, p 98—104.

¹⁵ J. Mellaart, Excavations at Catal Hüyük. Anat. St. v. XIII, p 43—104; 1963 and Anat. St. v. XIV, p 39—120, 1964.

¹⁶ E. Porada, in W. Ehrich's Book, Chronologies in Old World Archeology, p 149, London, 1965.

ծավալ տարածքի վրա վերջին տարիներս հայտնաբերվել ու մասամբ հետախուզվել են երկրագործական-անասնապահական տնտեսության առաջացումը, զարգացումն ու ավարտը ներկայացնող մի շարք բնակատեղիներ, որոնց նախնական ուսումնասիրությունները, թեպետ սակավ, այնուամենայնիվ, նոր նյութ են տալիս պնդելու, որ մեր երկիրը անցել է նախնադարյան արտադրող տնտեսության զարգացման առաջավորասիական ուղիներով:

Երկրագործական-անասնապահական կյանքի առավել զարգացած փուլերը ներկայացնող հուշարձանները ծածկում են լեոնաշխարհի գետահովիտներն ու դաշտավայրերը բավականին խիտ ցանցով: Նրանք հաստատում են, որ բացի Առաջավոր Ասիայի վերը հիշատակված շրջաններից, Հայաստանը ևս պատմական հեռավոր անցյալում զբաղեցված է եղել երկրագործ-անասնապահ ցեղերով, որոնց թողած նյութական արտադրության մնացորդների ուսումնասիրությունը մեծապես օգնում է առաջավորասիական մի խոշոր, ինքնուրույն մշակութային օջախի զարգացման պատմական ընդհանուր օրինաչափությունների և ներհատուկ գործոնների բացահայտմանը:

Արարատյան հովտում Կղզյակ-Բլուր, Մաշտոցի բլուր, Տերտերի ձոր¹⁷ վաղ երկրագործական ժամանակաշրջանին վերաբերող բնակատեղիների սակավ հրատարակված հետաքրքիր ու արժեքավոր նյութերի, կանոնավոր համակարգման և որոշակի շերտագրական հատկացումների շինթարկվելու հետևանքով, առայժմ հնարավոր չէ ուրվագծել Հայկական լեոնաշխարհի վաղ երկրագործական մշակույթի քիչ թե շատ մանրամասն ու կապակցված պատկերը:

Արևմտյան Հայաստանում (բացի Վանի ավազանից) հայտնաբերված նյութերը մակերեսից են հավաքված և լավագույն դեպքում կարող են ունենալ սոսկ ուղեցուցային նշանակություն:

Չնայած նման վիճակին, մ.թ.ա. VI—IV հազարամյակների հնավայրերի նյութերը որոշ հնարավորություն են տալիս լեոնաշխարհի նորքարեդարյան և հետագայում նաև պղնձեքարեդարյան մշակույթի տեղի ու դերի պարզաբանման գործում:

Վանա լճի ափին՝ Շամիրամալթիի, Խարբերդ-Մալաթիայի շրջաններում՝ Հինձորի, Արգուվանի, Քյուլուկի, Հեքիմխանի, Արարատյան դաշտում նախկինում հայտնի և մեր կողմից հետախուզված Մաղկունքի և Վ. Խաթունարխի¹⁸ բնակատեղիների նյութերի ուսումնասիրությունները ակնառու կերպով ցույց են տալիս, որ լեոնաշխարհի վաղ երկրագործական տնտեսության զարգացման ընթացքը իր տարբեր արտահայտություններով նմանվում է հին արևելքի ու Կովկասի նախնադարյան զարգացման համապատասխան աստիճաններին:

Այս մասին են վկայում հյուսիս միջագետքյան Հասսուննա, վաղ-Հալաֆյան բնորոշ խեցեղենի ու աշխատանքային գործիքների որոշակի տեսակների հայտնաբերումը Հայաստանի հնավայրերի համապատասխան շերտերում (քարե բրիչներ, ցլեփված քարե գործիքներ և այլն): Բացի այս, Վ. Խաթունարխի, Մաղկունքի նյութերը ու Շամիրամալթիի շերտագրական տարբերությունները դրսևորում են տնտեսական զարգացման փուլերի փոխանցման այնպիսի

¹⁷ Ս. Սարգսյան, նախնադարյան համայնական հասարակարգը Հայաստանում, Երևան, 1967, էջ 138—150:

¹⁸ Վ. Խաթունարխի և Մաղկունքի նյութերը պահվում են էջմիածնի զավառագիտական թանգարանում:

առանձնահատկություններ, որոնք դիտված են Կիլիկիայում, Անտիոքի դաշտում ու Հյուսիսային Միջագետքում: Այս նյութերը օգնում են նաև տեղական մշակույթի յուրահատկությունների ճանաչմանը, որի հետևանքով ավելի պարզ է դառնում Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական շրջաններից մեկի տնտեսական մշակութային ու հասարակական կյանքի պատկերը:

Հայկական լեռնաշխարհի հնավայրերի ուսումնասիրությունը, բազմաշերտ բլուր բնակատեղիների շերտագրական տարբերությունների (Շամիրամալթի) առկայությունը հիմք են տալիս մտածելու, որ այստեղ նորքարեդարյան տնտեսության հիման վրա բարձրանում էին պղնձեքարեդարյան ժամանակաշրջանի տնտեսությունն ու մշակույթը, ինչպես այդ դիտվում է առաջավորասիական մի շարք հուշարձաններում:

* * *

Երկրագործական-անասնապահական տնտեսության ու մշակույթի զարգացման պղնձեքարեդարյան (էնեոլիթյան) կոչված փուլը ընդգրկում է նախնադարյան պատմության նորքարեդարյան և վաղ բրոնզի դարաշրջանների միջև ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում իրենց վերջնական կազմավորման են հասնում նստակյաց վաղ երկրագործությունն ու անասնապահությունը, սկսվում և ձևավորվում է մետաղամշակությունը: Հասարակական երևույթների առաջընթացի տեսակետից այս դարաշրջանը նշանավորվում է հայրիշխանական հարաբերությունների ձևավորմամբ և խոշոր էթնիկական միավորումների առաջացմամբ:

Արտադրող տնտեսության նախորդ փուլերում փորձով ու երևույթների ճանաչման շնորհիվ հայտնագործված հողագործության պարզունակ ձևերի փոխարեն, պղնձեքարեդարյան էպոխայում լայն թափ է առնում արհեստական ոռոգման վրա հիմնված բրչային երկրագործությունը, որը հսկայական ազդակ է դառնում հասարակության անդամներին սննդի կայուն պաշարով ապահովելու գործում:

Շոշափելի են նաև անասնապահության բնագավառում կատարված փոփոխությունները: Եթե նախորդ փուլերում անասնապահական տնտեսության մեջ գերակշռում էին մանր եղջերավոր կենդանիները, իսկ հասարակության անդամների մսի պահանջի պակասը լրացվում էր որսով, ապա այստեղ խոշոր ու մանր ընտանի կենդանիների ավելացման հետևանքով որսորդությունը ինչոր չափով կորցնում է իր նախկին նշանակությունը: Կայուն զարգացման ուղի բռնած անասնապահությունը ապահովում է տեղաբնակների մսի, կաթի, բրդի, կաշվի և այլ մթերքների պահանջները:

Տնտեսության վերը նշված ճյուղերի զարգացման հետ միասին հանդես է գալիս մի նոր բնագավառ՝ մետաղամշակությունը, որով սկիզբ է դրվում տնտեսական ու մշակութային կյանքի այն մեծ առաջընթացին, որը կուլտուր-պատմական տարբեր տարածքներում, որոշակի հասարակական-տրնտեսական պայմանների առկայությամբ հիմք է դառնում քաղաքակրթության առաջացման համար:

Պղնձեքարեդարյան մշակույթի զարգացումը տարբեր կուլտուր-պատմական շրջաններում ընթացել է ոչ միատեսակ, սակայն որպես նախնադարյան հասարակության պատմության զարգացման այս փուլին հատուկ երևույթ, ամենուրեք այն ուղեկցվել է տնտեսական ու հասարակական կյանքի նման

կամ զուգահեռ երևույթներով: Այս մասին են վկայում Սովետական Միության հարավային շրջաններում ու Առաջավոր Ասիայում լայն տարածում գտած այնպիսի պղնձեքարեդարյան մշակույթներ, ինչպիսիք են Միջին Ասիայում՝ Անատույանը, Ուկրաինայում, Մոլդավիայում՝ վաղ Տրիպոլյանը, Հյուսիսային Կովկասում՝ Սերոբեկովյանը, Հյուսիսային Միջագետքում՝ Հալաֆյան, Օբեյդյան մշակույթները և այլն:

Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում վերջին տարիներս կատարված հնագիտական հայտնագործությունների միջոցով ապացուցվում է, որ մ.թ.ա. III հազարամյակի «Քուռ-Արաքսյան էնեոլիթ» կոչված մշակույթը իրականում արտացոլում է ոչ թե պղնձեքարեդարյան փուլի, այլ վաղ բրոնզի դարաշրջանի պատմական զարգացման ընթացքը¹⁹:

* * *

Հայկական լեռնաշխարհում «Քուռ-Արաքսյան էնեոլիթ» -ին նախորդող ժամանակաշրջանի ուսումնասիրությունը երկար պատմություն չունի. նրա տարածման սահմանների, բնորոշ առանձնահատկությունների մասին եղած գիտելիքները կուտակվել են բացարձակապես վերջին տասնամյակում՝ այս տերիտորիայի վրա բացված նոր և չափազանց հետաքրքիր մի քանի բնակատեղիների ուսումնասիրություններով:

Հավաքված նյութերի ներկա վիճակը անշուշտ չի կարող սպառել կերպով ներկայացնել Հայաստանի պղնձեքարեդարի տնտեսության, մշակույթի ու հասարակական երևույթների պատկերը, սակայն նրանցով կարելի է նախնական պատկերացում կազմել պատմական այդ մեծ դարաշրջանի մշակույթի ակունքների, զարգացման ընթացքի ու նրա ընդերքում սկիզբ առնող նոր մշակութային և հասարակական երևույթների մասին, որոնք հետագայում իրենց զարգացումն են ապրում վաղ բրոնզի դարաշրջանում:

Պղնձեքարեդարյան ժամանակաշրջանի մշակույթի հուշարձանները Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված են դաշտերում և գետահովիտներում, որոնք հանդես են գալիս ինչպես բազմաշերտ բլուր-բնակատեղիներում, այնպես էլ առանձին միաշերտ բնակավայրերի ձևով:

Արարատյան հովտում, Նախիջևանի Քյուլ-թափա I, Թեղուտի, Աղջաղալա, Աղստև գետի ափին Շոմու-թեփե, Մողան-Ղարաբաղի տափաստանի, Վանի ավազանում, Շամիրամալթիի, Խարբեր-Մալաթիայի շրջաններում Քյուլուկի, Հինձորի, Իսակի, Արգովանի, ինչպես նաև Մշո դաշտում հայտնաբերված հնավայրերի նյութական արտադրության մնացորդների հավաքածուները բավարար նյութ են տալիս լեռնաշխարհի պղնձեքարեդարյան մշակույթի տարածման սահմանների, տեղական ներքին առանձնահատկությունների, այլ մշակութային տարածքների զարգացման պղնձեքարեդարյան փուլի հետ ունեցած ընդհանրությունների և Առաջավոր Ասիայի կենտրոնների հետ եղած կապերի նախնական ճանաչման համար:

Հնավայրերի բնա-աշխարհագրական տեղաբաշխումը Արարատյան դաշտում և այլուր գիտվող հին գետահունների ցանցի վրա հիմք է տալիս պնդե-

¹⁹ Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 24—27. Է. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, 1967, Երևան: С. Burney, նշվ. աշխ., էջ 167—174; W. Ehrlich, նշվ. աշխ., էջ 117:

լու, որ այստեղ ևս երկրագործությունը զարգացել է գերազանցապես արհեստական ոռոգման միջոցով: Երկրագործական գործիքների որոշ տիպերի (հարվածող ոսկրե ու քարե բրիչներ, ծանրոց կախիչներ) առկայությունը կարծես կապում է արհեստական ոռոգվող հողատարածությունների մշակման հետ: Պատահական չէ, որ այս դարաշրջանի բնակավայրերում հանդիպում են ցորենի ու գարու կուլտուրականացած տեսակներ (Նախիջևանի Քյուլ-թափա, Շոմու-թեփե, Թեղուտի բնակատեղի):

Որոշ բնակավայրերում (Շոմու-թեփե, Թեղուտ) գտնված հացահատիկների մնացորդները ածխացած շեն և դժվարությամբ են ենթարկվում տեսակային դասակարգման: Սակայն նրանց արտակարգ առատ գոյությունը հաստատվում է օգտագործված աղյուսների կավաշաղախի մեջ փրած մնացորդների առկայությամբ:

Թե ինչ եղանակով է կատարվել ցանքը, որոշակի ասել առայժմ դժվար է, սակայն ելնելով մեր նյութերից ու Շենգավթի պեղումներով հայտնաբերված ցորենի ու գարու մնացորդներից, թվում է, որ պղնձեքարեդարում ևս վաղ բրոնզի ժամանակաշրջանի նման կատարվել է հացահատիկի խառը ցանք: Նստակյաց երկրագործական կյանքի հաստատ ապացույցներ են նաև երկրագործական մթերքների մշակմանը, պահեստավորմանը ծառայող աշխատանքային գործիքները, պահեստ-հորերի ու մեծ կարասների առկայությունը Թեղուտում, Շամիրամալթիում, Շոմու-թեփեում, Նախիջևանի Քյուլ-թափայում: Անշուշտ լիմանային պարզունակ երկրագործությունը չէր կարող բավարարել տնտեսության զարգացման պղնձեքարեդարյան մակարդակի վրա կանգնած տեղաբնիկների սննդամթերքի պահանջները:

Պղնձեքարեդարյան անտեսության ամենաբնորոշ կողմը, որով և նա տարբերվում է իր նախորդ փուլերից, մետաղագործության սկզբնավորումն ու զարգացումն է: Առաջավոր Ասիայում կատարված հնագույն մետաղների գյուտերը վկայում են, որ մետաղամշակությունը իր վաղագույն արտահայտությունն ունի դեռևս նորքարեդարյան բնակատեղիների վաղ շերտերում (Չաթալ-հույուկ²⁰, Չայոնու թեփեզի²¹):

Հայկական լեռնաշխարհի մետաղահանքերով հարուստ շրջանները դուրս չեն մնացել մետաղամշակության առաջավորասիական ընդհանուր զարգացումից: Պատահական չէ, որ Հայաստանի հնավայրերի դեռևս շատ քիչ շոշափված շերտերը հնագույն մետաղների այնպիսի օրինակներ են տալիս, որոնք վկայում են նախնադարյան տնտեսության այդ կարևոր ճյուղի մասին:

Թեղուտում, Շամիրամալթիում, Նախիջևանի Քյուլ-թափա I-ում հայտնաբերված մետաղյա առարկաներով ու նրանց ուսումնասիրության արդյունքներով հաստատվում է, որ Հայաստանում պղնձի մշակումը ունեցել է ավելի վաղ փուլեր: Մ.թ.ա. IV հազարամյակում արդեն գոյություն է ունեցել մետաղածուլություն, որն արդեն իսկական մետաղամշակության սկիզբն է:

²⁰ J. Meilaart, Excavations at Catal Hüyük; Anat. St. v. XIV, 1964.

²¹ Բնակատեղիի դաշտային հետազոտությունները կատարել է Ռ. Զ. Բրայդվորդը, սակայն արդյունքները դեռևս լրիվ չեն հրատարակված, ուշագրավ են ուսումնասիրողի անհատական դիտարկումները և մինչխեցեգործական շերտերի համար ստացված ռադիո-ածխածնային մեթոդով թվագրման արդյունքները: Այդ շերտի գոյության համար ստացված է 8500 տարի մ.թ.ա.: Բնակավայրի մետաղե նյութերին անդրադարձել է նաև Ե. Չերնիխը, իր «Первые металлы планеты» հոդվածում («Наука и жизнь», 1968, № 7, էջ 33—37):

Թեղուտի հնավայրի մետաղների բաղադրության անալիզները ապացուցում են, որ մ.թ.ա. IV հազարամյակում Արարատյան դաշտի տեղաբնակները արդեն յուրացրել էին մկնդեղային բրոնզի ստացման այդ ժամանակի համար շատ բարդ պրոցեսը:

Տնտեսության վերը հիշատակված ճյուղերին զուգահեռ Հայաստանում զարգանում է նաև կավագործությունը, ջուլհակությունը, խսիրագործությունը և այլն: Վերջինների ապացույցները ներկայանում են կավամանների վրա եղած գործվածքի ու հյուսվածքի դաջվածքների ձևով:

Թեղուտում, Նախիջևանի Քյուլ-թափայում, Աղստևի հովտում բացված բնակարանների մնացորդները պատկանում են կլոր հատակագծով աղյուսաշեն և կավաշեն փոքր տրամագիծ ունեցող առանձին կացարանների, որոնց կից կառուցված են եղել նույնպես կլոր հատակագծով պահեստ-հորերը: Խեցեղեն առարկաների համար բնորոշ է հարդախառն և ավազախառն կավաշաղախը, որը թրծելուց հետո ստացել է դեղին, կարմիր, սրճագույն երանգներ: Նրանց վրա երբեմն առկա են զունազարդման հետքեր, որոնք արված են կոկիչով կամ վրձինով:

Լեռնաշխարհի պղնձեքարեդարյան ժամանակաշրջանի բնիկները փոխանակային կապերի մեջ են եղել Առաջավոր Ասիայի ու Հալաֆյան և հյուսիսօրբեյդյան մշակութային կենտրոնների հետ:

Դրանց արգասիքն է Թեղուտում, Վ. Խաթունարիսի բլուր-բնակատեղիում, Քյուլ-թափայում, Շամիրամալթիում, Խարբերդ-Մալաթիայի շրջաններում միջագետքյան խեցեղենի նմուշների առկայությունը:

Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզեդարյան «Քուռ-Արաքսյան էնեոլիթ»-ին նախորդած ժամանակաշրջանի մշակույթի ուսումնասիրությունը վաղուց չի սկսված: Արարատյան դաշտում առաջին կանոնավոր ուսումնասիրության ենթարկված հուշարձաններից մեկը Նախիջևանի Քյուլ-թափա բնակատեղիի I շերտն է, որն ունի 8,3 մ հզորություն:

Անդրկովկասի անցյալի մշակույթի այդ հոյակապ հնավայրում բացված շինարարական մնացորդները, աշխատանքային գործիքներն ու նյութական արտադրության այլ մնացորդները ցույց տվեցին, որ այստեղ մ.թ.ա. III հազարամյակի մշակույթին նախորդել է մեկ այլ, մինչ այդ անհայտ մշակույթ:

Պղնձեքարեդարյան ժամանակաշրջանի ուսումնասիրության ընթացքում բացված հնավայրերից ուշագրավ են նաև պատմական Գանձակի շրջանում, Ղազախ քաղաքից 3 կմ արևմուտք, Աղստև գետի ձախ ափին 1958 թ. հայտնաբերված բնակավայրերը, որոնց ստորին հորիզոնների կացարաններն ու նրանցում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները, սերտ համադրություններ ունենալով Նախիջևանի Քյուլ-թափայի I մշակույթի հետ, որոշակիորեն նպաստում են պղնձեքարեդարյան տնտեսության ճանաչմանը²²:

Առանձնապես ուշագրավ են ՍՍՀՄ ԳԱ Հնագիտության ինստիտուտի և Ադրբեյջանական ՍՍՀ Պատմության ինստիտուտի միացյալ հնագիտական արշավախմբի աշխատանքները Մուղան-Ղարաբաղի տափաստանում: Աշխա-

²² И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, Акстафачайские поселения близ города Казах, СА, 1962, № 4, էջ 159—169.

տանքների ընթացքում հայտնաբերվել են շուրջ 8 բլուր-բնակատեղիներ, որոնց մակերեսից հավաքած նյութերը արշավախմբի ղեկավար, մեծավաստակ հնագետ Ա. Ա. Իեսսենը վերագրել է Քուռ-Արաքսյան մշակույթին նախորդող ժամանակաշրջանին²³:

Մտավորապես նույն ժամանակաշրջանին պատկանող հետաքրքիր հնավայրեր են հայտնաբերված լեռնաշխարհի հյուսիսային սահմաններում (Շուլավերի մոտ), որոնց ուսումնասիրությունները կատարել է Վրաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի արշավախումբը²⁴:

Հայկական լեռնաշխարհում ուսումնասիրության առարկա դարձած ժամանակաշրջանի լավագույն հուշարձաններից է Վանա լճի արևելյան ափին գտնվող Շամիրամալթիի (Տիլկի-թեփե) բազմաշերտ բլուր-բնակատեղին: Նրա հնագիտական արժեքը ոչ միայն այն է, որ նա լեռնաշխարհում ամենից վաղ հայտնաբերված և համեմատաբար լավ ուսումնասիրվածն է, այլև այն, որ նա կարող է լինել Հայաստանի պղնձեքարեդարյան մշակույթի տարբեր փուլերի տնտեսության ներքին ու արտաքին աշխարհի հետ ունեցած մշակութային կապերը դրսևորող հուշարձան:

Բնակավայրի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս անցյալ դարի վերջերին, գերմանացի գիտնական Վ. Բելթի կողմից: Նա իր հավաքած նյութերը վերագրում է նորքարեդարին²⁵:

Վ. Ս. Զեննին 1927 թ. Բեռլինի Թանգարանում եղած Շամիրամալթիի նյութերի վրա նոր ուսումնասիրություն է կատարում, որտեղ նա Շամիրամալթիի մշակույթը և հատկապես նրա վերին շերտը վերագրում է վաղ խեթական ժամանակաշրջանին²⁶:

Ավելի ուշ, 1931 թ., Խ. Սամվելյանը լայն կերպով օգտագործելով Զեննիի հոգվածը, բնակավայրի նյութերը դասակարգելով ըստ տեսակների, ամբողջ հնավայրը վերագրում է նորքարեդարի ժամանակաշրջանին:

Շամիրամալթին հետախուզության են ենթարկել նաև Ե. Բ. Ռեյլին²⁷, Կ. Բիտտելը²⁸: Վերջին տարիներս հնավայրի մշակույթի շերտագրական հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են Չ. Բարնեյը²⁹, Լ. Պերկինսը³⁰, Բրայդվուդը³¹, Մելլարտը³², ինչպես նաև սովետական ուսումնասիրողներ Ա. Ա. Իեսսենը³³, Մ. Մ. Մասսոնը³⁴, Մարտիրոսյանը³⁵ և այլք:

²³ А. А. Иессен, Из исторического прошлого Милско-Карабахской степи, МИА, № 125, 1965, էջ 10—17.

²⁴ К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Л., 1970, стр. 21—34.

²⁵ W. Belck, Zeitschrift fur Ethnologie, Verhandlugen, 1902.

²⁶ V. A. Jeuny, Schamiramalti. Prahis. Zeitschrift, XIX էջ, 289—304.

²⁷ E. B. Reily, Tilkitepidereki K. Kazilar, 1937. Turk tarich. IV, 1940, էջ 145—178.

²⁸ K. Bittel, Archeologische Funda aus der Turkey. 1934, 1938, 1939.

²⁹ C. Burney, նշվ. աշխ., էջ 181.

³⁰ L. Perkins. CA. E. M., էջ 43.

³¹ R. Braidwood and Howe. նշվ. աշխ., էջ 33—34.

³² J. Mellaart, Earliest Civilizations... էջ 125.

³³ А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV—III тыс. до н. э., Краткие сообщения, № 93, էջ 10—13.

³⁴ В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, էջ 238—240.

³⁵ Հ. Մարտիրոսյան, Ռ. Քարսյան, նշվ. աշխ., էջ 56:

Վերջնական ուսումնասիրություններով այժմ արդեն լուծված են Շամիրամալթիի մշակույթի շերտագրական ու հնագիտական հավաքածուի ամբողջական պատկանելության հարցերը:

Հայկական լեոնաշխարհի արևմտյան հատվածում պղնձեքարեդարյան բնակատեղիներ է հայտնաբերել նաև Անկարայի բրիտանական հնագիտական ինստիտուտի երթուղային արշավախումբը, որը ղեկավարել է Չ. Բարնեյը³⁶: Արշավախմբի հայտնաբերած բնակատեղիները տեղավորված են Խարբերդ-Մալաթիայի շրջաններում ու Մշո դաշտում: Հատկանշական է, որ ինչպես այս ուսումնասիրության, այնպես էլ Շամիրամալթիի ու Արարատյան դաշտի բնակատեղիներից հավաքված հնագիտական հավաքածուների մեջ գոյություն ունեն հյուսիսմիջագետքյան խեցեղենի նմուշներ, որոնք արգասիք են այդ շրջանների հետ լեոնաշխարհի բնիկների ունեցած կապերի:

Առաջադրված այն թեզը, որ Տավրոսի լեոնաշղթան բնական պատեն է եղել Միջագետքի ու լեոնաշխարհի մշակույթների միջև, նորահայտ նյութերով չի հաստատվում: Ճիշտ է Չ. Բարնեյը, որ Հալաֆյան, Օբեյդյան մշակույթների նմուշների առկայությունը համարում է Հայկական լեոնաշխարհի գետահովիտներով իրականացած կապերի արդյունք:

Հայկական լեոնաշխարհի մ.թ.ա. IV հազարամյակի մշակույթի մեջ հարդախառն խեցեղենի և Իրանական սարահարթի հուշարձաններում հանդիպող խեցեղենի տեխնիկական նմանությունների վրա հենված այն տեսակետը, որ IV հազարամյակում լեոնաշխարհը ծածկում են Իրանական սարահարթի ցեղերը³⁷, ճիշտ չէ: Ավելի հավանական է թվում, որ հարդախառն խեցեղեն պատրաստելու տեխնիկական հնարանքը լեոնաշխարհ է թափանցել այն վայրերով ու այն ճանապարհներով, որտեղով ավելի վաղ ժամանակաշրջաններում ներթափանցել է Հալաֆյան մշակույթը:

Հետևելով լեոնաշխարհում հայտնաբերված պղնձեքարեդարյան մշակույթի հնավայրերի աշխարհագրական տարածվածությանը, մենք տեսնում ենք, որ նրանք տեղավորված են լեոնաշխարհի այն մասում, որտեղ ամենից բարենպաստ պայմաններ կային վաղ երկրագործական տնտեսության համար: Նրա սահմանները մոտավորապես համընկնում են այն տարածքի հետ, որը մ.թ.ա. III հազարամյակում ծածկվում է վաղբրոնզեդարյան մշակույթով:

Հայաստանի պղնձեքարեդարյան մշակույթի ուսումնասիրության գործին մեծապես նպաստում են ոչ միայն բուն հայաստանյան հնավայրերի նյութերը, այլև լեոնաշխարհը շրջապատող մշակութային տարածքներում հայտնաբերված Չաթալ-հուլուկ³⁸, Հաջիլար³⁹, Սակչի-Գյոզ⁴⁰ Անատոլիայում, Յումուկ-թեփեն⁴¹ Կիլիկիայում⁴¹, Թաս-Շամրա, Ջերեկ-1, Թաբարաէլ-համամ⁴², Երիբոն⁴³, Պաղեստինում, Թեփե-Սիալկ-III⁴⁴, Գեոյ-թեփե-M⁴⁵, Պիչիլի-թեփե՝

³⁶ C. Burney, նշվ. աշխ. էջ 159, 161:

³⁷ A. A. Нессен, Кавказ и Древний Восток в IV—III тыс. до н. э. КСИА. вып. 93, 1963, էջ 13.

³⁸ J. Mellaart, նշվ. աշխ., Anat. St. v. XII—XIII—XIV.

³⁹ Նույնի, նշվ. աշխ., Anat. St. v. IX—X—XI.

⁴⁰ K. Bittel, Prehistorische Forschungen in Klen Asin, Istanbul, 1936, էջ 10—12:

⁴¹ J. Garstang, Prehistoris Mersin; Oxford, 1953.

⁴² R. J. Braidwood, and L. S. Braidwood, OIP V LXI.

⁴³ K. Kenyon, Esrliest Jericho, Antiquity. No126, 1959.

⁴⁴ R. Ghirshman, Foules de Stalk, v. I, Paris, 1938.

⁴⁵ B. Brown, Excavations in Azarbaijae, London, 1948.

Իրանում⁴⁶, Հասսունան⁴⁷, Թել-Հալաֆը⁴⁸, Թեփե-Գավրան՝ Իրաքում⁴⁹, ինչպես նաև Հյուսիս-արևմտյան Կովկասի, Ադլերի շրջանի⁵⁰ ու Միջին Ասիայի Ջեյթուն⁵¹, Գեոկսուրի Օազիսի հնավայրերը⁵², Յարիմ-Թեփեն՝ Իրաքում⁵³:

Սրանք իրենց մշակութային դրսևորումներով չկրկնելով միմյանց, ներկայացնում են կուլտուր-տնտեսական միևնույն մակարդակի տարբեր հուշարձաններ:

Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի նյութական արտադրության տարբեր ճյուղերի արգասիքների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս ծավալուն միջավայրում զատորոշվող մշակութային մեծ օջախների տնտեսական զարգացման տենդենցները, ուղիներն ու մակարդակը ընդհանուր են, շնայած որ մշակութային արտահայտության ձևերը որոշակիորեն սահմանազատվում են իրարից:

Ուսումնասիրողները գտնում են, որ միջագետքյան տեքստերում հիշատակված Խուրրի-Սուբարիների ցեղերը մ.թ.ա. IV—III հազարամյակներում զբաղեցնում էին Փոքր Ասիան, Հայաստանը և Հյուսիսային Միջագետքը, քանի որ խուրրիական տեղանունները, անձնանուններն ու այլ բառեր տարածված են եղել նշված երկրներին վերաբերող գրավոր աղբյուրներում⁵⁴:

Առաջավոր Ասիայում խուրրիական ցեղերի՝ IV—II հազարամյակներում տարածման սահմանների մասին են վկայում նաև սովետական արևելագետների վերջին տարիների ուսումնասիրությունները, որոնցով նախնականորեն ուրվագծվում է խուրրիական տեղանունների և այլ բառերի տարածման սահմանները, որոնք մոտավորապես համընկնում են Հալաֆյան մշակույթի սփռվածությանը⁵⁵:

Այս փաստերը, թեև ոչ բավարար, բայց և այնպես որոշ նախադրյալներ են տալիս մտածելու, որ լեռնաշխարհում խուրրիական տեղանուններն ու Հալաֆյան մշակույթի հուշարձանների գոյությունը արդյունք են մի կողմից Հայաստանի ու Հյուսիսային Միջագետքի բնիկների որոշակի խմբերի էթնիկական միասնության, մյուս կողմից՝ լեռնաշխարհի վաղ երկրագործների ու միջագետքյան ցեղերի միջև ժամանակին իրականացված տնտեսական, մշակութային ու փոխանակային կապերի:

Հայկական լեռնաշխարհում վաղ երկրագործական պղնձեքարեդարյան մշակույթի զարգացման կարևոր կենտրոններից մեկը եղել է Արարատյան դաշտը, որտեղ, ինչպես միշտ, այնպես էլ մ.թ.ա. VI—IV հազարամյակում խմորվել են լեռնաշխարհի տնտեսության ու հասարակական կյանքի առաջընթացի հիմնական գործոնները:

⁴⁶ R. H. Dyson and G. Young, The Solduz Valley. Iran: Pisdeli Tepe, Antiquity, 1963, No133, էջ 19—29.

⁴⁷ S. L. Lloyd, F. Safar, նշվ. աշխ.

⁴⁸ V. Openheim, նշվ. աշխ.

⁴⁹ A. Tobler, Excavations at Tepe Gawra. Philadelphia, 1950.

⁵⁰ А. А. Формозов, Неолит и энеолит Северо-Западного Кавказа в свете последних исследований, СА, 1964, № 3, էջ 8—20.

⁵¹ В. М. Массон, Энеолит Южных областей Средней Азии, 1962.

⁵² В. И. Сариниди, Памятники позднего энеолита юго-восточной Туркмении, М., 1965.

⁵³ Р. М. Мунчаев, Н. Я. Мерперт. Советская археологическая экспедиция в Ираке. ВАН, 1969, 9, стр. 96—104.

⁵⁴ Հ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 60:

⁵⁵ Տե՛ս ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի կազմած քարտեզի մակետը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԲՆԱ-ԿԼԻՄԱՑԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արարատյան դաշտը կամ միջինարաքսյան միջլեռնային գոգավորությունը Հայկական լեռնաշխարհի այն հատվածներից է, որը, շնորհիվ իր բնակլիմայական բարենպաստ պայմանների, բերրի հողերի, փոքրիկ դեռակների ու տաք, շոր-ցամաքային կլիմայի, դեռ շատ հնուց դարձել է մարդկային հասարակության, մշակույթի զարգացման կարևոր օջախներից մեկը: Հայկական լեռնաշխարհի այս ամենաընդարձակ հարթությունը տարածվում է Արաքս գետի երկու ափերով՝ Ախուրյան գետի խառնուրդից մինչև Մեղրու կիրճը՝ մոտ 200 կմ երկարությամբ (հաշվի է առնված նաև Նախիջևանի հարթավայրը): Լայնությունը հյուսիս-արևմտյան մասում (Արագածի փեշերից մինչև Հայկական պարը) հասնում է 40 կմ, իսկ հարավ-արևելք զնալով նեղանում և ավարտվում է Մեղրու կիրճի մոտ: Ընդհանուր առմամբ այն ունի եռանկյունի ձև:

Այս ամբողջ տարածությունը ընդհանուր կովկասյան դիրքավորման մեջ ձգվելով հյուսիս-արևմտյան, հարավ-արևելյան ուղղությամբ, Սաղարակի մոտ (Արագոյան կայարան), Գայլի դռներ կոչվող վայրում, Հայկական պար լեռնաշղթայի պալեոզոյան ֆունդամենտի ելուստներում բաժանվում է երկու գոգավորության՝ միջին արաքսյան (Արարատյան) և նախիջևանյան:

Ուսումնասիրություններով պարզված է, որ Արարատյան գոգավորության երկրաբանական առաջացումը կապված է միջլեռնային սինկլինալ իջվածքների հետ, որը հետագայում լցվել է գրեթե սինկլինարային վիժվածքներով ու լճային-գետային նստվածքներով: Արարատյան հովտի հարթությունը տարբեր վայրերում ընդհատվում է հրաբխային փոքրիկ կոներով ու այլ նստվածքներով: Դրանցից են Խորվիրապի, Մեծամորի, Արշալույսի, Արմավիրի հրաբխային երիտասարդ կոները, ինչպես նաև գրեթե սինկլինարային արտավիժումները, Արտենի—Փարաքար—Ախամզալու—Վեդի—Սաղարակ ուղղությամբ ձգվող բարձունքները:

Իր երկրաբանական կառուցվածքով Արարատյան գոգավորությունը ներկայացնում է ձևաբանական երկու աստիճաններ:

ա) Արարատյան հարթություն—Սա տեղավորված է ծովի մակերևույթից 500—1000 մ բարձրության վրա և բաղկացած է մինչև 400 մ հաստության հասնող լճային նստվածքից:

բ) Նախալեռնային սարահարթ—Տեղավորված է 1200—1600 մ բարձրության վրա և բաղկացած է նեոգեն, անտրոպոգեն էֆուզային կոմպլեքսից, պիրոկլաստոլիտներից, լավաների ծածկոցներից և հրաբխային կոներից:

Արտաշատ—Հոկտեմբերյան գոգավորությունը հյուսիս-արևմտյան մա-

սում սահմանափակվում է Թալինի սարահարթով, իսկ հարավային կողմից՝ Հայկական պար լեռնաշղթայի հյուսիսային լանջերով:

Հոկտեմբերյան—Արտաշատ գոգավորությունը հյուսիսից սահմանափակվում է Վեդու սարերով, Գեղամա լեռնաշղթայի հարավային վերջավորություններով և, վերջապես, Արագածի լեռնազանգվածով:

Արարատյան գոգավորության մյուս բաղկացուցիչ մասը նախալեռնային սարահարթն է, Եղվարդի սարահարթը: Այն տեղավորված է Քասախ, Հրազդան և Զրվեժ գետերի հովիտներում և ունի միջին հաշվով 1200—1600 մ բարձրություն: Սարահարթի կենտրոնական մասում բարձրանում է խիստ հողմահարված Արայի լեռը: Սարահարթը բաղկացած է դուրբիտային լավաներից: Աշտարակից հարավ դուրբիտային զանգվածները բավական մեծ թեքությամբ իջնում են ցած և հասնում մինչև շորրորդական ժամանակաշրջանի լճի հատակը: Այդ իջվածքը հատկապես լավ երևում է Երևան—Ֆոանգանոց հատվածում:

Արաքս գետը հոսելով գոգավորության ցածրադիր մասերով, իր մեջ է առնում մի շարք գետեր և հեղեղատներ, որոնցից են Քասախը, Հրազդանը, Մաստարան, Վերին Ազատանը և այլն: Այս գետակները և Արաքս գետը մեծ դեր են խաղացել Արարատյան դաշտի այժմյան ոռոգման ձևավորման գործում: Լեռներից իջնող արագահոս գետակների բնույթի ուսումնասիրությամբ այժմ ապացուցված է, որ Արարատյան դաշտում տեղի է ունենում մակերևույթի բարձրացում: Սա բացատրվում է նրանով, որ լեռնային գետակների՝ դեպի դաշտ իջեցրած մասսան հավաքվում է այն վայրերում, ուր գետը դուրս է գալիս հարթավայր: Եվ իրոք, Արաքսի ձախ վտակները իջնելով սարահարթից, անմիջապես շեն լցվում Արաքսը, այլ որոշ տարածություն հոսում են համարյա նրան զուգահեռ և ապա թափվում նրա մեջ: Այս ընթացքում գետերը իրենց բերած նյութը բեռնաթափում են սարահարթին մոտիկ վայրերում, առաջացնելով բարձունքներ: Քասախ, Հրազդան, Մաստարա և այլ գետակներ իրենց հետ բերում են մեծ քանակությամբ ալյուվիալային և պրոլյուվիալային նյութեր, որոնք և գոյացնում են բարձունքներ: Քասախ գետի համար ճանաչված է Ոսկեվազ—Ֆոանգանոց բարձունքը, Հրազդանի համար՝ Երևանից հարավ Հրազդանի մոտի բարձունքը, Հոկտեմբերյան—Լուկաշին բարձունքը՝ Մաստարայի համար, Իգդիրի բարձունքը՝ Դազանչի գետի համար: Իսկ Արաքս գետի համար ճանաչված է Մարգարայի բարձրությունը: Մարգարայի մոտ Արաքս գետը Փշատավան գյուղի շրջանում գտնվող ցածրության մեջ բեռնաթափվում է և այնուհետև հոսում է Մարգարայի բարձունքի միջով:

Ինչպես բոլոր գետերը, այնպես էլ Արաքսը, իրենց այս բնույթի շնորհիվ հաճախակի փոխում են իրենց հունը, առաջացնելով նոր հեղեղումներ: Գետահունի բնական շարժումների արգասիք են բազմաթիվ հին գետահունների ու տերասների առկայությունը Արարատյան դաշտում: Հաշված է միայն Քասախ գետի համար երկու տերաս և երեք գետահուն:

Արարատյան դաշտը չնայած իր շոր-ցամաքային կլիմայի, ունի նաև ջրային ռեսուրսներ, որոնք օգտագործվել են դեռևս նախնադարյան համայնքների կողմից: Բացի լեռնային գետակներից, Արարատյան հովտի ջրային ռեսուրսների բաղկացուցիչ մասն են կազմում արտեզյան ծագում ունեցող աղբյուրներն ու լճակները: Վերջինները կենտրոնացած են էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջանի միջև ընկած տերիտորիաներում, Այդր լճի, Մեծամորի

հեռավայրի շրջանում: Ջրային այս աղբյուրների առաջացումը երկրաբանական տեռակետից կապվում է Արագածի և Մասիսի ու Հայկական պարի ջրասնման օռոտեմի հետ: Մթնոլորտային տեղումներով հավաքված ջրերը ծծվելով երկրի խորքը, հանդիպելով ջրակայուն նստվածքների, հավաքվում են և ճնշում գեպի վերև: Այդը լճի շրջանում երկրի մակերևույթի վրա երևացող երիտա-տարդ հրաբխային լավաները իրենց ծակոտկենության հետևանքով ջուրը բարձրացնում են դեպի երկրի մակերեսը, առաջացնելով բազմաթիվ աղբյուրներ:

Երկրաբանական այսպիսի երևույթի արդյունք են Այդը լիճը, Մեծամորի հեռավայրի շրջանում գտնվող աղբյուրները և ինքը՝ Մեծամոր գետը¹:

Արարատյան հարթության նորագույն երկրաբանական ծածկոցի ռելիեֆը նարթ է՝ տեղ-տեղ թմբերի և ալիքավոր խորզուբորզությունների առկայությամբ: Տերիտորիայի ընդհանուր գոգավորության հետևանքով շրջակա բարձր լեռների ու սարահարթերի վրա թափվող մթնոլորտային տեղումների մեծ մասը ներծծվելով, հասնում է Արաքս գետի հովիտը և բարձրացնում գրունտային ջրերի մակարդակը:

Հարյուր հազարավոր տարիների ընթացքում ներծծվող գրունտային ջրերը իրենց հետ հարթավայր են տեղափոխում մեծ քանակությամբ լուծելի միացություններ՝ աղեր, որոնք գոյանում են լեռնային ապառների հողմահարումից:

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ կլիման շոր է ու շոգ: Ամառվա շոգ օրերին, սակայն մթնոլորտային տեղումների բացակայության պայմաններում, տեղի է ունենում գրունտային ջրերի վերելակ հոսանք դեպի հողի մակերեսը և գոլորշիացում, որի հետևանքով հողի երեսին և որոշ խորության վրա կուտակվում են լուծված աղեր և առաջացնում աղուտ ու ալկալի հողեր: Ստորերկրյա ջրերի կամ աղբյուրների ելքի վայրերում, ինչպես նաև գետերի վարարահունքում երբեմն հանդես են գալիս նաև ճահճային և մարգագետնային հողակազմող պրոցեսներ: Հարթավայրի ռելիեֆի բարձրադիր մասերում, անապատային գոտու ոչ փարթամ բուսականության պայամաններում ձևավորվել են նաև օրգանական նյութերով աղքատ գորշ հողեր:

Թվարկված հողատիպերը երկար ժամանակ ենթարկվել են մարդու բազմամյա աշխատանքի ներգործությանը և վերածվել այսպես կոչված կուլտուր-ոռոգելի հողերի:

Միջլեռնային գոգավորության բնա-կլիմայական այսպիսի պայմանները մեծապես ազդել են Արարատյան հովտում հաստատված տոհմա-ցեղային կոլեկտիվների կյանքի վրա: Իրենց տնտեսության հիմքում ունենալով վաղ երկրագործությունն ու անասնապահությունը, Արարատյան դաշտի վաղ երկրագործները բնակատեղիներ են հիմնել փոքրիկ գետակների կամ հեղեղատների ափերին, որոնք գարնան հեղեղումների ժամանակ առատ տիղմ են իջեցրել սարերից, իսկ ամռան եղանակին ջրասակավ դառնալով, հնարավորություն են տվել նախնազարյան մարդուն ոչ մեծ ուժերով օգտագործել գետերի ջրերը: Քանի որ առանց արհեստական ոռոգման անհնար է Արարատյան դաշտում

¹ Արարատյան դաշտի երկրաբանության մասին տեղեկությունները քաղված են Ա. Գ. Ասլանյան, Региональная геология Армении, Ер., 1958, и П. С. Бальян, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1963, գրքերից:

երկրագործութիւնն իրականացնել, ուստի և բնակատեղիները միշտ հիմնադրված են գետակների ու հեղեղատների ափերին: Որպես Արարատյան հովտին բնորոշ երևույթ պետք է նկատել, որ այստեղ գետակները վերը նշված երկրաբանական երևույթների հետևանքով հաճախակի փոխել են իրենց հունը և ստիպել մարդկային կոլեկտիվներին համապատասխանաբար տեղափոխվել իրենց հետ: Այդ իսկ պատճառով այսօր Արարատյան հարթավայրում չկա մի հատված, ուր չհայտնաբերվեն վաղ կամ այլ շրջանի հնագիտական նյութեր, որոնց տարածումը արդյունք է կամ բնակավայրի տեղափոխման կամ գետի հեղեղման:

Եթե հետևելու լինենք վաղ երկրագործական անցյալի բնակատեղիների տարածմանը և նրանց բնույթին, կարելի է տեսնել, որ նրանք այսօր չունեն մշակութային մեծ կուտակումներ կամ լավագույն դեպքում նրանց բարձրութիւնը հասնում է 3—4 մետրի:

Այլ է վիճակը վաղ բրոնզեդարյան մշակույթի հնավայրերում. սրանք ներկայանում են բազմաշերտ, բարձր բլուր-բնակատեղիներով (Նախիջևանի Քյուլ-թափա, Մոխրաբլուր՝ էջմիածնի շրջանում և այլն):

Արարատյան հովտի էկոլոգիական պայմանները մ.թ.ա. V—IV հազարամյակներում մոտ են եղել ժամանակակից պայմաններին: Հավանական է, որ այստեղ ինչպես վերջերս, մինչև ճահիճների շորացումը, շատ տարածութիւններ եղել են խիստ ճահճացած, որտեղ աճել են եղեգն և այլ ճահճային բույսեր, խիտ, գաճաճ թփուտներ (ինչպես այժմ Արաքսի որոգայթներում աճող իրզուն կոչվող թփուտների տեսակները):

Կիսանապատային և անապատային տարածութիւններում աղակալած և ավազոտ հողակտորների վրա աճել են կիսանապատային և անապատային ջրասակավ պայմաններին դիմացող բույսեր:

Կենդանական աշխարհը, ինչպես վկայում են հնագիտական նյութերը, ներկայացրել են վայրի խոզը, նապաստակը, այծը, ոչխարը, աղվեսը, եղնիկը, կրիան, գիշատիչներից՝ գայլը, արջը և այլն: Հավանաբար այստեղ շատ են եղել նաև տարբեր տեսակի կրծողներ, սողուններ, ջրային թռչուններ, մոծակներ ու զեղուններ:

Ահա մոտավորապես այսպիսի բնա-կլիմայական պայմաններում իրենց տնտեսութիւնն էին վարում Արարատյան դաշտում հաստատված վաղ երկրագործ և անասնապահ կոլեկտիվները, որոնցից մեկի նյութական արտադրութիւն և հոգևոր մշակույթի մնացորդները հայտնաբերվել են Արարատյան դաշտի կենտրոնում Թեղուտ կոչվող հանդամասում:

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IV հազարամյակի մշակույթի հուշարձաններից մեկի ուսումնասիրութիւն ստորև կատարվող փորձը հիմնված է Արարատյան դաշտում հայտնաբերված և հետախուզված Թեղուտի, Աղջաղալայի, Վերին Խաթունարի բնակատեղիների նյութերի, լեռնաշխարհը և նրան շրջապատող մշակութային տարածքների նմուշների լայն համազրբման վրա:

ԹԵՂՈՒՏԻ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական անասնապահական ուշ նորքարեղարյան-պղնձեքարեղարյան բնակատեղիներից առավել ուշագրավ են Արարատյան դաշտի հուշարձանները: Դրանցից մեկը գտնվում է էջմիածին քաղաքից 3 կմ հարավ, Թեղուտ կոչվող հանդամասում¹:

Սկսած 1965 թ. ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ հետախուզական հնագիտական ջոկատը սխտեմատիկ ուսումնասիրության ենթարկեց Թեղուտ հանդամասի տարածքը: Երեք տարվա աշխատանքների ընթացքում ջոկատը հայտնաբերեց և հետազոտեց Արարատյան դաշտի այդ բարեբեր մասում ժամանակագրորեն իրար հաջորդող մի քանի հնագիտական կոմպլեքսներ, որոնցից առավել ուշագրավ են մ.թ.ա. IV հազարամյակի բնակատեղիի մնացորդները:

Թեղուտի բնակատեղին տեղավորված է Արարատյան հովտի ամենաբարեբեր մասերից մեկում՝ Քասախ գետի նախկին հունի ձախ ասիին, երեք ոչ բարձր խճաքարե բլուրների վրա, էջմիածնի Մոխրաբլուր (Քյուլ-թափա) բլուր-բնակատեղիից 3 կմ հյուսիս:


Բնակատեղին ունի աշխարհագրական հետևյալ մոտավոր դիրքավորումը. 40°, 9' հյուսիսային լայնություն, 44°, 4' արևելյան երկարություն: Տեղանքի առավելագույն բարձրությունը շրջապատի հարթությունից 1—2 մետր է, իսկ գետի նախկին հունի մակերեսից՝ 4 մետր: Հնավայրի հայտնաբերումը կապված է նրա տերիտորիայում կատարված հողային աշխատանքների հետ, որոնց հետևանքով բնակավայրի մեծ մասը, դժբախտաբար, ավերվել էր: Տեղում առաջացել էին 3,5—4 մ. խորություն ունեցող փոսեր, որոնք յուրովի փոխարինեցին հուշարձանի շերտագրական կառուցվածքը բացահայտող խրամատներին:

Հուշարձանի պահպանված հատվածների ուսումնասիրությունից պարզվեց, որ բնակատեղին զբաղեցրել է շուրջ 3,5 հեկտար տարածություն: Նրա մակերևույթը ծածկված է 20—25 սանտիմետրանոց ամուր, աղակալած հողաշերտով, որից ցած, ընկնում է դեղին, շիկավուն խճաքարի հետ խառնված կավի բավական զգալի շերտ (հզորությունը 0,7—1,7 մ՝ նայած տեղանքի դիրքին): Ահա այս շերտի մեջ էլ գտնվում են բնակատեղիի հյուղակների

¹ Տեղանքը Թեղուտ է կոչվում այն պատճառով, որ այն մտել է ներսես Աշտարակեցի Ե-թաղիկոսի կողմից էջմիածնում հիմնադրված ծառաստանի տարածքի մեջ: Թեղու ծառերից բաղկացած այդ անտառը ոչնչացվել է 1915—16 թվականներին: Չնայած թեղիների անտառը ավելի զոյություն չունի, այնուամենայնիվ նրա անունը պահպանվել է էջմիածնեցիների մոտ, որպես երբեմնի անտառի տարածության անուն:

ԹԵՂՈՒՏ

ԷՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԿԱՏԵՐԻ



Նկ. 1. Քեղուտի էնեոլիթյան բնակատեղին:

մնացորդները, որոնք կառուցված են 2,5 մետր հաստությամբ ունեցող գետա-
յին խճաքարի ավազախառն շերտի վրա:

ՀՅՈՒՂԱԿՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԻՆԵՐ

Քեղուտի բնակատեղին զուրկ է պարսպապատից և պատկանում է բաց տիպի բնակավայրերի թվին: Պեղված հատվածների հյուղակիների մնացորդները ցույց են տալիս, որ բնակավայրը բաղկացած է եղել ոչ մեծ, կլոր հատակագծով (2,6—3,5 մետր տրամագծով) առանձին կանգնած կիսագետնափոր կացարաններից ու նրանց մոտ գտնվող նույնպես կլոր, փոքրիկ (1—1,3 մ տրամագծով) պահեստ-հորերից: Սրանք տեղավորված են հնավայրի տերիտորիայում, մի քանի խմբերով:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՄԱՍ

Պայմանականորեն առաջին անվանված տեղամասը գտնվում է հնավայրի պահպանված մասի կենտրոնում: Նրա տարածությունը կազմում է շուրջ 1000 քառ. մետր: Պեղումների միջոցով այստեղ հայտնաբերվել են հինգ առանձին կառուցված կիսագետնափոր կացարանների մնացորդներ, որոնք տեղավորված են շուրջ 400 քառ. մետր տարածության վրա: Հյուղակիներն իրենց մեջ ներառում են բավական ընդարձակ՝ բնակարաններով չզբաղեցրած տարածություն, որը հավանաբար եղել է բակ կամ հրապարակ:


Առաջին կացարան—Տեղավորված է տեղամասի հյուսիս-արևելյան անկյունում: Նրա կեսից ավելին հայտնաբերման ժամանակ ավերված էր: Կացարանի պահպանված մասը խորացված էր գետնի մեջ՝ 1,6 մետր: Վերին՝ 20—25 սանտիմետրանոց շերտում նյութական մշակույթի մնացորդները շատ քիչ էին, իսկ բուն շերտը (1, 4 մ) բաղկացած էր այրված հողի, մոխրի, գալանաքարի իրերի ու առարկաների բազմաթիվ ամբողջական ու կտրատված նմուշներից (նկ. 2):

Կացարանի պատերը կառուցված էին 10 սմ. հաստությու՞ն ունեցող կավածեփով, որը սահուն անցումով միանում էր գետային խճաքարի շերտի վրա դրված, նույնպես ծեփածո հատակի հետ: Բնակարանի հատակի տրամագիծը 2,6 մ է: Նրա հատակի հյուսիսային մասում հայտնաբերվեց հարդախոն կավաշաղախից պատրաստված պատի ուղիղ երուտ (լայնությունը 10 սմ, բարձրությունը՝ 40, երկարությունը՝ 70), որը շարունակվում էր նաև կացարանի՝ շրջանագծից դուրս: Շինարարական այս մանրամասի նշանակությունը չպարզվեց, քանի որ նրա մեծ մասը չկար: Բացի այդ, մյուս կացարաններում նման պատեր չգտնվեցին: Թվում է, որ այն արտաքին հեռավոր մի հատված է Թեփե-Գավրայի XIX—XVI շերտերում հայտնաբերվածների նման²:

Կացարանի ներսում թափված կավաշաղախի բեկորներից մի քանիսի վրա նկատվեցին բնական կարմիր ներկի հետքեր (օխրա), որոնք վկայում են նրա՝ ներսից ներկված լինելու մասին: Շինարարական այլ մանրամասներ կացարաններում չեն պահպանվել: Փոքրիկ, գետնափոր հյուղակից գտնված նյութական արտադրության մնացորդների հավաքածուն կազմված է վանակատե (օբսիդիան) ու կայծքարի գործիքներից, ոսկրե առարկաներից ու խեցեգործական արտադրանքների բազմաթիվ նմուշներից: Ինչպես այս կացարա-

² A. Tobler, Excavations at Teph Gawra, II, Philadelphia, 1950.

նում, այնպես էլ հետագայում բացվածների մեջ հայտնաբերվեցին վանակատից ու կայծքարից պատրաստված բազմաթիվ կանոնավոր ներդիրներ, ինչպես նաև անկանոն բեկորներ ու ցլեփներ, որոնցից առավել խոշորների վրա նկատվում են աշխատանքի հետքեր՝ կողերի փոքրիկ պոկվածքների ձևով:



Նկ. 2. Քեղուտի I կացարանի հատակագիծը և շերտագրական կտրվածքը:

Քարից պատրաստված աշխատանքային գործիքների մեջ ուշագրավ է նաև մի կողմից քիչ շաղափված, գնդաձև զետաքարը (էԳՔ 775)³: Թվում է, որ այն պետք է լինի գուրգի գլուխ, որպիսիք հայտնի են նորքարեղարյան-պղնձեքարեղարյան բազմաթիվ բնակատեղիների պեղումներից: Այս կոմպլեքսի մեջ են մտնում նաև ողորկ մակերեսով մի զետաքար, որն օգտագործվել է որպես կոկիչ, ինչպես նաև հրաբխային խարամից պատրաստված տարբեր ձևի քերիչ-տրորիչները:

Աշխատանքային գործիքների մի զգալի մասը պատրաստված է կենդանիների սնամեջ ոսկորներից: Սրանք ծակիչներ են, հերուններ (էԳՔ 865):




Հայտնաբերված գործիքների շարքում առանձնահատուկ ուշադրության են արժանի պղնձից պատրաստված ասեղների բեկորները, որոնցից մեկը կտրվածքում օվալաձև է, իսկ մյուսը՝ քառակող (մետաղյա սուարկաների մանրամասն նկարագրությունը տե՛ս «Մետաղե սուարկաներ» բաժնում):

Առաջին կացարանի նյութերի մեջ ամենից բազմաքանակը խեցեղեն սուարկաների բեկորներն են, որոնք ըստ կալի բաղադրության ու հորինվածքային ձևերի ստորաբաժանվում են զանազան խմբերի: Սրանք կճուճների,

³ Քեղուտի բնակատեղիի հնագիտական նյութերը պահվում են էջմիածնի զավառագիտական թանգարանում և ունեն թանգարանային հետևյալ ձևի շիֆրը էԳՔ Մ. Մ. № ... կոլեկցիա № 1: Այն համառոտագրել ենք (էԳՔ ... ձևով):

թաների, ափսեների, մեծ ու փոքր կարասների բեկորներ են, որոնք ունեն կորմիր ու դեղին երեսապատված մակերեսներ: Շատ են նաև հասարակ խեցու ավազախառն կավաշաղախ ունեցող բեկորները, որոնցից երեքի ներսի կողմում պահպանվել են գործվածքի դաշվածքի հետքեր (էԳԹ 801):

Ուշագրավ են շքեղ տեսքով, խնամքով մշակված մակերես ունեցող անոթները և զուևագարդ խեցու բեկորները:



Նկ. 3. Թեղուտի II կացարանի հատակագիծը և կտրվածքը:

Առանձնապես պետք է նշել հասարակ ավազախառն կավից պատրաստված «և կամ մուգ-սրճավուն կավամանների բեկորները, որոնք իրենց ձևերով հեռավոր նմանություն ունեն Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան (մ.թ.ա. III հազարամյակ) խեցեղենի հետ:

Երկրորդ կացարան—կառուցված է առաջինից 5 մ հարավ, մոտավորապես միևնույն առանցքի վրա: Նրա շինությունից պահպանվել է միայն պատի արևմտյան հատվածը՝ հատակի հետ միասին: Այս կացարանը, առաջինի

Նման, կլոր հատակագիծ ունեցող կառույց է, որի հատակի խորությունը գետնի մակերևույթից հավասար է 0,80 սմ, իսկ ընդհանուր տրամագիծը՝ 3,5 մ: Կավաշաղախով պատրաստված հատակը նստած է գետային խճաքարի շերտի վրա, որի մակարդակը այստեղ ավելի բարձր է, քան առաջին կացարանի հատվածում: Այս հյուղակի շինարարական տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ նրա պատը կառուցված է ոչ թե կավաշաղախով, այլ ուղղանկյուն, կանոնավոր հարթ աղյուսների մի շարքով, որոնք վեր են բարձրանում համապատասխանաբար մեկը մյուսին կապվելով: Պատի պահպանված մասի բարձրությունը 0,8 մ է, այն բաղկացած է 7 շարք իրար վրա դրված ու կավաշաղախով միացված հում աղյուսներից: Աղյուսներն ունեն հետևյալ չափերը՝ 10×30×40 սմ, իսկ կավաշաղախի հաստությունը 2—3 սմ է: Աղյուսե պատը ներսից ծեփված է հարդախառն կավաշաղախով, որը սահուն անցումով միանում է հատակի հետ, իսկ պատի արտաքին երեսը հենված է հողին (նկ. 3):

Հյուղակի հատակի վրա՝ արևմտյան պատին կից, բացվեցին մի քանի կիսաայրված աղյուսների բեկորներ, որոնք, հավանաբար, նստարանի մնացորդներ էին:

Կացարանում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները քիչ են, բայց ընդգրկում են քարե, ոսկրե գործիքների ու խեցեղեն առարկաների այնպիսի նմուշներ, որոնք էականորեն լրացնում են Թեղուտի հնագիտական նյութերի կոմպլեքսը:

Քարե գործիքներից ուշագրավ են վանակատե ներդիրները (էԳԹ 946, 2217), որոնց կողերը աշխատանքի հետևանքով փոքրիկ հանվածքներ ունեն: Բացի ներդիրներից, այստեղ հայտնաբերված է վանակատ-գետաքար, որը ծառայել է որպես տրորիչ (էԳԹ 800): Սրա վրա պահպանվել էին կարմիր ներկի մնացորդներ:

Ոսկրե գործիքներից գտնվել են ասեղների ու ծակիչների բեկորներ:

Խեցեղեն առարկաների մնացորդները իրենց ձևերով, մակերեսների մշակումով ու կավաշաղախի բաղադրությամբ նման են առաջին կացարանում հայտնաբերվածներին: Այդուհանդերձ կան նաև տիպեր, որոնք զատվում են նշվածներից:

Այդպիսիներից մեկը (էԳԹ 1683) հասարակ կճուճի բեկոր է, որի իրանի ուսերը զարդարված են մուգ-սրճավուն ներկով նկարված եռանկյունիներով:

Կան բեկորներ, որոնց արտաքին կողմի վրա պահպանված է խսիրի դաշվածք:

Թեղուտի ողջ հավաքածուի մեջ եզակի նմուշ է էԳԹ 1965 խեցանոթը: Նրա իրանի ուսերը զարդարում է սեղմումով արված կիսալուսնաձև փոսիկների շարքը: Հետաքրքիրն այն է, որ այս կավամանը պատրաստվել է պտտման եղանակով, դուրզնի կամ ինչ-որ այլ հնարանքի օգնությամբ:

Երկրորդ կացարանից հայտնաբերված խեցեգործական արտադրանքների նմուշների մեջ իսկական գլուխգործոց էր կենդանու փոքրիկ արձանիկը, որը Հայաստանի մ.թ.ա. IV հազարամյակի նյութերում առայժմ եզակի է: Արձանիկը պատրաստված է ավազախառն կավից: Թրծվածքը անհավասար է: Այն իր ընդհանուր կոնֆիգուրացիայով ավելի շատ հիշեցնում է գիշատչի (արջ): Արձանիկի հայտնաբերումը խոշոր նշանակություն ունի Թեղուտի երկրագործների կենցաղը և սովորությունները ուսումնասիրելու համար:

Նման փոքրիկ արձանիկներ հայտնաբերված են նաև Առաջավոր Ասիայի նորքարեդարյան-պղնձեքարեդարյան միջարք բնակավայրերում, որոնք թվագրվում են մ.թ.ա. VI—IV հազարամյակներով: Դրանցից են Ջառմոն (Հյուսիսային Իրաք)⁴, Յումուկ-թեփեն (Կիլիկիա)⁵, Պիշիլի-թեփեն (Իրան)⁶, Չաթալ-հույուկը (Թուրքիա)⁷ և այլն: Թվում է, որ ինչպես այստեղ, այնպես էլ մեզ մոտ արձանիկները վկայում են ավելի հնագույն ժամանակաշրջանների որսորդության հետ կապված սովորությունների մասին:

Նորոգ կացարան—Տեղավորված է երկրորդից 10 մ հարավ: Նրանց միջև եղած տարածությունը, ինչպես պարզվեց ստուգողական խրամատից և մակերեսի շերտի հեռացումից, ժամանակին կառուցապատված չի եղել և օգտագործվել է իբրև բակ: Կացարանից պահպանվել է միայն հատակի մի հատվածը 20 սմ. մշակույթային շերտով: Հատակը ընկած է գետնի մակերեսից մեկ մետր խորության մեջ և պատրաստված էր կավաշաղախով: Տրամագիծն է 2,6 մ: Ի տարբերություն առաջին երկու կացարանների, այստեղ աղյուսներով կամ շաղախով կառուցված պատի մնացորդներ չեն հայտնաբերվել: Մշակույթային շերտում հայտնաբերված իրերի հավաքածուն բաղկացած է հասարակ, հոպիտ կավից պատրաստված կավամանների բեկորներից, որոնց մեջ հիշատակության է արժանի միայն քամիչի բեկորը (էՊԹ 698):

Չորրորդ կացարան—Տեղավորված է երրորդից երկու մետր արևմուտք: Պահպանվել է միայն մոխրի բարակ շերտով ծածկված հատակը: Նյութական մշակույթի հիշատակության արժանի մնացորդներ չեն հայտնաբերվել: Ըստ երևույթին այս հյուղակը լքվել է մյուսներից ավելի վաղ: Հատակի տրամագիծը մոտավորապես երեք մետր է, իսկ խորությունը՝ մեկ մետր:

Հինգերորդ կացարան—Տեղավորված է կենտրոնական բլրի արևմտյան լանջին, շորրորդ կացարանից 4,7 մ դեպի արևմուտք: Նորրորդ, շորրորդ, հինգերորդ կացարանները դասավորված են միևնույն առանցքի վրա, ձգվելով արևելքից արևմուտք: Նրանք հարավից շրջափակում են բլրի գագաթի շֆնակեցված տարածությունը:

Կացարանի մեջ լցված մոխրի ու նյութական մշակույթի մնացորդների հեռացումից հետո, հատակին կուտակված մոխրաշերտի վրա անկանոն թափված էին հում աղյուսի բեկորներ: Մանրազնին դիտարկումից պարզվեց, որ հատակը միացած չէ կավաշաղախով կամ աղյուսներով կառուցված պատի հետ, ինչպես այդ դիտվում է առաջին և երկրորդ կացարաններում: Այստեղ ներգետնյա մասում պատի հետքերը լրիվ բացակայում էին: Նման հանգամանքը հիմք է տալիս մտածելու, որ բնակարանի ներգետնյա հատվածի համար որպես պատ ծառայել է բարակ կավածեփով ամրացված հողը: Կավաշաղախով ծեփված ներգետնյա մասը ժամանակի ընթացքում փշրվել-թափվել է ու անհետ ոչնչացել, իսկ վերգետնյա մասը, կառուցված է եղել հում աղյուսով, որոնք էլ հայտնաբերվեցին բնակարանի ներսում, մոխրաշերտի վրա: Բնակարանի հատակի տրամագիծը այստեղ ամենից փոքրն էր՝ 2,4 մ, իսկ հատակի խորությունը տափարակ տարածության մակարդակից 0,8 մ: Կացարանի

⁴ R. J. Braidwood and Howe, նշվ. աշխ., տախ. 16.

⁵ J. Garstang, նշվ. աշխ., նկ. 61.

⁶ R. Dyson and G. Young, նշվ. աշխ., տախ. III.

⁷ J. Mellaart, A Neolithic town in Anatolia, 1967, էջ 178—185.



Նկ. 4. Քեղուտի I և II կադարանների մնացորդները:

հյուսիսային պատի մոտ հայտնաբերվեցին տնտեսական օջախի մնացորդներ, հատակի վրա արված փոքրիկ խորության ձևով, որն ամբողջովին լցված էր մոխրի ու ջարդված լայնաբերան կավամանի բեկորներով:

Հյուղակից հայտնաբերված նյութերի մեջ ուշագրավ է թափված աղյուսների տակ հայտնաբերված խոշոր կենդանու ծնոտոսկորը, որն ունի 40 սմ երկարություն:

Ինչպես մյուս կացարաններում, այնպես էլ այստեղ գտնված իրերի կոմպլեքսը բաղկացած է քարե, ոսկրե աշխատանքային գործիքներից ու կենցաղում օգտագործվող սպասքի առարկաներից: Խեցեղենի մնացորդներն այստեղ հիմնականում բաղկացած են հասարակ, այսպես կոչված, խոհանոցային առարկաների բեկորներից, որոնցից վերականգնված է երեքը:

Քարե իրերի մեջ հիշատակելի է մեծ ցլեփը, որը օգտագործվել է որպես շերիչ:

Առաջին պեղավայրում հաջողվեց հայտնաբերել նաև մեկ պահեստ-հոր, որը տեղավորված է երկրորդ կացարանից 13 մ հարավ արևելք: Հորից պահպանվել է մի փոքր հատված՝ 15 սմ հաստությամբ ունեցող շիրտով: Այստեղ հայտնաբերվեց փայլեցված մակերեսով, բարձր շուրթով փոքրիկ սափորի քեկոր, որն ունի բաց-կանաչավուն գույն (էԳԹ 1063):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԱՄԱՍ

Թեղուտի բնակատեղիի պահպանված մյուս հատվածը, որ պայմանականորեն երկրորդ տեղամաս է անվանված, գտնվում է առաջին տեղամասից 50—55 մ հյուսիս-արևելք և զբաղեցնում է շուրջ 600 քառ. մետր տարածություն: Առաջին և երկրորդ տեղամասերը այժմ իրարից բաժանված են 3—4 մ խորությամբ ունեցող հսկայական փոսորակով, որ առաջացել է ճանապարհաշինության նպատակով օգտագործված խճաքարի տեղափոխման հետևանքով:

Ըստ երևույթի, այս մեծ տարածության որոշ հատվածներ ևս զբաղեցված են եղել պղնձեքարեդարյան կացարաններով, որոնք հողային աշխատանքների ժամանակ ոչնչացվել են:

Երկրորդ պեղավայրի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվեցին յոթ կիսագետնափոր կացարանների ու հինգ պահեստ-հորերի մնացորդներ, ինչպես նաև կացարանների շատ վատ պահպանված մի փոքրիկ խումբ, որոնցից պահպանվել էին հատիկների հազիվ նշմարելի մնացորդներ: Նրանք հանույթի վրա նշված են կետավոր շրջանագծերի ձևով:

Մշակութային շերտն այստեղ, ինչպես առաջին պեղավայրում, տարբեր խորությամբ ունի, որ կապված է գետային խճաքարի մակերևույթի տատանումների հետ: Բնակարանների հատակները և պատերի հիմքերը, որպես կանոն, դրված են խճաքարի շերտի վերին հորիզոնականի վրա:

Առաջին պեղավայրի հետ ունեցած կառուցողական ու շերտագրական նմանություններով հանդերձ, երկրորդ պեղավայրն ունի մի քանի առանձնահատուկ կողմեր, որոնք օգնում են ավելի լայն պատկերացում կազմելու վաղ երկրագործական տնտեսությամբ ապրող տեղաբնակների շինարարական տեխնիկայի ու բնակարանների կառուցման հատկազոծային առանձնահատկությունների մասին:

Երկրորդ տեղամասի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն ավելի խիտ է բնակեցված եղել, որը երևում է կողք-կողքի բացված կացարանների ու պահեստ-հորերի միջև ընկած փոքր տարածություններից:

Ի տարբերություն մյուս տեղամասերի, այստեղ 7-րդ և 9-րդ կացարաններում հայտնաբերվել են շինարարական երկու շերտեր, որոնց առկայությունը վկայում է բնակարանների վերակառուցման, ուրեմն և բնակավայրի երկարակեցության մասին:

Այնուհետև այստեղ նկատված է պահեստ-հորերի մեծ քանակություն, որը մի անգամ ևս վկայում է այս հատվածի երբեմնի ինտենսիվ կյանքի մասին:

Կարծում ենք, որ երկրորդ պեղավայրը Թեղուտի տոհմական բնակատեղիի առավել խիտ բնակեցված թաղամասերից մեզ հասած մի փոքրիկ հատված է, գուցե նաև բնակատեղիի կենտրոնական մասը:

Վեցերորդ կացարան—(II տեղամաս, I կացարան): Հայտնաբերվեց 1965 թ. և ուսումնասիրվեց 1966-ին: Կացարանը մյուսների նման կիսավեր էր և պահպանվել էր միայն նրա շրջանաձև հատակի մի հատվածը, շուրջ մեկ մետր հաստություն ունեցող մշակութային շերտով: Կավաշեն հատակից ու նրա վրա թափված հում աղյուսի բեկորներից բացի, կացարանում շինարարական այլ մնացորդներ չեն գտնվել (տրամագիծ 2,7 մ):

Հայտնաբերված նյութական մշակույթի առարկաները իրենցից ներկայացնում են քարե (վանակատ, կայծքար, բազալտ, հրաբխային շլակ) և ոսկրե գործիքներ ու խեցեղեն առարկաներ:

Վանակատե և կայծքարե շինվածքները հիմնականում ներդիրներ են, որոնք օգտագործվելու հետևանքով կողերի վրա անկանոն կոտրվածքներ ունեն: Քարից պատրաստված գործիքների խումբը այստեղ լրացվում է բազալտե փոքր աղորիքի բեկորներով ու հրաբխային խարամից պատրաստված քերիչ-կոկիչներով:

Ոսկրե գործիքները սնամեջ ոսկորներից պատրաստված հերուններ ու ծակիչներ են:

Խեցեղեն առարկաների նմուշները իրենց ձևով ու կավաշաղախի բաղադրությամբ առանձնապես չեն տարբերվում բնակավայրի մյուս կացարանների նյութերից: Մասսայական խեցեղենի մեջ, որպես նոր տեսակ, պետք է նշել կորնթարդ կողերով թասի բեկորը (էԳԹ 1159):

Յոթերորդ կացարան—II տեղամաս № VII կացարան: Տեղավորված է II տեղամասի № 6 և № 8 կացարանների արանքում: Սա բնակավայրում բացված հյուղակներից առաջինն էր, որ հայտնաբերվեց շխաթարված վիճակում:

Կացարանի ներսը լցված էր մոխրախառն հողով: Այստեղ հայտնաբերվեցին միևնույն կազմությամբ երկու հատակներ: Առաջին հատակի խորությունը գետնի մակերեսից 40 սմ է: Այն կառուցված է հարգախառն կավաշաղախով, որի կենտրոնական մասում հայտնաբերվել են օգտագործված գետաքարերի ու փոքր չափեր ունեցող աղորիքի բեկորներ: Առաջին շինարարական շերտից հայտնաբերված գործիքների մեջ շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թեղուտում առաջին անգամ հանդիպող, մշակված մակերեսով վանակատե գործիքը (էԳԹ 1754): Ցլեփված քարե արտադրանքների մեջ ուշագրավ է նաև դանականման մեծ շեղքի բեկորը: Կացարանի առաջին շերտի խեցեղենի նմուշների մնացորդները ոչնչով չեն տարբերվում նախորդ կացարաններում պեղվածներից:

Առաջին հատակը պեղելուց հետո, շուրջ 20 սմ խորության վրա բացվեց ավելի վաղ կառուցված բնակարանի հատակի մնացորդները: Այն ամբողջովին ծածկված էր մոխրով և ստեղծվում էր այն տպավորությունը, որ վերին շերտի կացարանը կառուցվել է հրդեհվածի տեղում: Որ իրոք հին կացարանը հրդեհվել է, վկայում է այն փաստը, որ ստորին հատակը ծածկող մոխիրը ուներ բաց գույն, որպիսին լինում է եղեգնի և այլ բույսերի այրումից: Ստորին կացարանի պատերը մասամբ պահպանվել էին: Նրանք շարված են եղել հարդախառն աղյուսով, իսկ հիմնականում նաև՝ անկանոն ձևի գետաքարերով: Գետաքարերի քանակը այնքան քիչ է, որ չի կարելի ասել, թե բնակարանի աղյուսն պատը դրված է քարե հիմքի վրա:

Կացարանի կենտրոնական մասում, տնտեսական օջախից արևելք, հայտնաբերվեց անկանոն ձևի, միջին մեծության գետաքար, որի շուրջը թափված էին աշխատանքային գործիքների պատրաստման հետևանքով առաջացած ոսկրի ու քարի բեկորներ:

Հյուսիսային պատի տակ, պաշտամունքային օջախի մոտ, կանոնավոր խորանարդիկի ձև ունեցող աղյուսի վրա դրված էր 22 սմ բարձրության գետաքար, որի վերին մասը նեղ է և հակված մի կողմի վրա, իսկ ներքինը՝ աստիճանաբար լայնացող: Նրա նստուկը խնամքով հարթեցված է: Իրանի վերին մասում, մի կողմի վրա առկա է բնական փոս ընկած տարածություն (էԳԹ 797): Քարի ընդհանուր տեսքը (կոնֆիգուրացիան) թողնում է զլխահակ նստած կնոջ տպավորություն: Թվում է, որ այդ իրը ծառայել է պաշտամունքային նպատակների՝ կապված մայրության, ուրեմն և պտղաբերության հետ: Պետք է նկատել, որ այդպիսի պարզունակ տեսքի, պաշտամունքային նպատակով օգտագործված քարեր առկա են նաև Նրիքոնի, Յումուկթեփեի, Չաթալ-հույուկի ստորին շերտերում, որոնք զարգացման հետագա փուլերում դառնում են ավելի որոշակի ձևավորված ու արտահայտիչ:

Կացարանի արևմտյան պատի տակ, հատակի հետ միացած էին իրարից հավասար հեռավորության վրա տեղավորված աղյուսներ, որոնք ելուստի նման մտնում էին բնակարանի նեյսը 20—25 սմ խորությամբ: Հավանական է, որ այդ աղյուսները եղել են նստարանի կամ մահճի մնացորդներ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ կավաշեն նստարանները շատ տարածված են եղել Հայկական լեռնաշխարհի⁸ ու Առաջավոր Ասիայի հնագիտական հուշարձաններում⁹ և ավելի վաղ շրջանում հանդիպում են ժամանակակից ետ մնացած որոշ ժողովուրդների բնակարանների ներքին կահավորման մեջ¹⁰:

Կացարանի հարավային հատվածում հայտնաբերվեց մոխրի առատ կուտակում 20-30 սմ հաստությամբ, որի գույնը սպիտակ էր, ինչպիսին առաջանում է եղեգնի այրման ժամանակ: Սպիտակ մոխրի տակ բացվեցին տնտեսական օջախի հաղիվ նշմարելի հետքեր, իսկ պատի շարվածքում կային տարբեր տիպի խեցեղեն առարկաների բեկորներ: Ըստ երևույթին, բնակարանի շինարարության ժամանակ կառուցողները խտրություն չեն դրել օգտագործվող շինանյութի տեսակների մեջ, խառը կերպով օգտագործելով ինչ-

⁸ Е. Байбуртян, Культурный очаг из раскопок Шенгавитского поселения, ВДИ, 1938, № 4.

⁹ Է. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազ-ում, էջ 10, 16:

¹⁰ Н. Н. Миклухо-Маклай, На берегу Маклая, Москва, 1961.

որ պատահի՝ թե՛ աղյուս, թե՛ գետաքար և թե՛ խեցու բեկորներ: Կացարանի մուտքը հայտնաբերելու նպատակով կատարված մանրազնին դիտարկումները ինչպես այդ, այնպես էլ հետագայում ուսումնասիրվածներում, ոչ մի արդյունք չտվեցին: Հնարավոր է, որ մարդիկ կացարան են մտել փայտյա սանդուղքներով, որպիսիք հայտնի են հարավ արևմտյան Վրաստանի, Արուխլո, Իմիրիս Գորա, Շուլավերի¹¹, ինչպես նաև Չաթալ-հուլուկ հուշարձաններում¹²:

Բացի այդ, տեղում չհայտնաբերվեցին վաղ երկրագործական բնակատեղիների կացարաններին այնքան հատուկ դռան կրնկաքարերը: Թվում է, որ Թեղուտի բնակարանների մուտքը եղել է վերգետնյա մասում, որի համար որպես ծածկոց ծառայել է ճյուղերից կամ եղեգներից հյուսված վահանիկը, ինչպիսիք շատ տարածված են եղել ետ մնացած ժողովուրդների բնակարանաշինական պրակտիկայում: Կացարանում շինարարական և ներսի կահավորման այլ մանրամասներ չեն պահպանվել: Հյուղակի տրամագիծը 3,3 մ է, իսկ խորությունը՝ 60 սմ:

Այստեղ հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները նախորդների նման բաղկացած են վանակատից, կայծքարից, գետաքարից ու ոսկրից պատրաստված գործիքներից ու խեցեղեն առարկաների նմուշներից:

Խեցեղեն առարկաներից հատկապես հիշատակության են արժանի մաքուր կավաշաղախից պատրաստված փոքրիկ սափորը (էԳԹ 1965) և երկու գունազարդ, ոչ մեծ շափսի կճուճները (էԳԹ 898):

Արբերոզ կացարան—II տեղամաս: Այս հյուղակի մնացորդները գտնվում են պեղավայրի արևելյան մասում, 7-րդ կացարանից 1 մ արևելք: Հայտնաբերման ժամանակ կիսագետնափոր հյուղակի կեսը արդեն ոչնչացված էր շինարարների կողմից: Չնայած կիսավեր վիճակին, կացարանը բավական նոր նյութ տվեց ժամանակի կառուցողական տեխնիկայի վերաբերյալ: Նրա պահպանված մասի մաքրումից պարզվեց, որ կացարանի հատակագիծը ոչ թե շրջանաձև է, այլ ձվաձիր: Նման հատակագծով կառուցված կացարան Թեղուտի բնակատեղիում հանդիպում է առաջին անգամ: Նշենք, որ հետագայում պեղած կացարանները ունեին բացարձակապես շրջանաձև հատակագիծ: Ձվաձիր հատակագծով կացարանների կառուցման սովորույթը Հին Արևելքում և այլ վայրերում, ինչպես վկայում են հնագիտական հաղորդումները, իրականացվել է ավելի վաղ փուլերում: Նրա գոյությունը մեր բնակատեղիում պետք է դիտել որպես Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած բնակարանաշինության ավելի հին ավանդույթների գոյատևման փաստ: Եթե կացարանը հատակագծով տարբերվում է իր հարևաններից, ապա նրանում հայտնաբերված մշակույթի մնացորդները ոչնչով չեն տարբերվում մյուսներից, ուստի նրանց միջև շերտագրական տարբերություններ որոնելը, կարծում ենք, ավելորդ է:

Ձվաձիր հատակագծով կացարանի մեծ տրամագիծը հավասար է 3,3, իսկ փոքրը՝ 2,8 մետրի: Հարդախառն կավաշաղախով պատրաստված հատակը նստած է գետային խճաքարի շերտի վրա, որի խորությունը գետնի մակերեսից 1,1 մ է: Կացարանի ներգետնյա մասում աղյուսներով կամ կա-

¹¹ К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, էջ 21—29.

¹² J. Mellaart, Earliest civilizations..., էջ 54.

վաշաղախով կառուցված պատի հետքեր չեն պահպանվել: Նրա եզրագծի սահմանը զատվում է միայն հատակի մնացորդներով, որը պատերին միացված է կորուսյալ բարձրացող կավացեխով:

Արևմտյան պատից 60 սմ ներս, հատակի վրա հայտնաբերվել է կավով ամրացված, անկանոն ձևի, միջին մեծության, շուրջ 18 քառ. սմ աշխատանքային մակերեսով մի գետաբար, որի վերին մակերեսը աշխատանքի հետևանքով հղկված է: Այս քարի նշանակությունը պարզելու համար կարևոր կովան եղան նրա մոտ և նրանից 15 սմ դեպի արևմուտք վանակատե 14 անավարտ ցլեփների համատեղ հայտնաբերումը, հատակին թափված սակրի, կայծքարի ջարդոտված բազմաթիվ բեկորները: Նման իրադրությունը կասկած չի թողնում, որ այդ քարը օգտագործվել է զնդանի տեղ, որի վրա պատրաստվել են աշխատանքային գործիքներ: Նման պատկեր է ստացվել նաև Նախիջևանի Քյուլ-թափայի առաջին շերտում: Սակայն Օ. Ա. Աբիբուլաևը նման քարերը համարում է բնակարանի ծածկի ծանրությունը կրող սյան հենարներ¹³, Թեղուտի կացարաններում այդպիսի քարեր հայտնաբերվում են ոչ թե բնակարանի կենտրոնում, այլ հատակի վրա, առանց մշտական որոշակի տեղի: Բնակարանի կենտրոնական մասում, սովորաբար, տեղավորված են տնտեսական օջախները՝ մոխրով լցված փոքրիկ փոսերի ձևով:

Հետաքրքիր է, որ Վերին Խաթունարխի բլուր-բնակատեղիի մ.թ.ա. V հազարամյակի շերտում մեզ հանդիպել են փոքր աշխատանքային մակերես ունեցող նույնատիպ քարեր, որոնք դրված են հատակի տարբեր մասերում և ոչ թե կենտրոնում¹⁴:

Հայկական լեռնաշխարհում և Առաջավոր Ասիայում հայտնի են Պաղեստինի (Նատուֆյան մշակույթ)¹⁵, Իրաքի (Հասուննա I)¹⁶, Մլեֆաթ¹⁷, Թեփե-Քավրա¹⁸ XIX—XVII շերտ), Միջին Ասիայի (Գեոկսուրի հովիտ¹⁹) և վերջապես Հայաստանի մ.թ.ա. IV—III-րդ հազարամյակների²⁰ (Գառնի, Նախիջևանի Քյուլ-թափա, Զրահովիտ, Քոսի ճոթեր և այլն) կլոր կացարաններ, որոնք իբրև կանոն չունեն կենտրոնական սյուներ:

Ելնելով Վ. Խաթունարխի բլուր-բնակատեղիի ու Թեղուտի փաստական նյութերից, ինչպես նաև Առաջավոր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի նոր քարեդարյան և պղնձեքարեդարյան ժամանակաշրջանների բնակարանաշինության մնացորդների համեմատական ուսումնասիրությունից, կարող ենք ասել, որ Հայաստանի պղնձեդարյան ժամանակաշրջանի կացարանները չեն ունեցել կենտրոնական սյուն: Հավանաբար նրանք ծածկված են եղել կոնաձև տիպի տանիքով կամ թեթև, հարթ ծածկով: Մեր այս համոզմունքն իր հիմքում ունի Առաջավոր Ասիայի հնավայրերի պեղումներից

¹³ Օ. Ա. Абибулаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, СА, 1963, № 3, էջ 158:

¹⁴ Ռ. Թորոսյանի պեղումների շրջառարկված նյութեր: Շերտի թվագրման համար հիմք է ծառայել յուն Հալաֆյան շքեղ դունազարդ խեցու բեկորը:

¹⁵ K. Kenyon, նշվ. աշխ., տախ. 29, J. Mellaart, Ear. Civil. էջ 22—39:

¹⁶ S. L. Lloyd, F. Safar, նշվ. աշխ., էջ 274:

¹⁷ R. Braidwood and Howe, նշվ. աշխ., էջ 50:

¹⁸ A. Tobler, նշվ. աշխ., էջ 41—45:

¹⁹ В. И. Сариниди, Некоторые вопросы древней архитектуры энеолитических поселений Гоккурского оазиса, КСИА, 1962, № 91.

²⁰ է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 7—31:

հայտնի կլոր հատակագծով կացարանների մոտավոր վերակառուցումներն ու Հայաստանում ավելի ուշ ժամանակաշրջանների վերաբերող հնագիտական ու ազգագրական նյութերի ուսումնասիրությունները:

Կլոր հատակագծով կացարանների վերակառուցմանն են անդրադարձել իրենց աշխատություններում Ջ. Մելարտը²¹, Հ. Ա. Մարտիրոսյանը²², է. Խանգաղյանը²³, է. Կարապետյանը և այլք:



Նկ. 5. Պաշտամունքային պատի մնացորդները:

Ուսումնասիրվող կացարանի հարավային կեսի մաքրման ժամանակ հայտնաբերվեցին թափված աղյուսների բազմաթիվ բեկորներ, որոնք իրենց տակ էին առել հյուղակի ներսում եղած նյութերը: Հատակի վրա փոքրիկ փոսիկի ձևով պահպանվել էր տնտեսական օջախը, որը անվրեպ ճանաչվեց նրա մեջ լցված մոխրի, կիսաաչրված ոսկորների ու նրա վրա դրվելու հետևվանքով մրոտված սառ կոշվող կավամանի բեկորների առկայությամբ:

Հյուղակի ներքին հարդարման մանրամասները լրացվեցին հյուսիսային պատի տակ տեղադրված պաշտամունքային օջախի մնացորդների հայտնաբերմամբ: Այն կառուցված էր հարդախառն կավաշաղախից պատրաստված տարբեր ձևի աղյուսներից: Նրանցից ամենամեծը դրված է պատին կից, կողքի վրա: Սա 10×30×7 սմ չափեր ունեցող աղյուս է, նրա դիմաց, 10 սմ հեռավորության վրա, իրար կողքի տեղավորված են երկու փոքր, ոճավորված աղյուսներ: Նրանցից մեկը ուներ վերին մասում հատած բուրգի, իսկ մյուսը՝ խորանարդիկի ձև (բարձրությունը՝ 10 սմ): (Նկ. № 5):

Կացարանում շինարարական այլ դետալներ չեն պահպանվել:

Նյութական մշակույթի մնացորդների հավաքածուն այստեղ ևս բաղկա-

²¹ . eHaart, Earl. Civil..., էջ 122:

²² А. А. Мартиросян, Город Тейшебаани, էջ 7—36:

²³ է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 28—29:

ցած է քարե, ոսկրե գործիքներից ու կավամանների բազմաթիվ բեկորներից: Բացի վերը հիշատակված վանակատե 14 անավարտ գործիքներից (էԳՔ 960), այստեղ հայտնաբերվեցին նաև վանակատե, կայծքարե կանոնավոր շեղբիկներ ու հավաքովի գործիքների ներդիրներ (էԳՔ 893, 896, 1503, 961, 963): Գրունտային քարե գործիքների մեջ ուշագրավ են էԳՔ 987 համարը կրող երկու գործիքի բեկորները, որոնցից մեկը սանդղկոթ է, իսկ մյուսը քարե անավարտ կացին: Հիշատակության արժանի են նաև այս պեղավայրում առաջին անգամ ամբողջական ձևով հայտնաբերված աղորիքը և հրաբխային խարամից պատրաստված քերիչ-կոկիչները:

Ութերորդ կացարանից մեկ մետր դեպի հյուսիս-արևմուտք հայտնաբերվեց երկրորդ տեղամասի փլված հորերից մեկը: Նրա մեջ լցված շինարարական մնացորդների մաքրումից հետո պարզվեց, որ պահեստահորը ևս տնակների նման ունի կլոր հատակագիծ՝ 1,12 մ տրամագծով: Պատերը կառուցված են իրար վրա դրված հարթ աղյուսների մի շարքով: Հատակի ու պատերի ստորին մակերեսների կավածեփի վրա ամրացված էին տարբեր ձևի կավամանների բեկորներ, որոնք շարված էին շատ խիտ՝ իրար կողք-կողքի: Պահեստ-հորի կավածեփ պատերն ու հատակը կավամանների բեկորներով ծածկելու սովորությունը ըստ երևույթին թելադրված էր հորը ներսից չոր և մաքուր պահելու անհրաժեշտությամբ: Իր ինքնատիպությամբ այս պահեստ-հորը Թեղուտում միակն է և ընդհանրապես շատ քիչ է հանդիպում Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական հուշարձանների տարածքում: Կավամանների բեկորներով ծածկված պահեստ-հորեր հայտնի են Թուրքմենիայի Կարա-թեփե (Ջեյթուն)²⁴ և Իրաքի Հասսուննա հուշարձաններից²⁵:

Պահեստ-հորի պատերին ու հատակին ամրացված կավամանների բեկորները իրենց կառուցվածքային ձևերով ու պատրաստման տեխնիկայով առանձնապես չեն տարբերվում բնակավայրի մասսայական կերամիկայից: Այստեղ պետք է նշել միայն ավազախառն կավաշաղախից պատրաստված, դուրս ձկված շուրթով, հարթ հատակով փոքրիկ զագաթը:

Պահեստ-հորից հայտնաբերված հնագիտական նյութերի շարքում առանձնապես արժեքավոր են պղնձե փոքրիկ դանակի շեղբիկը և պահանգավոր կայծքարե դանակը, որոնք կարևոր կովան դարձան Թեղուտի բնակավայրի գոյության ժամանակաշրջանում Արարատյան դաշտի մետաղամշակության զարգացման աստիճանը, ինչպես նաև տնտեսության հետ կապված որոշ մանրամասներ վեր հանելու համար:

Պահեստ-հորից մեկ մետր հյուսիս-արևմուտք, հողի մակերեսից 90 սմ խորության վրա հայտնաբերվեց աշխատանքային հարթ մակերեսով, անկանոն ձևի աղորիք՝ իր տրորիչով:

Իններորդ կացարան—II տեղամաս: Տեղավորված է 7-րդ կացարանից մեկ մետր հյուսիս: Նրանից պեղումների ժամանակ նկատվեցին միայն երկու հատակների շատ վատ պահպանված մնացորդներ (2,6 մ տրամագծով): Վերին հատակի կենտրոնական մասում հայտնաբերվեց սովորական մի գետաքար, որի մակերեսին նկատվում են աշխատանքի հետքեր: Այս կացարանից գտնված քարե գործիքների մեջ ուշագրավ է բազալտ գետաքարից պատրաստ-

²⁴ В. М. Массон, Энеолит южных областей Средней Азии, էջ 9:

²⁵ S. L. Lloyd, F. Safar, նշվ. աշխ., էջ 262:

ված ծանրոց-կախիչը, իսկ խեցեղենի նմուշների մեջ՝ նրա կողքին, բերանք-սիվայր դրված գլանաձև վզով մեծ կճուճի իրանի վերին կեսը:

Առաջին հատակից 20 սմ ներքև հայտնաբերվեցին երկրորդ կավածեփ հատակի հետքերը:

Առաջին և երկրորդ հատակների տրամագծերի միջև տարբերություններ չկային, և նրանք կառուցված էին ուղղակի իրար վրա: Ըստ երևույթին, առաջին հատակը փշացել էր, և բնակիչները նրա վրա նորն էին պատրաստել: Ստորին հատակի վրայից հայտնաբերվել են միայն մի քանի կտոր հասարակ խեցեղենի բեկորներ, որոնք ունեն մուգ-սրճագույն երեսապատված մակերեսներ:

Պեղավայրի հյուսիսային մասում կային նաև երկու այլ կացարանի կամ պահեստ-հորերի մնացորդներ, որոնք շատ վատ էին պահպանված: Նրանցից մեկում (Ք) գտնվեցին հասարակ կավամանի մնացորդներ, որոնցով հնարավոր եղավ վերականգնել անոթը (էՊԹ 1061): Մյուսից համարյա ոչինչ չէր պահպանվել, բացի հատակի վատ պահպանված պատառիկներից:

Երկրորդ պեղավայրի առանձնահատկություններից մեկն էլ պահեստ-հորերի մեծ քանակությունն է, որոնք տեղադրված են կացարաններից հարավ, միևնույն առանցքի վրա: Հորերից առաջինը (Ե) գտնվում է 8-րդ կացարանից երկու մետր հարավ, լցված է սպիտակ մոխրով, որի հետ խառնված են կավամանների մի քանի բեկորներ ու կիսաայրված ոսկորների մնացորդներ: Պահեստ-հորի հատակը և շուրջ 25 սմ բարձրություն ունեցող պատերը կավացեխից էին:

Երկրորդ հորից (Զ) պահպանվել էին միայն աղյուսաշեն պատի աղեղ-նահատվածը և հատակին ընկած կավամանի մի քանի բեկորներ:

Հորերի այս շարքում իր պարունակած նյութով առանձնապես հարուստ է երրորդը (Է), որի հատակի մոխրաշերտի մեջ հայտնաբերվեց կայծքարից պատրաստված, փոքր չափի, կանոնավոր բուրգաձև միջուկ: Միջուկի հայտնաբերումը լրացրեց քարե գործիքների հավաքածուն, քանի որ նրանով մենք ունեցանք ցլեփման եղանակով շինված գործիքների պատրաստման պրոցեսը վերականգնող մի շատ կարևոր ելակետային նյութ:

Հորերի հատակների խորությունը գետնի ժամանակակից մակերեսից մոտավորապես 25—30 սմ է, իսկ տրամագիծը տատանվում է 1,3—1.6 մ միջև:

Հետաքրքիր է նշել, որ հորերով ղբաղեցված տարածություն մյուս տեղամասում չկար (ըստ երևույթին նախօրոք ավերվել է):

Բնակավայրի շինարարական մնացորդների նման պատկեր բացվել է նաև Կիլիկիայի Յումուկ-թեփե բլուր-բնակատեղիի նորքարեղարյան շերտերից մեկում²⁶:

Տեղամասի պահպանված հատվածի հարավային մասում, հորերից 20 մ հարավ, նկատվեցին երկու այլ կացարանների հետքեր: Սրանց հայտնաբերման ժամանակ շինարարները արդեն ավերել էին նյութական մնացորդներ պարունակող շերտի մեծ մասը: Հորերի և այս կացարանների միջև եղած տարածության հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ինչպես առաջին պեղավայրում, այնպես էլ այստեղ բնակարանների խմբերի միջև որո-

²⁶ J. Garstang, նշվ. աշխ., էջ 24:

շակի տարածությունն բնակեցված չի եղել, ըստ երևույթին այդպիսիք եղել են հրապարակներ կամ ճանապարհ, որի շուրջը կամ երկայնքով շարված են եղել կացարանները:

Տասներորդ կացարան—II տեղամաս: Մնացորդներից ուշագրավ են նրա կենտրոնական մասում տեղավորված գետաքարը և դրա շուրջը թափված աղյուսների ու գործիքների բեկորները: Բնակարանի ներսում թափված հողակոշտերից մի քանիսի վրա պահպանվել են ծառերի բարակ ճյուղերի ու այլ բույսերի դաշվածքներ: Այդպիսի հետքեր կրող հողակոշտերը, ըստ երևույթին, կացարանի ծածկի մնացորդներն են²⁷: Այստեղ ևս մյուս հյուղակիների նման հայտնաբերվեցին քարե, ոսկրե գործիքներ ու խեցեղեն առարկաների բեկորներ: Կացարանի տրամագիծը մոտավորապես 3 մետր է:

Տասնմեկերորդ կացարան—Տեղավորված է տասներորդից 2,5 մ հարավարևելք: Նրա քիչ պահպանված փլատակներից աննշան նյութեր հավաքվեցին: Գրանցից արժե հիշատակել բաց-դարչնագույն մակերեսով կարասի շուրթի բեկորը, որի վրա սև ներկով նկարված է փոքրիկ քառաթև խաչ:

Երկրորդ տեղամասի վերաբերյալ պետք է ավելացնել նաև, որ վերջին երկու կացարաններից արևմուտք ընկած տարածքի վրա հանդիպեցին նյութական մշակութային մնացորդներ, որոնք գտնվում էին բնակատեղիի ամենավերին շերտերի մեջ: Ըստ այդմ, նյութական մշակույթի մնացորդներով կարելի է վերականգնել այդտեղ եղած կացարանների ու հորերի թիվը (հատակագծի վրա դրանք ներկայացված են կետավոր շրջանագծի ձևով):

Այսպիսով, Թեղուտի երկրորդ տեղամասում ուսումնասիրվեցին վեց կացարաններ և վեց պահեստ-հորերի մնացորդներ, որոնցից հավաքված հնագիտական ու շինարարական նյութերը հնարավորություն են տալիս ինչ-որ չափով վերականգնելու Հայաստանի պղնձեքարեդարյան բնակատեղիներից մեկի խիտ բնակեցված հատվածի ընդհանուր պատկերը:

ԵՐՐՈՐԴ ՏԵՂԱՄԱՍ

Թեղուտի բնակավայրի պահպանված հատվածներից մեկն էլ տեղավորված է առաջին տեղամասից շուրջ 50 մ հարավ, մեկ այլ բլուրի վրա: Այս պեղավայրը առաջինից այժմ բաժանված է փոքրիկ, ոչ խորը հեղեղատով:

Բլուրի հյուսիսային տափարակ մակերեսի վրա 1966—67 թվականների քաշտային աշխատանքների ժամանակ ուսումնասիրվեցին երեք կացարաններ:

Այս տեղամասի մակերեսը մյուսների նման ծածկված է 10—20 սմ հաստությամբ ունեցող աղակալած ամուր շերտով: Բնակարանների ներգետնյա մասերը կառուցված են մանր գետաքարերի հետ խառնված շիկավուն հողաշերտի մեջ: Ի տարբերություն մյուս տեղամասերի, այստեղ գետային խճաքարի ավազախառն շերտն ավելի խորն է, բնակարանների հատակի ու պատերի հիմքերը չեն դրված խճաքարի վրա:

Տասներկուերորդ կացարան (հատակագիծ № 12)—կցված էր մոխրաշագան հողաշերտով: Նրա պատերը շարված են ուղղանկյուն հարթ աղյուսների մի շարքով: Բնակարանի պահպանված ներգետնյա մասի խորությունը հողի այժմյան մակերեսից 0,5 մ է, իսկ տրամագիծը՝ 2,7: Կավածեփ հա-

²⁷ Շինարարական այս կարևոր դետալի պահպանումը և լուսանկարահանումը հնարավոր չէր: Քանի որ այն շատ փխրուն էր և բավական վատ նշմարելի:

տակին, հյուսիսային պատից 60 սմ հեռավորության վրա գտնվեց տձև, ոչ մեծ մի գետաքար, որը նույնպես նախկինում գտածների նման շրջապատված էր գործիքների բեկորներով ու թափոնով: Քարից հյուսիս-արևելք, պատի տակ նշմարվեցին պաշտամունքային օջախի մնացորդներ (տճավորված աղյուսներ): Հատակի արևելյան կեսում, փոքրիկ խորության ձևով նշմարվեց տնտեսական օջախը, որի մեջ հասարակ կավամանի բազմաթիվ բեկորներ կային: Հարավ-արևելյան պատի մոտ թափված աղյուսների տակ հայտնաբերվեցին խոշոր կենդանու սրունքի ու ազդրի ոսկորներ, ըստ որում այնպիսի դիրքում, որ կարծես թե այստեղ ժամանակին դրված է եղել կենդանու մի ամբողջ ոտք:

Կացարանից հայտնաբերված նյութերի կոմպլեքսն այստեղ ևս բաղկացած է աշխատանքային գործիքներից ու տնային սպասքի առարկաներից: Վանակատե գործիքների մեջ առանձնապես ուշագրավ է սև գույնի մեծ շեղբը (էԳԹ 1727):

Գետաքարից պատրաստված սովորական ծեծիչներից ու աղորիքների բեկորներից բացի այստեղ հայտնաբերվեցին նաև գործիքների նոր տեսակներ: Սրանցից մեկը մոտավորապես կեսից ջարդված գետաքար է, որի մի երեսը որոշ չափով շաղափված է՝ միջանցիկ անցք բացելու համար (էԳԹ 1739):

Ուշագրավ է նաև նավակաձև աղորիքի բեկորը, որը մեր հուշարձանի ձվածիր աղորիքների մեջ հանդիպում է առաջին անգամ: Ինչպես հայտնի է, նավակաձև աղորիքները թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակով: Թեղուտի քարե գործիքների մեջ նրա առկայությունը փաստորեն այժմ վկայում է, որ այդպիսիները հանդիպում են մ.թ.ա. IV հազարամյակում:

Քարե արտադրանքները ևս համալրվում են հրաբխային խարամից պատրաստված գործիքներով, որոնք օգտագործվել են որպես քերիչ:


Կերամիկայի կոմպլեքսը կազմված է սրճավուն, դարչնագույն ավաղախառն ու հարդախառն կավաշաղախից պատրաստված անոթներից: Պեսսը է նշել, որ բոլոր կացարանների համար ընդհանուր և հատկանշական են սաջեռի բեկորները, որոնցից մեկի կողին ելուտ կար, որն արված է ոչ թե շուրթի վրա, ինչպես սովորական սաջերինը, այլ կողքին: Նա իր ընդհանուր տեսքով հիշեցնում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի գնդաձև կանթերը, սակայն դեռևս շատ հեռու է այդպիսին լինելուց (էԳԹ 1822):

Տասներեֆերոդ կացարան—III տեղամաս: Տեղավորված է 12-րդ կացարանից 2 մ հարավ: Սա Թեղուտի բնակատեղիի ամենից լավ պահպանված շինվածքն է, որն իր հնագիտական հարուստ նյութերով ու շինարարական մնացորդներով համալրեց հնավայրի ողջ մշակույթը և դրանով իսկ մեծապես նպաստեց հուշարձանի ամբողջական ուսումնասիրման ու թվագրման գործին:

Կացարանի մոխրախառն հողը հեռացնելուց հետո պարզվեց, որ նա ևս նախորդների նման ունի կլոր հատակագիծ: Նրա պատերը շարված են կավաշաղախով միակցված հարթ աղյուսների մի շարքով, որոնց բարձրությունը հատակից հասնում է 90 սմ, իսկ հյուղակի տրամագիծը 2,9 մ է: Աղյուսներն ունեն 10×30×40 սմ չափեր:

Պատը ներսի կողմից ծեփված է 2—4 սմ հաստության կավաշաղախով, իսկ արտաքին կողմից նա հենվում է բնական հողին: Հետաքրքիր է, որ նրա վրա շնկատվեց մուտքի բացվածքի ոչ մի հետք: Դուրս բացվածքի բացակայությունը, ինչպես Թեղուտի այլ կացարաններում, այնպես էլ այստեղ,

մեկ անգամ ևս վկայում է, որ կիսագետնափոր հյուղակների մուտքը եղել է կացարանի վերգետնյա մասում, իսկ ելումուտը իրականացվել է փայտյա ասնդուղքի միջոցով: Բնակարանի հատակը դրված է կավախառն խճաքարի շերտի վրա:



Նկ. 6. Փեղումի XIII կացարանը:

Հատակի հյուսիսային կեսում հայտնաբերվեց մոխրի առատ կուտակում (20 սմ հաստությամբ), իսկ հարավային կեսում՝ թափված աղյուսների բեկորներ, որոնք իրենց տակ էին առել կացարանի մնացորդները: Ինչպես մյուս կացարաններում, այնպես էլ այստեղ, հայտնաբերվեցին պաշտամունքային ու տնտեսական օջախների մնացորդներ: Արևմտյան պատի տակ բացվեցին աղյուսից ու գետքարից պատրաստված 20—25 սմ բարձրությամբ ելուստներ, որոնք ծառայել են որպես նստարանների հենակներ:


Տասներեքերորդ կացարանից մեկ մետր արևելք հայտնաբերվեց ավերված պահեստ-հոր (Ք): Նրա պատերը շինված էին աղյուսով, ըստ որում աղյուսները շարված էին ոչ թե սովորական ձևով, այլ երկայնքով՝ կողքի վրա: Նման շարվածքը բնակատեղիում առաջին անգամ է հանդիպում: Ինչպես երևում է, բնակիչներին այնքան էլ չի հուզել հորի պատերը ամուր կառուցելու խնդիրը: Աղյուսներն այստեղ երեսապատված են՝ հորի ներսը մաքուր պահելու համար: Հորի տրամագիծը հավասար է 1,35 սմ, իսկ խորությունը 0,9 մ է:

Այս հյուղակից հավաքված հնագիտական նյութերի հարուստ կոմպլեքսը նախորդների նման բաղկացած է քարե, ոսկրե աշխատանքային գործիքներից ու խեցեղեն առարկաների բազմաթիվ բեկորներից: Աշխատանքային գործիքների մեջ հատկապես արժեքավոր է պղնձե քառակող ծակիչը, որը բնակատեղիում պեղված պղնձե իրերից 4-րդն է:

Խեցեղեն առարկաների խումբն այստեղ շատ մեծ է: Փոքրիկ կայարանից

հայտնաբերվեցին այնքան բեկորներ, որքան չէր հավաքվել մի քանի կացարաններում միասին վերցրած:

Հետաքրքիր է նաև կավամանների բեկորների կավաշաղախի բաղադրության տարբերության հիման վրա կատարված հաշվարկի արդյունքը, որը մոտավորապես տիպական է մնացյալ կացարաններին:



Նկ. 7. Թեղուտի բնակատեղիի II տեղամասը:

Սվազախառն կավաշաղախից պատրաստված 7 բեկորին ընկնում է հարդախառն կավից պատրաստված իրի 1 բեկոր: Իսկ շքեղ խեցեղենին բեկորները ընդհանրապես շատ քիչ են և համարյա տոկոս չեն կազմում:

Այնուհետև ուշագրավ է այն, որ այստեղից (13-րդ կացարան) հավաքվեցին վանակատի մանր ու մեծ շուրջ 750 բեկորներ, որոնք իրենց վրա չունեին աշխատանքի հետքեր, այլ ուղղակի իրենցով ներկայացնում էին քարե արտադրանքների թափոնը: Այս երևույթը, որը քիչ թե շատ բնորոշ է բոլոր կացարանների համար, ցույց է տալիս, որ աշխատանքային գործիքները պատրաստվել են կացարանի ներսում: Հնարավոր է նաև, որ այս տունը պատկանելիս է եղել քարագործության մեջ առավել մասնագիտացած վարպետի: Վերջին ենթադրության համար հիմք է ծառայում նաև անավարտ ուլունքների հայտնաբերումը միևնույն կացարանում:

Յլեփման եղանակով պատրաստված քարե գործիքները թվով քիչ են, սակայն ուշագրավ են նրանց վրա եղած կրկնակի օգտագործման հետքերը:

Վանակատե ու կայծքարե կրկնակի բանեցված գործիքների նմուշներ հայտնի են նաև Արևելքի շատ հնավայրերում: Օրինակ, Ջ. Բրայդվուդը դիտում է, որ Ջարմոյի միկրոլիթյան գործիքների մեծ մասը պատրաստված են կանոնավոր ներդիրների բեկորներից²⁸:

Տասնչորսերորդ կացարան—III տեղամաս: Հայտնաբերվել է 1967 թվականին, գտնվում է տեղամասի հյուսիս-արևմտյան մասում, 12-րդ կացարանից 15 մ հեռավորության վրա:

Նրա կառուցից պահպանվել են միայն կավածեփ հատակի մնացորդները, մոտ 20—30 սմ հաստության մշակութային շերտով: Կացարանի տրամագիծը հավասար է 3 մետրի:

Այստեղից ելած նյութական մշակույթի մնացորդները առանձնապես շեն տարբերվում նախորդ կացարաններում հայտնաբերվածներից: Ուշագրավ է միայն քարե թասի կամ լայն սանդի բեկորը (տախ. III № 3):

Երրորդ տեղամասի այլ հատվածներում կատարված ստուգողական աշխատանքները նոր կացարաններ հայտնաբերելու նպատակով արդյունք անցան: Այս հետազոտությունների հետևանքը եղավ այն, որ կացարաններից որոշ հեռավորության վրա (երբեմն մինչև 10 մետր) հայտնաբերվեցին ջարդոտված խեցեղենի կույտեր, որոնք բաղկացած էին հիմնականում կարասների կտորտանքից:

Այսպիսի պատկեր բացվել է նաև հյուսիսային Իրաքի Ջարմո հնավայրում²⁹:

Ինչպես երևում է շինարարական մնացորդների ուսումնասիրությունից, Թեղուտի բնակատեղին բաղկացած է կլոր, կիսադետնափոր փոքրիկ կացարաններից ու պահեստ-հորերից, որոնք տեղավորված են բնակավայրի տերիտորիայում առանձին փոքրիկ խմբերով: Կացարանների միջև ընկնող տարածությունները, ըստ երևույթին, բակերի դեր են կատարել, որոնք շատ հարմար են նաև տնտեսական այլ աշխատանքների համար:

Թեղուտի բնակատեղին իր ընդհանուր պատկերով, շինարարական առանձնահատկություններով, կացարանների տիպերով ու հատակագծային նրբութայուններով նմանվում է Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական տնտեսություն վարող ցեղերի կառուցողական պրակտիկայում իրականացված բնակարանաշինական ձևերին ու բնակավայրերի հատակագծային առանձնահատկություններին:

²⁸ R. Braidwood and Howe, նշվ. աշխ., էջ 45:

²⁹ Նույն տեղում, էջ 46:

Բնակատեղիի կացարաններից մի քանիսի պատերը շարված են հարդախառն շաղախով պատրաստված ուղղանկյուն հարթ աղյուսների մի շարքով (2, 5, 13 և այլն), որոնք դրված են կողք-կողքի, այնպես որ բնակարանի ներսում ստացվի համեմատաբար հարթ մակերես ունեցող պատ: Աղյուսները իրար հետ կապված են 2—3 սմ հաստություսն ունեցող կավացեխով: Աղյուսաշեն պատերը ներսի կողմից ծեփված են նույն բաղադրությունն ունեցող ծեփով, իսկ դրսից ամրացված են հողով: Այս տիպի կացարանների կառուցման պրակտիկան լայն տարածում է ունեցել Առաջավոր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի նորքարեդարյան, պղնձեքարեդարյան ու վաղբրոնզեդարյան մշակույթի փուլերում: Նրանք հայտնի են Հին Պաղեստինի Նատուֆյան հուշարձաններում (Երիբոն, Վադի Փալահ)³⁰, Հյուսիսային Միջագետքի (Իրաք) Հասուննա I C³¹, Թեւ Արպաշիայի մինչ Հալաֆյան³², Թեփե Գավրայի XIX—XVII³³, Նախիչևանի Քյուլ-Թափայի I³⁴ շերտերից, ինչպես նաև Արարատյան դաշտի, Տերտերի ձոր³⁵ բլուր-բնակատեղիի ու Ղազախի³⁶ հուշարձաններից:

Բնակարանաշինական մյուս ձևը Թեղուտում ավելի պարզունակ ու հասարակ է և հիշեցնում է պատմական Արևելքում գոյություն ունեցած շինարարական տեխնիկայի զարգացման ավելի նախնական աստիճանը: Այդպիսի կացարանների պատերը կառուցված են կավաշաղախով, որի հաստությունը չի անցնում 10 սմ-ից: Պատերը սահուն թեք անցումով միանում են կավով ծեփված հատակի հետ:

Կավաշաղախից պատրաստված կացարանների կառուցման պրակտիկան հանդիպում է Հյուսիսային Իրաքի Մլեֆաթ հուշարձանում³⁷, Արարատյան դաշտի Աղվեսի-բներ բնակատեղիում³⁸, Խաթունարխում և այլ վայրերում: Կավաշեն կացարանների լավագույն նմուշները հայտնի են նաև Հյուսիսային Իրաքի նախալեռնային գոտում գտնվող Ջարմո բնակավայրից³⁹:

Թեղուտում դիտվում է նաև շինարարական մի հետաքրքիր մանրամասն: III տեղամասի պահեստ-հորի պատերը շարված են ուղղահայաց դրված աղյուսներով, իսկ II տեղամասի պահեստ-հորի աղյուսաշեն պատերը ներսի կողմից ծեփված են կավով, որի մեջ կան կոտրատված ամանների բեկորներ:

Բնակարանների ծեփված պատերն ու հատակները խնամքով հարդարվել են: Մի քանի կացարանների պատերի ներքին մակերեսը ներկել են կարմիր ներկով: Հատակների վրա երբեմն հանդիպում են փոփած խսիրի դաշվածքի հետքեր:

Նման մանրամասների առկայությունը հաստատում է առաջավորասիա-

³⁰ K. M. Kenyon, նշվ. աշխ., 6, and J. Mallaart. Earli. Civil. էջ 24, fig. 6.

³¹ L. Lloyd, F. Safar, նշվ. աշխ., էջ 274:

³² M. E. Mallowan J. C. Rose, Prehistoric Assyria, The Excavations at Tell Arpachiyah, London, 1935, էջ 25—32:

³³ A. Tobler, նշվ. աշխ., էջ 41—45:

³⁴ O. A. Абибулаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе близ Нахичевани, СА, № 3, 1963, էջ 160:

³⁵ Ս. Սարգսյան նախնադարյան համայնական հասարակարգը Հայաստանում, էջ 142:

³⁶ И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, ук. соч., էջ 149:

³⁷ R. Braidwood and Howe, նշվ. աշխ., էջ 50—51:

³⁸ Ս. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 147:

³⁹ R. Braidwood and Howe, նշվ. աշխ.:

կան բնակչության նախասիրած սովորություններից մեկը ևս: Ներկած պատերով ու հատակներով կացարանների մենք հանդիպում ենք Երիքոնում⁴⁰, Կենտրոնական Անատոլիայի Կոնիայի դաշտի Չաթալ-հույուկ⁴¹, ինչպես նաև Իրանական սարահարթի Թեփե-Սիալկ II⁴² բնակատեղիներում:

Առաջավորասիական հուշարձանների շինարարական ձևերի ու բնակատեղիների հատակագծերի համադրությունը ցույց է տալիս, որ մեկուսի կլոր, կավաշեն ու աղյուսաշեն փոքրիկ կացարանների կառուցման պրակտիկան հանդես է գալիս վաղ երկրագործական նորքարեդարյան-պղնձեքարեդարյան բնակավայրերի (մ.թ.ա. 6—4-րդ հազարամյակների) վաղ շերտում: Սրանք տոհմական համայնքի զարգացման որոշակի մակարդակին համապատասխանող կառույցներ են: Թեղուտի փոքրիկ հյուղակները թերևս պատկանել են զուգամուսնական ընտանիքներից բաղկացած տոհմական համայնքի, որի անդամների թվական աճը մղում է դեպի մեկուսի կացարանների կառուցում և ոչ թե կենտրոնական կացարանին կից նոր բնակարանների կառուցումը, ինչպես այդ նկատվում է Միջագետքի, Հյուսիսային Սիրիայի առավել բարձր զարգացման մակարդակ ունեցող հուշարձաններում:

Նման իրադրությունը բնորոշ է տոհմական համայնքի զարգացման վաղ փուլերի համար, երբ դեռևս չէին առաջացել գերդաստանները և նրանց հետ կապված հասարակական տոհմական բավականաչափ բարդ հարաբերությունները: Այսպես, առանձին են կառուցված Երիքոնի մինչկերամիկական A շերտի⁴³, Հասսուննա C⁴⁴, Թեյ-Հալաֆի ստորին⁴⁵ շերտերը, Ջեյթունի նորքարեդարյան կացարանները⁴⁶ և այլն:

Թեև Թեղուտի կացարանների շինարարական ձևերը, բնակարանների հատակագծերը բավականաչափ արխաիկ են և նման վերը հիշատակված նորքարեդարյան հուշարձաններին, այնուամենայնիվ, ինչպես ստորև կտեսնենք նույնիսկ մշակույթի ամբողջական ուսումնասիրությունից, բնակատեղին իր համընդհանուր տնտեսական-մշակութային զարգացումով անկասկած ալելի բարձր էր առաջավոր և փոքրասիական իր նախորդներից:

⁴⁰ K. M. Kenyon, Jericho and its..., էջ 185:

⁴¹ J. Mallaart, Excavation at Catal Hüyük. Anat. St. V: XIII and Earliest civilizations. էջ 77—100:

⁴² M. E. L. Mallowan, Early Mesopotamia and Iran. London 1965, էջ 35:

⁴³ K. M. Kenyon, Earliest Jericho, Antiquity, XXXIII, № 129, էջ 6—7:

⁴⁴ Lloyd and Safar, նշվ. աշխ., էջ 174:

⁴⁵ J. Mellaart, Earliest Civil..., էջ 122, նկ. 166:

⁴⁶ B. M. Массон, Новые раскопки, էջ 154—158:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Նախնադարյան համայնական հասարակության նյութական բարիքների արտադրության պրոցեսի ու արտադրողական ուժերի զարգացման մակարդակի ճանաչման գործում խոշոր նշանակություն ունի հնագիտական աշխատանքների միջոցով հայտնաբերված անցյալի աշխատանքային գործիքների՝ մեզ հասած մնացորդների ուսումնասիրությունը:

Ինչպես հայտնի է, նախնադարյան մարդու աշխատանքային գործիքները եղել են նրան շրջապատող բնությունից վերցրած առարկաները, որոնք օգտագործվել են ինչպես բնական ձևով, այնպես էլ որոշակի մշակման ենթարկվելուց հետո:

Աշխատանքային գործիքների մի զգալի մասը պատրաստված է եղել անշուշտ փայտից, որն իր ֆիզիկական հատկությունների պատճառով ժամանակի ընթացքում փտել ու անվերադարձ ոչնչացել է: Այս իսկ պատճառով անցյալի նյութական մշակույթի հավաքածուներում հստակ են գալիս հիմնականում քարից ու ոսկրից պատրաստված աշխատանքային գործիքները:

Հնագիտական հետազոտությունների պրակտիկայում սովորաբար շատ դժվար է աշխատանքային գործիքներն ուսումնասիրել արտադրական կոմպլեքսներով կամ սերիաներով, լավ պահպանված վիճակում: Նրանք հաճախ հանդես են գալիս վատ պահպանված, եզակի օրինակներով, որոնք ավելի են դժվարացնում անցյալում կատարված աշխատանքային պրոցեսների վերականգնումն ու նրանց մեջ գործիքների օգտագործման եղանակի հաստատումը: Ուստի և խիստ անհրաժեշտ է հայտնաբերված գործիքներն ուսումնասիրել որքան հնարավոր է բազմակողմանի ու բծախնդիր, լայն համադրությունների միջոցով:

ՔԱՐԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ինչպես վերը տեսանք, Թեղուտի վաղ երկրագործական բնակատեղիի պեղումների միջոցով ձեռք է բերվել քարից, ոսկրից, մետաղից, պատրաստված աշխատանքային գործիքների ու խեցեղենի բավականին հարուստ կոմպլեքս, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու Արարատյան հովտի վաղ երկրագործական-անասնապահական կենցաղով ապրող տոհմերից մեկի տնտեսության մի շարք ճյուղերի մասին: Աշխատանքային գործիքների մեջ իրենց տեսակարար կշռով ու նշանակությամբ առանձնակի տեղ են գրավում քարե գործիքները:

Քարե գործիքները պատրաստված են Հայաստանում շատ տարածված քարատեսակներից, որոնցից բնակատեղիում առավել գործածական են եղել

վանակատը, կայծքարը, բազալտը, հրաբխային խարամը ու զանազան տեսակի գետաքարերը:

Իրենց քանակութեամբ ու բազմատեսակութեամբ զատվում են վանակատից ու կայծքարից ցլեփման եղանակով պատրաստված գործիքները, որոնց համար հումք են ծառայել Արարատյան դաշտը շրջապատող հրաբխային լեռնազանգվածների հարուստ պաշարները¹: Թեղուտի քարե գործիքների հումքը բերված է Արագածից: Այդ հաստատվում է Արագածի վանակատի ու բնակավայրի հավաքածուի նմուշների արտաքին, ֆիզիկական հատկանիշների համադրությունից: Թե Արագածի և թե Թեղուտի վանակատը գրեթե անգույն է, մասամբ միայն ծխագույն, երբեմն էլ կարմրավուն, անթափանցիկ երակներով: Կարծքարից պատրաստված գործիքների հումքը ևս բերված է Արագածից:

Քացի բերովի քարատեսակներից, Թեղուտի երկրագործները ցլեփման եղանակով գործիքներ են պատրաստել նաև վանակատ-գետաքարերից, որոնք մեծ քանակութեամբ հանդիպում են Քասախ գետի նախկին հունի մեջ:

Հետաքրքիր է նկատել, որ Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի բազմաթիվ ուշ նեոլիթյան ու էնեոլիթյան բնակատեղիների քարե գործիքների հավաքածուների մեջ, իբրև կանոն, ցլեփման համար բերված քարատեսակների հետ միասին հանդիպում են նաև վանակատն ու կայծքարն ցլեփված գետաքարեր, որոնք հավաքվել են բնակավայրը շրջապատող տերիտորիայից: Այդպիսի երևույթի մենք հանդիպում ենք Վ. Խաթունարխի, Ծաղկունքի, Շամիրամալթիի, Յումուկ-թեփեի, Գեոյ-թեփեի ու այլ բնակատեղիների քարե գործիքների հավաքածուներում: Ինչպես տեսնում ենք, Թեղուտի բնակատեղիում դիտված երևույթը տիպական է առաջավորասիական շատ բնակավայրերի համար, որով հաստատվում է նեոլիթ-էնեոլիթյան տնտեսության յուրահատուկ կողմերից մեկը, այն է՝ ցլեփման համար պիտանի քարերի ձեռք բերումը և տեղափոխումը բնական հումքի աղբյուրներից ինչպես և տեղական հումքի օգտագործումը: Մեր ունեցած միջուկների ու այլ նյութերի հիման վրա կարելի է ենթադրել, որ առավել վաղ ժամանակաշրջաններում անաչված քարի հավաքման վայրերը շարունակել են հումք մատակարարել նաև պղնձեքարեդարյան ժամանակաշրջանում:

Ցլեփման եղանակով պատրաստված քարե արտադրանքները, ըստ իրենց ձևերի ու աշխատանքի բնագավառների, ներբաժանվում են մի քանի խմբերի. պահանգավոր դանակների ներդիրներ, հավաքովի մանգաղների ներդիրներ, ինքնուրույն դանակների շեղբեր, քերիչներ, աշխատանքի հետքեր ունեցող բեկորներ, միջուկներ և գործիքների պատրաստման հետևանքով առաջացած կիսաֆաբրիկատներ ու թափոն:

Պահանգավոր դանակների ներդիրներ—վանակատից ու կայծքարից ցլեփված այս շեղբիկներն ունեն 6—7 սմ երկարություն, 1,5—2 սմ լայնություն: Կտրվածքում եռանկյունի են կամ սնկանոն սեղանաձև: Ուղղահայաց դիրքում նրանք երևում են աղեղնաձև, որը վկայում է նրանց կոնաձև միջուկից պոկված լինելու մասին: Աշխատող կողմերի վրա բացակայում են ցլեփվելուց հետո, ճզմելու եղանակով մշակման հետքերը (ոետուշը), դրա փոխարեն բա-

¹ Կ. Ն. Պաֆենգրյց, Հայաստանի և Փոքր Կովկասի՝ նրա կից մասի գեոլոգիական ակնարկ, Երևան, 1947, էջ 292—293:

նած կողերի վրա առկա են փոքրիկ աղեղնաձև անհավասար մեծության պոկվածքներ, որոնք արդյունք են երկարատև աշխատանքի: Ներդիրների համար ցլեփված շեղբիկների մեծ մասի ծայրերը կտրված են, բայց կան նաև ամբողջականները, որոնց երկարությունը չի անցնում 7 սմ.-ից: Իրենց ձևով սրանք նման են նեոլիթի ժամանակաշրջանի դանականման շեղբերին, սակայն որպես կանոն Թեղուտի օրինակները ավելի փոքր են և նրանց ծայրերը կտրիչ կամ խաղիչ չեն օգտագործվել:

Գործիքների այս խմբի արտաքին տեսքի ու օգտագործման բնագավառների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի երկրորդ տեղամասի առաջին հորում գտնված ոսկրե պահանգով, ամբողջական դանակը, որն ունի կայծքարի շեղբ: Ըստ երևույթին, նման ներդիրներն ունեցել են նաև փայտե պահանգներ, որոնք չեն պահպանվել (տախ. I № 1, 3, 9, 11):

Վաղերկրագործական ու անասնապահական տնտեսության այս էտապում, երբ աշխատանքի բնագավառների տարաբաշխումը այնպես ակնհայտ չէր, ինչպես հետագայում, պահանգավոր դանակները պետք է որ ունենային օգտագործման լայն ոլորտներ: Այսպես, նրանք կարող էին ծառայել թե՛ փայտ կտրելու, թե՛ կաշի մշակելու, թե՛ միս կտրելու, թե՛ եղեգն քաղելու և թե՛ այլևայլ աշխատանքներ կատարելու համար: Սակայն բոլոր դեպքերում պահանգավոր դանակները եղել են միայն ու միայն կտրող գործիքներ: Ուսումնասիրվող գործիքների այս տիպը իր համադրություններն ունի Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի բաղամթիվ բնակատեղիներում:

Նույնանման ներդիրներ հայտնաբերվել են Աղջաղալա I, II բնակավայրերում², Նախիջևանի Քյուլ-թափա I շերտում³, Շամիրամալթիում⁴, Գեոյ-թեփե Մ շերտում⁵, Պիջիլի-թեփեում⁶, Յումուկ-թեփեի XXIII—XIX շերտերում⁷, Շոմու-թեփեում և այլուր:

Հավաքովի մանգաղի ներդիրներ—Գործիքների այս խումբը մեր կոմպլեքսում ներկայացված է միայն կայծքարից պատրաստված տեսակներով: Նրանք ունեն 2—4 սմ երկարություն, 1,5—2 սմ լայնություն: Կտրվածքում սեղանաձև են կամ եռանկյունաձև: Շեղբիկների բանած կողերը աշխատանքի հետևանքով բթացած են և ունեն մանր անհավասար պոկվածքներ: Կան այնպիսիները, որոնց միայն մի կողմն է աշխատել, իսկ մյուս կողի վրա պահպանվել է ամուր կպած կավե շերտը: Վերջինս վկայում է, որ նրանք պահանգի հետ ամրացված են եղել կավով: Մանգաղի կավով ամրացված ներդիրներ հայտնի են Երիքոնի, Զեյթունի բնակավայրերից: Դրանք ցլեփված են մեծ մասամբ ուղիղ, ոչ բարձր միջուկներից կամ պատրաստված են այլ շեղբիկների բեկորների վրա: Դրանց ծայրերը քիչ կլորացված են (տախ. I № 5, 10, 12, 13, 14, 15, 16, և նկ. 8 № 1):

Պետք է նշել, որ Թեղուտի բնակատեղիում չկան մանգաղների ռեսուրսված ներդիրներ, որոնք սյնքան տիպական են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի՝

² Աղջաղալա I և II բնակավայրերի նյութերը պահվում են էջմիածնի զավառագիտական թանգարանում:

³ O. A. Абу́лаев, նշվ. աշխ., էջ 252:

⁴ W. Jenny, նշվ. աշխ., էջ 291:

⁵ B. Brown, Excavations in Azarbaijan, էջ 228, նկ. 47:

⁶ R. Dyson and G. Young, նշվ. աշխ., էջ 19—26, տախ. III:

⁷ J. Garstang, նշվ. աշխ., էջ 51, նկ. 29:

Հայկական լեոնաշխարհի ու այլ շրջանների վաղ բրոնզեդարյան մշակույթին: Մեր կոմպլեքսի օրինակներն ավելի շատ նման են վաղ երկրագործական բնակատեղիների առավել հին շերտերից հայտնի նմուշներին: Նրանք իրենց ակնհայտ համադրութուններն ունեն Վ. Խաթունարխի⁸, Մաղկունքի⁹, Շամիրամալթի III¹⁰, Թել-Հալաֆ¹¹, Յումուկ-թեփեի XXIII—XIX շերտերի¹², Նրիքոնի (Պաղեստին)¹³, Սիալկ I, Ջեյթունի¹⁴ և այլ բնակավայրերում:

Հիշատակված նորքարեդարյան ու պղնձեքարեդարյան բնակատեղիներից մի քանիսում (Վ. Խաթունարխի, Նրիքոն, Սիալկ I, Ջեյթուն) հայտնաբերված են ոսկրե պահանգով հավաքովի մանգաղներ, որոնց ներդիրները հար և նման են մեր օրինակներին, սակայն Թեղուտում ոսկրե պահանգներ չէին գտնվել: Մի հանգամանք, որը վկայում է այդպիսիների փոխարինումը փայտե պահանգներով: Նման երևույթը տիպական է նաև զարգացած նորքարեդարյան-պղնձեքարեդարյան այլ բնակավայրերին: Օրինակ, եթե Սիլակ I և Ջեյթունում նրանք գոյութուն ունեն, ապա Սիլակ II-ում և Գեոկսյուրի օւղեսում արդեն բացակայում են:

Ներդիրներ կոշվող գործիքների խմբի մեջ առանձնակի ուշադրության են արժանի (էԳԹ 1059) և II տեղամասի III և III տեղամասի II) կացարաններից հայտնաբերված վանակատե երկու շեղբիկները, որոնք ունեն 7 սմ երկարություն և 1,5 սմ լայնություն: Նրանց աշխատող սայրերը և իրանի կողերը ռետուշված են մեծ անկյան տակ այնպես, որ մշակման հետևանքով պոկված բեկորի հետքը ծածկում է շեղբիկի լայնքի մեծ մասը: Իրենց ընդհանուր ձևով այս շեղբիկները հեռավոր նմանություն ունեն մ.թ.ա. III հազարամյակի ատամնավոր՝ ամբողջ մակերեսը ռետուշված գործիքներին: Սակայն մեր ունեցած օրինակների վրա դեռևս պակասում է քարի մշակման այն խնամքը, որը տարվում է վաղ բրոնզեդարում, գործիքի օգտակար աշխատանքի գործակիցը բարձրացնելու համար:

Հետաքրքիր է, որ Յումուկ-թեփեի պղնձեքարեդարյան շերտերի XXIII—XIX ցլեփված քարե շինվածքների մեջ ևս բազմաթիվ ոչ ռետուշված գործիքների շարքում կա սայրերը մեծ անկյան տակ մշակված քարե գործիք:

Թե՛ Յումուկ-թեփեի պղնձեքարեդարյան շերտերում և թե՛ Թեղուտի բնակատեղիում կարծես ընդհանուր է ճզմելու եղանակով մակերեսները մշակված գործիքների պակասը: Սա ցույց է տալիս, որ նախնադարյան տնտեսության զարգացման մակարդակի տեսակետից տարբեր մշակույթների պատկանող Թեղուտի ու Յումուկ-թեփեի պղնձեքարեդարյան շերտերը գտնվել են նյութական բարիքների արտադրության մոտավորապես միևնույն մակարդակի վրա:

Ինֆնուրույն դանակներ—Գործիքների այս տեսակից Թեղուտում գտնվել է երկու օրինակ: Նրանցից մեկը սև վանակատի միջուկից ցլեփված մեծ դանակի շեղբի բեկոր է 3 սմ լայնությամբ և 4 սմ երկարությամբ: Նրա աշխատող կողը, ի տարբերություն մինչ այժմ նկարագրված գործիքների, մշակ-

⁸ էԳԹ 2684, 2702 և այլն:

⁹ էԳԹ 2417, 2412 և այլն:

¹⁰ V. Jenny, նշվ. աշխ., էջ 292:


¹¹ V. Oppenheim, նշվ. աշխ., աղ. XXXV, № 1, 2:

¹² J. Garstang, նշվ. աշխ., էջ 51, նկ. 29:

¹³ K. Kenyon, Jeriche and Its..., էջ 185:

¹⁴ B. M. Maccon, նշվ. աշխ., էջ 160, № 3:

ված է հղկման եղանակով, մի հանգամանք, որը հատուկ չէ նույնիսկ հետագա շրջանին: Մյուս կողմը ավելի հաստ է ու անմշակ, կոտրվածքում ունի անկանոն սեղանաձև տեսք: Մտովի վերականգնելով դանակի շեղբի իսկական մեծությունը, մենք տեսնում ենք, որ այս օրինակը իր շափերով բացահայտորեն տարբերվում է Թեղուտի մնացած դանակներից և իր շափերով ավելի մոտենում է Շամիրամալթիի, Խաթունարխի ու Մըխլ-Թափա բնակատեղիների մեծ դանակներին (տախ. I № 8):




Նկ. 8. Վանակատե և կայծքարե ցլեփված քարի արտադրանքի նմուշներ:

Մյուս դանակը ևս պատրաստված է սև վանակատից, ունի 6 սմ երկարություն, 2,5 սմ լայնություն, 0,4 սմ հաստություն (էԳԹ 1761): Կտրվածքում անկանոն սեղանաձև է: Նրա բանող երկու կողերն էլ ենթարկված են սեղմելու եղանակով մասնակի մշակման, այն էլ միայն կտրող սայրերի կողմից: Շեղբի վրա առկա են երկկողմանի օգտագործման հետքեր: Այս շեղբը առաջինի նման եզակի է և իր մշակման առանձնահատկություններով ավելի շուտ հիշեցնում է ուշ նեոլիթյան ու վաղ էնոլիթյան բնակավայրերից հայտնի տիպերը (նկ. 8 № 2): Այդպիսի շեղբեր հայտնաբերված են Վ. Խաթունարխի, Մաղկունքի, Աղջաղալայի բնակավայրերում¹⁵:

Քերիչճեք—Իրենց պատրաստման ձևերով շատ բազմազան ու տարատեսակ են վանակատի համեմատաբար մեծ ցլեփներն ու վանակատ-զետաքարերի ճեղքված բեկորները: Նրանցից մի քանիսը Թեղուտի բնակիչներն օգտագործել են որպես քերիչներ: Այս քարե սուր կողերի վրա հաճախ կարելի է տեսնել աշխատանքի հետևանքով առաջացած փոքրիկ պոկվածքներ:

¹⁵ Մաղկունքի (Մըխլ-Թափա) բնակատեղիի հնագիտական իրերի հավաքածուն պահվում է էջմիածնի զավառագիտական թանգարանում, № 8 կոլեկցիայում, իսկ Վ. Խաթունարխի բլուր-բնակատեղիներինը՝ № 16-ում, Աղջաղալայինը՝ № 9-ում:

Քերիչների առավել կանոնավոր տեսք ունեցող օրինակներից է առաջին տեղամասի 5-րդ կացարանից գտնված նմուշը (էԳՔ 2668): Սա վանակատի ոչ ճիշտ եռանկյունաձև բեկոր է, որը պոկված է, ըստ երևույթին, մեծ միջուկից: Քերիչի աշխատող կողի վրա առկա են փոքրիկ պոկվածքներ, իսկ մյուս կողերը անմշակ են: Նրա բարձրությունը 6 սմ է, աշխատող կողի երկարությունը՝ 7 սմ, հակառակ կողմը նեղ ու հաստ և շատ հարմար է ձեռքով բռնելու համար (նկ. 9):



Նկ. 9. Քերիչներ վանակատից:

Քերիչների հավաքածուն Քեղուտում լրացվում է ցլեփված գետաքարերի կիսազնդաձև և այլ տեսակի բեկորներով, որոնք գործիքի ֆունկցիա են կատարել պատահական հանգամանքների բերումով:

Ցլեփման եղանակով պատրաստված քարե շինվածքների մեջ բացակայում են նետավող գործիքների մասերը՝ նետասլաքներ, նիզակի կամ տեգի ծայրեր: Մեր հավաքածուի մեջ առկա է միայն մեկ քարե իր, որը հարմար կլիներ որպես նիզակի կամ տեգի ծայր օգտագործել: Դա պատրաստված է կարմիր շղեր տունեցող վանակատից, ունի անկանոն ուժքի ձև: Նրա փայտի մեջ մտնող ծայրը բարակ է, իսկ հարվածողը՝ ավելի հաստ ու սուր: Երկարությունը 7 սմ է, լայնությունը՝ 3:

Այստեղ արժե նշել, որ Առաջավոր Ասիայի զարգացած նորքարեդարյան ու պղնձեքարեդարյան Հաստուննա, Քել-Հալաֆ, Ջառմո, Յումուկ-թեփե XXIV—XVI, Բանահլիկ, Պիջլի-թեփե, Սիալկ II—III, Միջին Ասիայի Ջեյթուն և Հյուսիս-արևմտյան Կովկասի բնակատեղիների հնագիտական նյութերի մեջ ընդհանրապես բացակայում են նետավող զենքերի համար պատրաստված քարե այնպիսի նետասլաքները, ինչպիսիները հայտնի են առավել վաղ բնակավայրերում (Չաթալ-հույուկ VIII—IX, Յումուկ-թեփե XXXIII—XXIX, Երիբոն, նախակերամիկական A շերտ և այլն):

Քարե կանոնավոր նետասլաքները պակաս նկատելի են նաև Հայկական լեռնաշխարհի ու Արարատյան դաշտի վաղ երկրագործական մյուս բնակավայրերի նյութերի մեջ: Նախիջևանի Քյուլ-թափայի, Շամիրամալթիի, Խաթունարխի, Մաղկունքի և, վերջապես, Քեղուտի հավաքածուներում դրանք համարյա լրիվ բացակայում են:

Այս ընդհանուր երևույթը, մեզ թվում է, չպետք է բացատրել որսորդու-

թյան դերի անկումով կամ նետ ու աղեղը՝ պարսատիկով փոխարինելու հանգամանքով: Հավանական է, որ զարգացած երկրագործական տնտեսության պայմաններում մշակվող բազմապիսի գործիքների սրածայր ցլեփները, ինչպես նաև ոսկորի սուր բեկորները լիովին կարող էին փոխարինել պատրաստի նետասլաքներին: Միայն այս եղանակով կարելի էր ապահովել նեոլիթ-էնեոլիթյան բավականաչափ զարգացած որսորդության սահանջները համապատասխան զենք հայթայթելու տեսակետից:

Միջուկներ—Նախնադարյան համայնական հասարակության նյութական արտադրության մեջ անհրաժեշտ քարե գործիքների պատրաստման համար ելակետային նշանակություն ունի միջուկների ընտրությունը և նախապատրաստումը: Այդ են վկայում հայկական լեռնաշխարհի, Առաջավոր Ասիայի, Հյուսիսային Կովկասի ու այլ մշակութային օջախներին բնորոշ միջուկները, որոնք իրենց ձևերով ու մշակման առանձնահատկություններով ժամանակագրական հստակ տարաբաշխման են ենթարկվում:

Թեղուտի պեղումների ժամանակ հայտնաբերվել են պղնձեքարեդարյան ժամանակներին բնորոշ կոնաձև միջուկներ: Դրանցից մեկը վանակատից է, մյուսը՝ կայծքարից: Վանակատի միջուկի բարձրությունը 2,8 սմ է, հարվածող հարթակի տրամագիծը՝ 3,9: Յլեփվող կողերի վրա առկա են պոկված մանր շեղբիկների հետքերը (տախ. I № 4):

Երկրորդ միջուկի (նկ. 8 № 3) բարձրությունը 6,5 սմ է, հարթակի տրամագիծը՝ 3,5: Յլեփվող կողերից պոկված են կանոնավոր ներդիրներ, որոնց հետքերը լավ երևում են միջուկի կողերին:

Միջուկների մանրազնին ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանք խնամքով նախապատրաստվել են ու հետո ցլեփվել մեծ վարպետությանը: Միջուկից շեղբեր պոկելու առաջին պայմանը հարվածող հարթակի մակերեսի նախապատրաստումն է, այնպես որ հարվածի կամ սեղմելու վճռական պահին հարվածը շասհի, և պոկվի անհրաժեշտ մեծության շեղբիկ: Այդ նպատակով, ինչպես այլ վայրերում, այնպես էլ Թեղուտում, միջուկների հարթակները ենթարկվել են հատուկ մշակման: Մեր ունեցած վանակատի միջուկի հարթակը մանր ծակոտկեն է, որոնք լցված են կավով, իսկ կայծքարը՝ մանր ցլեփված:

Բացի նախօրոք մշակված միջուկներից, Թեղուտում ցլեփվել են նաև վանակատի գետաքարեր ու մի դեպքում նաև կրաքար:

Կիսաֆարիկառներ—Քարե արտադրանքների մեջ առկա են նաև անավարտ գործիքների տեսակներ: Այդպիսիներից ուշագարավ են 8-րդ կացարանի «գնդանի» մոտ հայտնաբերված 14 գործիքների անավարտ նմուշները:

Սրանք անկանոն, եռանկյունաձև, կտրվածքում սեղանաձև բարակ ցլեփներ են, որոնք ունեն 2—3 սմ բարձրություն: Հավանաբար դրանք պետք է դառնային հավաքովի մանգաղի կամ այլ գործիքի ներդիրներ, սակայն ինչ-որ պատճառով մնացել են անավարտ:

Կացարանների պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները ամենուրեք ուղեկցվում էին օգտագործված քարատեսակներով, գործիքների պատրաստման հետևանքով առաջացած բեկորներով:

Բնակատեղիի քարե շինվածքների տեսակների քանակական հարաբերությունը ավելի պարզ պատկերացնելու նպատակով այստեղ արժե բերել 3-րդ տեղամասի 2-րդ (№ 13) կացարանի ցլեփված քարե իրերի հաշվարկը, որն ընդհանուր առմամբ տիպական է Թեղուտի կացարանների համար:

13-րդ կացարանից հավաքվեց՝	
կանոնավոր ներդիրներ և օգտագործված բեկորներ վանակատից	7 հատ
կանոնավոր ներդիրներ և օգտագործված բեկորներ կայծքարից	4 »
վանակատի դետաքարերի և կանոնավոր միջուկների տարածք բեկորներ	650 »
կրաքարից ցլեփված շեղբիկ	1 »

Ինչպես տեսնում ենք, թափոնը կազմում է քարե առարկաների մնացորդների գերակշռող մասը: Երբ համեմատության մեջ ենք դնում Թեղուտի և ավելի վաղ շրջանների բնակատեղիների քարե արտադրանքները, տեսնում ենք, որ Թեղուտի երկրագործների մոտ թափոնը ավելի շատ է, որը վկայում է պղնձեքարեդարյան ժամանակաշրջանում քարի մշակման նկատմամբ հոգատարության պակասի մասին:

Այնուհետև, կացարանի ներսում անավարտ գործիքների ու թափոնի հայտնաբերումը վկայում է, որ գործիքները պատրաստվել են հենց բնակարանի ներսում բնակիչների կողմից, և ուր այստեղ դեռևս չէր իրականացել աշխատանքի բաժանման երկրորդ փուլը՝ արհեստի անջատումը երկրագործությունից:

Բացի վանակատե և կայծքարե ցլեփման եղանակով պատրաստված գործիքներից, Թեղուտի կոմպլեքսի մեջ զգալի քանակություն են կազմում նաև բազալտից ու այլ տիպի քարերից պատրաստված գործիքները: Սրանց հումքի հիմնական աղբյուրը եղել է Քասախ գետի հունը:

Այս տիպի քարերից պատրաստված գործիքների մեջ մտնում են աղորիքները, սանդերը, տրորիչները, կոկիչները, կացինները, ծանրոց-կախիչները և կենցաղում օգտագործվող այլևայլ առարկաները:

Աղորիքներ—Պատրաստված են ծակոտկեն բազալտ գետաքարից: Նրանց աշխատող մակերեսը հարթեցված է, իսկ մյուս կողմերը քարի բնական տեսք ունեն: Այս գործիքների աշխատանքային մակերեսի մեծ տրամագիծը չի անցնում 30, իսկ փոքրը՝ 16—20 սմ-ից:

Ըստ իրենց ձևերի, աղորիքները կարելի է բաժանել օվալաձև և անկանոն տեսակների:

Օվալաձև աղորիքների աշխատանքային մակերեսը հարթ է կամ քիչ փոս ընկած: Նրանց երկարությունը չի անցնում 30, իսկ լայնությունը՝ 16—20 սմ-ից: Այսպիսիները կամ նրանց բեկորները հայտնաբերված են համարյա բոլոր կացարաններում: Նման հանգամանքը ցույց է տալիս, որ բնակատեղիում աղորիքների հիմնական տեսակը եղել է օվալաձև (տախ. II № 1):

Ուշագրավ է նաև 13-րդ կացարանից հայտնաբերված աղորիքի բեկորը: Նա իր ձևով շատ թույլ կերպով հիշեցնում է «նավակաձև» կոչվող տիպը: Բեկորի իրանը նեղ է, իսկ ծայրը՝ հարթ մակերեսից բարձր, սակայն դեռևս նրա ծայրի բարձրությունը այնպես չի ընդգծվում, ինչպես, ասենք, 3-րդ հազարամյակի աղորիքներինը:

Բացի այս տիպի փոքր աղորիքներից, բնակատեղիի II տեղամասում, ութերորդ և իններորդ կացարանների միջև եղած տարածության վրա հայտնաբերվել է գետնի հետ ամրացված ևս մի աղորիք: Սա անկանոն քառանկյունու ձևով շուրջ 20 սմ հաստությամբ բազալտ քար է: Աշխատող մակերեսը, ինչպես հատուկ է աղորիքներին, հարթ է ու հղկված, ունի փոքր աշխատանքային հրապարակ (20×20 սմ): Նրա վրայի տրորիչը նույնպես անկանոն ձևի քար է՝ հղկված աշխատանքային մակերեսով:

Սանդ—Սա պատրաստված է մանր ծակոտկեն մակերես ունեցող բազալտ քարից: Մի երեսը շաղափման եղանակով փոս է արված, որը բավականին լայն է: Բարձրությունը 9,3 սմ է, փոսի խորությունը՝ 3: Բնականից հարթ հատակը մշակման չի ենթարկվել (տախ. II № 3):

Սանդկոթեր կամ ծեծիչներ—Սանդկոթերը պատրաստված են երկարավուն գլանաձև գետաքարերից, որոնց ծայրերը կլորացված են, իրանները՝ համահավասար հարթ: Մեր ունեցած օրինակները սանդկոթերի բեկորներն են: Սրանցից առավել բնորոշ է էԳԹ 1287 համարի գործիքը: Այս բեկորի իրանի տրամագիծը չի անցնում 6 սմ-ից:

Բացի կանոնավոր սանդկոթերից, հնավայրում հայտնաբերվել են երկարավուն կամ համեմատաբար բարակ ծայրեր ունեցող քարեր ու քարերի բեկորներ, որոնք իրենց ծայրերում ունեն աշխատանքի հետքեր:

Գրունտային քարե գործիքների հավաքածուի մեջ առանձնապես հետաքրքիր են երկրագործական աշխատանքի հետ կապված տեսակները, որոնք օգնում են պատկերացնելու ժամանակի հողամշակութային աշխատանքները: Այդպիսի գործիքներից է բրիչը: Այն պատրաստված է բազալտից: Ունի 17,3 սմ երկարություն, 6 սմ լայնություն և մոտ 4 սմ հաստություն: Իրանը երկու կողմերից հղկված է, որի հետևանքով ստացել է տափակ տեսք: Նրա վերին մասում շաղափված է փոքրիկ փոսիկ, որի լրիվ ավարտումից հետո պետք է ստացվեր միջանցիկ անցք՝ գործիքը բռնակին ամրացնելու համար: Նմանատիպ առարկա հայտնաբերված է նաև Հյուսիսային Իրաքի Ջառմո բնակավայրում¹⁶ (տախ. II № 4):

Ծանրոց-կախիչը (էԳԹ 1690) պատրաստված է ծակոտկեն գետաքարից: Ունի օղակաձև տեսք, կենտրոնում՝ միջանցիկ անցք (3,4 սմ տրամագծով): Կախիչի տրամագիծը 14,4 սմ է: Մի մասը կոտրված է, սակայն դա չի խանգարում նրա իսկական ձևի վերականգնմանը (տախ. II № 2):

Ուսումնասիրողների կողմից ծանրոց-կախիչներ կոշվող նմանատիպ առարկաներ հայտնաբերված են Առաջավոր Ասիայի¹⁷ և այլ մշակութային շրջանների հնավայրերի ու Նորքարեղարյան-պղնձեքարեղարյան շերտերում: Թել-Հալաֆում (Հյուսիսային Միջագետք), Յումուկ-Թեփեում (Կիլիկիա), Կարա-Թեփեում, Գեոկ-սուրի օազիսում և այլուր հայտնաբերված քարե նման առարկաների հանդես գալը, Ի. Ն. Խլոպինի դիպուկ բնութագրմամբ, հողի կանոնավոր մշակմանը և երկրագործության պրիմիտիվ լիմնային ձևից ոտոզվող հողագործությանը անցնելու նշան է¹⁸:

Կացիճ—Հայտնաբերված է երկու օրինակ, երկուսն էլ կոտրված վիճակում:

¹⁶ R. Braidwood, նշվ. աշխ., էջ 45:

Մեր հնավայրում հայտնաբերված իրի իսկական նշանակությունը մեզ համար մնաց անորոշ: Ջառմոյից հայտնաբերված օրինակը, ըստ Ջ. Բրադվուդի, եղել է բնակարանի մուտքի վերին մասում ամրացված կրնկաքար: Թեղուտի բնակատեղիում ուսումնասիրված և ոչ մի կացարանում դրան կամ կացարանի մուտքի գոյությունը հաստատող որևէ նշան չկա, ուստի և քարե այդ առարկան այդպիսին համարելը կլինի ոչ ճիշտ: Բացի այդ, առարկայի երկու մակերեսները կանոնավոր հղկված են, հարթեցված, իսկ ծայրերի վրա նկատվում են աշխատանքի հետքեր: Այս բոլորը նկատի ունենալով, մենք հակված ենք մտածելու, որ այն ավարտուն վիճակում պետք է ծառայեր որպես բրիչ:

¹⁷ Г. Чайлд, նշվ. աշխ., էջ 116:

¹⁸ И. Н. Хлопин, Геоксурская группа поселения эпохи энеолита, М.—Л., 1964, էջ 98—99:

Նրանցից մեկը (էԳԹ 1739) տափակ, երկարավուն իրանով գետաքար է, որի վերին մասում արված է փոքր տրամաչափի փոսիկ (տախ. III № 6):

Երկրորդ օրինակը (էԳԹ 1287) ունի գլանաձև իրան, ողորկ մակերես: Իրանի վերին մասում հարվածելու եղանակով արված է փոքրիկ փոսիկ (տախ. III № 7): Թեղուտի քարե կացարանները իրենց ձևերով տարբերվում են մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրերից հայտնի տիպերից, որոնք, ինչպես գտնում են ուսումնասիրողները, օգտագործվել են պղնձի հանքաքարի մշակման և այլ նպատակների համար¹⁹: Թեղուտի կացիները աշխատանքային հնարավորություններն ու ֆունկցիոնալ դերը դեռևս չի կարելի այդպես ընդգծված տեսնել: Հնարավոր է, որ նրանք ծառայել են ներկեր ստանալու, տարբեր տեսակի փափուկ քարեր ջարդելու և ավելի փոքր մասշտաբի գործեր կատարելու նպատակին:

Բազալտ գետաքարերից պատրաստված առարկաների շարքում ուշագրավ են նաև փոքր գնդաձև իրերը (էԳԹ 799, 1702, 775 և այլն): Սրանցից № 799-ի մի կողմի վրա առկա է ոչ խորը (1 սմ խորությամբ և 3,5 սմ տրամագծով) ձագարաձև փոսիկ: Այս առարկաների տրամագծերը տատանվում են 7—10 սմ միջև (տախ. II № 5): Թվում է, որ ավարտուն վիճակում այսպիսի իրերը հարմար կլինեին որպես գուրզեր օգտագործելու, ինչպիսիները հայտնաբերվել են Շենգավթից, էջմիածնի Քյուլ-Սափայից²⁰ և այլ վայրերից:

Կան նաև փոքր-ինչ տափակ իրանով, կոր կողերով նմանատիպ իրեր, որոնց երկու մակերեսների վրա արված են ոչ խորը փոսիկներ, ըստ այդմ դրանց խորությունները հավասար չեն: Նկատվում է, որ այդպիսի քարերը ծակվել են հարվածելու եղանակով: Թվում է, որ նրանք ավարտուն վիճակում կունենային միջանցիկ կենտրոնական անցքեր: Այս տիպի, նույնպես թերի մշակված, քարեր հայտնաբերվել են մեր կողմից Մաղկունքի, վ. Խաթունարիսի բնակատեղիներում:

Աշխատանքային գործիքների մեջ ուշադրության արժանի են նաև ոչ ծակոտկեն մակերես ունեցող տարբեր տեսակի քարերը, որոնք օգտագործվել են որպես կոկիչներ: Սրանք ունեն անկանոն խորանարդիկ կամ տափակ քառանկյունու ձև:

Գործիքների այս խմբում հատկապես պետք է առանձնացնել էԳԹ 1706-ը: Սա ունի տափակ քառանկյունու ձև, բարակ իրան, ողորկ մակերեսներ: Երկարությունը 13 սմ է, լայնությունը՝ 6, հաստությունը՝ 1—4 (տախ. II № 9):

Մյուս կոկիչը սև գույնի, փոքրիկ խորանարդիկ քար է, նույնպես ողորկ մակերեսով: Բարձրությունը 3 սմ է, լայնությունը՝ 2,5: Պետք է նկատել, որ կոկիչները ոչ թե մարդու ձեռքով նախօրոք պատրաստվել ու համապատասխան ձև ստանալով աշխատանքի մեջ են մտել, այլ օգտագործվել են ըստ հարմարության: Այդ է վկայում նրանց տարաձևությունը: Մեր ունեցած կոկիչները չունեն ինտենսիվ օգտագործման այն հետքերը, որը նկատվում է ավելի ուշ ժամանակաշրջանների կոկիչների վրա: Կոկիչները օգտագործված են ոչ միայն կավամանների մակերեսները հղկելու, փայլեցնելու նպատակով, այլև ներկեր արդրելու և ներկը կավամանների պատերին քսելու համար: Այս մասին է վկայում 1-ին տեղամասի 2-րդ կացարանից հայտնաբերված վանակատե,

¹⁹ Է. Խանգաղյան, Հայկ. լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III-րդ հազարամյակում, Էջման, 1967, էջ 46:

²⁰ Է. Խանգաղյան, Նշվ. աշխ., աղ. VI:

ձվածե ողորկ մակերեսով գետաքարր: Նրա մակերեսի կեսից ավելին ծածկւած է կարմիր ներկի բավականին հաստ շերտով (էԳԹ 800):

Քարե աշխատանքային գործիքների անբաժանելի մասն են կազմում հրաբխային խարամից պատրաստված քերիչներն ու տրորիչները, որոնք հանդիպում էին պեղումների ժամանակ համարյա բոլոր կացարաններում: Իրենց ձևերով այս գործիքները շատ խայտաբղետ են. կան օվալաձև, եռանկյունաձև, խորանարդաձև ու որոշակի ձև չունեցող տեսակներ:

Օվալաձև տրորիչներից առավել բնորոշ է էԳԹ 1286 օրինակը: Նրա աշխատած մակերեսը հարթ է, իսկ հակառակ կողմը՝ ուռուցիկ, որի վրա առկա է ոչ խորը ակոս: Վերջինը սկսվում է գործիքի եզրից և շարունակվում մինչև մակերեսի կեսը: Փորված ակոսը մեծ հարմարություն է քարը ափի մեջ բռնելու համար: Նրա երկարությունը 16 սմ է, լայնությունը՝ 11,3, հաստությունը՝ 3: Մյուս տրորիչը (էԳԹ 1725) եռանկյունու տեսքի բարակ քար է՝ բոլոր կողմերից մշակված մակերեսով: Առավել շատ օգտագործված կողմը հղկվել է համարյա ողորկության աստիճանի: Երկարությունը 10 սմ է, հաստությունը՝ 1,5—2 (տախ. II №8):

Այս տիպի գործիքների համար որպես ընդհանուր հատկանիշ պետք է առանձնացնել հետևյալը. նրանք տնհն մեկ աշխատող մակերես: Քերիչ-տրորիչների օգտագործման շրջանակները վաղ երկրագործական տնտեսության մեջ բավական լայն ու բազմազան են եղել: Նրանք օգտագործվել են ինչպես կաշվի մշակության, այնպես էլ տարբեր տեսակի քարեր հղկելու համար:

Որպես տրորիչ օգտագործված քարե գործիքների մեջ միակն է էԳԹ 1256 նմուշը: Այն պատրաստված է բազալտ քարից: Ունի անկանոն եռանկյունու տեսք: Մի մակերեսը հարթ է, մյուսը՝ անմշակ:

Այս գործիքը, ի տարբերություն մինչև այժմ նկարագրված տրորիչների, օգտագործվել է նաև որպես ծեծիչ: Այդ են վկայում նրա բարակող ծայրի վրա պահպանված աշխատանքի հետքերը: Գործիքի երկարությունը 15 սմ է, լայնությունը՝ 19, հաստությունը՝ 3—5:

Մշակված քարը Թեղուտի երկրագործների համար ծառայել է ոչ միայն որպես աշխատանքային գործիք, այլև զարդարանքի առարկա:

Այդպիսիներից հետաքրքիր են երրորդ տեղամասի երկրորդ կացարանից հայտնաբերված ուլունքների անավարտ տեսակները: Նրանցից մեկը (էԳԹ 1767) պատրաստված է սև անթափանց վանակատից: Ունի տակառաձև տեսք, երկու գլուխները հարթեցված են: Իրանը ուռուցիկ է, երկարավուն: Ուլունքը, սակայն, չունի միջանցիկ անցք՝ թեև անցկացնելու համար:

Մյուս նմուշը նման է առաջինին և մշակված է միայն մի կողմից: Վանակատից պատրաստված տակառաձև ուլունքներ հայտնաբերվել են նաև Չաթալ-հուլուկի E—6 շերտի № 8 տաճարից: Վերջինը թվագրվում է մ.թ.ա. VI հազարամյակով²¹:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բնակատեղիի քարե արտադրանքների ամբողջ հավաքածուն բաղկացած է վաղ երկրագործական տնտեսության համար բնորոշ աշխատանքային գործիքներից, որոնք իրենց ընդհանրության մեջ բացահայտում են Արարատյան դաշտի տեղաբնակների տնտեսության զարգացման մակարդակը պղնձեդարյան փուլում:

²¹ J. Mellaart, Ear. Civil., էջ 87:

Թեղուտի ցլեփված քարե արտադրանքների ու հիմնահողային քարերի վրա պատրաստված գործիքների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակատեղիում իրականացվել է բրջային երկրագործությանը հատուկ քարե գործիքների պատրաստումը և օգտագործումը: Այս տեսակետից հետաքրքիր է Թեղուտի ու նորքարեղարյան բնակավայրերի հավաքածուների քարե իրերի համեմատությունից ստացված պատկերը:

Այսպես, Թեղուտում բացակայում են նորքարեղարյան բնակատեղիներին այնքան հատուկ կողային, կենտրոնական ու ծայրային խազիչ-կտրիչները և ֆարե ծակիչները: Այստեղ շատ շնչին գործածություն են ունեցել երկկողմանի մեծ դանականման շեղբերը:

Պեղումների ժամանակ չեն հայտնաբերվել նաև միկրոլիթյան գործիքներ, որոնք գործածության մեջ էին դեռևս ուշ նոր քարեղարում: Օրինակ միկրոլիթներ են հայտնաբերված Յումուկ-թեփեի, ինչպես նաև մեր կողմից ուսումնասիրված Վ. Խաթունարխի, Մաղկունքի բլուր բնակատեղիների ուշ նորքարեղարյան ու վաղ պղնձեքարեղարյան ժամանակաշրջանների շերտերում:

Որպես ընդհանուր նմանություն նորքարեղարյան քարե արտադրանքների հետ, պետք է նշել փոքր չափի օվալաձև աղորիքների և տարբեր ձևի գետաքարերից պատրաստված կոկիչ-տրորիչների առկայությունը:

Առավել ակնառու տարբերություններ են բացահայտվում, երբ Թեղուտի հավաքածուն համեմատում ենք մ.թ.ա. III հազարամյակի վաղ բրոնզեղարյան քարե արտադրանքների հետ: Թեղուտում բացակայում են ամբողջ մակերեսներով ռետուշված ու երբեմն էլ կանոնավոր ատամնաձև տեսքի բերված ներդիրներն ու գեղեցիկ նետասլաքները, որոնք այնպես առատ են վաղ բրոնզեղարում:

Հետաքրքիր պատկեր է ստացվում, երբ համեմատում ենք Արարատյան դաշտի նորքարեղարյան ու պղնձեքարեղարյան բնակավայրերի օգտագործած քարատեսակների քանակական հարաբերությունը: Այսպես, ուշ նորքարեղարյան Վ. Խաթունարխի բլուր-բնակատեղիի ստուգողական խրամատից հավաքվել է շուրջ 1000 բեկոր վանակատ և մեկ բեկոր կայծքար: Մաղկունքի բնակատեղիում կայծքարե շորս գործիք է ձեռք բերված, Թեղուտում՝ շուրջ 20: Կայծքարի օգտագործման շրջանակների ընդլայնման այս պատկերը պայմանավորված է վաղ երկրագործական տնտեսության առաջընթացի պահանջներով: Այն է՝ տնտեսության մեջ ավելացնել դիմացկուն քարից պատրաստված գործիքները, որոնք կբավարարեին զարգացող տնտեսության պահանջները:

Թեղուտի և այլ վայրերի պղնձեքարեղարյան բնակատեղիների քարե գործիքների հավաքածուների համադրություններով բացահայտվող ընդհանրությունները ու այլ ժամանակաշրջանների բնակավայրերի քարե գործիքների հավաքածուների հետ ունեցած տարբերությունները ցույց են տալիս, որ հայտնաբերված քարե առարկաները համապատասխանում են տնտեսության զարգացման այնպիսի մակարդակի, երբ նորքարեղարյան ցլեփված գործիքների որոշ տեսակներ, տնտեսության վարգացման պահանջներին համապատասխան, վերանում են, իսկ նրանց պտկասը, ըստ երևույթին, լրացվում է մետաղյա իրերով (նկատի է առնվում դանականման շեղբիկների ու քարե ծակիչների բացակայությունը թե՛ մեզ մոտ, թե՛ այլ վայրերում):

Թեղուտում, բացի քարից, գործիքներ են պատրաստել նաև ոսկրից: Այս առարկաներն ըստ իրենց օգտագործման բնագավառների ներբաժանվում են մի քանի խմբի:

ա) երկրագործական աշխատանքի հետ կապված գործիքներ.

բ) տնային կենցաղում օգտագործված գործիքներ.

գ) այլ առարկաներ.

Բնակատեղիի ոսկրե գործիքների հավաքածուն բաղկացած է տարբեր ձևի բրիչներից, քարե ներդիր ունեցող պահանգներից, քերիչներից, ծակիչներից, ասեղներից, հերուններից, շքասեղներից և այլ առարկաներից:

Բրիչներից մեկը (էԳԹ 895, տախ. III № 11) պատրաստված է խոշոր կենդանու սրունքոսկրից, մի ծայրում պահպանված է ծայրաճանր (էպիֆիզ), իսկ հակառակ կողմը ջարդված է: Ծայրաճանրի ներքև, ոսկրի վրա առկա է երեք փոքրիկ անցք, որոնք պետք է ծառայեին բրիչը փայտե կոթաոխն ամրացնելուն: Հետաքրքիր է, որ գործիքի մաքրման ժամանակ անցքերի միջից թափվեցին վանակատի մանր բեկորներ, որոնք պոկվել էին շաղափից: Գործիքի երկարությունը 10 սմ է, իսկ ծայրաճանրի լայնությունը՝ 7, խողովակաձև մասի տրամագիծը՝ 4: Ըստ ամենայնի, գործիքը թերի է:

Նմանատիպ գործիքներ հայտնի են Անդրկովկասի ու Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա բնակատեղիներից, որոնք մեր օրինակի հետ համեմատելիս շատ քիչ տարբերություններ են հանդես բերում: Այսպես, Ազրբեջանական ՄՍՀ Ղազախի շրջանի Շոմու-թեփե բնակատեղիում հայտնաբերված գործիքը նույնպես պատրաստվում է կենդանու սրունքոսկրից, նրա կենտրոնական մասում, կոթաոխի համար արված է միջանցիկ անցք²²: Նախիջևանի Քյուլ-թափայից գտնվածը լավագույնը է հղջրուրի հիմքի մաս է, նույնպես միջանցիկ անցքով²³: Շամիրամալթիինը թիակոսկր է՝ նույնպես ծակված²⁴: Նմանատիպ գործիքներ, որոնք պատրաստված են խողովակաձև ոսկորներից, թիակոսկորներից ու հղջրուրներից, Տ. Ս. Պասսեկի ճիշտ բնութագրմամբ, բրիչներ են, որոնցով հարմար է հողը փխրեցնել և երկրագործական այլ աշխատանքներ կատարել²⁵:

Մյուս բրիչը (էԳԹ 888) պատրաստված է սնամեջ ոսկրի երկար շեղքի վրա: Նրա աշխատող ծայրը սուր գործիքի օգնությամբ թեք կտրված է ու սրված, որը աշխատանքի հետևանքով բթացել է: Հակառակ ծայրում ըստ երևույթին պահպանված է եղել ծայրաճանր, որը, ցավոք, ջարդվել է և մեզ չի հասել: Շեղքը ունի 18 սմ երկարություն, 2 սմ լայնություն: Համահավասար հաստություն ունեցող իրանը ձեռքի մեջ աշխատեցնելու հետևանքով քիչ հղկվել է: Նման գործիքը կարելի է օգտագործել երկրագործական աշխատանքի տարբեր բնագավառներում: Նրանով կարելի է կոշտերը փխրեցնել, հողի մեջ փոսեր անել հատիկներ ցանելու համար, արմատիկներ հանել և այլ գործողու-

²² И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, *նշվ. աշխ.*, էջ 150, նկ. 1, № 3, ինչպես նաև И. Г. Нариманов, Археологические исследования поселения Шому-тепе в 1963 г., «Археологические исследования в Азербайджане», էջ 49—50:

²³ О. А. Абибулаев, *նշվ. աշխ.*, էջ 161:

²⁴ Խ. Սամվելյան, *Հին Հայաստանի կուլտուրան*, իլ. 37, 1, 2:

²⁵ Т. С. Пассек, Первые земледельцы, «По следам древних культур», М., 1951, էջ 55:

թյուններ կատարել (տախ. III № 10): Ոսկրի շեղբից պատրաստված նման գործիք հայտնաբերված է նաև Նախիջևանի Քյուլ-թափայի I շերտում²⁶, Շամիրամալթիում²⁷, Իրանական սարահարթի Պիշիլի-թեփեի էնեոլիթյան շերտում²⁸, ինչպես նաև Ամուկ-ի դաշտի հնավայրերի E հորիզոնում²⁹:

Հետաքրքիր է նկատել, որ վերը հիշատակված բնակավայրերում նման կառուցվածք ունեն նաև ոսկրե դուրերը, որոնց աշխատանքային ծայրը տափակ է ու սրված: Դրանք չպետք է շփոթել մեր նմուշի հետ, որի ծայրը կլոր է: Թեղուտում այդպիսիները բացակայում են:

Ոսկրից պատրաստված գործիքների շարքում շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում կայծքարե ներդիրով պահանգավոր դանակը: Պահանգի երկարությունը 18 սմ է, լայնությունը՝ 5, մի ծայրը թեք կտրված է, որի երկարությունը հավասար է 7 սմ, կտրվածքի մեջ փորված-խորացված է, որպեսզի ներդիրը ամուր նստի ճեղքի մեջ: Ներդիրը պահանգի հետ ամրացվել է բիտումի օգնությամբ: Ոսկրե պահանգով նման քարե դանակներ լայն տարածում ունեն Առաջավոր Ասիայում: Ուշագրավ է, որ ոսկրե բռնակով նմանատիպ դանակները իրենց գոյությունը պահպանում են նաև հետագայում: Այդ մասին է վկայում Արտաշատի շրջանի Ջրահովտի բնակավայրի՝ III հազարամյակի շերտից հայտնաբերված գործիքը³⁰: Լյսպիսի գործիքներն, ըստ երևույթին, ծառայել են որպես բերքահավաքի դանակներ, որոնք կարող էին օգտագործվել նաև տնտեսության ամենատարբեր բնագավառներում (տախ. III, № 12):

Քերիչ—Ոսկրե գործիքների մեջ բնակատեղիում եզակի է նաև խոշոր կենդանու թիակոսկրից պատրաստված քերիչը (տախ. III № 13), (էԳԹ 885): Նա ունի ձվածիր տեսք: Երկարությունը հավասար է 15 սմ, լայնությունը՝ 7 սմ: Կողերը համահավասար կլորացված են: Գործիքի կենտրոնական մասում պահպանված է ոսկրի բնական թմբածև ելուստը, որը անցնում է օվալի ամբողջ երկարությամբ: Ելուստի մակերեսը հղկված է և ունի 1 սմ լայնություն: Հակառակ կողմի մակերեսը հարթ է: Գործիքի կողերը ամբողջ շրջագծով հղկված են, որը վկայում է նրանց գործածության մասին:

Ոսկրե այս իրը կարող էր օգտագործվել տնտեսության տարբեր բնագավառներում. նրանով կարող էին բուրդը կաշվի վրայից քերել, կաշվի շորացման հետևանքով առաջացած կոշտուկները հարդարել, ինչպես նաև օգտագործել կավամանները հղկելու համար: Վերջինը հաստատվում է բնակատեղիի մեծ կարասների ներսի կողերին պահպանված աշխատանքային լայն բերան ունեցող հղկող գործիքի հետքերով: Հայաստանի գյուղերում մինչև օրս էլ թոնիրների ու մեծ կարասների պատրաստման ժամանակ ներսի մակերեսները հարդարում են օվալաձև կամ կիսալուսնաձև ոսկրե կամ փայտե քերիչներով:

Պեղումների միջոցով հավաքված ոսկրե իրերի շարքում ամենից բազմաքանակը ծակիչներն են, որոնք պատրաստված են սնամեջ ոսկորների մանր ու մեծ բեկորներից: 4—10 սմ երկարություն ունեցող, 1—1,5 սմ լայնու-

²⁶ О. А. Абибулаев, *ԿՂՎ. աշխ.*, էջ 161:

²⁷ Խ. Սամվելյան, *Նույն տեղում*:

²⁸ R. Dyson and Young, *ԿՂՎ. աշխ. տախ III*

²⁹ R. Braidwood and L. Braidwood, *ԿՂՎ. աշխ. էջ 282, նկ 168, № 2*,

³⁰ Է. Խանգաղյան, *պեղումների շրատարակված նյութեր*:

թյամբ այս գործիքների բանող ծայրերը սրված են և ապա՝ հղկված: Ծակիչների հիմնական մասի իրանները մշակված չեն, վերին մասում, որպես կանոն, պահպանված է ծայրաճանր, որի գոյությունը, ըստ երևույթին, պատճառաբանվում է ձեռքը շղակեցնելու անհրաժեշտությամբ: Եվ իրոք, այն ծակիչները, որոնց վրա բացակայում է ծայրաճանր, ձեռքի մեջ տեղավորվող մասը ենթարկված է լրացուցիչ մշակման (էԳԹ 955) (տախ. III № 1, 3):

Նմանատիպ գործիքներից մեկը, որ հայտնաբերվեց II կացարանից, իր ձևով տարբերվում է վերը նկարագրվածներից: Նրա մի ծայրը սովորականի պես սրված է, իսկ վերին մասը հաստանալով, եռանկյան տեսք է ստանում և ավարտվում առանց ծայրաճանրի, երկարությունը 9,5 սմ է:

Գործիքների այս խմբում եզակի է նաև I կացարանից գտնված ոսկրե իրը (էԳԹ 821): Նա ունի փոքր-ինչ աղեղնաձև իրան, աշխատող ծայրը, ի տարբերություն մյուս ծակիչների, ոչ թե կլոր է, այլ տափակ, իրանի վերին մասում փոքր ելուստ կա: Երկարությունը 4 սմ է, իրանի հաստությունը՝ 0,4:

Ոսկրե աշխատանքային գործիքների այս խումբը իր բազմաթիվ համադրություններն ունի Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական էնեոլիթյան շերտերի ոսկրե գործիքների մեջ:

Նրանք ուղղակի համադրվում են Նախիջևանի Քյուլ-Յափա I շերտի³¹, Ղազախի³², Շամիրամալթի³³, Գեոյ-Յեփե—Մ շերտի³⁴, Պիշիլի-Յեփեի³⁵, Յեփե-Գավրայի XIX—XVII³⁶ շերտերի, Թել-Հալաֆի³⁷, Յոսմուկ-Յեփե XX—XIX շերտերում³⁸, Չաթալ-Հույուկ³⁹ և այլ հնավայրերում հայտնաբերված նմուշների հետ:

Ոսկրե նման գործիքները կարող էին օգտագործվել տնտեսության շատ բնագավառներում: Դրանք կարող էին պիտանի լինել կաշի ծակելու, կավամանների վրա անցքեր բացելու և այլ նպատակների համար:

Շքասեղներ կամ դեղդիրներ—Գործիքների այս խումբը ևս պատրաստված է տարբեր տեսակի ոսկորներից: Նրանց ծայրի մասը կանոնավոր սրված է, իրանը համահավասար կլոր է կամ վերին մասում քառակող, որն աստիճանաբար լայնանալով, մերվում է մյուս ծայրում լայնացող թիականման վերջավորության հետ: Նրանց երկարությունը տատանվում է 4—10 սմ միջև:


էԳԹ № 817 իրը ունի 10 սմ երկարություն, իրանը համահավասար կլոր է, որն ավարտվում է երկարավուն թիականման մասով: Իրանի տրամագիծը 0,5 սմ է: Իրը կրակի ազդեցությանը ենթարկվելու պատճառով ստացել է մոխրա-կանաչավուն գույն: Մակերեսները բոլոր մասերում լավ հղկված են: էԳԹ 822 նույնպիսի իր է՝ 7,5 սմ երկարությամբ, ծայրը սուր, իրանը կլոր, թիականման մասի մի հատվածը կտրված:

Շքասեղների կամ դեղդիրների ֆունկցիան բացահայտելու համար մեծ նշանակություն ունեցավ 13-րդ կացարանից հայտնաբերված շքասեղը: Սա


31 О. А. Абибулаев, *նշվ. աշխ.*, стр. 161.
32 И. Г. Нариманов, Исмаилов, *նշվ. աշխ.*, էջ 149 և նկ. /, № 1.)
33 Խ. Սամվելյան, *նշվ. աշխ.*, նկ. № 37, № 11—14 և 21—23:
34 В. Brown. *նշվ. աշխ.*, էջ 235—236, նկ. № 44.
35 R. Dyson and G. Young, *նշվ. աշխ.*, տախ. III.
36 A. Tobler, *նշվ. աշխ.*, տախ. XCVIII.
37 V. Oppenheim *նշվ. աշխ.*, տախ. XXXVII №25:
38 J. Garstang. *նշվ. աշխ.*, նկ. 23.
39 J. Mellaart. „Excav. in Catal Hüyük“. Anat. St. Fig. 42, №7.

իր շափերով ամենից փոքրն է, ունի 4,5 սմ երկարություն: Թիականման մասի լայնությունը հավասար է 1 սմ: Թիականման մասի վրա պահպանվել էին կարմիր ներկի մնացորդներ (նկ. 10 № 3):

Թվում է, որ այս տիպի գործիքները կարող էին օգտագործվել նաև կրոնական արարողությունների ժամանակ կամ առօրյա կյանքում՝ տոհմի մարդկանց իրաններն ու դեմքերը զանազան գույնի ներկերով զարդարելու համար: Նրանք կարող էին օգտագործվել նաև որպես զարդարանքի առարկա՝ մազերի կամ հագուստի վրա կրվելով:



Ժողովրդական բժշկության կամ կոսմետիկայի մեջ այսպիսի իրերն իրենց գոյությունը պահպանել են շատ երկար: 20-րդ դարի սկզբներին Հայաստանում այդպիսի գործիքներով կանայք սպեղանի էին դնում վերքերին կամ ծարիր էին քսում նորահարսերի աչքերին: Ժամանակակից հետամնաց ժողովուրդների մշակույթը ուսումնասիրողների մոտ ևս բազմաթիվ վկայություններ կան, որոնք հաստատում են, որ այդպիսի գործիքները օգտագործվել են իրանները զարդարելու համար: Նույն նպատակներով օգտագործված գործիքները հնագիտության մեջ հայտնի են Չաթալ-հույուկի երկրորդ և երրորդ շերտերից⁴⁰:



Հերուններ և ասեղներ— Հերունները պատրաստված են ոսկորների համեմատաբար երկար շեղքերից: Նրանց իրանները բոլոր մասերում ունեն համահավասար հաստություն: Մի ծայրը սուր է, իսկ մյուսը՝ մի քիչ հաստ: Ծայրը կլորացված է: Նրանց երկարությունը տատանվում է 9—10 սմ միջև, հաստությունը 0,5 սմ է (տախ. III № 2):

Նկ. 10. Կենդանու արձանիկ և ոսկրե առարկաներ

Այդպիսի գործիքները, ըստ երևույթին, օգտագործվել են տնայնագործական կտավներ պատրաստելու համար: Հերունների գոյությունը վկայում է

⁴⁰ J. Mellaart, Excav. at Catal Hüyük, Anat. St. V. XIV, էջ 101. Նկ. 43; 2—3:

այն մասին, որ բնիկների մոտ տարածված զբաղմունք է եղել մանածագործու-
թյունը:

Բացի հերոններից, տնտեսական կենցաղում լայնորեն օգտագործվել են նաև ոսկրե ասեղները: Ասեղը իր ձևով շատ նման է շքասեղներին, միայն այն տարբերութամբ, որ նրա վերին թիականման մասի վրա փորված է միջանցիկ անցք: Ներկայացված օրինակը քառակող է, նրա թիականման մասը ավելի տափակ է, քան իրանը (էՊԹ 948): Պահպանված բեկորի երկարությունը 3,7 սմ է, իրանի հաստությունը՝ 0,3 սմ (տախ. III № 5):

Ասեղները և հերոնները իրենց համադրություններն ունեն Գեոյ-թեփե Մ շերտում⁴¹, Հյուսիսային Կովկասի Կայսակենտ բնակատեղիում⁴², ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. III հազարամյակի վաղ բրոնզեդար-
յան մշակույթի հուշարձաններում⁴³:

Ոսկրե առարկաների հավաքածուի մեջ անհրաժեշտ ուշադրության է ար-
ժանի նաև ումբաձև իրը: Նրա մի ծայրը բարակեցված է, որը հավանաբար
ամրացվել է փայտին, իսկ մյուսը կոտրված է: Իրի երկարությունը 6,5 սմ է
(էՊԹ 943): Այս առարկան իր ընդհանուր տեսքով հիշեցնում է Յումուկ-թեփեի
25-րդ շերտից հայտնի ոսկրե իրերին: Հավանաբար դրանք օգտագործվել են
որպես նիզակի ծայրեր (տախ. III, № 4):

Բացի վերը նկարագրված գործիքներից, մի քանի կացարաններում, հա-
տակի վրա հայտնաբերվեցին փոքր կենդանիների ամբողջական թիակոսկրներ:
Նրանց վրա նկատվում են օգտագործման հետքեր: Այսպիսի թիակոսկրնե-
ր կան նաև Թուրքմենիայի Զեյթուն բնակատեղիում: Թվում է, որ դրանք օգ-
տագործվել են որպես քերիչներ կաշվի մշակման համար:

Ընդհանուր հայացք ձգելով ոսկրե առարկաների հավաքածուի վրա,
մենք տեսնում ենք, որ նրանք իրենց պատրաստման ձևերով ու աշխատան-
քային ֆունկցիաներով հար և նման են Հայկական լեռնաշխարհի ու Առաջա-
վոր Ասիայի վաղ երկրագործական բնակատեղիների նոր քարեդարյան-պղնձե-
քարեդարյան շերտերից հայտնաբերված իրերին, որով դրսևորվում է Արա-
րատյան դաշտի պղնձեքարեդարյան մշակույթի ու առաջավորասիական
մշակույթի ընդհանրությունը:

ՄԵՏԱՂԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Վաղ երկրագործական բնակատեղիների պեղումներից հավաքված նյու-
թական մշակույթի մնացորդների մեջ, քարե և ոսկրե առարկաների հետ
հանդիպում են նաև մետաղից պատրաստված գործիքներ, որոնք իրենց շատ
սակավ քանակով իսկ վկայում են անցյալի պատմության հնագույն փուլերում
գոյություն ունեցած մետաղագործության մասին:

Հին բնակատեղիների պեղածո նյութերից և ազգագրական տվյալներից
պարզ երևում է, որ մարդու ճանաչած առաջին մետաղը եղել է պղինձը:
Այն իր ֆիզիկական հատկությունների, ինչպես և երկրի մակերեսային շեր-
տերում առատորեն հանդիպելու շնորհիվ դարձել է այն հումքը, որից

⁴¹ B. Brown, նշվ. աշխ., նկ. № 44:

⁴² P. M. Мунчаев, Древнейшая культура северо-восточного Кавказа, էջ 62, նկ. 15,
№ 1:

⁴³ Է. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 28, նկ. № 28:

նախնադարյան մարդը պատրաստել է առաջին մետաղյա գործիքներն ու պենքերը:

Մետաղամշակութային առաջացման ուսումնասիրությունը հասարակության նախնադարյան պատմության կարևորագույն խնդիրներից է, քանի որ մետաղամշակության մուտքը տնտեսության մեջ առաջ է բերում արտադրողական ուժերի և տնտեսության արտադրողական կարողությունների մեծացման, մինչ այդ շտեմնված հնարավորություններ:

Գիտության մեջ վեճի առարկա է մետաղամշակության առաջացման հարցը. ե՞րբ և որտե՞ղ է առաջին անգամ սկզբնավորվել մետալուրգիան, ինչպիսի՞ եղանակներով են պատրաստվել առաջին մետաղե առարկաները և այլն:

Վաղ երկրագործական բնակատեղիների խոր շերտերից հայտնաբերված մետաղե իրերի ու պղնձի ձուլվածքի խարամի մնացորդները ցույց են տալիս, որ մետաղաձուլությունը շատ խոր արմատներ ունի:

Անատոլիայում՝ Չաթալ-հույուկ⁴⁴, Իրանում՝ Ալի-կոշ⁴⁵, Հայկական լեռնաշխարհում Չայոնու-թեփեի⁴⁶ բնակատեղիների նախակերամիկական շերտերից հայտնաբերված մետաղե առարկաների ուսումնասիրությամբ պարզվում է, որ մետաղագործությունը Առաջավոր Ասիայում սկիզբ է առել դեռևս այնպիսի հնագույն ժամանակաշրջաններում, երբ մարդիկ չէին հայտնագործել խեցեգործությունը:

Մետաղագործության ծագման հարցի կապակցությամբ, արժե հիշել Ժ. դե Մորգանի առաջ քաշած համարձակ տեսակետը, ըստ որի Առաջավոր Ասիայում մետաղամշակության բնագավառում առաջին աշխատանքները կատարվել են մ.թ.ա. 6000—7000 տարի առաջ, և որ նրա ծագումը կապվում է Պոնտական և Անդրկովկասյան շրջանների հետ⁴⁷:

Մետաղագործության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում, ըստ էության, չի անջատվում առաջավորասիական զարգացումից: Այդ մասին են վկայում լեռնաշխարհի վաղ երկրագործական բնակատեղիներից հայտնաբերված մետաղե իրերը: Թեղուտի, Նախիջևանի Քյուլ-թափա I, Շամիրամալթի I Չայոնու-թեփեզի հնավայրերից հայտնի մետաղե առարկաների ուսումնասիրությունը պարզ կերպով ցույց է տալիս, որ Հայաստանում մ.թ.ա. V—IV հազարամյակում մետաղագործությունը գտնվում էր ոչ թե սկզբնավորման նախնական, այլ ավելի բարձր զարգացած մակարդակի վրա, երբ մարդը արհեստական ճանապարհով մկնդեղ է խառնել պղնձի հետ:

Թեղուտում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է մետաղե 4 առարկա: Նրանցից երկուսը ասեղների բեկորներ են, մեկը դանակի տերևաձև շեղբ է, մյուսը՝ շաղափ:

Քառակող ասեղի բեկորներից մեկն ունի (էճթ 2709) 3,8 սմ երկարություն, մի ծայրը սուր է, մյուսը՝ հաստ (0,4 սմ): Հողի մեջ խոնավ պայմաններում երկար ժամանակ մնալու հետևանքով մետաղե իրերի մակերեսները ծածկվել են կանաչ պատինայով, իսկական մետաղը շատ վատ է պահպանված:

⁴⁴ J. Mellaart, Excavations at Catal Hüyük, Anat. St. V. XIV նույնի. A Neolithic town in Anatolia.

⁴⁵ В. М. Массон, От возникновения земледелия до... էջ 156:


⁴⁶ Е. Н. Черных, Первые металлы планеты, «Наука и жизнь», էջ 33—37, 1967, № 8:

⁴⁷ J. da Morgan, La préhistoire Orientale, հատ. III, էջ, 253—261. Paris, 1927.

Մյուս բեկորը (էԳՔ 2708) նույնպես քառակող է, երկարությունը՝ 1,4 սմ, իրանի հաստությունը՝ 0,3: Բեկորի մի ծայրում պահպանված է ասեղի անցքի հետքը, իսկ հակառակ ծայրը քիչ կլոր է: Մետաղը համեմատաբար լավ է պահպանված: Տերևածև շեղբը (էԳՔ 2711) ունի 5,5 սմ երկարություն, իրանի ամենալայն մասը 1,75 սմ է, ծայրերի մասում շեղբը հավասարապես նեղանում է: Կողերը սուր են, իսկ իրանը կենտրոնում աստիճանաբար հաստանում է: Հավանաբար այն եղել է պահանգավոր դանակի շեղբ: Մետաղը շատ վատ է պահպանված:

Շաղափը (էԳՔ 2710) ունի 4 սմ երկարություն, 2,5 գրամ ծանրություն: Իրանը քառակող է, որը վերջանում է երկու ծայրերում գլխիկներով: Մետաղը լավ է պահպանված (նկ. 11):

Պղնձյա առարկաներից քառակող ասեղի և դանակի շեղբի բաղադրության քանակական լուսապատկերային անալիզները կատարվեցին Ազրբեջանական ՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի լաբորատորիայում պրոֆեսոր Ռ. Սելիմխանովի կողմից:



Նկ. 11. Մետաղե առարկաներ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ինչպես վաղ երկրագործական այլ բնա. ասեղիներում, այնպես էլ թեղուտու, մետաղյա առարկաները շատ վատ են պահպանված, ուստի և նրանց միկրոկառուցվածքի ուսումնասիրությունը, որն այնքան կարևոր է մետաղագործության առավել վաղ էտապների տեխնիկական զարգացման աստիճանը որոշելու համար, կապված է որոշակի դժվարությունների հետ: Մետաղյա առարկաները հազարամյակներ մնալով հողի մեջ, խոնավ պայմաններում, քայքայվել և որոշ չափով

կորցրել են իրենց բաղադրությունը կազմող էլեմենտների համամասնությունը:


Թեղուտի իրերից քառակող ասեղի անալիզների համար վերցված է իսկական մետաղը, իսկ դանակինը՝ երեսապատվածքը, որոնց արդյունքները բերվում են ստորև⁴⁸:

Ինչպես տեսնում ենք անալիզի արդյունքներից, քառակող ասեղի մեջ

Առարկան	Բովանդակությունը %-ով													
	Cu	Sn	Pb	Z	As	sb	Ag	Au	Bi	Ni	Օ	Fe	Mo	P
Քառակող ասեղ 0,8 գ անալիզի է տրված մետաղը	հիմնական նյութը	0,02	0,07	—	3,6	0	0,18	0	0,025	0,1	0	0,05	—	0
	Դանակ անալիզի է տրված ծածկոցը	հիմնական նյութը	0,01	0,01	—	5,4	0	0,001	0	0	0,002	0	1,1	—

⁴⁸ Թեղուտի մետաղների անալիզների մասին ավելի մանրամասն տե՛ս **И. Р. Селихманов, Р. М. Торосян, К определению энеолита Армении ИФЖ, 1966, № 1, ст. 305—308. И. Р. Селихманов, Ж. Р. Марешаль, О ранних этапах древней металлургии меди на территории Европы и Кавказа в свете новых понятий и результатов анализа. VII международный конгресс, էջ 229—235:**

առկա է 3,6% մկնդեղ, 0,18% արծաթ, 0,025% բիսմուտ և 0,1% նիկել, իսկ դանակի մեջ՝ 5,4% մկնդեղ, 0,001% արծաթ, 0,002% նիկել, որոնք վկայում են, որ այս գործիքները պատրաստված են պղնձի հանքի և այլ աղբյուրներից եղած կլիմենտների համաձուլվածքից: Ցավոք, թեղուտում առայժմ չեն հայտնաբերված ձուլվածքի խարամի, կաղապարի կամ ձուլման հետ կապված որևէ այլ առարկայի մնացորդներ, որոնք մի անգամ ևս կհաստատեին մետաղաձուլության գոյության փաստը Արարատյան դաշտում մ.թ.ա. IV հազարամյակում:



Նկ. 12. Թեղուտից գտնված մետաղի առարկաների միկրոկառուցվածքը: 260 անգամ մեծացված 1. ասեղի բեկորի, 2. քառակող ասեղի բեկորի, 3. դանակի տերևաձև շեղբի:

Պետք է նկատել, որ հնագետների միջև կան որոշակի տարածայնություններ պղնձե իրերի մեջ մկնդեղի պարունակության հարցի շուրջը: Սովետական հնագետներ Ա. Ա. Իեսսենը⁴⁹, Հ. Ա. Մարտիրոսյանը⁵⁰, է. Վ. Խան-

⁴⁹ А. А. Иссен, К вопросу о древней металлургии меди на Кавказе, ИГАИМК, вып. 120, 1935, էջ 33:

⁵⁰ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., էջ 25—85:

զադյանը⁵¹, Ռ. Սելիմխանովը, ինչպես նաև Արևմուտքի հնագետներ Բ. Բրաունը⁵², Պարտինգտոնը,⁵³ Ջ. Մելլաարտը⁵⁴ և ուրիշները գտնում են, որ եթե հին մետաղների մեջ մկնդեղի պարունակությունն անցնում է մոտավորապես 2,8%-ից, ապա նրա գոյությունը պետք է բացատրել պղնձի բաղադրության մեջ մարդու միջամտության փաստով: Մեր ունեցած նմուշները, ինչպես տեսանք, ունեն ոչ պակաս, քան 3,6% մկնդեղ: Նշանակում է Քեղուտում օգտագործվել են պղնձա-մկնդեղային համաձուլվածքից պատրաստված առարկաներ:

Ոմանք ենթադրում են, որ մկնդեղային պղինձը բնական միացություն է: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, Կովկասում այդպիսի բաղադրության բնական պղնձի հանքավայր հայտնի չէ: Եթե այդպես է, ապա այդ դեպքում խառնել են ազատ մկնդեղ, որ բնության մեջ այդ վիճակում հազվագյուտ է: Բայց ինչպե՞ս են պատրաստել մկնդեղը:

Կովկասում բավական առատ են մկնդեղի ստացման միներալների պրիմատները, ոսկեգույն աուրիպիգմենտը, վառ կարմիր ռեալգարը: Ռ. Սելիմխանովի կարծիքով, այս հանքատեսակները իրենց գրավիչ գույնի ու հոտի շնորհիվ վաղուց ճանաչված են եղել ժողովուրդների կողմից, որոնք այն օգտագործել են զանազան հմայությունների ու ծիսական արարողությունների ժամանակ: Իրոք, նույն լաբորատորիայում փորձի միջոցով պղնձի տ մկնդեղի համատեղ ձուլումից ստացվել է մկնդեղային նույնանման խառնուրդ պարունակող պղինձ, որը հետազոտող հեղինակին հիմք է տալիս եզրակացնելու, որ Անդրկովկասում մ.թ.ա. V—IV հազարամյակում արդեն հայտնի էր մկնդեղի ու պղնձի պրիմիտիվ համաձուլման գաղտնիքը¹:

Հայկական լեռնաշխարհում մետաղաձուլության զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում նաև մ.թ.ա. III հազարամյակի հնավայրերից հայտնաբերված մետաղե առարկաների ուսումնասիրության արդյունքները: Այսպես, Նախիչևանի Քյուլ-թափա II-ում պղնձե իրերի մեջ մկնդեղի քանակը հասնում է 11,94%-ի: Կասկած չի մնում, որ V—IV հազարամյակների սևողության ինչ-որ մի հատվածում մետաղամշակությունը իր նախնական ձևով պետք է որ կայուն հունի մեջ լիներ: Պատահական չէ, երբ որոշ հուշարձաններում համատեղ հայտնաբերվում են թե ձուլածո և թե բնական սառը կոփածո պղինձ (օրինակ, Նախիչևանի Քյուլ-թափան):

Մետաղե առարկաների հայտնաբերումը Քեղուտի բնակատեղիում խոշոր նշանակություն ունի ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհի, այնպես էլ նրա հյուսիս-արևելյան հատվածի մետաղամշակության վաղ փուլերի ուսումնասիրության համար, քանի որ նրանք Սովետական Հայաստանի տերիտորիայում մինչև այժմ հայտնի հնագույն առարկաներն են, որոնք պատրաստված են ձուլածո մկնդեղային խառնուրդ պարունակող համաձուլվածքից:

Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական հուշարձաններից՝ Չայո-

⁵¹ Է. Վ. Խանգադյան, Հայկ. լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազ.-ում, էջ 46:

⁵² B. Brown, նշվ. աշխ., էջ 188:

⁵³ K. Portington, Origins and Development of Applied Chemistry, London, 1935, էջ 54,

⁵⁴ J. Mellaart, Excav. Catal Hüyük, Anat. St., 1963.

նու-թեփեզի⁵⁶, Շամիրամալթիի⁵⁷, Քյուլ-թափա (Նախիջևան)⁵⁸, Թեղուտի, Ինչ-պես նաև Առաջավոր Ասիայի տարբեր մշակութային տարածքների հուշարձաններից՝ Գեոյ-թեփե⁵⁹, Թեփե-Սիալի⁶⁰, Թեյ-Հալաֆ⁶¹, Թեփե-Հիսար⁶², Յու-մուկ-թեփե⁶³, Հաշիլար⁶⁴, Չաթալ-հույուկ⁶⁵ և այլն, հայտնաբերված մետաղյա իրերի համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանը նախնադարյան համայնական հասարակության զարգացման այս էտապում մտել է Առաջավոր Ասիայում զարգացող մշակութային մեծ տարածքի մեջ՝ կազմելով նրա օրգանական ու անհրաժեշտ մասը: Միաժամանակ ապացուցված է, որ Հայաստանը Առաջավոր Ասիայի պատմության հետագա փուլերում եղել է նրա մետաղամշակության խոշոր կենտրոններից մեկը, որը հումք է մատակարարել Միջագետքի ու Հյուսիսային Միրիայի մետաղով ոչ հարուստ տերիտորիաների տոհմերին ու պետություններին:

Ինչպես նշում են Լանցրերգերը, Ա. Ա. Իեսսենը, Հ. Ա. Մարտիրոսյանը, շումերները, որոնք շունեին մետաղի հանքեր, օգտագործում էին Օմանի, Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի պղնձահանքերից վերցված պղինձը⁶⁶:

Նույն փաստի օգտին են խոսում նաև միջագետքյան աղբյուրներում Եփրատ (Արածանի) գետի uruttu կամ urudu (copper river) «պղնձե գետ»⁶⁷, Դիարբեքիի շրջանի (copper Land) «պղնձի երկիր» անվանումները⁶⁸: Տավրոսի լեռները ասորական աղբյուրներում անվանվում են արծաթյա⁶⁹:

Այժմ հաստատված է, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն մետաղամշակման կենտրոնները՝ Վասպուրականում Ռշտունյան լեռները, Մոքսը, Աղձնիքը (Արզանա մազեն), Սպերը, Դիարբեքիը, Խարբերդը (Կապան մազեն), Լոռին, Չանգեզուրը և այլ շրջաններ, վճռական դեր են խաղացել Միջագետքը, Ասորիքը, Անդրկովկասը մետաղով ապահովելու գործում⁷⁰:

Կարելի է առանց վարանման ասել, որ Հայաստանի մետաղամշակության ազդեցությունից դուրս չեն մնացել նաև հեռավոր նախակովկասյան և հարավ ռուսական մարզերը: Ապացուցված է, որ Դաղստանի՝ մ.թ.ա. III հազարամյակով թվագրվող Կայակենտի⁷¹ բնակատեղիների խեցեղենը իր ծա-

⁵⁶ И. Р. Селимханов, Секреты древнего металла Кавказа, Наука и жизнь, 1967, № 8, էջ. 34—36.

⁵⁶ W. Erich, նշվ. աշխ., էջ 66:

⁵⁷ V. Jenny, „Schamiramaltl, Prehistorische Zeitschrift“, XIX, No314, p 295—296, Berlin.

⁵⁸ О. А. Абибулаев, նշվ. աշխ., էջ 161—162:

⁵⁹ B. Brown, նշվ. աշխ., էջ 179—180.

⁶⁰ R. Girshman, նշվ. աշխ., տախ. 23, 34.

⁶¹ V. Oppenheim, նշվ. աշխ., էջ 48.

⁶² E. F. Schmidt, Tepe Hissar, Excavations, Tabl XXIII, No4, 1933.

⁶³ J. Garstang նշվ. աշխ., էջ 76, նկ. 50.

⁶⁴ J. Mellaart, „Excav. at Hacilar“, Anat. St. v. 12.

⁶⁵ J. Mellaart, „Eael. Civil“. էջ 113.

⁶⁶ Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 29:

⁶⁷ M. E. L. Mallowan, Early Mesopotamia and Iran, London, 1965, էջ 12:

⁶⁸ J. Mellaart, Earl. Civil. էջ 120:

⁶⁹ А. А. Маргиросян, նշվ. աշխ., էջ 29. А. А. Иессен, Кавказ и Древний Восток.

⁷⁰ Է. Վ. Խանգալյան, նշվ. աշխ., էջ 44—46:

⁷¹ Р. М. Мунчаев, Каякентское поселение и проблема кавказского энеолита, СА XXIII, 1955, էջ 5—20:

գումն ունի Հայաստանի վաղ բրոնզեդարյան մշակույթի մեջ, ուստի քացառ-
ված չէ, որ Հայկական լեռնաշխարհի մետաղածուլությունը ևս կարող էր իր
ազդեցության ոլորտում վերցնել այդ շրջանները:

Այսպիսով, տեսնում ենք, որ Հայաստանը իր հարուստ մետաղահանքերի
շնորհիվ պատմական այս վաղ ժամանակներում դարձել էր Առաջավոր Ասիայի
կարևոր դարբնոցներից մեկը, որը ոչ միայն հումք, այլև մետաղի առարկաներ
էր տալիս հարևան երկրներին:

ԽԵՑԵՂՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի նախնադարյան համայնական հասարակության պղնձեքարեդարյան փուլի նյութական արտադրության կարևոր ճյուղերից մեկն էլ խեցեգործությունն է: Նրա արտադրանքների՝ մեզ հասած ինքնատիպ ու համեմատաբար առատ նմուշները որոշակի հնարավորություն են ստեղծում վաղ երկրագործական տնտեսության ամենամասսայական արհեստի՝ խեցեգործության, արտադրության պրոցեսի ուսումնասիրության և նրա արտադրանքների բնորոշ տեսակների ճանաչման համար:

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում, կավագործական արհեստի արտադրանքները սերտորեն աղերսվելով տեղաբնականների տնտեսական ու հոգևոր զարգացման հետ, տիպական են դառնում սվյալ մշակույթի օջախի համար և միաժամանակ լավագույն ապացույց են տարբեր մշակութային շրջանների միջև եղած ընդհանրությունների, փոխանակային կապերի ու փոխազդեցությունների վերաբերյալ:

Այս բոլորով համակողմանի հիմք է ստեղծվում կոնկրետ մշակույթի համեմատական ուսումնասիրության ու թվագրման համար:

Նորքարեդարյան տնտեսության զարգացման ընթացքում կավից ամաններ պատրաստելու հնարանքի հայտնագործումը թելադրված էր ջրակայուն առարկաներ ստանալու անհրաժեշտությամբ: Հնագիտական, ազգագրական բազմաթիվ նյութերից հայտնի է, որ մարդու առաջին կավամանը եղել է կավով ծեփված զամբյուղը, որը ոչ միայն ջրակայուն է, այլև հրակայուն: Թրծման եղանակով կավը առավել պիտանի դարձնելու գյուտից հետո սկսվում է խեցեգործության բուռն զարգացումն ու կատարելագործումը, որի ընթացքում էլ մշակվում են կավամանների պատրաստման մի շարք եղանակներ և ձևեր:

Նախապես նշենք, որ Թեղուտի և լեռնաշխարհի մյուս բնակատեղիների նմուշների ընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում կավամանների պատրաստման պրոցեսը գտնվում էր ոչ թե զարգացման սաղմնային վիճակում, այլ ձևերի բազմազանության ու մակերեսների մշակման կատարելության որոշակի մակարդակի վրա:

Թեղուտում կավից առարկաներ պատրաստելու ընթացքը ներկայանում է որպես նյութական արտադրության մի ուրույն ամբողջություն, իր մի շարք հնարանքներով ու ձևերով:

Կավամանների պատրաստման պրոցեսի առաջին էտապը եղել է կավի ընտրությունը, ըստ տրի նախապատվությունը տրվում է ավելի մաքուր ու մածուցիկ տեսակներին, որպիսիները սովորաբար կուտակված են լինում գետային նստվածքներում և բլուրների ստորոտներին:

Կավը ընտրելուց և ավելորդ մասնիկները մաքրելուց հետո նրա հետ խառնել են ավազ կամ մանրացված հարդ: Այնուհետև կավը թրջել են ու լավ թթվեցրել:

Գիտության մեջ հայտնի են կավամանների պատրաստման բազմաթիվ եղանակներ, որոնց կիրառությունը սկզբնավորվելով խորը անցյալում, շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ եղանակներից են՝ կաղապարման, սպիրալաբային, ծեփման, դուրդի վրա պտտման և այլն: Ամանի ձև ստացած կավի զանգվածը հետագայում ենթարկվել է երեսապատման, թրծման ու հարդարման, ինչպես նաև գունազարդման:

Թեղուտի երկրագործները կավամանների պատրաստման համար օգտագործել են շիկավուն կավ: Հետը խառնել են ավազ կամ հարդ: Բացի այս տիպի կավաշաղախից, նրանք ամանեղեն են պատրաստել նաև համեմատաբար մաքուր կավաշաղախից, որի հետ խառնված այլ նյութերը կարելի է նշմարել միկրոսկոպի միջոցով: Հետաքրքիր է, որ այդպիսի շաղախի մեջ առկա է մանրացված սպիտակավուն կվարցը:

Կավամանների պատրաստման համար կիրառված հնարանքների շարքում ամենից պարզունակ եղանակը, որը նկատվում է Թեղուտի հավաքածուի նմուշների վրա, կավի թաց զանգվածներին ամանի ձև տալն է: Այդպիսի ամանները սովորաբար ունենում են հարթ հատակ, ցածր կողեր, կոպիտ, խորդուբորդ մակերեսներ (սաջեր և այլ հասարակ թասեր):

Մյուս առավել գործածական եղանակը, այսպես կոչված, սպիրալա-լաբային հնարանքն է, ըստ որի կավից պատրաստել են երկարավուն գալարախմոր, որը պարուրաձև ոլորելով, նախ դրել են ամանի հատակին, որից հետո գալարները ուղղաձիգ շարել են իրար վրա և ձևավորել ամանը:

Պետք է նկատել, որ այս եղանակով պատրաստված կավամանների հատակների կենտրոնները ու իրանի ներքին մասերը ավելի բարակ են ստացվում, քան ուսերը: Այս երևույթը առաջանում է իրանի ուսերը ձևավորելու հետևանքով: Այս եղանակով են պատրաստված ինչպես հասարակ, այնպես էլ լավ փայլեցված, շքեղ, նուրբ անոթներից շատերը: Սրանցից փոքր կավամանների ներսի մակերեսների վրա, որտեղ հնարավոր չի եղել հղկել, ակընհայտ երևում են կավի՝ իրար վրա դրված գալարներ, իսկ մեծերի վրա նրանք շեն երևում կամ շատ դժվար են նշմարվում, քանի որ նրանց ներսի մակերեսները հղկվել են:

Բացի վերը նկարագրված եղանակներից, բնակատեղիի կավամանների բեկորների մեջ բավական մեծ տոկոս են կազմում ծեփման եղանակով պատրաստվածները, որոնց ներսի մակերեսների վրա առկա են գործվածքի դաշվածքի հետքեր: Այդ կավամանների պատրաստման պրոցեսը մեզ պատկերանում է այսպես. կավամանի ձև ունեցող պարկը լցվել է ավազով կամ շոր հողով, որից հետո պատրաստի կավը ծեփվել է նրա վրա: Քիչ շորանալուց հետո պարկի տարողությունը դատարկվել է և այնուհետև պարկը հանվել: Այսպիսի կավամանների արտաքին մակերեսները երբեմն երեսապատվել են միկենույն բաղադրությունը ունեցող կավաշաղախով, իսկ ներսը հղկվել է ոսկրե կոկիչով: Կան այնպիսիներ, որոնց արտաքին մակերեսը փայլելու աստիճան հղկված է: Որ իրոք կավամանի ներսի դաշվածքը պարկ-կաղապարին է և ոչ թե հղկող լաթինը, հաստատվում է նրանով, որ այդպիսիներից մի քանիսի ներսը ամբողջովին ծածկված է գործվածքի դաշվածքի հետ-

քերով և ոչ թե հատվածաբար: Գործվածքի դաշվածքի մնացորդները այնքան լավ են պահպանված, որ նրանցով կարելի է վերականգնել նաև պարկի գործվածքի մանրամասները (տե՛ս ջուլհակություն բաժինը):

Բացի պարկի վրա կավը ծեփելու եղանակից, Թեղուտի երկրագործները կավամաններ պատրաստելու համար օգտագործել են եղեգնից կամ ճահճային այլ բույսերից հյուսած սալաներ կամ խսիրներ: Այս դեպքում կավաշաղախի տակ դրվել է բուսական հյուսվածք, ապա կավացեխ ամրացվել վրան: Հատակի պատրաստումը ավարտելուց հետո բարձրացրել են նրա կողերը: Այս մասին են վկայում ամանների հատակների վրա արտաքին կողմից պահպանված խսիրի դաշվածքի հետքերը, որոնք հասնում են մինչև ամանի բարձրացող կողերը: Հետաքրքիր է նկատել, որ հետագա դարերում էլ խեցեգործական արհեստի մեջ պահպանվել է այս պրակտիկան: Կավամանների տակ դրվում է խսիր կամ գործվածքի բեկոր, կամ հարդ, որպեսզի հետո հնարավոր լինի թաց ամանը տեղաշարժել կամ պտտել:

Ինչպես տեսնում ենք հնավայրի կավամանների պատրաստման եղանակների՝ վերը արված նկարագրությունից, այնտեղ իրականացվել են բրուտի արհեստի հնագույն հնարանքներն ու ձևերը, որոնք հայտնի են Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական մշակութային առավել հին փուլերում (Չաթալ-հույուկ, Յումուկ-թեփե, Թել-Հալաֆ և այլն):

Բացի վերը նկարագրված եղանակներով պատրաստված կավամանների մնացորդներից, հայտնաբերվել են նաև պտտման եղանակով պատրաստվածներ: Այս դեպքում կավաշաղախի անհրաժեշտ բեկորը դրվել է ինչ-որ հարմարանքի վրա ու համահավասար պտտվել: Պետք է նկատել, որ Հայկական լեռնաշխարհի այլ հնավայրերի էնեոլիթյան շերտերում ևս հայտնաբերված են պտտման եղանակով պատրաստված կավամաններ, որոնք, ինչպես Թեղուտում, այնպես էլ այնտեղ, առանձնանում են հնավայրերի մասսայական խեցեղենից¹:

Ցավոք, Հայաստանում առայժմ ուսումնասիրված նեոլիթ-էնեոլիթյան բնակատեղիներից և ոչ մեկում չի հայտնաբերված բրուտի դուրզի կամ արհեստանոցի որևէ մնացորդ, որպեսզի նրա հիման վրա հնարավոր լիներ որոշակի եզրակացություն անել: Ելնելով նյութերի նման վիճակից հավանական է, որ, ինչպես Շամիրամալթի I-ի, այնպես էլ Թեղուտի՝ պտտման եղանակով պատրաստված կավամանները տեղական արտադրանքներ չեն. ըստ երևույթին, դրանք Հայկական լեռնաշխարհ են թափանցել Հյուսիսային Միջագետքից կամ հարեան շրջաններից, որտեղ արդեն հայտնի էր բրուտի դուրզը:

Կավամանների պատրաստման՝ վերը նշված պրոցեսներին հաջորդել է նրանց մակերեսների մշակումը: Թեղուտի բնակատեղիի կավամանների բեկորներից մի քանիսի վրա, արտաքին կողմից առկա են սեղմելու եղանակով արված կիսալուսնաձև զարդեր-նախշեր, խազեր և փոսիկների շարքեր: Երբեմն ամանի մակերեսին դրված են փոքր ելուստներ: Կան ամաններ, որոնց կողերը շուրթից ցած զարդարված են փոքր տրամաշափի միջանցիկ անցքերի շարքով:

Պատրաստի կավանոթը շորանալուց հետո ենթարկվել է երեսապատման ու կոկման՝ առաջացած ճաքերը լցնելու և ամանն ավելի բարետես դարձնելու նպատակով: Մեր հավաքածուի նմուշները այս տեսանկյունով դիտելիս ներ-

¹ W. Jenny, նշվ. աշխ., էջ 284:

բաժանվում են երեք հիմնական տեսակների. ա) թաց-հարդարված, բ) երեսապատված և գ) քարե կոկիչով փայլեցված մակերեսներ ունեցող անոթների: Թաց-հարդարված մակերեսներով կավամանները պատրաստված են գերազանցապես ավազախառն կավից, որոնց մակերեսները հարդարվել են ուղղակի պատրաստման ընթացքում և հետո այլևս չեն մշակվել: Նրանց վրա առկա են բազմաթիվ անհարթություններ, ճաքեր, երբեմն նաև պատրաստողի մատների դաշվածքները (սաջեր և հասարակ կճուճներ):

Ամանների մյուս խումբը երեսապատված է համեմատաբար մաքուր կավաշաղախով՝ հղկված թաց շորի կամ խոտի օգնությամբ: Այսպիսիների մակերեսները ավելի հարթ են ու բարետես, շնայած նույնպես ունեն խորդուբորդություններ:

Երեսապատման շերտը սովորաբար ունի 1—3 մմ հաստություն, երբեմն այն հասնում է 6 մմ՝ լինելով ավելի հաստ, քան իսկական ամանի կողը: Այդպիսի մի բեկոր հայտնաբերված է № 9 կացարանի II շերտից:

Կավե առարկաների մակերեսների մշակման մյուս եղանակը քարե կոկիչով հղկելն է: Այսպիսիները ներկայանում են ողորկ, մասամբ նաև փայլուն մակերեսներով, որոնց վրա նկատվում է կոկիչի թողած փայլող հետագիծը: Պետք է նկատել, որ ի տարբերություն ավելի ուշ ժամանակաշրջանների կոկման եղանակով փայլեցված ամանների մակերեսների, որտեղ փայլեցումը կատարված է համահավասար, ամբողջ մակերեսով, այստեղ կոկիչի հետագծերը դիտողին տալիս են ցանցաձև քաշված գծերի տպավորություն: Այնպես որ, կոկման հետևանքով առաջացած գծերը, թվում է, թե ծառայել են որպես զարդ: Նման երևույթ նկատվում է հատկապես թաւերի ու բարձր վզով սափորների իրանների վրա: Պետք է նկատել, որ ամանների մակերեսների մշակման այսպիսի հնարանքներ հայտնի են նաև Հյուսիսային Սիրիայի, Ամուկի դաշտի և այլ առաջավորասիական նորքարեդարյան-պղնձեքարեդարյան խեցեղենի վրա²:

Բացի վերը նկարագրված եղանակներից, հնավայրի կավամանների բեկորներից մի քանիսի մակերեսները ծածկված են դեղին անզոբի շատ բարակ շերտով, որը ենթարկվել է լրացուցիչ փայլեցման: Ըստ որում, այսպիսիներն ունեն ողորկ, փայլող արտաքին տեսք:

Ինչպես տեսնում ենք, բնակատեղիի կավե առարկաների մակերեսների մշակման պրակտիկայում կիրառվել են բրուտության մի քանի հնարանքներ, որոնք իրենց գոյությունը շարունակել են նաև հետագա դարերում: Եթե կավանոթների պատրաստման եղանակը մեզ ներկայանում է ամենահասարակ ձևերով, ապա նրանց հետագա մշակումը ավելի կատարյալ է ու զարգացած: Կավամանների մակերեսների մշակման նման ձևերը տիպական են Ադադադի II, Քյուլ-թափա I, Շամիրամալթի, Խարբերդ, Մալաթիա և այլ բնակատեղիներին, որոնք ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի մշակույթի պղնձեքարեդարյան ժամանակաշրջանը:

Կավանոթների արտադրության ընթացքը ավարտվում է նրանց թրծումով ու գունազարդումով:

Թեղուտի նմուշների ընդհանուր դիտարկումից երևում է, որ թրծումը կատարվել է շատ պարզունակ եղանակով, առանց հատուկ հնոց-վառարան-

² R. Braidwood, L. Braidwood, նշվ. աշխ., տախ. 84:

ների: Կավամանների մակերեսներն ու նրանց միջուկները կրակի անհավասար ազդեցության հետևանքով ունեն տարբեր գունային երանգներ:

Քեղուտի կավամանների բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք ունեն կարմիր գույն, իսկ միջուկները ավելի գորշ են կամ սև: Որպեսզի պարզ լինի խեցու բեկորի վրա կրակի ազդեցության տարբերությունները, բերենք մի օրինակ. հասարակ, ավազախառն կավից պատրաստված 0,8 մմ հաստությամբ մի բեկոր է (էԳՔ 1756), արտաքին և ներքին մակերեսները կարմիր են, կոտրվածքում կարմիր գույնը աստիճանաբար գունաթափվում է, դառնալով գորշ, իսկ կենտրոնում՝ սև: Եթե մոտավոր համեմատության դնենք գունային տարբերությունները, կստացվի հետևյալ համամասնությունը.

արտաքին մակերեսի կողմում՝ 0,3—0,4 մմ կարմիր,

միջուկը՝ 0,2—0,3 մմ գորշ կամ սև,

ներսի մակերեսի կողմում՝ 0,2 մմ կարմիր:

Կան նաև այնպիսի բեկորներ, որոնց արտաքին մակերեսը մուգ-սրճագույն է, իսկ միջուկը և ներսը՝ սև կամ գորշ-կանաչավուն:

Հետաքրքիր է, որ մի քանի ամանների արտաքին մակերեսների վրա առկա են սպիտակ մեծ խալեր, որոնք, անշուշտ, արդյունք են բարձր և ոչ կայուն ջերմաստիճանի: Խեցեղենի վրա գունային տարբեր երանգների առկայությունը կարելի է բացատրել ինչպես թրծման ժամանակ կրակի անհավասար ներգործությամբ, այնպես էլ ընտրված կավի մեջ եղած օրգանական նյութերի առկայությամբ:

Բացի անհավասար թրծվածք ունեցող բեկորներից, հայտնաբերված են նաև համահավասար թրծվածքով նմուշներ: Սրանց մակերեսները վառ-կարմիր են, իսկ միջուկները՝ հազիվ նկատելի գորշ կամ բաց-վարդագույն: Կավաշաղախի բաղադրությամբ էլ այս ամանները տարբերվում են բնակավայրի զանգվածային խեցեղենից: Նրանք պատրաստված են համեմատաբար մաքուր կավից: Համահավասար թրծվածք ունեն նաև հարդախառն կավաշաղախից պատրաստված թասերն ու կճուճները, որոնց միջուկները բաց-կարմիր են, իսկ մակերեսները՝ դեղին կամ գունաթափ-սրճավուն:

Քեղուտում խեցեղենը, ինչպես նշվեց վերևում, ունի կարմիր գույն, սակայն դրանց հետ միասին հանդիպում են նաև սև գույնի ամաններ: Վերջինները թեև թվով քիչ են, բայց և շատ կարևոր են: Նրանք իրենց ձևերով ու կավաշաղախի բաղադրությամբ հիշեցնում են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի կավամանների որոշ նմուշներ:

Բնակատեղիի կավամանների պատրաստման պրոցեսը չի ավարտվում վերը նկարագրված հնարանքների իրագործումով: Խեցեղործության արտադրանքների մի մասը զարգարվել է տարբեր գույնի ներկերով նկարված զարդանախշերով: Գունազարդումը կատարվել է ինչպես քարե կոկիչի, այնպես էլ վրձնի օգնությամբ: Այստեղ արժե նկատել, որ ամանների վրայի ներկերը իրենց որակով տարբեր են, նրանց մի մասը փայլող է, իսկ մնացածը՝ անփայլ, խամրած: Վերջինս առկա է հարդախառն կավաշաղախ ունեցող կավամանների վրա, ըստ որում ներկը քսված է վրձնի օգնությամբ, բավական անխնամ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բնակատեղիի կավագործական արհեստի արտադրանքներն իրենց պատրաստման եղանակներով ներկայացնում են զարդացման որոշակի մակարդակ, որն իր մեջ ներառում է Հին Արևելքի

և Հայկական լեոնաշխարհի ինչպես ավելի հին, այնպես էլ իր ժամանակին գոյություն ունեցող խեցեգործության փորձն ու հմտությունները:

Միաժամանակ պետք է նշել, որ Թեղուտի խեցեղենն ու դրա պատրաստման եղանակները տիպական չեն միայն մեկ մշակույթի և մեկ ժամանակաշրջանի համար. նրանց մեջ կան եղանակներ, որոնք ավելի բնորոշ են վաղ շրջաններին, երբ նոր էր սկզբնավորվում խեցեգործական արհեստը (նկատի են առնվում թաց կավի զանգվածներին կավամանի ձև տալը և հյուսվածքի հիմքի վրա կավը ծեփելու եղանակները): Մյուս կողմից, այստեղ առկա է կավամանի պատրաստման պատման եղանակը, որը բնորոշ է մշակութային զարգացման ավելի բարձր աստիճանների:

Այնուհետև գունազարդման հնարանքների մեջ դիտվում են այնպիսիներ, որոնք տիպական են Հայաստանը շրջապատող վաղ երկրագործական բնակատեղիների ստորին շերտերի խեցեղենին (նկատի են առնվում կոկիչի միջոցով ներկեր քսելը և տարբեր որակների ներկերի օգտագործումը):

Չնայած կավամանների պատրաստման եղանակների ու նրանց մակերեսների մշակման հնարանքների տեսակետից Արարատյան հովտի խեցեղենը շատ կողմերով նմանվում է արտաքին աշխարհի այլ կենտրոններից հայտնի խեցեղենին, այնուհանդերձ նա իր առանձնահատկություններով ներկայանում է որպես բրուտուսյան արհեստի զարգացման որոշակի մակարդակ, որն իր ատաղձն ունի հայկական լեոնաշխարհի հնագույն մշակութային շերտերում:

Հետագայում կտեսնենք, որ Թեղուտի պղնձեքարեդարյան խեցեղենը, սերտորեն կապվելով Նախիջևանի Քյուլ-թափա I-ի, Ղազախի հուշարձանների, Շամիրամալթիի ու Խարբերդ-Մալաթիայի խեցեղենի հետ, ներկայանում է մեզ իբրև արտադրական մի ամբողջություն թե՛ խեցեղենի տիպերի, ձևերի, թե՛ նրա արտադրության մեջ կիրառվող եղանակների, մեթոդների ու հնարանքների տեսակետից:

Մյուս կողմից պետք է նկատել նաև, որ Հայկական լեոնաշխարհի խեցեղեն նմուշների վրա դիտված պատրաստման եղանակներից մի քանիսը ընդհանուր են նաև Առաջավոր Ասիայի մշակույթների տարբեր շրջանների համար, հանգամանք, որը մի անգամ ևս ընդգծում է Հայկական լեոնաշխարհի մշակույթի հին արևելյան բնույթը, իր առանձնահատկություններով հանդերձ:

ԽԵՑԵՂԵՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԱՎԱԶԱԽԱՌՆ ԽԵՑԵՂԵՆ

Արարատյան դաշտի վաղ երկրագործական բնակատեղիների պեղումներով ձեռք բերված նյութական արտադրության առարկաների մեջ ամենաբազմաքանակը խեցեղենն է:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի էնեոլիթյան խեցեղենը բոլորովին ուսումնասիրված չէ, ստորև Թեղուտի խեցեղենը մենք քննում ենք առանձին բաժիններով, իրենց բոլոր ձևերի, տիպերի ու մանրամասների մեջ՝ հենվելով Թեղուտին համաժամանակյա հնավայրերի նյութերի ընձեռած հնարավորությունները վրա:

Թեղուտի բնակատեղիի կավագործների արհեստի արտադրանքն ըստ կավաշաղախի բաղադրության ստորաբաժանվում է երեք խմբի. ավազախառն,

հարդախառն ու համեմատաբար մաքուր կավից պատրաստված առարկաների, որոնք ներկայացնում են ոչ բազմաձև կավամանների տեսակներով:

Ավազ և բուսական խառնուրդ պարունակող (ոչ մանրացված հարդ) կավաշաղախից պատրաստված անոթների բեկորները, որոնք իրավամբ ներկայացնում են հասարակ խեցեղենը պատկանում են տարբեր մեծության կճուճների, խոր թասերի ու «սաշերի»:

Կավամանների այս խմբի բոլոր նմուշները պատրաստված են ձեռքով, ունեն խիստ անհարթ, թաց-հարդարված կամ երեսապատված, կարմիր, գունաթափ-դարչնագույն, մոխրագույն մակերեսներ: Թրծվածքը անբավարար է ու անհավասար, որի հետևանքով բեկորի կոտրվածքի կենտրոնում միջուկները սև են կամ գորշ, իսկ արտաքին ու ներքին մակերեսներին առկա են գունային տարբեր երանգներ: Կավաշաղախի մշակման և անբավարար թրծման պատճառով խեցեղենի մի մասը փխրուն է:

Կճուճներ—Քնակատեղիի հասարակ խեցեղենի մեջ զանգվածային օգտագործման տեսակետից մեծ քանակով առանձնանում են տարբեր մեծության կճուճները: Նրանց մակերեսները թաց-հարդարված են, շորի, խոտի, իսկ երբեմն էլ ուղղակի ձեռքի միջոցով: Կան նաև երեսապատված ու քարե կոկիչով հղկված օրինակներ: Կարմիր գույնի տարբեր երանգներ ունեցող, անկանթ, խորդուբորդ, ճաքճքած մակերեսներով կճուճների բեկորների վրա թրծման կամ հետագայում օգտագործման հետևանքով առաջացել են սև, մոխրագույն, մուգ-դարչնագույն բծեր:

Չնայած կճուճների մնացորդները հայտնաբերված են մանր բեկորացված վիճակում, և նրանց ձևերի վերականգնումը միշտ չէ, որ հաջողվում է, այնուամենայնիվ, ներկայացվող նյութերի մեջ կան վերականգնված ու ամբողջական տեսքի բերված նմուշներ:

Ըստ իրենց չափերի և օգտագործման բնագավառների, կճուճները կարելի է բաժանել երեք տեսակների՝ մեծ, միջին և փոքր:




Ամենամեծ կճուճը (տախ. IV № 1) պատրաստված է ավազախառն կավից, ունի գլանաձև վիզ, ոչ կանոնավոր ուռուցիկ իրան, կլոր հատակ: Թաց-դարչնագույն արտաքին և ներքին սև մակերեսները թաց-հարդարված են: Բարձրությունը 70 սմ է, բերանի տրամագիծը՝ 30, իրանինը՝ մոտ 50, վզի բարձրությունը՝ 7, կողի հաստությունը՝ 1—1,5:

Համեմատաբար փոքր չափեր ունի վերականգնված նմուշը: Այն նույնպես պատրաստված է ավազ և բուսական խառնուրդ պարունակող կավից: Ունի գլանաձև վիզ, ուղիղ կտրած շուրթ, փքուն-ուռուցիկ իրան, կլոր հատակ: Մակերեսները երեսապատված են միևնույն բաղադրության համեմատաբար մաքուր կավի շուրջ մեկ միլիմետրանոց շերտով, որը լրացուցիչ հարդարման է ենթարկվել թաց շորի կամ խոտի միջոցով: Բարձրությունը 35 սմ է, բերանի տրամագիծը՝ 23, իսկ իրանինը՝ 35: Վիզը սահուն թեք անցումով միանում է ուռուցիկ իրանին (տախ. IV № 6):

Այս տիպի կճուճներից է նաև էԳԹ 1061-ը: Ի տարբերություն վերը նկարագրվածների, նրա վիզը ոչ թե ուղիղ կանգնած է, այլ քիչ դուրս ճկված (տախ. IV № 7):

Մեծ կճուճների խմբում առանձնապես հետաքրքիր են միայն ավազախառն կավաշաղախից պատրաստված անոթների բեկորները: Սրանց մակերեսները թաց հղկված են, թրծվածքը ամուր է: Ի դեպ նշենք, որ այս բեկոր-

ների ամբողջ մակերեսը ծածկված է ավազի հատիկներով, որոնք շատ լավ երևում և զգացվում են շոշափման ժամանակ: Գույնը կարմիր է, միջուկը՝ վարդագույն (էԳԹ 1834):



Նկ. 13. Հասարակ խեցեղենի նմուշներ:

Հետաքրքիր է նշել, որ մեծ կճուճների հայտնաբերման ժամանակ բեկորները շատ մրտաված չէին, ինչպես ավելի փոքրերինը: Սա ցույց է տալիս, որ մեծերի մեջ Թեղուտի երկրագործները սննդամթերքի ինչ-որ տեսակներ են ամբարել: Այնուհետև, ինչպես տեսանք, մեծ կճուճների հատակները կլոր են: Պետք է ենթադրել, որ նրանց ուղղահայաց դիրքում կանգնեցնելու համար պատրաստված են եղել հատուկ հարմարանքներ: Ինչպես հայտնի է այլ բնակավայրերի պեղումներից, վաղ երկրագործական անցյալում այդ նպատակի համար բնակարանների հատակին հատուկ փոսեր էին արվում, իսկ ավելի ուշ ժամանակաշրջաններում պատրաստվել են փայտե հատուկ հենարաններ:

Հավանաբար, Թեղուտի բնակիչները ևս իրականացրել են պատվանդանների՝ վերը հիշատակված ձևերից որևէ մեկը: Ցավոք, պեղումների ժամանակ բացված կացարանների հատակների վատ պահպանվածության հետևանքով չհաջողվեց նշմարել այդ հարմարանքների մնացորդները:

Միջին շափի կճուճները ևս մեծերի նման պատրաստված են ձեռքով՝ ավազի և հարդի խառնուրդ պարունակող կավից: Նրանց և մեծերի տարբերությունը միայն շափերի մեջ է:

Այդպիսիներից է էԳԹ 1824 նմուշը: Այն պատրաստված է ավազախառն կավից, արտաքին և ներքին մակերեսները պատված են երեսապատման բարակ շերտով, որի տակից երևում են կավաշաղախի մեջ եղած ավազի անկանոն մեծության հատիկները: Արտաքին կողմը կրակի վրա դրվելուց խիստ մրոտված է, իսկ ներսը գունաթափ կարմիր է: Ամանի իսկական բարձրությունը չի անցնում 30 սմ-ից:

Մյուս նմուշը (էԳԹ 1825) պատրաստված է նույնանման կավաշաղախից, ունի քիչ դուրս ճկված շուրթ, ոչ շատ ուռուցիկ իրան, վիզը իրանին է միացած սահուն թեք անցումով: Արտաքին մրոտված մակերեսը լվանալուց հետո պարզվեց, որ այն կաթնագույն է: Երեսապատված մակերեսի վրա առկա են բազմաթիվ մանր ճաքեր և բուսական խառնուրդի հետքեր: Ներսի կողմը վարդագույն և կարմիր է: Բարձրությունը մոտավորապես 28 սմ է (տախ. IV № 4):

Գունային երանգների տարբերության առումով միջին շափի կճուճների մեջ առանձնապես ուշագրավ է էԳԹ 791-ը: Նրա գունաթափ-դարչնագույն արտաքին մակերեսը խնամքով հարդարված է թաց հարդարման եղանակով: Բարձր վիզը բերանի բացվածքի վերին մասում քիչ դուրս է ճկված, ունի ոչ շատ ընդգծված շուրթի պսակ: Ներսի մակերեսը խիստ անհարթ է, ծածկված բազմաթիվ խորդուբորդություններով: Իրանի և վզի միացման տեղում առկա են հորիզոնական 5 ակոսներ, որոնք, հավանաբար, առաջացել են ներսի հարդարման ժամանակ:

Այնուհետև ուշագրության է արժանի նաև էԳԹ 778-ը: Սա ամուր թրծվածքով, երեսապատված մակերեսներով, փքուն ուռուցիկ իրանով կճուճի շուրթի մաս է: Արտաքին մակերեսի կարմիր և սև երանգավորված ֆոնի վրա նկատվում են քարե կոկիչի հետքեր: Կարճ, ուղիղ կանգնած վիզը ավարտվում է շուրթի փոքրիկ պսակով, որը այս օրինակի վրա արդեն կանոնավոր ձևավորված է: Ներսը վարդագույն է (տախ. IV № 8):

Թացի նկարագրված օրինակներից, հայտնաբերված են նաև բազմաթիվ այլ բեկորներ, որոնք պատկանում են նույնանման կճուճների և իրենց ընդհանուր հատկանիշներով համարյա չեն տարբերվում վերը ներկայացվածներից: Որպես բացառություն պետք է հիշել գունազարդված մակերեսներով նմուշները, որոնք նկարագրվում են գունազարդ խեցեղենի բաժնում:

Իրենց ֆունկցիոնալ նշանակությամբ, հավանաբար, այս ամանները օգտագործվել են օշախի վրա դրվելու, տաք կերակուրներ եփելու և անասնապահական մթերքներ մշակելու համար:

Կճուճների մյուս տեսակը ներկայացվում է փոքր շափի անոթներով, որոնք ունեն 15 սմ-ից պակաս բարձրություն: Վերը նկարագրված տեսակների հետ ունեցած ընդհանրություններով հանդերձ, կճուճների այս խմբում առկա են նմուշներ, որոնք իրենց ձևերով մի փոքր տարբերվում են վերոհիշյալներից: էԳԹ 792 ցուցոնը գլանաձև շուրթով, փքուն զնդաձև իրանով կճուճի բեկոր է: Նա տևի մուգ-սրճավուն ներքին և արտաքին մակերեսներ: Արտաքին մակերեսը և շուրթի ներսը փայլեցված է քարե կոկիչով: Ավազախառն կավաշաղախից պատրաստված կավամանների տեսակների մեջ այս նմուշը իր մակերեսի մշակման կատարելությամբ խիստ տարբերվում է մնացածներից և ասես հիշեցնում է հետագա դարաշրջաններում սև փայլեցված

խեցեղենի հետ հանդիպող զանգվածային կավամանների նմուշները (նկ. 13, № 1): Արժե այստեղ հիշատակել, որ Վանի ավազանի Շամիրամալթի բնակավայրերի պեղումների ժամանակ ևս զանգվածային կարմիր գույնի խեցեղենի հետ միասին բոլոր շերտերից հայտնաբերվել են մուգ-դարչնագույն, սևին մոտեցող գույնի փայլեցված մակերեսներով փոքրիկ ամաններ³: Սև փայլեցրած իրեր են հանդիպել նաև Ամուկի վաղ երկրագործական մշակույթի զարգացման D—E փուլերում⁴:

Հետաքրքիր է, որ Արարատյան դաշտի ուշ նորքարեդարյան բնակատեղիներում (Վ. Խաթունարխ, Մըլսլ-թափա) հայտնաբերված են կավամանների բեկորներ, որոնք ունեն մուգ-դարչնագույն և սև փայլեցված մակերեսներ⁵: Ինչպես տեսնում ենք, քարե կոկիչով կավամանների մակերեսների մշակման ընթացքը Հայկական լեռնաշխարհում և Առաջավոր Ասիայում տարածված էր դեռևս նորքարեդարյան դարաշրջաններում: Հետևապես, վաղ բրոնզի ու հետագա դարաշրջաններում լայն տարածում գտած քարե կոկիչով կավամանների մակերեսների փայլեցման պրակտիկայի սկզբնավորումը պետք է տեսնել մշակութային ավելի խորը շերտերում:

Կավամանների այս խմբի տեսակները կավաշաղախի բաղադրության ու կառուցվածքային ձևերով իրենց ուղղակի համադրություններն ունեն Շամիրամալթի բնակավայրի⁶, Խարբերդ-Մալաթիայի շրջանների մշակութային կենտրոններում⁷, ինչպես նաև Թեկ-Հալաֆում (ոչ գունագարգ իրեր)⁸, Գեոյ-թեփե № շերտում⁹:

Որպես Արարատյան դաշտի վաղ երկրագործական մշակույթին տիպական կավագործության առանձնահատկություն, պետք է նշել, որ այդ նմուշները բացարձակապես զուրկ են Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի շրջապատող Թեղուտի ժամանակակից մշակութային կենտրոններում այնքան տարածված հարթ հատակներից, ինչպես նաև ոչ հաճախակի հանդիպող կանթերից: Տեղին է նկատել, որ Աղջաղալա II-ի բնակատեղիի կավամանները ևս ունեն կլոր հատակներ (Աղջաղալա II-ի նյութական մնացորդները հար և նման են Թեղուտին):

Բացի որոշակի ձև ունեցող բեկորներից, պեղումների ժամանակ հայտնաբերվել են խեցու մնացորդներ, որոնց իսկական պատկանելությունը անհնար է որոշել: Այդպիսիներից մեկը սրճավուն, երեսապատված մակերեսներով նմուշ է, որի արտաքին մակերեսի վրա առկա են սանրաձև գործիքի միջոցով քաշված ակոսիկներ: Ըստ որում ակոսիկները արված են երեսապատման շերտի տակ և գնում են տարբեր ուղղություններով (էՖԹ 1846): Թե ինչ նպատակով են արված այդ խազերը, առայժմ դժվար է ասել, քանի որ դրանք չունեն կանոնավոր կոմպոզիցիա և հանդիպում են մեզ մոտ ձեռքով, իսկ այլ վայրերում նաև պտտման եղանակով պատրաստված ամանների վրա: Ուսումնասիրողներից մի քանիսը այն կիրճիքն են հայտնում, որ այդ խազերը առաջացել են թաց հղկման հետևանքով, իբր բրուտը քարե գործիքի վրա շոր կամ

³ W. Jenny, նշվ. աշխ., էջ 296:

⁴ R. Braidwood, L. Braidwood, նշվ. աշխ., էջ 509:

⁵ Նշված նյութերը պահվում են էջմիածնի գավառագիտական թանգարանում:

⁶ W. Jenny, նշվ. աշխ., էջ 288:

⁷ C. Burney, V. նշվ. աշխ., էջ 164. տախ. նո. I նկ. նո. 12, 20, 25:

⁸ W. Oppenheim, նշվ. աշխ., աղ. 25, № 8, 9:

⁹ B. Brown, նշվ. աշխ., էջ 26:



Նկ. 14. Հասարակ խեցեղենի նմուշներ:

խոտ է փաթաթել և նրանով հղկել: Սակայն սա այնքան էլ չի համոզում, քանի որ մեր ունեցած նմուշների վրա սանրաձև գործիքի հետքերը ծածկված են երեսապատման շերտով:

Սանրաձև գործիքի թողած հետքերով կավամանների բեկորներ հայտնաբերված են նաև Մաղկունքի, Վ. Խաթունարխի բլուր-բնակատեղիների վերին շերտերում, ինչպես նաև Վ. Քյուլանլու գյուղից հյուսիս Թափալար կոչվող հնավայրում: Առաջին երկուսում հայտնաբերված նմուշներն ունեն բաց-դարչնագույն և գունաթափ-կարմրագույն մակերեսներ, իսկ Թափալարինը պատրաստված է հարդախառն կավից և ունի սև փայլեցված մակերես¹⁰:

Նման մակերեսներով հայտնաբերված են նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում (Մալաթիա-Մարաշի շրջաններ), որտեղի նյութերը անվանված են կայծքարով քարթած իրեր¹¹:

Թեև Հայաստանի սղնձեքարեդարյան մշակույթի հավաքածուներում դրանք քիչ են, բայց եղածն էլ ամուր հիմք է տալիս Հայաստանի ու նրա հարևան շրջանների միջև եղած մշակութային նմանությունները վեր հանելու և կոնկրետ օրինակներով ցուցադրելու համար: Առաջավոր Արևելքում ուսումնասիրված բազմաթիվ բնակատեղիներում, որոնք տարածվում են Կիլիկիայից մինչև Հյուսիսային Իրաք, հայտնաբերված են նույնանման մակերեսներով կավամաններ, որոնք պատրաստված են թե՛ ձեռքով և թե՛ պտտման եղանակով:

Եթե հնագիտական մի էքսկուրս կատարենք Հայկական լեռնաշխարհի շրջապատող մշակութային օջախներով, էլ ավելի ակնառու կառնա կավամանների այդ տիպի տարածման մեծությունը: Նրանք հայտնի են Մերսինում¹², Տարսուսում¹³, Սաբլե-Գյոզիում¹⁴, Անտիոքի դաշտում¹⁵, Թել-Հալաֆում¹⁶, Թեփե-Գավրայում¹⁷, այնուհետև Մալաթիայից արևմուտք Մարաշի, էլիբիստանի դաշտերի մի քանի բնակատեղիներում, ինչպիսին է Գյոկնուսը¹⁸, և այլուր:

Արժե հիշատակել, որ Անտիոքի դաշտի, Անտիտավրոսի, Հյուսիսային Սիրիայի հետազոտողները այս խեցեղենը պարունակող շերտերը աշխատանքային դործիքների ու այլ զուգահեռ նյութերի օգնությամբ թվագրում են ուշ Օբեյդյան ժամանակաշրջանով, ոչ ուշ, քան 4-րդ հազարամյակի առաջին կեսը: Սակայն Չ. Բարնեյը Մալաթիայի շրջանի մակերեսից հավաքած նյութերի հիման վրա դրանք թվագրում է ավելի ուշ ժամանակով, համարելով ժամա-

¹⁰ Մաղկունքի, Վ. Խաթունարխի, Թափալարի նյութերը գտնվում են էԳԹ ֆոնդում և ունեն № 8 և 16 կոլեկցիոն համարները:

¹¹ C. Burney, նշվ. աշխ., էջ 161:

¹² J. Garstang, նշվ. աշխ., էջ 174, № 113:

¹³ J. Goldman, և ուրիշներ, Excavations at Gözlü Küle, Tarsus, II, Princeton, 1956, էջ 77—87:

¹⁴ J. du Plat Taylor, և ուրիշներ The Excavations at Sakce Cözü, Iraq, XII, 1850 էջ 77, 95:



¹⁵ R. Braidwood and L. Braidwood, Excavations in the Plain of Antioch, I, O. I. P. LXI, Pl. 84, No1, 6.

¹⁶ V. Oppenheim, „Tell-Halaf I“, die Prehistorischen Funde, Berlin, 1943, աղ. CIV, No13, աղ. XXXIII, No13, 16. und Tekst, էջ 69, 78:

¹⁷ A. Tobler, „Excav. at Tepe Gawra“, II, Philadelphia, 1948, նկ. 174, 177:

¹⁸ G. H. Brown, „Prehistoric Pottery from the Antitaurus“, Anat. St. V. 17, էջ 132, նկ. 5, 167:

նակակից Ամուկ Բ ֆազին¹⁹: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնակավայրերի քարթած մակերեսներ ունեցող խեցեղեն պարունակող շերտերում հայտնաբերված նմուշների շարքում Ամուկ Բ ֆազին առավել տիպական Ուրուկյան երկթեք շուրթերով ամանները համարյա բացակայում են, Գ. Բրաունը գտնում է, որ առավել ճիշտ կլինի նրանց ժամանակագրել Ամուկ Ե ֆազով²⁰:



Նկ. 15. Հասարակ խեցանոթների շուրթերի նմուշներ և կավամանի բունակ:

Արարատյան դաշտում, ինչպես տեսանք, դրանք հանդիպում են ուշ նոր քարեդարյան և պղնձեքարեդարյան շերտերում: Թվում է, որ այստեղ նրանց սկզբնավորումը պետք է տեսնել 5-րդ հազարամյակի վերջին քառորդում, որն իր փոյուծյունը շարունակում է մինչև 4-րդ հազարամյակի վերջը:

Հասարակ խեցեղենի բեկորների շարքում առանձին հետաքրքրություն

¹⁹ C. Burney, նշվ. աշխ., էջ 161:

²⁰ G. H. Brown, նույն աշխ., էջ 132:

է ներկայացնում կարմիր գույնի ավազախառն կավաշաղախ ունեցող ամանի բեկորը, որի արտաքին մակերեսի վրա առկա են բազմաթիվ փոքրիկ ուռուցիկ ելուստներ: Ըստ երևույթին ամանի մակերեսը ամբողջությամբ ծածկված է եղել այդպիսի ելուստներով (տախ. V № 3): Հետաքրքիր է, որ նման ելուստներով կավամաններ հանդիպում են մշակութային վաղ շերտերում, ինչպիսիք են Միջագետքում Հասսուննա I²¹, Սիրո-Կիլիկիայում Յումուկ-թեփե²², ինչպես նաև Արարատյան հովտում՝ Մըխլ-թափա և այլ բնակատեղիները:

Այնուհետև հայտնաբերված է նաև կավամանի բռնակ, միջանցիկ անցքով: Նա ակնհայտորեն տարբերվում է հետագա ժամանակաշրջաններում լայն տարածում ստացած կիսագնդաձև կանթերից և իր կառուցվածքային ձևով հար և նման է Մերսինի²³ ու Թել-Հալաֆի²⁴ ստորին շերտերից հայտնի կանթերին (նկ. 15):

Խորը քաներ—Հասարակ անոթների շարքում ամենից քիչ հանդիպող նմուշներից են խորը թասերի բեկորները, որոնց համար բնորոշ են մակերեսների բաց-դարչնագույնը և կարմիրը: Որպեսզի պարզ լինեն Թեղուտի բնակատեղիից հայտնաբերված խեցանոթների ձևերը, բերենք մի քանիսի նկարագրությունը:

Թասերը, կճուճների բեկորների նման, հայտնաբերված են այնպիսի վիճակում, որ վերականգնումը կարելի է կատարել միայն մտովի: Նրանցից մեկը (էԳԹ 1159) պատրաստված է ավազախառն կավից: Կողը կոր է, շուրթի մասում հաստանում է և հակվում ներս (տախ. V, № 7):

Հարթ հատակով, կորնթարդ կողերով թասերի պատրաստման պրակտիկան Թեղուտում չէ, որ սկզբնավորվում է: Արարատյան դաշտում դրանք հայտնի են ավելի վաղ շերտերից, ինչպիսիք են Մաղկունքի, Վ. Խաթունարխի²⁵, Կղզյակ-բլուրի, Մաշտոցի բլուրի²⁶, Նախիջևանի Քյուլ-թափա I²⁷ և այլ բլուր-բնակատեղիները: Քննարկվող և ավելի ուշ ժամանակաշրջանների նման թասերի բեկորներ ունեցող բնակատեղիներ են նաև Աղջաղալա II-ը²⁸, Խարբերդ-Մալաթիայի շրջանների հուշարձանները²⁹: Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս այդպիսի հաստացող թասեր հանդիպում են Գեոյ-թեփե-M³⁰, Հալաֆ³¹, Ուռուկ³², Ամուկ E ֆազից սկսած և ավարտվում F-ում³³, Կոնիայի դաշտի³⁴, Հյուսիս-Արևելյան Կովկասի Կայակենտ, Լուբովոյն³⁵ և այլ բնակատեղիներով:

21 L. Lloyd, F. Safar, „Tell-Hassune“, էջ 277—286:

22 J. Garstang, նշվ. աշխ., նկ. 12; № 15:

23 C. Garstang, նշվ. աշխ., նկ. 34 և 34:

24 V. Oppenheim, նշվ. աշխ., աղ. III նկ. 18, 19:

25 նյութերը գտնվում են էԳԹ-ում:

26 Ս. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 141, աղ. XXXIX № 7 և աղ. XL նկ. 1:

27 O. A. Абибулаев, նշվ. աշխ., էջ 164:

28 Թ. Թորոսյանի պեղումների նյութերը պահվում են էԳԹ-ում:

29 C. Burney, նշվ. աշխ., էջ 163, նկ. № 8, 9:

30 B. Brown, նշվ. աշխ., էջ. 24, նկ. 4, № 21:

31 V. Oppenheim, նշվ. աշխ., տախ. II նկ. 16:

32 M. E. L. Mallowan, Early Mesopotamia and Iran, էջ 28—39 նկ. 14:

33 R. Braidwood and L. Braidwood, նշվ. աշխ., էջ 140, նկ. 105, № 7:

34 D. H. French, The Prehistoric Cities of Geok-Su Valley, Anat. St. NoXIII, աղ. IV, նկ. 15, աղ. XI, նկ. 18, աղ. 17, նկ. 8, էջ 177—197:

35 P. M. Мунчаев, Др. культура С.-В. Кавказа, աղ. IX, նկ. 1, 8, 19:

Այսպիսով, տեսնում ենք, որ հարթ հասակով, հաստացող շուրթերով թասերը լայն տարածում են տւնեցել Հայկական լեռնաշխարհի, Առաջավոր Ասիայի, Կովկասի նորքարեդարյան-պղնձեքարեդարյան, իսկ հետագայում նաև վաղ բրոնզեդարյան մշակույթներում:

Բացի հաստացող շուրթերով կավանոթներից, կան նաև կոր կողերով օրինակներ, որոնց շուրթերը նույնպես հակված են դեպի ներս, սակայն շեն հաստանում (էԳՔ 786) (տախ. V, № 10):

էԳՔ 786-ը ի տարբերություն վերը ներկայացվածների, ունի ուռուցիկ իրան, հաստացող, ներս հակվող շուրթի փոխարեն՝ ուղղահայաց շուրթ: Իր ձևով, մակերեսների մշակումով այն հիշեցնում է մ.թ.ա. III հազարամյակի թասերը, որոնք հայտնի են ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Թասերի խմբում առանձնապես հետաքրքիր է էԳՔ 1269-ը: Սա ցածր, աղեղնաձև կողերով ամանի բեկոր է, որի շուրթը խիստ հակված է ներս և ունի ալիքանման ձևավորում: Թասի այս նմուշը իր համադրությունները շունի Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան մշակույթում և առաջին անգամ հանդես է գալիս Թեղուտում:

Հասարակ թասերը սովորաբար գուրկ են զարդարանքից: Սակայն հավաքածուի մեջ կա մի բեկոր (էԳՔ 1264), որի կողի վրա առկա է սեղմելու եղանակով արված կիսալուսնաձև փոսիկների շարք: Բեկորի թրծվածքը ամուր, և, արտաքին մակերեսները վառ-կարմիր: Ի տարբերություն վերը նկարագրվածների, սրա կողերը ոչ թե կոր են, այլ դուրս փուլած: Նստուկը հարթ է, իր շրջագծով ավելի մեծ, քան թասի կողերը: Այս կավամանը իր ձևով նման է Թել-Հալաֆի հասարակ թասերին³⁶:

Բնակատեղիի ավազախառն կավաշաղախից պատրաստված կավանոթների հավաքածուի մեջ հատկապես շատ արժեքավոր է 13-րդ կացարանում գտնված ծորակով թասը (էԳՔ 1848) (տախ. V, № 6): Այս ամանի արժեքը ոչ միայն նրա հազվագյուտության մեջ է, այլ այն, որ մեծապես նպաստում է Թեղուտի մշակույթի ժամանակագրման գործին: Ամանը ունի գորշ-դարչնագույն անհարթ, թաց-հարդարված մակերեսներ, քիչ կորնթարդ կողեր: Հատակը, որը բացակայում է, հավանաբար հարթ է եղել: Նրա ուղիղ կտրած շուրթից 0,5 սմ ներքև, կողի վրա ամանի ամբողջ շրջագծով անց է կացված փոքրիկ ակոսիկ, որը կարծես շուրթը անջատում է իրանից: Ակոսից ցած, 3 սմ լայնությամբ տարված է թեք խաղերով լցված գոտի, որը երկու կողմից ավարտվում է ծորակի մոտ: Մորակի ելուստի երկարությունը 3 սմ է, իսկ անցքի տրամագիծը՝ 1—2: Այս անոթը իր անմիջական համադրություններն ունի IV հազարամյակով թվագրված բնակատեղիներում, ինչպիսիք են Վանի Շամիրամալթի I³⁷, Գեոյ-Թեփե Մ շերտերում³⁸:

Բացի թասերի նկարագրված տեսակներից, կան նաև փոքրիկ գավաթներ, որոնք ունեն երկկոն և գլանաձև իրան (տախ. V, № 2,9):

Վերը նկարագրված ամանների օգտագործման բնագավառը վաղ երկրագործական տնտեսության մեջ կարող էր լինել շատ բազմազան: Նրանցից մե-

³⁶ V. Oppenheim, նշվ. աշխ., տախ. IV, նկ. 6:

³⁷ V. Jenny, նշվ. աշխ., էջ 285, № 1 և 4:

³⁸ B. Brown, նշվ. աշխ., էջ 21 և 24, նկ. № 625, 626:

ծերը կարող էին օգտագործել որպես կերակրի ամաններ, իսկ փոքրերը՝ ջուր խմելու և այլ նպատակների համար:

Սաչ—խիստ հետաքրքրական են սաչ կոչված ամանների տեսակները, որոնց մնացորդները, իբրև կանոն, հայտնաբերվել են օջախների մոտ շատ մրտաված վիճակում:

Նրանցից է էԳԹ 1167-ը (տախ. V, № 5), որը մասնակի վերականգնված է, ունի լայն հարթ հատակ (շուրջ 44 սմ տրամագիծ), ոչ բարձր կորնթարդ, դեպի ներս հակված կող (6,5 սմ բարձրություն): Շուրթի վրա, ամանի շրջագծի մի հատվածում առկա է դեպի ներս թեքված հավելադիր մասսիվ ելուստ (8 սմ երկարություն, 6,5 սմ լայնություն): Սաչի կողը շուրթից ցած զարդարված է փոքրիկ տրամաշափի միջանցիկ անցքերի մի շարքով: Սաչի արտաքին մակերեսը խիստ անհարթ է՝ ծածկված բազմաթիվ ճաքերով: Ներսում, ընդհակառակը, հատակը և կողերը հղկված են քարե կոկիչներով: Հետաքրքիր է, որ դատելով ամանի արտաքին կողմի վրա եղած ճաքերի վիճակից, կարելի է կռահել նրա պատրաստման եղանակը: Սկզբում պատրաստել են լայն շրջանաձև կավացեխը և երբ այն բավականաչափ ամրացել է, ծայրերը բարձրացրել են ու դարձրել կողեր (նկ. 13,4):

Նման տեսք ունի նաև էԳԹ 789-ը (նկ. 14, № 2): Սաչի բեկորը նախորդից տարբերվում է միայն պատրաստման ձևով: Նրա հատակը պատրաստված է առանձին և այնուհետև վրան կպցված են կողերը (տախ. V, № 4):

Սաչերի բեկորներից մի քանիսի (էԳԹ 1820, 2823 և այլն) ներսի մակերեսները շեն ենթարկվել քարե կոկիչով հղկման, այլ հարգարվել են թաց շորի կամ խոտի միջոցով: Հատկանշական է նաև այն, որ նրանց կողերի վրայի անցքերը միևնույն մեծությունը շունեն: Նրանք տատանվում են 2 մմ-ից 6 մմ-ի միջև:

Կավամանների այս խմբի մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 5-րդ կացարանում հայտնաբերվածը: Նա իր ձևով ու մակերեսների մշակման հնարանքներով առանձնապես չի տարբերվում վերը հիշատակվածներից: Սակայն նրա կողի վրա եղած բացվածքը և հատակի վրայի խսիրի դաշվածքը նրան դարձնում են բնակատեղիի կավակերտ առարկաների արժեքավոր նմուշներից մեկը: Այնուհետև հետաքրքրական են նաև սաչերի երկու բեկորներ: Նրանցից էԳԹ № 1822-ը ունի վառ կարմիր գույն: Նրա կողի վրայի ներս հակված ելուստը շատ փոքր է իր նախորդներից և ասես հիշեցնում է թոշունի գլխի ոճավորված պատկեր: Սաչերի ձևի ճիշտ վերականգնման համար շատ կարևոր էր 1967 թ. պեղված 14-րդ կացարանից գտնված նմուշը: Սրա կողերը լրիվ շեն շրջափակում օղակը, այլ շրջանի մի հատվածում աստիճանաբար ցածրանալով, մերվում են հարթ հատակի հետ: Այսպիսով, ստացվում է մի կողմը բաց իր: Թվում է, որ այսպիսի կառուցվածքով իրերը օգտագործվել են կրակի վրա հաց թխելու և շոր կերակուրներ պատրաստելու համար:

Սաչ անվանված իրերն իրենց զարգացման նախորդ էտապներն ունեն Արարատյան դաշտի նորքարեդարյան բնակավայրերից հայտնի խեցեղենի մեջ: Նրանք հայտնի են Կղզյակ-բլուր³⁹ և այլ հնավայրերում: Աղջաղալա II-ում նրանք հանդես են գալիս Թեղուտյան տիպի հնագիտական ընդհանրությունների մեջ:

³⁹ Ս. Սարգսյան, Նշվ. աշխ., աղ. XXXIX, նկ. 1, 2:

Հայկական լեռնաշխարհը հարավից շրջափակող մշակութային օջախներում նմանատիպ խեցեղեն գրեթե չկա: Այստեղ կարելի է միայն հեռավոր համադրություններ գտնել Թեյ-Հասսունայի, այսպես կոչված, «փխրուն իրերի» հետ⁴⁰:

Զարմանալի է, որ սաջերի նման տիպեր հանդես են գալիս Հյուսիս-Արևելյան Կովկասի՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի հնավայրում, որտեղ դրանք առկա են Հայկական լեռնաշխարհի վրա բրոնզեդարյան ժամանակների տիպերի պատկանող կոմպլեքսներում:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, կավամանների այս տեսակը սկիզբ Առնելով Արարատյան դաշտի նորքարեդարյան շերտերում, ետագա զարգացում է ապրում պղնձեքարեդարյան ու վաղ բրոնզեդարյան մշակույթի դարաշրջաններում:

ՀԱՐԴԱԽԱՌՆ ԽԵՑԵՂԵՆ

Հնավայրի խեցեղեն առարկաներից մյուս խումբը բաղկացած է հարդախառն կավաշաղախով պատրասված ամանների բեկորներից, որոնք պատկանում են տարբեր տեսակի անոթների: Այսպիսի կավաշաղախ ունեցող խեցու բեկորների քանակը ավելի քիչ է, քան վերը ներկայացվածները: Յուրաքանչյուր կացարանում հանդիպում են 1-2 ամանի պատկանող այսպիսի բեկորներ: Սրանց համար բնորոշ են դեղին, գունաթափ-դարչնագույն, անգոբապատ կամ քարե կոկիչով հղկված մակերեսները, որոնց վրա առկա են կավաշաղախի մեջ եղած մանրացված հարդի այրումից առաջացած հետքեր: Կտրվածքում խեցին վարդագույն է ու կենտրոնում ունի գորշագույն շերտ:

Լավ թրծելու, մակերեսները, խնամքով մշակելու հետևանքով այս խմբի կավանոթները ավելի բարետես են, քան հասարակ խեցու նմուշները:


Ըստ պատկանելության սրանք կարասներ, տարբեր ձևի կճուճներ ու ասիսներ են:

Կարասները հայտնաբերվել են համարյա բոլոր կացարաններում, սրանց մնացորդները ևս մեծ կամ փոքր բեկորներ են: Չնայած դրան, մտովի հնարավոր է վերականգնել նրանց իսկական տեսքը: Կարասների համար բնորոշ է բերանի լայն բացվածքը, որի տրամագիծը հաճախ հավասար է իրանի տրամագծին: Նրանք ունեն հաստ, դուրս ճկված, քառակող կամ գլանաձև շուրթ, դեպի կլոր հատակը նեղացող իրան (տախ. VI, № 1-4):

Այս տիպի խեցեղենի նմուշներից հատկապես բնորոշ է առաջին կացարանի ֆրագմենտը: Նա ունի լայն բերան, գլանաձև հաստ շուրթ, դուրս թեքված պսակ: Մակերեսը երեսապատված է դեղին և կարմիր երանգներ ունեցող անգոբի բարակ շերտով, որը ենթարկվել է փայլեցման քարե կոկիչով: Ներսը հարդարված է աշխատանքային լայնաբերան գործիքով: Նրա բկից ցած իրանի ուսը զարդարված է կետավոր խաչապատկեր զարդով, իսկ նույն բեկորի շուրթի վրա առկա է երեք կտրված գծերով արված զարդ: Ըստ երևույթի, այս զարդախումբը պարբերաբար կրկնվել է: Նրա ներսի կողմում պահպանվել էին կարմիր ներկի մնացորդներ՝ 1-2 մմ հաստություն ունեցող շերտով: Բերանի տրամագիծը շուրջ 40 սմ է, շուրթի հաստությունը՝ 2, լայն կողի հաստությունը՝ 1,5 (տախ. VI, № 1): Կարասի ներսում ներկի (օխրա)

⁴⁰ L. Lloyd and F. Safar, նշվ. աշխ., 1945, էջ 277:

հայտնաբերումը վկայում է, որ բնակիչները իրենց բնակարանների պատերն ու կավամանները զարդարելու անհրաժեշտ ներկը պատրաստել ու պահեստավորել են հետագա օգտագործման համար:



Նկ. 16. Հարդախառն կավաշաղախից պատրաստված խեցանոթների նմուշներ:

Բացի դեղին անգորապատ մակերեսներով կարասների բեկորներից, պեղավայրում հայտնաբերվել են նաև խամրած-կարմիր, բաց-դեղնավուն փայլեցված մակերեսներով բեկորներ, որոնք իրենց կառուցվածքով առանձնապես շեն տարբերվում վերը նկարագրվածից (էԳԹ 1817, 1229, 1237, 776, 767, 1806, 1807 և այլն):

Կարասների բեկորների մեջ առկա են նաև տեսակներ, որոնք իրենց ձևով տարբերվում են վերը նկարագրված նմուշից: Այդպիսիներից մեկը ունի փքուն ուռուցիկ իրան, քիչ դուրս թեքված շուրթ, որոնց մակերեսները կոկիչով փայլեցված են:

Կարաս անվանված ամանների մնացորդների մեջ շատ արժեքավոր է նաև երկրորդ պեղավայրից հայտնաբերված դեղին անգորապատ մակերեսով մեծ ամանի շուրթի բեկորը: Նրա իրանի ուսերը զարդարված են սև ներկով

նկարված փոքրիկ խաչով: Ըստ երևույթին, այդպիսի պատկերներ ամանի ուսերին շատ են եղել, որոնք մեզ չեն հասել (տախ. X 8):

Նշելով կարասների բեկորների մեծությունից, կարող ենք ասել, որ դրանք ունեցել են շուրջ 80—85 սմ բարձրություն, 50 սմ լայնություն: Բեկորների հաստությունը ամանի տարբեր մասերում տարբեր է (1-ից մինչև 2սմ): Քառակող շուրթը վերին մասում երբեմն ունի փոքրիկ ակոսիկ (նկ. 16. 1):

Կարասների մեծ և ամուր շուրթերի առկայությունը ցույց է տալիս, որ դրանք ծառայել են որպես բռնակներ՝ ամանը տեղաշարժելու համար: Կարասների ֆունկցիոնալ դերը Թեղուտի երկրագործների տնտեսության մեջ կարող էր լինել շատ կարևոր, որովհետև նրանք հարմար են հացահատիկ, ալյուր և այլ սննդամթերքներ ամբարելու համար: Մեծ ամանների գոյությունը բնակատեղիի ուսումնասիրված բոլոր կացարաններում ցույց է տալիս նաև այն, որ նրանք իրենց արտադրանքի մի մասը հնարավորություն են ունեցել պահեստավորելու իրենց իսկ հյուղակում դրված կարասի մեջ: Նման իրականությունը մի անգամ ևս բացահայտում է տոհմիկ երկրագործների աշխատանքն արտադրողականության համեմատաբար բարձր մակարդակը, որը նրանց հնարավորություն է տվել ունենալ պահեստի սննդամթերք, առանձին ընտանիքով անօրինելու համար: Հարդախառն կավաշաղախից պատրաստված կարասները Արարատյան դաշտում և Հայկական լեռնաշխարհի՝ Թեղուտին ժամանակակից բնակատեղիներում շատ տարածված են եղել: Նրանք հայտնի են Նախիջևանի Քյուլ-Թափա I շերտերում⁴¹, Վանի Շամիրամալթի⁴², Ղազախի բնակատեղիներում⁴³, Հայաստանից դուրս դրանք հանդիպում են էնեոլիթյան բազմաթիվ բնակատեղիներում⁴⁴:

Ափսեներ և խորք քսեր—Հարդախառն կավաշաղախից պատրաստված առարկաների շարքում բավականին մեծ թիվ են կազմում նաև տարբեր չափի ափսեների ու խորք թասերի բեկորները: Այս տիպի կավամանների համար բնորոշ են նախ և առաջ խնամքով մշակված գունաթափ-դարչնագույն, կարմիր և այլ երանգների մակերեսները, որոնք մասամբ հղկված են քարե կոկոկիչով: Թրծումը կատարված է կայուն շերմաստիճանի պայմաններում, որի հետևանքով կոտրվածքում խեցին ունի վարդագույն, գորշ, մի դեպքում միայն սև գույն: Փոված կողերով ոչ խորը ափսեներն ունեն կլոր հատակ: Կողերը ավարտվում են ներս հակվող գեղեցիկ բարակող շուրթի պսակով: Կտրվածքը դիտելիս թվում է, թե նրանք շուրթի մասում ունեն ներս հակված ելուստ: Շուրթի պսակի տակից մի քանի բեկորների վրա առկա են մատով արված ակոսիկներ, որոնք անցնում են ափսեի ամբողջ շրջագծով: Ակոսը ավելի է ընդգծում շուրթի և իրանի համաչափությունը: Ափսեներից մի քանիսի արտաքին կողերին սեղմման եղանակով արված են կիսալուսնաձև փոսիկներ, որոնք իրենց ձևով կարծես կրկնում են կարասների վրայի զարդերը (նկ. 16 2): Մակերեսների մշակման պրոցեսի մեջ հետաքրքիր է այն, որ քարե կոկոկիչով հղկման ժամանակ կավագործը աշխատել է ոչ միայն հղկել ամանը, այլև միաժամանակ՝ զարդարել: Եվ երբ բեկորը ուշադրությամբ

⁴¹ О. А. Абибулаев, Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани, МИА, № 67, т. 2 445—451:

⁴² V. Jenny, նշվ. աշխ., էջ 284, նկ. 44, 7:

⁴³ И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, նշվ. աշխ., էջ 150, նկ. 1, № 8:

⁴⁴ А. Tobler, նշվ. աշխ., էջ 132:

զննվում է, ի հայտ են գալիս կոկիչի գորշ կամ սրճագույն հետագծերը, որոնք արված են այն պարզ մտադրությամբ, որպեսզի առաջանա ցանցաձև լցված շեղանկյունիների պատկեր: Կավամամանների զարդարման այս եղանակը հնագիտությանը հայտնի է Միրո-Կիլիկյան նեոլիթյան և Հյուսիս-Միջագետքի⁴⁵ վաղ երկրագործական բնակատեղիներից: Ավելի ուշ ժամանակներում այս եղանակը լայն տարածում է ստանում Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզեդարյան մշակույթի մեջ: Կան թասեր, որոնց հատակներին կոկիչի օգնությամբ ներկ է քսված (նմուշը ներկայացված է գունազարդ խեցեղենի բաժնում):

Քացի սրանցից, նույն հորինվածքն ունեցող, բայց ավելի փոքր չափի ափսեններից մի քանիսի հատակներին ներսի կողմից արված են կլոր փոսիկներ: Ափսենների չափերը տարբեր են, նրանց շուրթերի բացվածքի տրամագծերը տատանվում են 15—35 սմ-ի միջև, խորությունները՝ 3—7-ի: Որպեսզի ավելի պարզ լինի այս առարկաների ճիշտ կառուցվածքը, ներկայացնենք նրանցից առավել բնորոշները:

Բնակատեղիի պեղումների միջոցով ձեռք բերված ափսենները, ըստ իրենց չափերի, կարելի է բաժանել երեք խմբի՝ մեծ, միջին և փոքր: Մեծ ամաններն ունեն 30—35 սմ տրամագիծ, 6—7 սմ բարձրություն, կողերը հաստ են՝ փոված: Այդպիսիներից են էԳԹ 1698-ը և այլն: Մեծ ափսենների մեջ կան նաև տարբերակներ, որոնց կողը և շուրթը քիչ տարբերվում են վերը հիշատակվածներից: Օրինակ, էԳԹ 762-ի շուրթը կարծես թեք կտրված է դրսի կողմում, շուրթից ցած առկա է ցածր հավելադիր նեղ գոտի: Այս նմուշը իր նմանը շունի բնակավայրում և հիշեցնում է Թել-Հալաֆից հայտնաբերվածը⁴⁶:

Միջին չափի ափսենները իրենց ձևով բոլորովին չեն տարբերվում մեծերից: Նրանց բերանի բացվածքի տրամագիծը 20—26 սմ է, բարձրությունը՝ 4—6: Այսպիսի ամաններից մեկի ներսում պահպանվել էին կարմիր ներկի մնացորդներ, որոնք լցված էին կավաշաղախի մեջ եղած հարդի այրման հետևանքով առաջացած փոսիկների մեջ (էԳԹ 1671): Սա ցույց է տալիս, որ Թեղուտի բնակիչները այդպիսի ամանները օգտագործել են ներկեր տրորելու համար: Կավամամանների այս շարքի բեկորները կրում են էԳԹ 783, 785 և այլ համարներ (տախ. VII № 6):

Առավել հետաքրքիր են փոքր տեսակները: Նրանք ունեն բարակ կողեր, նուրբ, ներս հակված շուրթեր, կլոր հատակ: Հատակներին առկա են փոքրիկ փոսիկներ: Նրանց բերանի բացվածքի տրամագծի մեծությունը շուրջ 15 սմ է: Այդպիսիներից մեկը (էԳԹ 1071) ունի 14 սմ տրամագիծ, 3,5 սմ բարձրություն: Ամանը վերականգնված է: Նույնպիսի ամանների բեկորներ են նաև էԳԹ 1742, 1741 և այլն: Կան նաև փոքրիկ ափսեններ, որոնց արտաքին կողմում առկա են կիսալուսնաձև փոսիկներով զարդեր (էԳԹ 1740, 1741 և այլն), (տախ. VII № 2):

Այս ամանները հավանաբար օգտագործվել են որպես կերակրի ափսեններ: Ներս հակված կողերով նման կավամամաններ հայտնաբերված են նաև Աղջաղալա II բնակատեղիում, ինչպես նաև Վ. Խաթունարխի բլուր-բնա-

⁴⁵ R. Braidwood and L. Braidwood, նշվ. աշխ., աղ. 84, նկ. 12:

⁴⁶ V. Oppenheim, նշվ. աշխ., աղ. XXXI, № 13:

կատեղիի վերին շերտում: Հարդախառն կավաշաղախից պատրաստված ներս հակված շուրթերով բաց ափսեներ հայտնաբերված են նաև Առաջավոր Ասիայի մի շարք բնակատեղիներում՝ Գեոյ-թեփե (Իրանում)⁴⁷, Թեփե-Գավրան (Հյուսիսային Իրաքում)⁴⁸, Թել-Հալաֆ (Հյուսիսային Միջագետքում)⁴⁹, Միրո-Կիլիկյան հուշարձաններ⁵⁰ (Անտիոքի դաշտում):

Հետաքրքիր է նկատել, որ այս կառուցվածքով ամաններ Հայաստանի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի մշակույթում համարյա բացակայում են:

Այսպիսով, տեսնում ենք, որ հարդախառն կավից պատրաստված ամանները իրենց համադրություններն ունեն Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի նյութերի մեջ:

Բացի փոխված կողերով ափսեներից, հավաքածուի մեջ առկա են նաև խորը թասերի բեկորներ, որոնք իրենց կավաշաղախի բաղադրությամբ, մակերեսների մշակման կատարելությամբ չեն տարբերվում ափսեներից: Սակայն իրենց ձևով առանձնանում են որպես կավամանների նոր տեսակ: Այդպիսի նմուշներից մեկը (էԳԹ 1698) ունի բարակ և նուրբ օղեղնաձև կողեր, որոնք ավարտվում են կտրված շուրթով: Հատակը հարթ է: Արտաքին բացդարչնագույն և ներքին գունաթափ-վարդագույն մակերեսները հղկված են քարե կոկիչով, ըստ որում կոկիչի հետքերը ամբողջովին չեն ծածկում ամանի մակերեսները, այլ՝ տեղ-տեղ, որի հետևանքով էլ ամանի մակերեսին մնացել են բազմաթիվ անհարթություններ: Թրծումը կատարված է բավականաչափ բարձրորակ, իսկ միջուկներն ու մակերեսները միևնույն գույնի են: Կողի բարձրությունը 12 սմ է, բերանի տրամագիծը՝ մոտ 17: Իր կառուցվածքով թասը հիշեցնում է Թեփե-Գավրայի⁵¹ և Պիշիլի-թեփեի⁵² կիսա-սֆերիկ թասերը, միայն այն տարբերությամբ, որ Պիշիլի-թեփեի օրինակները գունազարդված են (տախ. VII, № 3):

Հետաքրքիր է, օրինակ, նաև էԳԹ 1676-ը: Սա ևս մյուսների նման պատրաստված է հարդախառն կավից, ունի վառ-կարմիր փայլեցված մակերես: Կողը, ի տարբերություն մյուսների, ոչ թե կոր է, այլ ուղիղ, և շուրթի մասում բարակում է: Թասի ամբողջական ձևը հնարավոր չէ ստույգ վերականգնել: Թեղուտում այս օրինակը եղակի է և իր գունային հատկանիշներով հիշեցնում է Իրանական սարահարթի Սիալկ բնակավայրին հատուկ տեսակները, որպիսիք հանդես են գալիս նաև Վանի Շամիրամայթիի, Գեոյ-թեփե, Մուղան-Ղարաբաղի դաշտի հուշարձաններում: Թեղուտում նրա առկայությունը ցույց է տալիս, որ վերը նշված հուշարձանները վերաբերում են միևնույն ժամանակին, և նրանց միջև գոյություն են ունեցել սերտ կապեր:

ԿՈՒՆԵՆԵՐ—Հարդախառն շաղախից պատրաստված խեցեղենի մյուս խումբը բաղկացած է տարբեր ձևի կճուճների բեկորներից: Նրանց համար, ինչպես կարասներին ու թասերին, բնորոշ են բաց-կարմիր, գունաթափ-դարչնագույն և դեղին անզոբապատ ու կոկիչով հղկված մակերեսները: Ըստ որում, հղկումը կատարված է մինչև փայլելու աստիճան:

47 B. Brown, նշվ. աշխ., էջ 22, նկ. 5, 13, 44. Ինչպես նաև էջ 24, 177, 353:

48 A. Tobler, նշվ. աշխ., ադ. CXXX, նկ. 100:

49 V. Oppenheim, նշվ. աշխ., ադ. XXXIII, նկ. 16:

50 R. Braidwood, նշվ. աշխ., էջ 140, նկ. 105, № 13:

51 A. Tobler, նշվ. աշխ., ադ. CXIX, նկ. 76:

52 R. Dyson and G. Young, նշվ. աշխ., էջ 21—22:

Անհրաժեշտ է նշել, որ պեղված յուրաքանչյուր կացարանում, հարդախառն կավից պատրաստված մյուս ամանների նման, հայտնաբերված են մեկ կամ երկու կճուճների պատկանող բեկորներ:

Կավամանների այս խմբի համար հատկանշական են ոչ շատ բարձր, թեք բացվող վիզը, ուռուցիկ, գնդաձև փքուն իրանները, կլոր հատակները: Շուրթերի պսակները արտաքին կողմից թեք կտրված են: Ամանների բերանի ներսի կողմը իրանի նման հղկված է քարե կոկիչով, իսկ վզի արտաքին մասը հարդարված է թաց հղկման եղանակով: Արժե նկատել նաև այն, որ վզերի վրա առկա են բրուտի մատների հորիզոնական հետքեր, որոնց վիճակը հուշում է ամանների՝ պտտման եղանակով պատրաստված լինելու մասին: Բացի թեք կտրած շուրթի պսակներից, կան նաև սովորական կտրվածքով կլոր շուրթեր, որոնք տիպական են գլանաձև վզերին:

Ոչ գունազարդ, առանց կանթերի այս կավամանների շափերը տարբեր են: Նրանց բերանի բացվածքի մեծությունը 13—15 սմ է, բարձրությունը՝ 30, վզի բարձրությունը՝ 3—6: Ինչպես բնակատեղիի խեցեգործական արհեստի մյուս առարկաների, այնպես էլ այս կճուճների համար բնորոշ է սեղմելու եղանակով արված պարզ, կիսալուսնաձև կետերով զարդարանքը: Մի դեպքում կետերը շարված են հորիզոնական դիրքով, մյուս դեպքում՝ դասավորված են եռանկյունաձև, ինչպես թասերի ու կարասների վրա (տախ. VI, № 6, 7, 8):

Խեցեղենի այս խմբի առավել բնորոշ նմուշները, նախորդների նման, հայտնաբերված են բեկորներով: Նրանցից միայն մեկը հնարավոր եղավ մասամբ վերականգնել: Չնայած այս վիճակին, հավաքածուի մեջ կան բեկորներ, որոնք օգնում են կավագործական արտադրանքի բնորոշ ձևերը ճանաչելու գործին:

ԷԳԹ № 1810-ը մասամբ վերականգնված կավանոթ է, ունի 30 սմ բարձրություն, դեպի դուրս բացվող 3 սմ բարձրությամբ, 15 սմ տրամագծով գլանաձև շուրթ, համեմատաբար նեղ վիզ: Իրանը գնդաձև է: Բաց-կարմիր, գունաթափ-դարչնագույն երանգներով իրանի մակերեսը փայլեցված է քարե կոկիչով, իսկ ներսի մակերեսը թաց հղկված է (տախ. VI, № 5):

ԷԳԹ № 1695-ը բաց-կարմիր արտաքին մակերեսով, ուղիղ կանգնած, գնդաձև իրանով փոքրիկ կճուճի բեկոր է: Նրա շուրթի ներսում, բերանի բացվածքի ողջ շրջագծով արված է ոչ շատ լայն ակոսիկ, ըստ երևույթին ամանի խուփի համար: Մակերեսին առկա են կոկիչի հետքեր: Իրանի ուսերը զարդարված են եղունգով արված կիսալուսնաձև կետերի շարքով: Կճուճների մեջ այս անոթի նշանակությունը հատկապես մեծ է այն իմաստով, որ նրա վրա ավելի լավ են նկատվում պտտման եղանակով պատրաստելու հետքերը: Արժե հիշեցնել, որ Հայաստանի այլ հնավայրերից ևս, ինչպիսին է Շամիրամալթին⁵³, հայտնաբերված են նույնանման եղանակով պատրաստված ամանների բեկորներ, որոնք հիմք են տալիս մտածելու, որ Հայաստանում արդեն հայտնի էր կավամանների պատրաստման պտտման եղանակը:

Նույնանման կավամանի բեկոր է նաև ԷԳԹ. 1812-ը, միայն այն տարբերությամբ, որ նրա մակերեսի վրա կոկիչի հետքերը ծիրանագույն են:

⁵³ V. Jenny, նշվ. աշխ., էջ 288: Նմուշը հայտնաբերված է Շամիրամալթի առաջին շերտերում:

Կավանոթների շարքում առանձնապես հետաքրքիր են դեղին անգորպապատ մակերեսներով կճուճի բեկորները, որոնք ունեն ցածր (2 սմ) բարձրությամբ շուրթ, ուռուցիկ գնդաձև իրան: Ամանի իրանի և վզի միացման տեղում առկա է ոչ խոր ակոս: Իրանի ուտերը զարդարված են եղունգով արված կիսալուսնաձև կետերով: Արտաքին մակերեսը, ի տարբերություն վերը հիշատակվածների, ավելի անհարթ է, խորզուբորդ, սակայն անգորբի նուրբ, բարակ շերտը և քարե կոկիչի միջոցով փայլեցումը նրան տվել են որոշ նրբություն (էԳԹ. 1813):

Պետք է ավելացնել նաև, որ անգործով երեսապատված մակերեսի վրա ևս առկա են մանրացված հարդի՝ այրման հետևանքով առաջացած հետքեր:

Կճուճների բեկորների մեջ կան նաև տեսակներ, որոնք ներկայանում են բավականին անհարթ մակերեսներով, շնայած ենթարկվել են հղկման քարե կոկիչով: Նրանցից էԳԹ. 1811-ը ունի խիստ դուրս թեքված ցածր շուրթ, որը, ըստ երևույթին, ծառայել է որպես բռնակ:

Բացի փոքր շուրթեր ունեցողներից, հավաքածուի մեջ կան նաև գլանաձև վզով կճուճներ, որոնք վերը նկարագրվածներից տարբերվում են միայն վզի կառուցվածքով: Այդպիսիներից էԳԹ. 1238-ը ունի դեղին անգորպապատ փայլուն մակերես:

Առանձնապես ուշադրություն է արժանի 8-րդ կացարանից հայտնաբերված փոքրիկ կճուճի բեկորը: Այն ունի ցածր՝ 1,5 սմ բարձրությամբ դեպի դուրս բացվող շուրթ, գնդաձև իրան, բաց-դարչնադույն մակերեսներ:

Իրենց կավաշաղախի բաղադրությամբ, մակերեսների մշակմամբ և ձևերով կավամանների այս խմբի տեսակները ուղղակի համադրություններ ունեն Արարատյան դաշտի Աղշաղալա II, Նախիջևանի Քյուլ-թափա I⁵⁴, Վանի Շամիրամալթի⁵⁵, Խարբերդ-Մալաթիայի⁵⁶, Ղազախի բնակավայրի⁵⁷, Մուղան-Ղարաբաղի⁵⁸ ու Պարսկական սարահարթի Գեոյ-թեփե Մ⁵⁹, Պիշիլի-թեփե⁶⁰, Իրաքի Թեփե-Գավրայի⁶¹ և այլ հնավայրերի նյութերի մեջ: Հետաքրքիր է, որ գոյություն ունեն որոշակի նմանություններ նաև Թել-Հալաֆի ու Թեղուտի նմուշների մեջ, ըստ որում այդ նմանությունները իրենց հորինվածքի մեջ են:

Այսպես, էԳԹ. 1810-ը համեմատվում է Թել-Հալաֆի (օրինակ XXXI տախտակի № 14), ինչպես նաև Օբեյդյան մշակույթի տարածված օջախներից հայտնի նմուշների հետ⁶²:

Այսպիսով, տեսնում ենք, որ մ.թ.ա. IV հազարամյակին հատուկ, Առաջավոր Արևելքում լայն տարածում գտած հարդախառն կավաշաղախից

⁵⁴ О. А. Абибулаев, Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани в 1955 г., МИА, 67, 1958.

⁵⁵ V. Jenny, նշվ. աշխ., էջ 284: (Häcksel Keramik):

⁵⁶ С. Burney, նշվ. աշխ., էջ 161—165:

⁵⁷ И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, նշվ. աշխ., էջ 151, ինչպես նաև И. Г. Нариманов, Керамика древнего поселения вблизи городища Оран-Кала, МИА, № 125, էջ 37, 1965:

⁵⁸ А. А. Иессен, Из исторического прошлого Милско-Карабахской степи, МИА, № 125, էջ 10—16:

⁵⁹ В. Brown, նշվ. աշխ., տեքստ էջ. 20 և նկ. 5 նո. 153, նկ. 6, 171:

⁶⁰ R. Dyson and G. Young, նշվ. աշխ., էջ 22:

⁶¹ A. Tobler, նշվ. աշխ., էջ 41—47:

⁶² Г. Чайлд, նշվ. աշխ., աղ. ХС, նկ. 96:

պատրաստված ամանները լայնորեն տարածված են եղել նաև Արարատյան դաշտում, ինչպես և ողջ Հայկական լեռնաշխարհում, մի հանգամանք, որը վկայում է մի կողմից մ.թ.ա. 5—4-րդ հազարամյակներում Հայաստանի ու նրա շրջապատող շրջանների միջև եղած մշակութային ընդհանրությունները, մյուս կողմից՝ լեռնաշխարհի տեղական ավելի հին ավանդությունների անխաթար շարունակումը: Վերջինի համար հիմք է ծառայում կերամիկայի զարգացման համանմանությունը, զարգացումը, որոնք առկա են ինչպես ուշ նոր քարեդարյան, այնպես էլ Թեղուտի հասարակ ու հարդախառն կավաշաղախ ունեցող խեցեղենի օրինակների վրա:

ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ ՄԱՔՈՒՐ ԿԱՎԱՇԱՂԱԽ ՈՒՆԵՅՈՂ ԽԵՑԵՂԵՆ

Բնակատեղիի պեղումներով ձեռք բերված խեցեղենի մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն համեմատաբար մաքուր կավաշաղախից պատրաստված կավանոթները, որոնք իրենց պատրաստման, մակերեսների մշակման կատարելությամբ ու ընդհանուր տեսքով ներկայացնում են հնավայրի խեցեղործական արտադրանքի լավագույն տեսակները: Նրանցից մի քանիսի վրա առկա են գունազարդման հետքեր, իսկ մեծագույն մասը անզարդ է:

Անզարդ կավամանների խմբի համար բնորոշ են ծիրանավուն, բացդարչնագույն, կաթնագույն գեղեցիկ, նուրբ հղկված մակերեսները: Միջուկներն ունեն վարդագույն և կարմիր գույն, որն արդյունք է բարձրորակ թրծման: Որպես ողջ հավաքածուում առանձնահատուկ երևույթ, պետք է նշել, որ այս տեսակի կավամանների հատակները ոչ թե կլոր են, այլ հարթ: Իրենց ձևերով նրանք շքեղ սափորների, խնոցիանման անոթների, երկկոն իրանով զավաթների մասեր են: Հայտնաբերված բեկորներից ամբողջական տեսքի բերված կավամանների մի քանի օրինակներով հնարավոր եղավ պարզել նրանց կառուցվածքը, որոնք ավելի ընդարձակեցին մեր պատկերացումները Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական ժամանակաշրջանի խեցեղործական արտադրանքի առավել քիչ հայտնի տիպերի մասին:

Վերականգնված օրինակներից էԳԹ. 1061-ը ունի բարձր վիզ, գեղեցիկ փոված շուրթ, ուռուցիկ իրան, փոքրիկ հարթ հատակ: Գունաթափ-կարմիր, դարչնագույն երանգներով ծածկված մակերեսը խնամքով փայլեցված է Վիզը արտաքին կողմից թաց-հարդարված է, իսկ ներսը փայլեցված է քարե կոկիչով: Սափորն ունի 17 սմ բարձրություն, 14 սմ իրանի տրամագիծ: Վզի բացվածքը շուրթի մոտ 10,5 սմ է, իսկ ստորին, իրանի հետ միացման տեղում՝ 7 սմ (տախ. VIII № 1):

Նույնանման, բայց ավելի փոքր սափորի մաս է էԳԹ. 1065-ը: Սա ունի դարչնագույն, քարե կոկիչով փայլեցված մակերես, բարձր վիզ: Ամանը թերի է: Վզի բարձրությունը 3 սմ է, շուրթի տրամագիծը՝ 6 (տախ. VIII, № 2):

Հետաքրքիր է նկատել, որ բարձր վզերից մի քանիսի արտաքին մակերեսին երբեմն առկա են հորիզոնական լայն ակոսիկներ, որոնք ամանի կտրվածքում երևում են ալիքաձև: Այսպիսի ալիքաձև շուրթերի կառուցվածք ունեն նաև Թեղ-Հալաֆի սեղմված և փոված շուրթերով շքեղ սափորները⁶³:

⁶³ V. Oppenheim, նշվ. աշխ., ազ. XIV, նկ. 11:

Սափորների շուրթերի մնացորդների մեջ հատկապես ուշագրավ է էԳԹ 1244-ը: Սա, ի տարբերություն վերը ներկայացվածների, պատրաստված է մանրացված ավազի և կավի խառնուրդից: Նրա արտաքին փայլեցված մակերեսն ունի սև գույն, իսկ ներսը բաց-սրճավուն է: Բեկորի շուրթի պսակը շարդված է, սակայն ելնելով նրա ընդհանուր ձևից, կարող ենք ասել, որ այն եղել է դուրս ճկված: Իր կառուցվածքով շուրթի այս բեկորը կապվում է վերը նկարագրված սափորների հետ, միաժամանակ սերտորեն աղերսվում է մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենին: Նկատի է առնվում սև փայլեցված մակերեսը, տարագույն աստառը, մանրացված ավազի խառնուրդը (տախ. VIII, № 3):

Ինչպես կտեսնենք հետագայում, III հազարամյակի խեցեղեն հիշեցնող նմուշների մեջ սա միակը չէ:

Սափորներն իրենց ձևերով, մակերեսների մշակման կատարելությամբ առանձնանալով բնակատեղիի մասսայական խեցեղենից, համադրվում են մի կողմից Հյուսիսային Միջագետքում բուն Հալաֆյան մշակույթային կենտրոններում, մյուս կողմից Հալաֆյան մշակույթի տարածման հեռավոր վայրերում հայտնաբերված նմուշների հետ: Եթե Հալաֆում նրանք մեծ մասամբ գունազարդ են, ապա եզրային տարածքներում, ինչպիսիք են Անտիոքի դաշտը, Կիլիկիան, Վանի ավազանը (Շամիրամալթի և այլն), հիմնականում անզարդ են: Նման երևույթը, թվում է, պետք է դիտել որպես մշակույթի կենտրոնի և եզրային (տարածման) վայրերի միջև եղած փոխազդեցության և փոխադարձ կապերի արտահայտության ձև: Արարատյան դաշտում դրանց դոցույթունը որոշակիորեն ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի Վանի ավազանի, Խարբերդ-Մալաթիայի շրջանների հետ միասին Արարատյան հովիտը ևս մտել է իր ժամանակին Հյուսիսային Միջագետքի բարձր զարգացած Հալաֆյան մշակույթի տարածման շրջանակների մեջ:

Կավամանների մյուս տեսակը ներկայանում է նույնանման կավաշաղախից պատրաստված տակառաձև անոթների բեկորներով, որոնցից վերականգնված է էԳԹ 1006-ը: Ունի երկարավուն, բերանի և հատակի մասում նեղացող իրան, հարթ հատակ: Բերանի անցքը բացված է ուղղակի իրանի վերին մասում, բարձրությունը 14 սմ է, իրանի տրամագիծը՝ 11, բերանի բացվածքը՝ 5 (տախ. VIII, № 4):

Եթե սափորները առավել շատ համադրվում են Հալաֆյան նմուշների հետ, ապա այս տեսակը իր ուղղակի համադրությունն ունի օբեյդյան նյութերում, որոնք հայտնի են Միջագետքի Ուր, Ուրուկ⁶⁴ և այլ քաղաքներից: Այս հանգամանքն, անշուշտ, օգնելու է Հալաֆ-Օբեյդյան մշակույթի տարածմանը հեռավոր վայրերում, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում, փոխանցման ժամանակաշրջանի առանձնահատկությունները քիչ թե շատ ճանաչելու գործին:

Այս խեցեղենի մյուս տեսակը ներկայացվում է գավաթների երեք բեկորով: Նրանց համար բնորոշ են բաց-դարչնագույն և կաթնագույն փայլեցված մակերեսները, երկկոն իրանները, վարդագույն միջուկները:

Նրանցից էԳԹ 1070-ը ունի գեղեցիկ, դուրս ճկված շուրթ, նուրբ փայլեցված ողորկ մակերես, երկկոն իրան: Հատակը բացակայում է: Հետաքրքիր է, որ նրա իրանի վերին կեսը ավելի երկար է, քան ստորինը: Վերին

⁶⁴ Г. Чаїлд, Եջվ. աշխ., Եկ. 96, № XC:

կեսի երկարութիւնը 5 սմ է (տախ. VIII, № 6): Մյուս բեկորը բաց-դարչնագույն է, բարակ շուրթերով, իրանի վերին կեսի ներս հակվածութեամբ: Վզի բարձրութիւնը 2,5 սմ է (տախ. VIII, № 5):

Մյուս բեկորի վրա շատ լավ նկատվում է երկկոն իրանի ձևը:

Արժե նկատել, որ գավաթների ձևերը, սափորների նման, որոշ չափով հիշեցնում են երրորդ հազարամյակի խեցեղենի տիպերը:

Բարձրորակ խեցեղենի մեջ հատկապես ուշագրավ են կոյծքարի կամ խամրած կանաչ գույնի խեցու բեկորները: Դրանցից էԳԹ 1705-ը հարթ հատակով ստորին մասի բեկոր է:

Ներկայացված խեցեղեն առարկաները զատվելով բնակավայրի մնացած կավամաններից, սերտորեն կապված են Հալաֆյան-Օբեյդյան մշակութային օջախներից հայտնի տեսակների հետ: Ըստ երևույթին, նրանք Արարատյան դաշտ են թափանցել Հյուսիսային Միջագետքի կենտրոնների հետ ունեցած փոխանակային կապերի հետևանքով կամ պատրաստվել են տեղում, նրանց անմիջական նմանութեամբ:

Մ.Թ.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԽԵՑԵՂԵՆԸ ՀԻՇԵՑՆՈՂ ՆՄՈՒՇՆԵՐ

Պեղավայրում հայտնաբերված ավուզ և բուսական իստոնուրդ պարունակող կավաշաղախից պատրաստված խեցեղեն առարկաների շարքը ամբողջանում է կավանոթների այնպիսի տեսակներով, որոնք իրենց կառուցվածքով նմանվում են Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. III հազարամյակի կավամանների մի քանի տեսակներին:

Նախապես նշենք, որ ինչպես վաղ բրոնզեդարյան մշակույթում, այնպես էլ այստեղ, ամանների ձևերի մեջ արդեն որոշակի կերպով նկատվում է, այսպես կոչված, եռամասնութիւնը՝ ընդգծված ձևով անշատվող վիզը, երկթեք իրանը և հատակը, մի հանգամանք, որը, ինչպես տեսանք, բացակայում էր զանգվածային խեցեղենի նմուշների վրա: Այնուհետև մեր ունեցած նմուշներից մի քանիսի վրա առկա են վաղ բրոնզեդարին հատուկ ակոսավոր զարդերը և հատակի ներձկված փոսիկը:

Ի տարբերութիւն սև փայլեցված, տարագույն աստառով խեցեղենի, Թեղուտից գտնվածների վրա դեռևս բացակայում է կավամանների պատրաստման ու կավաշաղախի մշակման այն կատարելութիւնը, որը հատուկ է Քյուլ-Թափայի, Շենգավթի, Շրիշ-բլուրի, Նախիջևանի քյուլ-Թափայի II շերտի, Կարազի ու Հայաստանի այլ բնակավայրերից հայտնի խեցեղենին: Թեղուտի նմուշների վրա դեռևս գոյութիւն չունեն կիսագնդաձև կանթերը, պարուրաձև ակոսները, մետաղական փայլը և տարագույն աստառը:

Որպեսզի պարզ լինի կավանոթների այս տեսակների իսկական պատկերը, նկարագրենք նրանցից առավել տիպականները:

Հայտնաբերված բեկորներից մի քանիսի (էԳԹ 1691, 1818, 1842,) (տախ. IX, № 1, 2) պատկանում են բարձր վզով, դուրս ճկված շուրթով, երկթեք իրանով լայնաբերան կճուճներին (թաղար): Նրանց արտաքին մակերեսները երեսապատված են սև գույնի բարակ կավաշերտով և հարդարված են թաց շորի կամ խոտի միջոցով: Երեսապատման շերտի տակից պարզ երևում են կավաշաղախի մեջ եղած տարբեր մեծութեան ավազահատիկները: Ներսը նյունակես երեսապատված է և իր գունային արտահայտությամբ շատ քիչ է տարբերվում արտաքինից:

Կավամանների այս տեսակները իրենց ձևերով հիշեցնում են Շեն-գավթի, Արագածի ու էլարի հնավայրերից հայտնաբերված թաղարները⁶⁵:

Երկրորդ նմուշը (էԳԹ 795) նույնպիսի բաղադրություն ունեցող կավաշաղախից պատրաստված կճուճի բեկոր է, որի բաց-մոխրագույն երեսապատված մակերեսի վրա, իրանի վերին մասում, առկա են սեղմելու եղանակով արված ակոսաձև զարդի մնացորդներ: Պետք է ասել, որ զարդանախշը իր կատարման եղանակով և կառուցվածքով նման է մ.թ.ա. III հազարամյակի զարդերին, սակայն այստեղ այն կատարված է կոպիտ, շատ անհարթ մակերեսի վրա: Զարդանախշը իր կառուցվածքով հիշեցնում է Քյուլ-թափայի (Նախիջևանի)⁶⁶, Շենգավթի⁶⁷, Շրեշ-բլուրի ու Հայաստանի այլ հնավայրերից հայտնի նմուշներին (տախ. IX, № 3):

Հետաքրքրող նյութի տեսակետից պակաս արժեքավոր չէ նաև բնակավայրի առաջին կացարանից հայտնաբերված փոքրիկ ամանի հատակի բեկորը: Այն պատրաստված է մանրացված ավազի ու կավի խառնուրդից, ունի ողորկ մակերես, հատակի մասում արտաքին կողմից արված է ներձկված փոսիկ (տախ. IX, № 4):

Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենը հիշեցնող նմուշներից են նաև խորը գավաթների բեկորները: Սրանք ունեն երկթեք իրան, բարձր գլանաձև վիզ, շատ թույլ նշմարվող շուրթի պսակ, արտաքին մակերեսները փայլեցված են կոկիչով, ներսը հարդարված է: Այս խեցեղենից են էԳԹ 2017, 1856-ը և այլն: Վերջինը կլոր, գնդաձև իրանով ամանի բեկոր է:

Խեցեղործական արհեստի վերը նկարագրված նմուշների կարևորությունը բացատրվում է ոչ միայն այն հանգամանքով, որ դրանք իրենց ձևերով նման են հետագա դարաշրջանների կերամիկային, այլև նրանով, որ ցույց են տալիս Հայաստանի անցյալի մշակույթի զարգացման կարևոր փուլերից մեկի՝ վաղ բրոնզեդարյան խեցեղենի առանձնահատուկ ու բնորոշ գծերի սաղմնավորումը: Թեղուտի այս օրինակների յուրահատուկ կողմերը՝ հարդախառն կավաշաղախը, կոպիտ մշակված մակերեսները և այլն, հետագայում ևս շարունակվում են դիտվել մ.թ.ա. III հազարամյակի հասարակ, «խոհանոցային» ամանների վրա:

Այսպես մեր կողմից հետախուզված էջմիածնի Քյուլ-թափա բլուր-բնակատեղիում 2,5 մետր խորությունից հայտնաբերվեց հարդախառն կավաշաղախից պատրաստված խեցու բեկոր, որն իր ընդհանուր հատկանիշներով հար և նման է Թեղուտի վերը հիշատակված նմուշներին (էԳԹ 1895):

Անհրաժեշտ է այստեղ հիշել նաև Վ. Զեննիի դիտողությունը Շամիրամալթիի սև փայլեցված խեցեղենի մասին: Նա նկատել է, որ բնակավայրում սև փայլեցված կավանոթներն իրենց կավաշաղախով ու բնորոշ ձևերով ավելի տիպական են հնավայրի զանգվածային խեցեղենին (նկատի է առնված ավազի և բուսական խառնուրդ ունեցող կավաշաղախը, մակերեսների անբավարար մշակումը և երեսապատման շերտի գոյությունը)⁶⁸:

Չ. Բարնեյլը Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների պղնձեքարե-

⁶⁵ Է. Խանգալյան, Հայկ. լեռ. մշակույթը մ.թ.ա. III հազ.-ում, աղ. 25, Երևան, 1967:

⁶⁶ О. А. Абибулаев, Նշվ. աշխ., էջ 166, նկ. 8:

⁶⁷ Մ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 178:

⁶⁸ V. Jenny, Նշվ. աշխ., էջ 293:

դարյան ու վաղ բրոնզեդարյան մշակույթի մեջ դիտել է բազմաթիվ ընդհանրություններ, որոնք բնորոշ են անցման շրջանին⁶⁹:

Չնայած այս տիպի խեցեղենի սակավաթվությանը, այնուամենայնիվ, մինչև այժմ հայտնի օրինակները մեծապես նպաստում են Հայկական լեռնաշխարհի, այսպես կոչված, «Քուռ-Արաքսյան էնեոլիթյան» մշակույթի ակունքների հետազոտման գործին:

Եթե մինչև վերջին տարիներս Քուռ-Արաքսյան Միջագետքի մշակույթը համարվում էր իր նախորդներից կտրված, օտարամուտ, ապա Թեղուտի, Խարբերդ-Մալաթիայի, Հարավային Վրաստանի, Աղստև գետի ավազանի, Նախիջևանի Քյուլ-Յափայի, Պարսկական սարահարթի ու Մուղան-Ղարաբաղի՝ մ.թ.ա. V—IV հազարամյակներով թվագրվող հնավայրերի նյութերի ու վաղ բրոնզեդարյան առարկայական հուշարձանների միջև եղած նմանությունների ճանաչումով այժմ կարելի է ասել, որ վաղ բրոնզեդարյան մշակույթը իր խորը արմատներն ունի տեղական ավելի վաղ ժամանակաշրջանների նյութական արտադրության մեջ: Եթե Նախիջևանի Քյուլ-Յափայում ըստ Օ. Ա. Աբիրուլակի տեղի է ունեցել ընդհատում առաջին և երկրորդ շերտերի միջև, ապա դա դեռևս չի նշանակում, թե ամենուրեք այդ ընդհատումը առկա է: Այդ երկու մշակույթների օրգանական կապի օգտին են վկայում Շենգավթի⁷⁰ ստորին շերտերի, Թեղուտի, Աղջաղալա II բնակատեղիների շինարարական մնացորդների, աշխատանքային գործիքների խեցեղենի որոշակի տիպերի ու մ.թ.ա. III հազարամյակի նյութական մշակույթի համադրությունները: Դրանք ցույց են տալիս, որ Թեղուտի բնակատեղիի գոյության ժամանակաշրջանում արդեն սկսել էին սաղմնավորվել մ.թ.ա. III հազարամյակի մշակույթի ընդհանուր գծերը:

Տարագույն աստառով սև փայլեցված խեցեղեն ունեցող «Քուռ-Արաքսյան» մշակույթի հայրենիքն է Հայկական լեռնաշխարհը: Արարատյան դաշտը եղել է այն կարևոր օջախներից մեկը, որի բարեբեր հողի վրա ծագել ու հետագա զարգացումն է ապրել մ.թ.ա. III հազարամյակի մշակույթը:

ՀՅՈՒՍՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՎԱԾՔԻ ՀԵՏՔԵՐ ԿՐՈՂ ԽՅՅԵՂԵՆ

Խեցեղեն առարկաների հավաքածուի մեջ բավական մեծ քանակություն են կազմում հյուսվածքի և գործվածքի հետքեր կրող կավամանների բեկորները: Սրանք կարևոր են ոչ միայն կավագործական արհեստի հնարանքնեոի ուսումնասիրության տեսակետից, այլև կարող են աղբյուր հանդիսանալ Հայաստանի՝ մ.թ.ա. V—IV հազարամյակներում գոյություն ունեցող ջուլ-հակուիթյան և հյուսվածքի արհեստների հետազոտության համար:



Հյուսվածքի և գործվածքի դաջվածքով խեցեղենի նմուշները մեր հավաքածուում բաղկացած են կարմիր, բաց-սրճավուն, գորշ գույնի ավազախառն և հարդախառն կավից պատրաստված տարբեր մեծության կճուճների բեկորներից: Նրանց արտաքին մակերեսները մշակված են թաց-հարդարման եղանակով կամ քարե կոկիչով: Ներսի մակերեսները ամբողջովին ծածկված են գործվածքի հետքերով կամ մասամբ հարդարված են: Բացի կոպիտ ավազախառն կավաշաղախից պատրաստված տեսակներից, կան նաև համեմա-

⁶⁹ C. Burney, նշվ. աշխ., էջ 163 և 183:

⁷⁰ Ս. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 71:

տաբար մաքուր կավից պատրաստվածներ, որոնց արտաքին մակերեսները նուրբ անգորգապատ են, իսկ ներսը անմշակ, տեղ-տեղ ծածկված գործվածքի դաջվածքով:

Այս ամանները ունեն բարակ պատեր, միջուկների ու մակերեսների



Նկ. 17. Գործվածքի դաջվածք կրող բեկորներ:

գունային տարբերությունները լավ թրծելու հետևանքով շատ չեն առանձնանում:

Առավել կոպիտ ու անմշակ ֆակտուրա ունեն բուսական նյութերից հյուսած սալայի կամ խարի դաշվածք ունեցող կավամանների բեկորները: Մրանք պատկանում են գերազանցապես սաջ կոշված ամաններին:

Չնայած այս խմբի խեցեղենի նմուշները հայտնաբերվել են բացարձակապես կոտրատված վիճակում, այնուամենայնիվ, հնարավոր եղավ վերականգնել մի քանի ամաններ, որոնց ձևերը շատ տիպական են բնակատեղիի զանգվածային խեցեղենի համար:

Քանի որ Հայաստանի նախնադարյան նյութական մշակույթի մեջ այս նմուշները հազվագյուտ են, ուստի և անհրաժեշտ ենք համարում մանրամասն նկարագրել վերականգնված բոլոր անոթները և բեկորներից մի քանիսը:

Այս խմբի բոլոր նմուշների համար ընդհանուրն այն է, որ դաշվածքի հետքերը մեծ մասամբ առկա են ամանների այն մասերի վրա, որտեղ վարպետի հղկող ձեռքը չի դիպել, կամ ամանը ուղղակի չի հղկվել:

Վերականգնված ամաններից էԳԹ. 1069-ը (տախ. V, № 1): Միջին մեծություն կճուճ է, որը պատրաստված է ավազախառն կավից: Ունի գոշ գույն, քիչ դուրս բացվող վիզ, ուղիղ կտրած շուրթ, ուռուցիկ իրան, կլոր հատակ: Կճուճի արտաքին և ներքին մակերեսները երեսապատված են համեմատաբար մաքուր կավի բարակ շերտով: Երեսապատման շերտը այնքան բարակ է, որ տակից շատ հստակ երևում են կավի հետ խառնված տարբեր մեծություն ավազահատիկները: Ամանի իրանի ուսին առկա է սեղմումով արված կիսալուսնաձև փոսիկ-զարդը: Ըստ երևույթին, այդպիսի կետերը կրկնվել են նաև ամանի մյուս մասերի վրա:

Կավանոթի ներսի մակերեսին տեղ-տեղ պահպանվել են գործվածքի դաշվածքի հետքերը, այնպիսի դասավորությամբ, որ հիմք են տալիս մտածելու, թե թաց կավը կաղապարվել է պարկի վրա: Ամանը ունի հետևյալ չափերը. բարձրությունը՝ 15 սմ, բերանի տրամագիծը՝ 11, իրանի տրամագիծը՝ 14,5:

Գործվածքի դաշվածք ունեցող կավանոթներից ամենամեծը տասներկուերորդ կացարանից հայտնաբերվածն է: Դա գնդաձև իրանով, բարձր շուրթով, կլոր հատակով մեծ կճուճ է (35 սմ բարձրությամբ): Արտաքին մակերեսը թաց-հարդարված է, իսկ ներսը ամբողջովին ծածկված է գործվածքի հետքերով: Արտաքին մակերեսը, չնայած հարդարմանը, խիստ ճաքճրքված է ու անհարթ: Թրծվածքը անբավարար է, այդ են վկայում արտաքին կողմի վրա եղած բաց գույնի, կոտրվածքում երևացող ոչ խորը երանգները, որոնք բարձր ջերմաստիճանի շատ կարճ ազդեցության արդյունք են: Միջուկը և ներսը համեմատաբար սև են և գորշակարմրավուն:

Վերականգնված ամանների ձևերը իրենց համադրություններն ունեն հնագիտության մեջ հայտնի կավամանների հնագույն խմբի մեջ: Նկատի ունենք լատիններեն S տառի ձևն ունեցող կտրվածքը, որ հայտնի է Թել-Հալաֆից, Շամիրամալթիից, Հասսունայից և այլ վայրերից:

Բացի վերականգնված ամաններից, պեղումներով հավաքված ժողովածուի մեջ մեծ թիվ են կազմում բեկորները: Դրանք տարբեր մեծություն և նոթների մասեր են, որոնք իրենց ընդհանուր հատկանիշներով համարյա չեն տարբերվում վերը նշված վերականգնված ամաններից:

էԳԹ. 791 համարը կրող կավամանի իրանի բեկորը պատկանում է գունաթափ-սրճագույն, ավազախառն կավից պատրաստված միջին շափի կճուճի: Ներսի շատ անհարթ մակերեսի վրա տեղ-տեղ առկա են գործվածքի դաշվածքի մնացորդներ, որոնք չեն ծածկվել հղկման ժամանակ: Բեկորի բարձրությունը 18 սմ է, լայնությունը՝ 17, կողի հաստությունը՝ 0,8—1,5:

Մյուս բեկորը (էԳԹ. 779) պատկանում է բաց-կարմիր գույնի կավանոթի: Արտաքին մակերեսը սովորականի նման թաց-հարդարված է, իսկ ներսը ծածկված է գործվածքի հետքերով: Այս բեկորի գործվածքը օգնում է պատկերացում կազմելու նաև մեկ այլ երեսլթի մասին: Այն, որ ամանի վրա դաշվել են պարկի վրա փաթաթված թելի և նրա հանգույցի մնացորդներ: Բացի այդ, գործվածքը այստեղ ունի երկու շերտ, ընդ որում արտաքին շերտը ավելի մաշված է ու լայն անցքեր ունի, իսկ ներսինը ավելի մանր է: Հավանաբար խեցեգործները, պարկի ներսի ավազը չթափվելու համար, կրկնակի գործվածք են դրել ներսից և ապա պարկը պատել շուրջ 2,5 մմ հաստության թելով: Կավամանի թրծվածքը բավական ամուր է, միջուկը՝ քիչ գորշ: Կոտրվածքում լավ երևում են շմաքրված ավազի տարրեր մեծության հատիկներ: Բեկորի (նկ. 17, ստորինը) երկարությունը՝ 12 սմ է, լայնությունը՝ 8, հաստությունը՝ 1,8:

Ավազախառն կավից պատրաստված բեկորների մեջ հիշատակության են արժանի նաև առաջին կացարանից հայտնաբերված էԳԹ. 3/43-ը: Սրանք պատկանում են բարակ կողերով կավանոթի, որի արտաքին մակերեսը մուգ-դարչնագույն է, կրակի վրա դրվելու հետևանքով խիստ մրոտված: Ներսը բաց-կարմրավուն է, այն ամբողջովին ծածկված է շատ նուրբ գործվածքի դաշվածքով:

Գործվածքի դրոշմով բեկորների մյուս խումբը պատկանում է համեմատաբար լավ մշակված հարդախառն և ավազախառն կավաշաղախ ունեցող բարձրորակ կավամանների: Նրանք ունեն բաց-սրճավուն, կարմիր մեծ խալերով պատված, խնամքով փայլեցված արտաքին մակերես, որոնց վրա նկատվում են կավի հետ խառնված բուսական մնացորդների այրման հետեվանքով առաջացած հետքեր: Բեկորների ներսի կողմը գունաթափ-կարմիր է և ծածկված է մաքուր կավաշաղախով: Երեսապատման շերտի տակից և այն տեղերում, որտեղ չի ծածկվել, երևում են գործվածքի հետքեր: Ամուր թրծվածքով, բաց-վարդագույն միջուկներով այս բեկորները պատկանում են թեք բացվող վզով, փքուն գնդաձև իրանով կճուճների խմբին, ինչպիսին հայտնաբերվել է առաջին կացարանից, որոնց վրա նկատվում են սև ներկավ ներկված զարդարանքների անվերծանելի հետքեր (նկ. 17, վերինը):

Կավամանների այս տիպի բեկորներից հայտնաբերված են 3-ը, որոնք կրում են էԳԹ. 1884 համարը:

Գործվածքի հետքեր ունեցող առարակների, այն էլ մեծ քանակով գոյությունը Թեղուտի բնակատեղիում վկայում է, որ այստեղ բրուտության պրակտիկայում իրականացվել է կավագործության հնագույն եղանակներից մեկը:

Բացի Թեղուտից, Արարատյան դաշտում դաշվածքի հետևանքով կավամանների բեկորներ հայտնաբերված են նաև 1968 թ. Աղջաղալա I և II բնակատեղիներում: Ըստ որում արժե ընդգծել այն, որ Աղջաղալա I-ի նմուշը հանդես է գալիս տիպիկ թեղուտյան կոմպլեքսի հետ, իսկ Աղջաղալա II-ը մ.թ.ա. III հազարամյակի տարագույն աստառով խեցեղենի վրա (նյութի որոշակի մասում են էԳԹ, ֆոնդ № 8):

Հայաստանի այլ հնավայրերից այդպիսի նմուշներ առայժմ գտնված չեն, սակայն դրանք բազմաթիվ օրինակներով հայտնաբերված են Լեոնային Ղարաբաղի ու Ադրբեջանի հնավայրերում⁷¹, ինչպես նաև Կովկասի ու Անդրկովկասի բազմաթիվ նորքարեդարյան ու պղնձեքարեդարյան ու բրոնզեդարյան բնակավայրերում: Անդրկովկասում դրանք հայտնի են Սև ծովի ափերից Գուդաուտի մոտ՝ Կիստրիկից⁷², Օչեմչիրիից, ինչպես նաև Հյուսիս-Արևելյան Կովկասի Զգուդրա, Գվարդա և Դուլինյան բնակավայրերից: Ինչպես հայտնի է, գործվածքի դաջվածք ունեցող խեցեղենի նմուշները Առաջավոր Ասիայի հուշարձաններում համարյա բացակայում են: Սրան հակառակ, դրանք շատ առատ են Արևելյան Եվրոպայի, Սիբիրի ու Չինաստանի բնակավայրերում:

Այս փաստը նկատի ունենալով, մեծավաստակ հնագետ Բ. Ա. Կուֆտինը իր ժամանակին որոշ վերապահումներով հնարավոր է համարել այն միտքը, որ կավամանների պատրաստման տեխնիկական այս հնարանքը Կովկաս և Անդրկովկաս է թափանցել հյուսիսից⁷³:

Սակայն ավելի վերջերս, հիմք ընդունելով հայտնաբերված հնագիտական նորագույն նյութերը, Ռ. Մ. Մունչակը գտնում է, որ այդ տեխնիկական հնարանքը կարող էր առաջանալ և տեղում⁷⁴:

Եվ իրոք, երբ մենք քննության ենք առնում Անդրկովկասի հնավայրերի գործվածքի դրոշմով խեցեղենը, ապա այն իր պատրաստման տեխնիկայով, կավաշաղախի բաղադրությամբ ու ձևերով բոլորովին չի տարբերվում հնավայրերի զանգվածային կավամանների նմուշներից:

Թեղուտում և Աղջաղալա II-ում նրանք հանդես են գալիս պղնձեքարեդարյան շարքում, իսկ Աղջաղալա I-ում և Կիլիկ-Դաղում՝ մ.թ.ա. III հազարամյակի շերտերում: Նման հանգամանքը ցույց է տալիս, որ մ.թ.ա. IV—III հազարամյակներում Արարատյան դաշտում գոյություն ունեցող տեխնիկական հնարանքը շեր կարող ներմուծված լինել մ.թ.ա. IV հազարամյակի վերջով և III հազարամյակով թվագրվող հուշարձաններից: Հետևապես մեզ համար համոզիչ է Ռ. Մ. Մունչակի կարծիքը, որով նա այն համարում է տեղական տեխնիկական հնարանք⁷⁵:

Բացի այդ, Արարատյան դաշտի և Հայկական լեոնաշխարհի ողջ մշակույթը ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանդես է գալիս տիպիկ առաջավորասիական ձևերով: Դրան հակառակ, հեռավոր հյուսիս-կովկասյան կապերը Առաջավոր Ասիայի հետ դրսևորվում են մ.թ.ա. III հազարամյակից, այն էլ Հայկական լեոնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթի տարածումով:

Բացի գործվածքի դրոշմներ ունեցող բեկորներից, Թեղուտի բնակավայրում հայտնաբերվել են նաև կավամանների տեսակներ, որոնք իրենց վրա կրում են հյուսվածքի դրոշմներ:

⁷¹ Я. И. Гуммель, Археологические работы в районах Азербайджанской ССР, Изв. Аз. ФАН ССР, № 3, 1939, էջ 62, его же, Из памятников материальной культуры Азербайджана, ВДИ, № 1, ст. 213, так же «Раскопки в Нагорно-Карабахской АО, в 1938 г. «Изв. Азерб. ФАН ССР», № 4, էջ 38:

⁷² А. Л. Лукин, Неолитическое селище Кострик близ Гудаут, СА, XI, 1949, էջ 280.



⁷³ Б. А. Куфтин, К проблеме энеолита внутренней Картли и юго-Осетии, ВМГ, XIV, 1947, էջ 74, 75—78:

⁷⁴ Р. М. Мунчаев, ук. соч. էջ 118—119:

⁷⁵ Р. М. Мунчаев, նշվ. աշխ., էջ 118:

Այսպիսի բեկորները գերազանցապես պատկանում են ավազախանոն կավաշաղախից պատրաստված տապակարաններ—սաջերին: Եթե գործվածքի դաջվածքները կճուճների վրա առկա են բացարձակապես ներսի կողմում, ապա սաջերի վրա դրանք գտնվում են հատակին, արտաքին կողմից:

ԷԳԹ. 896-ը կրող նմուշը հատակի մաս է, նրա ներսի կողմը հղկված է



Նկ. 18. Հյուսվածքի դաջվածք կրող խեցու բեկորներ:

քարե կոկիչով, իսկ դուրսը ամբողջովին ծածկված է հյուսվածքի հետքերով (նկ. 18):

14-րդ կացարանից հայտնաբերվածը նույնպիսի հատակի մաս է, որի արտաքին կողմի վրա ևս պահպանվել են դաշվածքի հետքեր: Բեկորի երկարությունը 19 սմ է, լայնությունը՝ 15, հաստությունը՝ 1,5: Թրծվածքը ամուր է: Ներսի մակերեսը հղկված է քարե կոկիչով:

Հյուսվածքի դաշվածքով խեցեղենի նմուշների կառուցվածքը պատկերացնելու համար հետաքրքիր է էԳԹ. 1728 նմուշը: Սաջի բեկոր է, հատակը արտաքին կողմից ամբողջովին ծածկված է դաշվածքով:

Բացի որոշակի պատկանելություն ունեցող բեկորներից, հավաքածուի մեջ կան նաև այլ նմուշներ, որոնք ևս կրում են դաշվածքի հետքեր:

Կավամանների այս խմբի նմուշները ոչ միայն օգնում են պատկերացում կազմելու կավագործության հնարանքների մասին, այլև մեզ են հասցնում Արարատյան դաշտի վաղ երկրագործական տնտեսության մեջ իրականացված արհեստներից հնագույնի գոյության փաստը: Խորի դաշվածքով կավամաններ հայտնաբերված են նաև Կոնիայի դաշտի Զաթալ-հույուկ հնավայրից⁷⁶:

Այսպիսով, Թեղուտի բնակատեղիում լայնորեն կիրառված նախնադարյան խեցեգործության հնագույն եղանակների քննությունը մեծապես նպաստում է, ոչ միայն բրուտի արհեստի մանրամասների ճանաչմանը, այլև որոշ իմաստով հնարավորություն ստեղծում տնտեսության այլ ճյուղերի՝ ջուլհակության և խեցեգործության, ուսումնասիրության համար:

ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆ

Խեցեղեն առարկաների մեջ շատ ուշագրավ են կավամանների այն բեկորները, որոնք իրենց վրա ունեն գունազարդման հետքեր: Այդ բեկորների կարևորությունը ոչ միայն այն է, որ դրանք Սովետական Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված հնագույն գունազարդ անոթների նմուշներն են, այլև այն, որ դրանք իրենց ստույգ զուգահեռներն ունեն ողջ Հայկական լեռնաշխարհի, Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի նյութերի մեջ:

Գունազարդ ամանների վրա եղած զարդամոտիվների բնորոշ ձևերի ճանաչումով ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում Հայաստանի տարբեր հնավայրերի և շրջապատի մշակութային օջախների միջև եղած փոխանակային ու մշակութային կապերը տեսնելու համար:

Պետք է նշել, որ Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. 4-րդ հազարամյակի բնակավայրերից մինչև այժմ շատ քիչ գունազարդ խեցեղեն է հայտնաբերված, ուստի յուրաքանչյուր նոր նմուշ մեծ կարևորություն ունի:

Հնավայրերի գունազարդ խեցեղենի բեկորները պատկանում են ավազախառն, հարդախառն ու համեմատաբար մաքուր կավից պատրաստված տարբեր չափի կճուճների, կարասների, բաց թասերի և գեղեցիկ, բարձրավիզ սափորների:

Ավազախառն շաղախով կավանոթների գունազարդ նմուշները ներկայացված են մի քանի օրինակով, որոնք ունեն զարդարանքի տարբեր մոտիվներ:

Պետք է նախապես նշել, որ կավամանների այս խմբի զարդամոտիվ-

⁷⁶ J. Mellaart, Excavations at Catal Hüyük, Anat. St. հատ. 14, էջ 82, նկ. 33, № 3:

ները շատ վատ են պահպանված և լավ տեսանելի չեն: Դրանք ավելի լավ են երևում թրջված վիճակում:

Զարդարանքի հետքեր ունեցող էԳԹ № 1684 նմուշը բարձր վզով, ուղիղ կտրած շուրթով, ուռուցիկ իրանով, միջին չափի կճուճի մաս է: Արտաքին մակերեսը և վզի ներսը հղկված են թաց-հարդարման եղանակով, ունի խամբած-կարմիր գույն: Մակերեսի վրա առկա են կավի հետ խառնված ավազի տարբեր մեծություն հատիկներ, ինչպես նաև բուսական մնացորդների հետքեր: Բեկորի վզի և իրանի ուսերի վրա շատ թույլ պահպանվել են զարդարանքի մնացորդներ: Դրանց մեջ կարելի է տեսնել վզի վրա փետուրով քաշված, վերևից ներքև իջնող ալիքաձև գծեր, իրանի ուսերին նկարված, ցանցաձև լցված շեղանկյունի և կարծես այդ երկուսի արանքում տեղադրված անկյուններ (տախ. X, № 1—2):

Մյուս գունազարդված բեկորը (էԳԹ. 1679) նույնանման կավամանի շուրթի մաս է, որի վրայի զարդամոտիվները կարծես թե կրկնում են առաջինին, միայն այն տարբերությամբ, որ այստեղ ակնհայտորեն բացակայում են անկյունաձև գծերը:

Այս երկու օրինակների վրա նկատելի է մի կարևոր հանգամանք. նրանց վզի վրա նկարված ալիքաձև գծերը չեն իջնում մինչև վզի հեմքը, տեղավորված են խումբ-խումբ, և նրանց արանքում ուսերի վրա նկարված է ցանցաձև լցված շեղանկյունի:

Հետաքրքիր է նաև քիչ դուրս թեքված շուրթով, փքուն իրանով կճուճի բեկորը (էԳԹ. 1683): Նրա մակերեսը հարդարված է թաց-հղկման եղանակով: Բեկորի բաց-դարչնագույն ֆոնի վրա սրճագույն ներկով գծված են զիգ-զազաձև գծեր, ամանի շուրթի մի հատվածում վեց գծեր ճառագայթաձև լայնանալով, տարածվում են դեպի ամանի ուսերը: Գազաթի մասում այդ գծերը հատվում են միմյանց, և վզի վրա առաջանում է ցանցաձև գծերով լցված անկյուն:

Այս խմբի կավանոթների բեկորներից ուշագրավ է էԳԹ № 1756 նմուշը: Դա վերը նկարագրվածների նման միջին մեծության կճուճի շուրթի մաս է, որի վիզը զարդարված է սև ներկով նկարված կիսաօղակներով: Օղակի մեջ առկա է ինչ-որ անվերծանելի զարդապատկեր:

Նման բաղադրություն ունեցող բաց-դարչնագույն բեկորներից մեկի երեսապատված (էԳԹ 1681) մակերեսին պահպանվել են սրճավուն ներկի գծեր, որոնք ըստ երևույթին լցված եռանկյունիների շարք են կազմել (տախ. X, № 4):

Գունազարդ այս խեցեղենը իր ձևերով ու զարդամոտիվների կոնստրուկցիայով սերտորեն կապվում է Հայկական լեռնաշխարհի այլ հնավայրերից հայտնի ցուցանմուշների հետ:

Այսպես, վերը նկարագրված օրինակները (տախ. X, № 1,2) իրենց ձևերով խիստ տիպական են բնակատեղիի զանգվածային խեցեղենի և խարբերդ-Մալաթիայի տեղական պղնձեքարեղարյան նմուշների համար, որոնց ձևերը ձանաչված են որպես Հասսունյան, սակայն իրենց զարդարանքների կազմով ավելի շատ նման են Թել-Հալաֆի օրինակներին⁷⁷, իսկ մի քանի տարբեր հիշեցնում են Շամիրամալթիի խեցեղենը⁷⁸ (անկյունաձև գծեր):

⁷⁷ V. Oppenheim, նշվ. աշխ. աղ. XLII, նկ. 3, աղ. LXXIII, նկ. 2, աղ. LXXX, նկ. 1:

⁷⁸ C. Burney, նշվ. աշխ., էջ 163, նկ. 1, 2:

Բացի այդ, տարբեր ձևի աստղաթև զարդամոտիվը (էԳԹ 1683) ուղղակի կրկնում է հարբերդի, Արգուվանի շրջաններից հայտնաբերված նմուշները⁷⁹, իսկ (էԳԹ 756) զարդարանքի մոտիվի վերականգնումը հիշեցնում է Հինձորի շրջանի տեղական գունազարդ պղնձեքարեդարյան զարդանմուշը⁸⁰:

Պետք է ասել, որ հասարակ կավաշաղախից պատրաստված գունազարդ օրինակները իրենց զարդարանքների որակով ու կոմպոզիցիայով հիշեցնում են Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական բնակատեղիների գունազարդ խեցեղենի սկզբնավորման էտապի տիպերը: Այսպես վերից ներքև իջնող ալիքաձև գծերն ու աստղաթևերը և այլ մոտիվները տիպական են Մերսինի, Հալաֆի, Օբեյդի և Սիալիի ստորին շերտերին:

Գունազարդ անոթների մյուս խումբը կաղմված է հարդախառն կավաշաղախով պատրաստված բեկորներից, որոնց պատկանում են մեծ կարասներն ու ոչ խորը թասերը:

Նրանցից էԳԹ. 1688-ը (տախ. X, № 3) դեղին, անգորապատ մակերեսով, ամուր թրծած կարմիր միջուկով, հաստ կողերով կարասի բեկոր է, որի մակերեսները ամբողջովին ծածկված են կավաշաղախի մեջ եղած մանրացրած հարդի այրման հետևանքով առաջացած փոսիկներով:

Դեղին գույնի արտաքին մակերեսի վրա, սրձագույն անփայլ ներկով, վրձնի օգնությամբ նկարված են վերևից ներքև իջնող անկանոն ալիքաձև գծեր: Ըստ երևույթին, այդպիսի գծերով զարդարված են եղել ամանի իրանի ուսերն ամբողջությամբ: Այդպիսիները հայտնաբերված են Վանի Շամիրամալթի բնակատեղիի I շերտից⁸¹ (բեկորն ունի 18 սմ երկարություն, 10 սմ լայնություն, 1,5 սմ հաստություն):

Գունազարդ է նաև էԳԹ. 1687 ցուցանմուշը: Նույնպես կարասի բեկոր է: Ի տարբերություն վերը նկարագրվածի, սրա բաց դեղնավուն անգորապատ մակերեսի վրա վրձնի օգնությամբ, շատ անփուլթ ձևով, կարմիր ներկ է քսված, ըստ որում, բեկորի մակերեսին առկա են սահած ներկի շորացած կաթիլների հետքեր: Այս հանգամանքը նկատի է առնվում այն պատճառով, որ վերևից ներքև իջնող ալիքաձև գծերով զարդարված՝ ուրիշ բնակավայրերի ամանների վրա ևս առկա են ներկի կաթիլներ⁸²:

Գունազարդման հետքեր ունի նաև էԳԹ. 2712 համարը կրող, դեղին, անգորապատ մակերեսով, քառակող շուրթով կարասի բեկորը: Դրա ուսի վրա սև, նույնպես շփալլող ներկով նկարված է փոքրիկ քառաթև խաչ, ըստ որում, խաչի թևերի ծայրերը կլորացված են: Բեկորի թրծվածքը ամուր է, միջուկը վարդագույն, ներսը՝ կարմիր (բարձրությունը՝ 12 սմ է, երկարությունը՝ 14, հաստությունը՝ 1,5) (տախ. X, № 8):

Դեղին անգորապատ գունազարդ մակերեսով հարդախառն խեցեղեն հայտնաբերված է նաև Նախիջևանի Քյուլ-Յափայի I շերտում⁸³, ինչպես նաև Շամիրամալթի I շերտում⁸⁴, Մուղան-Ղարաբաղում: Հին Արևելքի հնագիտության մեջ դեղին անգորապատ մակերեսով հարդախառն կավից պատ-

⁷⁹ C. Burney, նշվ. աշխ. էջ 163. նկ. 1,2:

⁸⁰ Նույնի նկ. 26:

⁸¹ V. Jenny, նշվ. աշխ., էջ 33, նկ. 1 և 2:

⁸² I. Garstang, նշվ. աշխ., նկ. 52, № 3:

⁸³ O. A. Абнбулаев, նշվ. աշխ., էջ 161:

⁸⁴ V. Jenny, նշվ. աշխ., էջ 296:

րաստված ամանները համարվում են որպես Օբեյդյան մշակույթի ժամանակաշրջանին պատկանող առարկաներ և թվագրվում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակով:

Որպես Օբեյդյան մշակույթին բնորոշ առանձնահատկություն, ընդունված է, ի միջի այլոց, նաև շփայլող խամրած ներկը: Այս հանգամանքը հաշվի առնելը հետազայում կօգնի հուշարձանը թվագրելու հարցում:

Այս խմբի խեցեղենի բեկորները զարդարված են ոչ միայն վրձնով, այլև քարե կոկիչի օգնությամբ: Այս մասին է վկայում էԳԹ 1682 համարը կրող մեծ, ոչ խորը թասի բեկորը, որի հատակին, ներսի բաց դարչնագույն ֆոնի վրա, կարմիր ներկով արված է շուրջ 2 սմ լայնությամբ ուղիղ գիծ: Մեզ թվում է, որ ամանի ներսում նկարված է եղել քառաթև խաչ: Նման ենթադրությունը հիմք է ծառայում նախ այն, որ հավաքած հարդախառն կավամանների մի քանի բեկորներ զարդարված են ներկելու և սեղմելու եղանակով արված կետավոր խաչապատկեր զարդերով, և ապա նաև այն, որ նույնանման զարդամոտիվ հայտնաբերված է Նախիջևանի Քյուլ-թափայի I շերտում⁸⁵ և այլ բնակավայրերում:

Այնուհետև կոկիչի օգնությամբ զարդարված ամանների մնացորդներ են էԳԹ. 782 և երրորդ տեղամասի II կացարանից հայտնաբերված օրինակները: Դրանք հիմնականում փոքր և մեծ բաց թասերի բեկորներ են, որոնց գունաթափ-դարչնագույն արտաքին մակերեսին քարե կոկիչով գորշ-դեղնագույն ներկ է քսված, ըստ որում կոկիչի հետազօծերը դիտողի վրա թողնում են ցանցաձև լցված շեղանկյունների կամ քառանկյունների տպավորություն:

Այսպիսի եղանակով կավանոթները զարդարելու պրակտիկան հնագիտության մեջ հայտնի է Սիրո-Կիլիկյան հուշարձաններով ու Խաբուր գետի հովտի հասարակ խեցեղեն նմուշներով⁸⁶:

Բացի որոշակի կոմպոզիցիայի գունազարդ բեկորներից, հարդախառն կավաշաղախ ունեցող մի քանի նմուշներ (էԳԹ 1673 և այլն) իրենց վրա ունեն կարմիր ներկի հետքեր, ըստ որում ներկի մնացորդները գերազանցապես առկա են ամանների ներքին պատերի վրա: Հավանական է, որ այդ ամանների մեջ ներկ են պահել, կամ բաց թասերի մեջ օխրան տրորել: Որ իրոք ներկը ամբարել են, վկայում է I կացարանի մեծ կարասի բեկորը: Նրա ներսում պահպանվել է ներկի հաստ նստվածքը:

Գունազարդ խեցեղենի մյուս խումբը ներկայացած է մանր ավազախառն կավից պատրաստված, իրենց տեսքով ավելի բարետես ամանների մնացորդներով, որոնք թե՛ իրենց կառուցվածքով, թե՛ զարդամոտիվներով, թե՛ օգտագործված ներկի որակով արմատապես տարբերվում են վերը նկարագրված երկու խմբերից և կազմում են բնակատեղիի խեցեղեն իրերի լավագույն նմուշները:

Ամանների այս նմուշներից մի քանիսը հաջողվեց ամբողջական տեսքի բերել:

Նրանցից առաջինը (էԳԹ 896) ոչ շատ բարձր վզով, ուղիղ կտրած շուրթերով, քիչ ուռուցիկ իրանով, հարթ հատակով, գունաթափ-սրճագույն անգորբապատ փայլուն մակերեսով փոքրիկ կճուճ է: Նրա վզից ներքև, իրանի

⁸⁵ Օ. А. Абибулаев, Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани, МИА, № 67, 1959.

⁸⁶ R. Braidwood and L. Braidwood, նշվ. աշխ., էջ 84.

ուսի վրա, կարմիր փայլուն ներկով նկարված է ամանը շրջափակող հորիզոնական լայն ժապավեն, որից ներքև իրանը զարդարված է կախված կիսաօղակներով (տախ. X, № 5):

Մյուս ամանը (էԳԹ 392) մոտավորապես նույն կառուցվածքն ունի, միայն նրա իրանը կախված կիսաօղակների փոխարեն զարդարված է հորիզոնական ժապավենից սկիզբ առնող վերևից ներքև գնացող հաստ գծերով, որոնք ավարտվում են ամանի ստորին մասում (տախ. X, № 6):

Գունազարդ այս խեցեղենը պատրաստման եղանակով սերտորեն կապվում է բնակավայրի կավամանների վրա դիտված սպիրալա-լարային եղանակներով պատրաստված տիպերի հետ: Դրանց վրայի զարդանախշի վերականգնումով պարզվեց, որ սրանք իրենց սերտ համադրություններն ունեն Միջագետքում լայն տարածում գտած Հալաֆյան մշակույթի նմուշների հետ: Այս նմանությունը հաստատվում է ոչ միայն զարդամոտիվների կոմպոզիցիայով, այլև օգտագործած ներկի որակով:

Ինչպես հայտնի է, Առաջավոր Արևելքի բազմաթիվ ուսումնասիրողներ, որպես Հալաֆյան մշակույթի բնորոշ առանձնահատկություն, նշում են կավամանների զարդանախշերի փայլուն ներկը: Մյուս կողմից Ջ. Բրայդվուդը, Գ. Չայլդը, Պերկինսը, Ջ. Մելլաարտը և ուրիշները Հալաֆյան մշակույթի զարգացման հարցերը քննարկելիս նկատում են, որ այդ մշակույթը ունեցել է արևելյան ու արևմտյան տարբերակներ, ըստ որում, որպես արևելյան տարբերակի բնորոշ կողմ, զարդանախշի կոմպոզիցիայի մեջ մատնանշում են կախված կիսաօղակները: Իրոք, այս փաստը լավ հաստատվում է Թեփե-Գավրայի, Բանահլիկի, Շամիրամալթիի և այլ բնակավայրերի նյութերով:

Վերը նկարագրած խեցեղենի զարդամոտիվները իրենց ուղղակի համադրությունն ունեն, այսպես կոչված, Արևելա-Հալաֆյան նյութերի մեջ:

Բացի բերված անոթներից, հայտնաբերված են նաև շքեղ կավամանների բեկորներ, որոնց ծիրանավուն մակերեսի վրա մուգ-դարչնագույն, չփայլող ներկով նկարված են ինչ-որ զարդանախշեր, որոնք առայժմ անվերծանելի են: Նույնպիսի կառուցվածք ունի նաև I կացարանից հայտնաբերված բարձրավիզ, լայնացող շուրթով, հարթ հատակով սափորը, որի բաց-ծիրանավուն անգործապատ մակերեսը փայլեցված է կոկիչի օգնությամբ՝ կարմիր ներկով: Ըստ այդմ շուրթի վրա կոկիչի հետքերը բացակայում են, ուրեմն գունազարդումը սկսվում է իրանի ուսերից (էԳԹ 1065) (տախ. X, № 7):

Անհրաժեշտ է նշել, որ նույն տիպի, ծիրանավուն մակերեսով ու կետերի միջոցով կատարված, առայժմ անվերծանելի զարդանախշերով կավամաններ հայտնաբերվել են ժամանակին Վանի Շամիրամալթի բնակավայրի II շերտում, որը համարվում է անցման փուլի շերտ Հալաֆյան մշակույթից դեպի Օբեյդը⁸⁷: Հալաֆյան մշակույթի տարածման հեռավոր օջախներից է նաև Կիլիկիայի Մերսին քաղաքի մոտ գտնվող Յումուկ-թեփն բնակավայրը: Նրա XIX—XVII շերտերում ևս հայտնաբերվել են Թեղուտի, Շամիրամալթիի՝ վերը հիշատակված տիպի խեցիների բեկորներ, որոնց վրա նույնպես բացակայում է զարդը կամ կան կետերով նկարված զարդանախշեր:

Այսպիսով, Թեղուտի, Շամիրամալթիի, Մերսինի Հալաֆյան շերտերի միջև գոյություն ունի ընդհանրություն, որն արտահայտվում է թե՛ ամանների և թե՛ զարդարանքի ձևերի մեջ: Անհրաժեշտ է նկատել, որ Արևելքի բոլոր այն հուշարձաններում, որտեղ Հալաֆյան մշակույթը ծածկված է Օբեյդյա-

⁸⁷ А. А. Иессен, Кавказ и Др. Восток... էջ 12—13:

նով, դիտվում են Հալաֆյան զարգամոտիվներ, որոնք նկարված են շփայլող ներկով: Հալաֆյան մշակույթի՝ Հայկական լեոնաշխարհում տարածված լինելու մասին իրենց աշխատություններում հաճախ նշել են Հին Արևելքի մշակույթին լավատեղյակ հնագետների Լ. Պերկինսը, Ջ. Բրայդվուդը, Ջ. Մելլարտը, Չ. Բարնեյը, սովետական նշանավոր ուսումնասիրողներ Իեսսենը, Մասսոն, Մարտիրոսյանը և այլք: Նրանք գտնում են, որ վանի երկրագործական ավազանը մ.թ.ա. V-րդ հազարամյակում գտնվել է Հալաֆյան մշակույթի տարածման շրջանի մեջ, և այն համարել են այդ մշակույթի ծայր հյուսիսային կետը: Սակայն նորագույն հնագիտական հայտնագործությունները, որոնք կատարվել են Հայկական լեոնաշխարհի տարբեր մասերում, Խարբերդ-Մալաթիայի շրջաններում, Նախիջևանի և Արարատյան դաշտերում, ցույց են տալիս, որ նախկինում տուաջ քաղված տեսակետը հիմնվում էր Հայկական լեոնաշխարհի սահմանափակ տերիտորիայի ուսումնասիրության վրա: Նորագույն հետազոտությունները այժմ ապացուցում են, որ Արարատյան դաշտը, Խարբերդ-Մալաթիայի շրջանները ևս մտել են Հալաֆյան և հետագայում նաև Օբեյդյան մշակույթների տարածման շրջանակների մեջ⁸⁸:

Այսպիսով, Թեղուտի բնակատեղիից հայտնաբերված գունազարդ խեցեղենը բաժանվում է երեք խմբի. ա) տեղական, բ) Հալաֆյան, գ) Օբեյդյան, որոնք ցույց են տալիս, որ բնակավայրը գոյություն է ունեցել այնպիսի մի դարաշրջանում, երբ Արևելքում կատարվում էին մշակութային մեծ փոփոխություններ, երբ հարավային Միջագետքում նոր զարգացող Օբեյդյան մշակույթը կամաց-կամաց ծածկում էր իրեն նախորդող Հալաֆյան մշակույթի տարածման արեալները ոչ միայն բուն կենտրոններում, այլև հեռավոր վայրերում (Կիլիկիա, Միջերկրականի արևելյան ափեր, Հայկական լեոնաշխարհ, Հյուսիսային Իրաք և այլն):

Հայկական բարձրավանդակում մշակութային այս փոփոխությունները լավագույն ձևով ի հայտ են գալիս վանի Շամիրամալթիի շերտերում, որտեղ, Ա. Իեսսենի կարծիքով, մ.թ.ա. IV հազարամյակում Հայկական լեոնաշխարհի բնիկ մշակութային շերտերը ծածկվում է Իրանական սարահարթից ներթափանցած մշակույթով, որը իր հետ բերում է հարգախառն խեցեղեն⁸⁹:

Մեզ թվում է, որ մեծարգո գիտնականի այս միտքը այնքան էլ հավանական չէ, քանի որ Իրանական սարահարթում Հալաֆյան մշակույթի նմուշներ պարունակող շերտեր չկան, և Օբեյդյան հարգախառն խեցեղենը Իրանում ունի նույն առանձնահատկությունները, ինչ որ Հյուսիսային Միջագետքում, Հայկական լեոնաշխարհում ու Միջերկրականի արևելյան ափերին: Հավանական է, որ հարգախառն խեցեղենը Հայկական լեոնաշխարհ է թափանցել ոչ թե Իրանից, այլ Տավրոսի լեոնաշղթայի լեոնանցքներով, այսինքն այն նույն ճանապարհներով, որոնցով անցել էր Հալաֆյան մշակույթը: Կա նաև մի ուրիշ, ավելի հավանական կարծիք, որ այդ խեցեղենը պարզապես տեղական է:

Թեղուտի բնակատեղիի գունազարդ խեցեղենը, չնայած իր փոքր քանակությանը, հույժ կարևոր նշանակություն ունի տեղական պղնձեքարեզարդյան խեցեղենի ամբողջական պատկերը և Հայկական լեոնաշխարհի ու նրան շրջապատող մշակութային կենտրոնների միջև եղած կապերի վեր հանելու համար:

⁸⁸ C. Burney. Նշվ. աշխ., էջ 157—165:

⁸⁹ A. A. Иессен, Кавказ и Др. Восток... էջ 13:

Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական բարձրավանդակի ու նրան շրջապատող մշակութային օջախների պղնձեքարեդարյան բնակավայրերի նյութական մշակույթի մնացորդների ուսումնասիրությունից ակնհայտ էն դառնում այդ շրջանի մշակութային տարբեր տարածքների տնտեսության մեջ գոյություն ունեցող շատ ընդհանրություններ, որոնք դրսևորվում են նախնադարյան արտադրության մեջ կիրառված աշխատանքային գործիքների կառուցվածքի, ֆունկցիայի և արտադրության մեջ նրանց օգտագործման հնարավորությունների նույնությամբ: Այս երևույթը պայմանավորված է Առաջավոր Ասիական լեռնային և նախալեռնային առանձնացած հովիտների միանման հողատարածությունների մշակման անհրաժեշտությամբ, ինչպես նաև վաղ-երկրագործական տնտեսության արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով:

Հայաստանի երկրագործության վաղ փուլերի ուսումնասիրության համար ելակետային նշանակություն ունի լեռնաշխարհի ու նրա հարևան տերիտորիաների հնավայրերից հայտնաբերված աշխատանքային (հողամշակության) գործիքների ամբողջական ուսումնասիրությունը:

Արևմտյան Ասիայի նախալեռնային և լեռնային հովիտներում, ի տարբերություն զետային, ալուվիալ, լիմանային թեթև հողերի (Եգիպտոս, Զինաստան, Հարավային Միջագետք), որտեղ հողամշակման գործիքների զարգացումը գնացել է փայտե փորիչ-ձող, փայտե բրիչ և այնուհետև մետաղի դարաշրջանում բաժն ընթացքով, զարգանում են հարվածող տիպի գործիքները, որոնց ծայրերը քարից էին (Հուսսուննա¹, Թեփե Սիալկ I—II Զեմդետ Նասր, Վ. Խաթունարխ² և այլն): Գործիքների զարգացման այս ավանդույթը շարունակվում է նաև պղնձեքարեդարյան դարաշրջանում:

Վ. Խաթունարխի, Թեղուտի, Շամիրամալթիի, Շոմու-Թեփեի, Նախիջև-վանի Քյուլ-թափա I բնակավայրերից հայտնաբերված քարե և ոսկրե բրիչներն ու ծանրոց կախիչները հիմք են տալիս ասելու, որ Հայաստանում մ.թ.ա. V—IV հազարամյակներում իրականացվում էր բրիչային երկրագործությունը և որ հողամշակման ամենատարածված գործիքը եղել է ծանրոց կա-

¹ S. Lloyd and F. Soffar, նշվ. աշխ., 255—289,

² Ռ. Մ. Թոռոսյան, Նորքարեդարյան, պղնձեքարեդարյան հողամշակության մի քանի գործիքներ: «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ

խիշի օգնութեամբ ծանրացված հարվածող բրիչը (հողնուրագ ոսկրից կամ քարից):

Պետք է ենթադրել նաև, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի լեռնահովիտներում նստած տոհմերը երկրագործութեան պրակտիկայում իրականացնում էին նաև պարզունակ ոռոգումը, առանց որի համարյա անհնար է երկրագործական տնտեսութեան զոյուսթյունը այնպիսի վայրերում, ինչպիսին է Արարատյան, Նախիջևանի դաշտերը, Մուղան-Ղարաբաղի տափաստանը կամ Վանի ավազանը: Ոռոգման վրա հիմնված հողամշակութեան գոյութեան մասին է վկայում նաև բնակավայրերի բնա-աշխարհագրական տեղադրությունը. նրանք տեղավորված են փոքր գետերի ու հեղեղատների ափերին, որոնց ոչ շատ հորդառատ ջուրը հեշտութեամբ է ենթարկվել երկրագործի կամքին, և պատահական չէ, որ Արարատյան դաշտում վաղ երկրագործական բնակատեղիները տեղավորված են գետակների ափերին, որոնց հունի փոխման հետ զուգընթաց տեղափոխվել են նաև բնակատեղիները:

Բացի այս բոլորից, ոռոգման գոյութեան մասին են վկայում նաև ոսկրե, քարե հողնուրագները, բրիչները, որոնք, ինչպես ճիշտ նկատում է Ա. Տ. Ստեյնսբերգը³, Հյուսիսային Սիրիայի Համա հուշարձանի կապակցությամբ, կատարել են ինչպես հարվածող բրիչի, այնպես էլ բահի դեր, որով ջրելու համար ակոսներ են բացել հողի մեջ:

Երկրագործական աշխատանքի լավագույն ապացույցներ են նաև, բացի բրիչներից, տարբեր ձևերի քարե ներդիրներով, ոսկրե պահանգով հավաքովի մանգաղները, դանակները, ինչպես նաև բնակատեղիներում հայտնաբերված աղորիքները, սանդերը, սանդակոթներն ու հացահատիկը ամբարելու նպատակով օգտագործված մեծ կարասները:

Բրիչային երկրագործութեան արգասիք են նաև հացահատիկի մնացորդները, որոնք հայտնաբերված են ինչպես ածխացած, այնպես էլ բնակարանների կառուցման համար օգտագործված կավաշաղախի մեջ փտած վիճակում (Թեղուտի, Շոմու-թեփեի, Նախիջևանի Քյուլ-թափա I շերտի հնավայրեր):

Թեղուտի հացահատիկի մնացորդները ուսումնասիրության է ենթարկել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Վ. Գուլբանյանը⁴: Նախնական ուսումնասիրություններով պարզվել է, որ Թեղուտի բնակիչները մշակել են ցորեն և գարի, որոնք ներկայացնում են բավական երկարատև սելեկցիայի ենթարկված կուլտուրական տեսակներ, մի հանգամանք, որը պարզորոշ կերպով ցույց է տալիս Հայաստանում հացահատիկի մշակման բարձր մակարդակը:

Ի նկատի ունենալով Թեղուտի, Շենգավթի, Շոմու-թեփեի, Քյուլ-թափայի հնավայրերում ցորենի և գարու համատեղ հայտնաբերումը, պետք է մտածել, որ ինչպես մ.թ.ա. III հազարամյակում⁵, այնպես էլ մ.թ.ա. IV հազարամյակում, Հայաստանում կատարվել է հացահատիկի խառը ցանք: Սա ցույց է տալիս, որ դեռևս պղնձեքարեդարյան ժամանակաշրջանում երկրագործն արդեն գտել էր երաշտի շրջանի դեմ պայքարի միջոցներից մեկը ևս:

³ A. Steensberg, A Bronze Age Ard-Type from Hama in Syria entered for Rope-Traction. „Berytus Archeological Studies vol. XV, 1964. էջ 110—130.

⁴ Ակադեմիկոս Վ. Գուլբանյանի ուսումնասիրության արդյունքները դեռևս չեն հրատարակված: Նյութը վերցված է նրա բանավոր հաղորդումից:

⁵ Է. Խանգալյան, նշվ. աշխ., էջ 33—39:

Չնայած Թեղուտի պեղումների ժամանակ ցորենից ու գարուց բացի բուսական այլ մնացորդներ չգտնվեցին, այնուամենայնիվ ելնելով Շենգովիթի, Շոմու-թեփեի, Քյուլ-թափա I հնավայրերից հայտնաբերված բուսական մնացորդներից, կարող ենք ասել, որ Հայաստանում բացի ցորենից ու գարուց մշակվել են նաև կորեկ, հաճար և այլն:

Այսպիսով, պղնձեքարեդարյան դարաշրջանում Հայաստանն ուներ երկրագործություն, որ հիմնված էր պարզունակ ոռոգման վրա: Մշակված հացահատիկային կուլտուրաներն իրենց զարգացած տեսակներով ներկայացնում են ոչ թե կուլտուրականացման վաղ էտապի նմուշներ, այլ երկարատև սելեկցիայի ենթարկված բույսեր:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Երկրագործության հետ միասին մ.թ.ա. IV հազարամյակի Հայաստանի տնտեսության առաջավոր բնագավառներից մեկն է եղել անասնապահությունը, որը կարևոր դեր է կատարել տեղաբնիկների կյանքում:

Թեղուտի և վերը հիշատակված մնացած բնակատեղիների ոսկրային մնացորդների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնուխարհում մ.թ.ա. V—IV-րդ հազարամյակներում տեղաբնիկների կենդանական սննդի հիմնական աղբյուր են եղել ընտելացված խոշոր և մանր եղջյուրավոր անասունները, ինչպես նաև, որոշ շափով, որսի կենդանիները:

Վերին հաթունարխի և Թեղուտի բնակատեղիների ոսկրաբանական մնացորդների ուսումնասիրությունը⁶ ցույց է տալիս, որ այդ բնակավայրերի բնակիչները իրենց կերակրի համար օգտագործել են հետևյալ կենդանիները:

Վ. հաթունարխի բլուր-բնակատեղի՝

1. Capra hircus domes—այժ ընտելացված
2. Ovis orientalis—ոչխար ընտելացված
3. Capra hircus—վայրի այժ
4. Cervus elaphus—եղնիկ
5. Sus scrofa—խոզ
6. Ursus arctos—արջ
7. Vulpes vulpes—աղվես և այլն

Թեղուտի բնակատեղիից 1965 թ. ոսկրային մնացորդների մեջ որոշված են կենդանիների հետևյալ տեսակները ու քանակը.

խոշոր եղջյուրավոր անասուններ—6 Bos taurus primigenius Bos taurus brachyceros

Ընտելացված այծեր—2 Capra hircus domestica

Ընտելացված ոչխար—1 Ovis orientalis

Վայրի այժ—2 Capra hircus aegagrus

Եվ այլ մանր կենդանիների մնացորդներ—1

Եթե համեմատության մեջ դնենք երկու բնակավայրերի՝ վերը ներկայացված կենդանիների տեսակները, ապա ակնհայտ է դառնում ուշ նոր քարեդարյան ու պղնձեքարեդարյան տնտեսությունների մեջ կենդանական կերի օգտագործման տարբերությունները: Եթե Վ. հաթունարխի բլուր-բնակատե-

⁶ Բնակավայրերի նյութերը ուսումնասիրել է հնէակենդանաբան Ս. Մեժլումյանը, որին մենք հրախտապարտ ենք:

դիում դեռևս բացակայում է խոշոր եղջյուրավոր անասունների ընտելացված տեսակը, ապա Թեղուտում նա արդեն ավելի շատ է, քան մանր եղջյուրավորը: Բացի այդ, առաջինում ավելի մեծ քանակություն են կազմում որսած կենդանիները, իսկ Թեղուտում այն անհամեմատ քիչ է: Նման հանգամանքը ցույց է տալիս, որ պղնձեքարեդարյան տնտեսության մեջ մանր եղջյուրավոր անասունների հետ տնտեսության մեջ հավասարապես մտել էին նաև խոշոր եղջյուրավոր անասուններ: Բացի այս բոլորից, անասնապահության բնագավառի հաջողությունների մասին են վկայում նաև Արարատյան դաշտը շրջապատող լեռների ալպիական արոտավայրերի գոտում հայտնաբերված ժայռապատկերները: Սրանք ապացուցում են, որ Արարատյան դաշտի երկրագործները դեռևս նոր քարեդարյան, պղնձեքարեդարյան դարաշրջաններում արդեն իրականացնում էին անասնապահության հեռագնաց յայլադային ձևեր, որը հսկայական օգուտներ էր բերում վաղ երկրագործական տնտեսությանը⁷:

Անասնապահության զարգացման մասին են փաստարկելու նաև կավամանների բազմազան տեսակները, որոնք ծառայել են կաթնամթերքի մշակման նպատակին:

Ինչպես տեսնում ենք Թեղուտի և մյուս հնավայրերի նյութերից, պղնձեքարեդարյան դարաշրջանում Հայաստանի տեղաբնիկների տնտեսության հիմնական ճյուղերը եղել են երկրագործությունն ու անասնապահությունը, որոնց արտադրանքները ասպհովել են բնակիչների հացի, մսի, կաթի, կաշվի, բրդի պահանջները:

Որսորդությունը, որը նախկինում վճռական դեր էր կատարում նախնադարյան համայնքների սննդի ապահովման գործում, երկրագործության և անասնապահության արմատավորմամբ կորցրել էր նախկին նշանակությունը, սակայն շարունակում էր մնալ որպես մսի, կաշվի, բրդի, ոսկրի հայթայթման լրացուցիչ միջոց:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ

ՋՈՒԼՉԱԿՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԽՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Անցյալի նյութական մշակույթի հավաքածուների մեջ առավել քիչ հանդիպող նյութերից են գործած և հյուսածո առարկաները, որոնք իրենց քիմիական և ֆիզիկական հատկությունների պատճառով ժամանակի ընթացքում փտել ու տչնչացել են, դրանով իսկ անհնար դարձնելով նախնադարյան տնտեսության կարևոր ճյուղերից մի քանիսի ընդարձակ ու մանրամասն ուսումնասիրությունը:

Հայաստանում վաղ երկրագործական ժամանակաշրջանի մանածագործության, ջուլհակության և խսիրագործության արտադրանքի լավ կամ վատ վիճակում պահպանված մնացորդներ առայժմ հայտնի չեն, ուստի Թեղուտի խեցեղենի դաջվածքը որոշ չափով կօգնի Հայաստանի պղնձեքարեդարյան

⁷ Հ. Ա. Մաքսիբոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, պրակ II, Երևան, 1871, էջ 10:

ժամանակաշրջանի տնտեսության այդ ճյուղերի նախնական ուսումնասիրությանը:

Ելնելով առկա նյութերի յուրօրինակությունից գործվածքների ու հյուսվածքների ուսումնասիրության համար վերցրել ենք կավամանների բեկորների վրա եղած դաջվածքների փափուկ հանույթը:

Մանածագործական արտադրանքի հետքերի միկրոսկոպիկ դիտարկումից պարզվեց, որ գործվածքի թելերի իսկական հաստությունը հանույթների վրա չի անցնում 0,5—0,8 մմ-ից: Թելերը շատ են՝ առանց մազմզուկների ու կոշտուկների: Եթե գործվածքի համար օգտագործված թելը լիներ կենդանական, ապա այդպիսի նրբության թել ստանալու համար անհրաժեշտ էր բուրդը կամ մազը լավ լվանալ, սանդերքի վրա գզել, մանրելուց հետո հարդարել, ինչպես այդ անում էին XX դարի սկզբներին Հայաստանի գյուղերում:

Սակայն ինչպես տեսանք, Թեղուտում բրդի մշակման հետ կապված աշխատանքային գործիքներից և ոչ մեկը գոյություն չունի: Բացի այդ, այդպիսի բարակության կենդանական թելը հազիվ պահեր իլիկի ծանրությունը: Այս բոլորը նկատի ունենալով, թվում է, որ կավամանների վրա եղած գործվածքների հետքերը պատկանում են բուսական նյութերից ստացված թելերին:

Եթե Թեղուտում կենդանական ծագում ունեցող թելերի մշակման հետ կապված գործիքները բացակայում են, ապա դա ամենեին չի նշանակում, որ Հայաստանում պղնձեքարեդարյան ժամանակաշրջանում բրդե թել չի մշակվել: Աղստեխ⁸ և Նախիջևանի Քյուլ-Թափայ I շերտի բնակավայրերում⁹ հայտնաբերված գործիքները վկայում են կենդանական ծագում ունեցող հումքի վրա հենված մանածագործության գոյությունը: Թեղուտի և Հայկական լեռնաշխարհի այլ հնավայրերի մանածագործության հետքերի ու գործիքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պղնձեքարեդարյան ժամանակաշրջանում ստացել են բուսական և կենդանական թելեր:

Գործվածքների դաջվածքները իրենց կառուցվածքով հիշեցնում են ջուլհակի դազգահի վրա արտադրված գործվածքներին:

Որպեսզի պարզ լինի մեր հավաքածուի նմուշների կառուցվածքը, բերում ենք մի տախտակ, որը ներկայացնում է գործվածքի 1 քառ. սանտիմետրը 10 անգամ մեծացրած վիճակով: Ինչպես երևում է, 1 քառ. սանտիմետրի վրա անցնում են 13 ուղղահայաց և 10 հորիզոնական գնացող թելեր, որոնք իրար մեջ հագնում են մեկ ընդ մեջ, ինչպես մեր օրերում գործվող բամբակյա գործվածքները (քաթանը): Թելերի դասավորությունը ստեղծում է ցանցաձև հյուսվածք:

Նման գործվածքեղենը լայն տարածում է ունեցել Առաջավոր Ասիայի վաղ երկրագործական տնտեսության մեջ. դրանցից հնագույնները հայտնաբերվել են Անատոլիայի Չաթալ-հույուկ հնավայրի շերտում, տաճարների հարթակների տակ կատարված թաղումներից, ածխացած վիճակում (շերտը թվագրվում է մ.թ.ա. 6000 թ.)¹⁰: Այնուհետև՝ Հին Եգիպտոսում¹¹: Ավելի ուշ

⁸ И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, *Եզվ. աշխ.*, էջ 150, նկ. 1, № 4:

⁹ О. А. Абибулаев, *Археологические раскопки в Кюль-тепе, Баку, 1959, աղ. XVII, № 2:*

¹⁰ J. Mellaart, *Excav. at Catal Hüyük, Anat. St. NoXIII, XXVIII, XXIX:*

¹¹ D. Caton-Thompson and E. W. Gardner, *The Desert Fayum, London, 1934, էջ 28:*

հայտնի են Թեփե-Գավրայի IX—VII շերտերի թաղումներից, որոնց գոյությունը նշմարվել է դամբարանների աղյուսների վրա դաջվածքի ձևով¹²։

Հայկական լեռնաշխարհում նման գործվածքներ հայտնի են ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանից¹³, ինչպես նաև ուրարտական բազմաթիվ քաղաքների ու ամրոցների պեղումներից¹⁴ (Բաղնոց, Վանի շրջանում, Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի և այլն)։

Ինչպես երևում է հնագիտական տվյալներից, գործվածքի այս տեսակը իր գոյությունը սկսել է վաղ երկրագործական տնտեսության հնագույն փուլերից և շարունակել մինչև մեր օրերը։

Բացառված չէ, որ Թեղուտի երկրագործներն էլ իրենց նախորդների և հետնորդների նման գործվածք են ստացել պրիմիտիվ ջուլհակային դազգահ միջոցով։

Այնուհետև, նմուշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել գործվածքի երկու տեսակ՝ խիտ և նոսր։ Նոսր գործվածքի հետքեր են դաջված էԳԹ 3/79, № 799-ի վրա։ Նրա մեկ սանտիմետր քառակուսու վրա անցնում են 8 ուղղահայաց և 6 հորիզոնական թելեր։

Այս նյութերը ցույց են տալիս, որ Թեղուտի երկրագործները, բացի կաշիններից պատրաստած հագուստներից, կրել են նաև գործած կտորներից կաթած շորեր։

Իրդե թելերի դաջվածքների մնացորդների բացակայությունը դեռևս չի փաստարկում բնակատեղիում դրանց գոյություն շունենալը։ Մեզ թվում է, որ այդպիսիներն անպայման եղել են։ Գուցե պրակտիկ չի եղել նրանցից գործած պարկերի վրա կավամանի պատրաստումը, քանի որ սրանք կունենային շատ մազմզուկներ, որոնք դժվար կտոկվեին կավի վրայից։

Ջուլհակության արհեստի գոյության մասին են վկայում նաև պեղումներով հայտնաբերված ասեղները, շյուղերը, հերունները։

Ջուլհակության արհեստի արտադրանքների նմուշների այս պատասխաններն ու գործիքները հիմք են տալիս մտածելու, որ Հայկական լեռնաշխարհում և մասնավորապես Արարատյան դաշտում վաղ երկրագործների տնտեսության կարևոր ճյուղերից մեկը եղել է ջուլհակությունը։ Եվ եթե մինչև այժմ Հայաստանի հնագիտական նյութերի մեջ բացակայում են թելատու բույսերի մնացորդները, ապա այդ պետք է բացատրել ոչ թե նրանց՝ այն ժամանակ գոյություն շունենալով, այլ նրանով, որ չեն պահպանվել։ Արժե հիշել, որ Հայկական լեռնաշխարհին հարևան արևմտյան տերիտորիաների (Չաթալ-հույուկ, Հաջիլար) բնակավայրերից հայտնաբերված նմուշները ցույց են տալիս, որ ավելի վաղ, քան Թեղուտի գոյությունը, արդեն մարդուն հայտնի էր թելատու բույսերի օգտագործումը, ինչպես նաև ենթակեղևային հյուսվածքներով հագուստեղեն պատրաստելը։

Մանածագործությունից ու ջուլհակությունից բացի, Թեղուտի նյութերը հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու նաև խսիրագործությունը։ Կավամանների վրայի դաջվածքների թաց հանույթի դիտարկումից պարզվեց, որ բնակատեղիի երկրագործների կենցաղում լայն տարածում են ունեցել խսիրագործությունը և նրա արտադրանքների օգտագործումը։

¹² A. Tobler, նշվ. աշխ., էջ 51։

¹³ Б. Б. Пиотровский, Кармир-Блур, III, Результаты раскопок, 1951—53 г., էջ 67—71, Ереван, 1955.

¹⁴ Հ. Ա. Մարտիրոսյանի նոր արմավրի պեղումների չհրատարակված նյութեր։

Դաջվածքի մնացորդներից երևում է, որ Թեղուտցիները խսիր ստանալու համար օգտագործել են մատղաշ ճահճային բույսեր (եղեգն), ըստ որում, ընտրված բույսի ցողունը օգտագործել են երկու վիճակում, մի դեպքում հյուսել են բույսը, առանց տափակացնելու, ինչպես սալան կամ կողովր գործելիս (էԳԹ մ.մ. № 896) մյուս դեպքում եղեգնը ճեղքել կամ տափակացրել են, նոր հյուսել:

Մրպեսզի պարզ դառնա հյուսվածքների կառուցվածքը բերենք նրանց նկարագրութունները:

Մատղաշ ճյուղերից կամ բույսերից հյուսած առարկաների մնացորդներ պարունակող նմուշները ունեն բավական պարզ կառուցվածք, ուղղահայաց գնացող մեկ-երկու-երեք ճյուղեր հյուսված են հորիզոնական, հաջորդաբար իրար հետ կապվող ճյուղերով, մոտավորապես նույն եղանակով, ինչ որ գործվածքինը: Հորիզոնական գնացողները մեկընդմեջ մտնում են ուղղահայաց ձողերի տակ և վրան:

Այլ է ճեղքած կամ տափակացրած եղեգնից հյուսվածքի կառուցվածքը:

Եղեգնի երեք ուղղահայաց ճյուղերն իրենց կողք-կողքի հյուսված են հորիզոնական անցնող երեք այլ ճյուղերի հետ, դրանք հյուսված են իրար այնպես, որ ստացվում է եղենածե պատկեր:

Այսպես, բեկորի 3 քառ. սանտիմետրի վրա առկա են հորիզոնական գնացող 5 և ուղղահայաց գնացող 4 ճյուղեր: Վերևից առաջին հորիզոնական ճյուղը մտնում է երեք ճյուղերի տակ և դուրս է գալիս 4-րդի վրա: Երկրորդ հորիզոնականը իր տակն է առնում առաջին ուղղահայացը և մտնելով հաջորդ երեքի տակ, դուրս է գալիս համապատասխան ճյուղի վրա: Զորրորդ հորիզոնականը իր տակն է առնում I և II ուղղահայացները և դուրս գալիս IV ուղղահայացի վրա և այսպես շարունակ: Այսպիսով, ստացվում է բավական խիտ հյուսվածք: Խսիրի համար օգտագործած եղեգնը մատղաշ է և մեր ունեցած դաջվածքների վրա ներկայացնում է 0,5—0,7 սմ լայնք: Նրանց արտաքին երևացող քալի երկարութունը հավասար է 1,5—1,7 սմ:

Խսիրի հետքեր ունեցող կավամանների հայտնի են վաղ երկրագործական տնտեսութուն ունեցող բնակատեղիի առավել հնագույն շերտից: Այսպիսիներից մեկը հայտնի է Չաթալ-հույուկի IX շերտում E IV տաճարում:

Հայկական լեռնաշխարհի այլ հնավայրերից այդպիսի դաջվածքով ամաններ չեն հայտնաբերված: Ամանի վրայի հետքերի առկայութունը կարելի է բացատրել երկու հանգամանքով՝ նրանք առաջացել են թաց կավամանը մինչև թրծելը խսիրի վրա դրվելու հետևանքով, կամ ուղղակի ծղոտի վրա կավը ծեփելուց:

Թեղուտի բնակատեղիում, բացի կավամանների վրայի ծղոտի հետքերից, ծղոտի դաջվածքի մնացորդներ են նկատվել նաև I և X կացարանների հատակներին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ խսիրագործութունը շատ մեծ տարածում է ունեցել Առաջավոր Արևելքի նյութական մշակույթի զարգացման մեջ, սկսած վաղ փուլերից: Խսիրի նմուշներ հնագիտության մեջ գրանցված են դեռևս Երիթոնի նախա-կերամիկական շերտում¹⁵, Թե-Ռամադում (նախակերամիկական B): Այնուհետև մ.թ.ա. VII հազարամյակի սկզբներով թվագրվող Հյուսիսային Սիրիայի Թե-Շեյխ Ալի, Թե-Մունեսթա-

¹⁵ K. Kenyon, Earliest Jericho, Antiquity, XXXIII, No129, 1959, էջ 5—9.

յում¹⁶, Միջերկրականի արևելյան ափին, Ռաս-Շամրայում, Իրաքի Ջարմո¹⁷, Թեփե-Գավրա¹⁸, Անատոլիայի, Չաթալ-հույուկ հուշարձանում:

Այսպիսով, ինչպես տեսանք, Թեղուտի երկրագործների տնտեսության մեջ արտադրության կարևոր ճյուղերից են եղել նաև մանածագործությունը, ջուլհակությունը և խսիրագործությունը:

Նախնադարյան արհեստի այս բնագավառները տնտեսության նոր հիմքի վրա մեծ առաջընթաց են ապրում մ.թ.ա. III հազարամյակում: Դրա լավագույն ապացույցները հայտնի են վաղ բրոնզեդարյան մշակույթը ներկայացնող բազմաթիվ հնավայրերից: Այստեղ հանդես են գալիս ոսկրից պատրաստված իլիկների գլուխներ, ասեղներ, շյուղեր և ջուլհակության հետ կապված տարբեր տեսակի գործիքներ:

¹⁶ J. Mellaart, *Earl, Civil...*, էջ 39.

¹⁷ R. Braidwood ane Howe, *նշվ. աշխ.*, էջ 42:

¹⁸ A. Tobler, *նշվ. աշխ.*, էջ 70:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՂՆՁԵՔԱՐԵԳԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԵՂԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Պղնձեքարեդարյան բնակատեղիների հնագիտական նյութերի վերլուծությունից հետո անհրաժեշտ է անդրադառնալ տեղական մշակույթի առաջացման ու ժամանակագրման հետ կապված հարցերին:

Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակի մշակույթին նախորդած ժամանակաշրջանների հնագիտական ուսումնասիրությունը վաղուց չէ, որ սկսվել է: Այդ պատճառով Թեղուտի և այլ հնավայրերի տվյալները դեռևս բավարար հիմք չեն տալիս մ.թ.ա. V—IV հազարամյակների տնտեսության, մշակույթի հետ կապված հարցերին այս կամ այն չափով սպառիչ պատասխան տալու: Ուստի և այդ ժամանակաշրջանին պատկանող յուրաքնչյուր նոր հնավայրի ուսումնասիրությունը ստանում է խիստ կարևոր նշանակություն այնքանով, որքանով նա համալրում է ուսումնասիրվող շրջանի վերաբերյալ եղած գիտելիքները:

Նյութերի շարադրման ժամանակ համադրությունների ձևով ներկայացված Հայկական լեռնաշխարհում և նրա հարևան շրջաններում գտնվող հնավայրերը անշուշտ բացարձակապես միաժամանակյա չեն: Նրանցից յուրաքանչյուրն իր հնագիտական կոմպլեքսով ներկայացնում է որոշակի տերիտորիալ հատվածի զարգացման այս կամ այն էտապի առանձնահատկությունները:

Ինչպես Թեղուտի, այնպես էլ Հայաստանի հնավայրերի՝ նրան զուգահեռ հնագիտական նյութերի համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք չեն պատկանում պատմական խորը անցյալում իրարից մեկուսացած մարդկային առանձին կոլեկտիվների, այլ սերտորեն կապվելով միմյանց, դրսևորում են լեռնաշխարհի տարբեր հովիտներում զույգություն ունեցած տնտեսության ու մշակույթի զարգացման համընդհանրություններն ու տեղական առանձնահատկությունները:

Արարատյան դաշտի, Վանի ավազանի, Մշո դաշտի, Խարբերդ—Մալաթիայի, Մուղան-Ղարաբաղի տափաստանի, Գանձակի, Կղարճքի հնագիտական նորագույն հավաքածուների ամբողջությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի նախալեռնային և հովտային շրջանները մ.թ.ա. V—IV հազարամյակներում զբաղեցված են եղել նստակյաց երկրագործ-անասնապահական ցեղերով, որոնց թողած նյութական մշակույթի մնացորդները դրսևորում են լեռնաշխարհի այդ ժամանակվա էթնիկ միասնությունը: Միաժամանակ նրանք ապացույցներ են տալիս Պարսկական սարահարթի, Հյուսիսային Միջագետքի, Սիրո-Կիլիկյան մշակութային տարածքների հետ ունեցած փոխանակային կապերի ու մշակութային փոխհարաբերությունների:

Պղնձեքարեդարյան նյութերի ուսումնասիրության ընթացքում բնականա-

բար առաջանում են բազմաթիվ հարցեր, որոնցից առավել կարևորները վերաբերում են պղնձեքարեդարյան, տվյալ դեպքում թեղուտյան մշակույթի արմատներին, նրանց ընդհանուր բնութագրին, որոշակի ժամանակահատվածի վերագրվող հայաստանյան և առաջավորասիական հուշարձանների ընդհանրություններին ու կապերին, ինչպես նաև թեղուտյան հուշարձանի և վաղ բրոնզեդարյան շրջանի միջև եղած ծագումնաբանական խնդիրներին:

Նյութերի քննարկումից երևում է, որ Թեղուտի բնակատեղին պատկանում է բրիչային երկրագործությունը զբաղվող, նստակյաց կյանքով ապրող տոհմի, որի բնակիչները պատասպարվում էին փոքր շափի, առանձին կլոր հատակագիծ ունեցող կավաշեն ու աղյուսաշեն կիսագետնափոր հյուղակներում: Նրանք զբաղվում էին ոչ միայն երկրագործությամբ, այլև անասնապահությամբ, որսորդությամբ, կաշեգործությամբ, ջուլհակությամբ և այլ արհեստներով: Աշխատանքային գործիքները պատրաստել են կայծքարից, վանակատից, գետաքարերից, ոսկորներից ու մետաղից: Նրանց նյութական արտադրության մնացորդների մեջ շատ բնորոշ են խեցեղեն առարկաների տեսակները, որոնք իրենց կավաշաղախի բաղադրությամբ, պատրաստման եղանակներով ու մակերեսի մշակման առանձնահատկություններով, տարբերվելով ավելի հին և Թեղուտից հետո գոյություն ունեցած բնակավայրերի խեցեղենից, ներկայացնում են Արարատյան դաշտի IV հազարամյակի բրուտության արգասիքները: Կավանոթների ձևերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզորոշ սահմանազատելու տեղական խեցեղենի զարգացման առանձնահատկություններն ու նրա ունեցած նմանությունները հարևան շրջանների խեցեղենի հետ:

Հայաստանի պղնձեքարեդարյան մշակույթին հատուկ է կարմիր, դեղին, դարչնագույն ավազախառն ու հարգախառն խեցեղենը, որի բացարձակ մեծամասնությունը պատրաստված է ձեռքով, հնագիտության մեջ հայտնի կավադործական արհեստի ամենապարզունակ հնարանքներով: Կավամանների մեջ կան նաև տեսակներ, որոնք իրենց կատարյալ տեսքով առանձնանում են տեղական բնակավայրի ողջ խեցեղենից և կապվում առաջավորասիական կենտրոնների հայտնի նմուշների հետ:

Քիչ չեն նաև գունազարդման ու զարդարանախշման հետքեր կրող բեկորները, որոնք իրենց մոտիվներով մի կողմից ներկայացնում են Հայաստանի ու Արարատյան դաշտի վաղ գունազարդ խեցեղենը, մյուս կողմից՝ կապվում Արևելքի պղնձեքարեդարյան հնավայրերից հայտնի նմուշների հետ:

Մ. թ. ա. V—IV հազարամյակների մշակույթի ուսումնասիրության ներկա վիճակը դեռևս հնարավորություն չի ընձեռում Հայկական լեռնաշխարհի տարածքի վրա տեսնել մշակույթի լոկալ արտահայտությունները, ուստի Թեղուտի և այլ հնավայրերի հնագիտական իրերը դիտել ենք որպես լեռնաշխարհի միասնական մշակույթի արտահայտություններ:

Թեղուտում և Հայաստանի այլ վայրերում հայտնաբերված նմանատիպ հնագիտական նյութերի ծագումնաբանական կողմի հետազոտությունները կապվում են որոշակի դժվարությունների հետ, քանի որ դրանց նախորդած ժամանակաշրջաններին պատկանող հնավայրերը քիչ են ուսումնասիրված ու ոչ բավարար հրատարակված: Արարատյան դաշտում նախկինում հայտնաբերված նոր քարեդարյան հնավայրերը մեծ մասամբ հետազոտվել են ոչ թե ծավալային, այլ հորատման եղանակով: Այդ է պատճառը, որ շարադրման

ժամանակ հաճախ համադրություններ են կատարվել Արևելքի նոր քարեդարյան շերտագրված ու հավաստի թվագրում ունեցող կենտրոնների նյութերի հետ:

Չնայած նյութերի սուղ վիճակին, այնուամենայնիվ հրապարակի վրա եղածները որոշ հնարավորություն են ընձեռում ընդհանրություններ գտնել Թեղուտի ու նրա տիպի բնակատեղիների և Արարատյան դաշտի նոր քարեդարյան մշակույթի տարբեր դրսևորումների միջև:

Այս տեսակետից ուշագրավ է Թեղուտի և նրան նախորդող ժամանակաշրջանների բնակավայրերի շինարարական մնացորդների համադրությունը: Արարատյան դաշտում «Աղվեսի բներ», «Տերտերի ձոր» զարգացած նոր քարեդարյան ժամանակներով թվագրված բնակատեղիներում հայտնաբերվել են հարդախառն կավացեխից կամ կանոնավոր աղյուսներից կառուցված կլոր կամ քառանկյունի հատակազիծ ունեցող տնակներ¹, որոնց նմաններն առկա են նաև Թեղուտում, Նախիջևանի Քյուլ-Թափայում², Ղազախում³ և Շուլավերում⁴: Բուն Հայաստանում ունեցած համադրություններից բացի նմանությունները առկա են նաև Արևելքի մի շարք բնակատեղիներում (Թեյ Հասսուննա⁵, Թեփե Գավրա⁶, Թեյ-Արպաշիա⁷ և այլն): Ըստ որում նմանություններ դիտվում են ոչ միայն հատակազիծ ու կառուցման հնարանքների միջև, այլ՝ սկզբունքի. այն, որ այդ բնակատեղիները բաղկացած են առանձին կառուցված կացարաններից:

Նման հանգամանքը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի բնակատեղիներում շարունակվել են տեղական բնակարանական ձևերը և բնակավայրերի կառուցման սովորույթները:

Որպեսզի առավել ակնառու դառնա նոր քարեդարյան մշակույթի հետ ունեցած աղերսները, արժե հիշել մի քանի օրինակ ևս: Թեղուտի խեցեգործական արհեստի արտադրանքների մի շարք նմուշներ իրենց համադրություններն ունեն Արարատյան դաշտի և այլ վայրերի նորքարեդարյան նյութերի հետ: Ըստ որում նմանություններն ակնառու են բնակավայրի հասարակ, զանգվածային խեցեղենի մեջ:

Արարատյան դաշտի Վ. Խաթունարիսի, Մաղկունքի (Միլ-Թափա) բլուր-բնակատեղիներին, ինչպես նաև Հայաստանի այլ հնավայրերին հատուկ են Հասսունյան տիպի հասարակ, ավազ և բուսական խառնուրդ պարունակող կավաշաղախից պատրաստված կճուճներն ու թասերը: Նույնպիսի երևույթ նկատել է նաև Չ. Բարնեյը Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների տեղական պղնձեքարեդարյան խեցեղենի հավաքածուի մեջ⁸:

Կավամանների զարդարանքների մեջ ևս, ինչպես տեսանք Թեղուտում, առկա են եղունգի օգնությամբ արված կիսալուսնաձև փոսիկ-զարդեր, ոչ մեծ հավելադիր ելուստներ ու միջանցիկ անցքեր: Այսպիսի եղանակով արված

¹ Ս. Սարգսյան նշվ. աշխ., էջ 143:

² Օ. Ա. Абибулаев, նշվ. աշխ., էջ 157:

³ И. Г. Нариманов, Исмаилов, նշվ. աշխ., էջ 161:

⁴ Օ. Մ. Джапаридзе, А. И. Джавахишвили, Результаты работ Квемо-Картлийской археологической экспедиции, 1967, Вестник От. общ. наук АН Гр. ССР, էջ 19—26:

⁵ S. Lloyd and F. Saffar, նշվ. աշխ., էջ 274:

⁶ А. Tobler, նշվ. աշխ., էջ 41—45:

⁷ М. Е. Mallowan, J. C. Rose, նշվ. աշխ., էջ 25—32:

⁸ С. Burney, նշվ. աշխ., էջ 160:

զարդերը տիպական են նաև «Կղզյակ բլուրի», «Մաշտոցի բլուրի», «Տերտերի ձոր»⁹, Մաղկունքի և Վ. Խաթունարխի բնակատեղիներին: Պետք է նկատել նաև, որ նույնպիսի զարդեր ունեն նաև Մերսինի նոր քարեդարյան շերտերի¹⁰ և հյուսիս-միջագետքյան նոր քարեդարյան բնակատեղիների ամանները»:

V—IV հազարամյակների խեցեղենի զարգացման անընդհատության լավագույն օրինակ է նաև Թեղուտի խեցեղենի հետ բազմաթիվ նմանություններով կապվող Շամիրամալթի բլուր-բնակատեղիի ամանեղենը: Այնտեղ ևս ուսումնասիրողները ոչ պատահականորեն դիտել են, որ ստորին շերտի հասարակ խեցեղենի որոշ տիպեր շարունակվում են մինչև վերին հարդախառն կավաշաղախից պատրաստված դեղին անգորբասլատ և գունազարդ կավամաններ պարունակող շերտը¹²:

Այնուհետև անհրաժեշտ է շեշտել, քարե գործիքների ձևերի ընդհանրությունները: Նախապես նշենք, որ, ինչպես Թեղուտում, այնպես էլ Արարատյան դաշտի զարգացած նորքարեդարյան բնակատեղիներում, հացահատիկի մշակման հետ կապված գործիքներն իրենց շահերով ու ձևերով հարևան են իրար: Յլեփված քարե գործիքները ևս, ինչպես Թեղուտում, այնպես էլ վերը հիշատակված բնակատեղիներում, պատրաստված են կոնաձև և պրիզմայաձև միջուկներից շեղբեր ցլեփելու եղանակով, ըստ որում շեղբը սլոկելուց հետո նրանց բանող մասերը շեն ենթարկվել լրացուցիչ մշակման, այլ ուղղակի օգտագործման մեջ են դրվել:

Համադրություններ կարելի է կատարել նաև ոսկրե գործիքների, բերքահավաքի դանակների, ծակիչների և այլ իրերի միջև:

Ինչպես արդեն ասվեց, Թեղուտում, առաջավորասիական և հայկական լեռնաշխարհի այլ բնակատեղիների նման, հայտնաբերվել են կենդանու փոքրիկ կավակերտ արձանիկներ, որոնք վկայում են որսորդության գոյությունը: Չպետք է մոռանալ նաև հնից եկող ջուլհակության ու խսիրագործության նմուշների առկայությունը:

Այսպիսով տեսնում ենք, որ Թեղուտի նյութական մշակույթը իր արտահայտության մի շարք ձևերով աղերսվում է Հայկական լեռնաշխարհի ու Առաջավոր Ասիայի ուշ նոր քարեդարյան մշակույթի հետ:

Թեղուտի մշակույթի տեղը որոշելու հարցում մեծ կուվան է նաև նրա հնագիտական հավաքածուի որոշ այլ նմուշների և մ.թ.ա. III հազարամյակի նյութական արտադրության որոշակի արգասիքների համադրությունը:

Նախորդ գլուխներում բերված համեմատությունները ցույց են տալիս, որ բնակատեղիի խեցեգործության, բնակարանաշինության պրակտիկայում առկա են տիպեր ու ձևեր, որոնցից մի քանիսը բարձր կատարելության են հասնում Թեղուտին հաջորդող վաղ բրոնզեդարյան մշակույթում: Նման երևույթներ դիտվում են նաև V—III հազարամյակների մետաղագործության մեջ: Թեղուտում հայտնի ձուլածո մկնդեղային խառնուրդ պարունակող մետաղյա փոքրիկ գործիքները առայժմ շունեն իրենց նախատիպերը Արարատյան դաշտի առավել հին շերտերում: Դրան հակառակ, նրանց զարգացած տիպերը առատորեն հանդիպում են մ.թ.ա. III հազարամյակի կոմպլեքսներում: Հայկական լեռնաշխարհի III հազարամյակի մշակույթը ներկայաց-

⁹ Ս. Սարգսյան, նշվ. աշխ., տախ., XL:

¹⁰ J. Garstang, նշվ. աշխ., էջ 19:

¹¹ V. Oppenheim, նշվ. աշխ., ադ. I:

¹² V. Jenny, նշվ. աշխ., էջ 284—286:

նող բազմաթիվ բլուր-բնակատեղիներում այժմ արդեն հայտնաբերված են մկնդեղային խառնուրդ պարունակող մետաղյա գործիքներ, ինչպես նաև կաղապարներ, որոնք վկայում են մ.թ.ա. IV հազարամյակում սկսված մետաղամշակութային բարձր առաջընթացի մասին: Մետաղյա առարկաների առատությունն ու դրանց անալիզներից ստացված արդյունքները այնքան համոզիչ են, որ հիմք են տվել սովետական ուսումնասիրողներ Ա. Ա. Իեսսենին, Հ. Ա. Մարտիրոսյանին, է. Վ. Խանզադյանին, Ռ. Ի. Սելիմխանովին, Ս. Նսայանին և արտասահմանում Արևելքի հնագիտությանը զբաղվող Չ. Բարնեյին, էրիխին և ուրիշներին Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի մշակույթը որոշ վերապահումներով անվանել վաղ բրոնզեդարյան: Թեղուտում մկնդեղային բրոնզե իրերը վկայում են մետաղամշակութային նախնական և ոչ թե բուն զարգացման մասին:

Մ.թ.ա. III հազարամյակի մշակույթին հատուկ են կենտրոնական կլոր և նրանց կից քառանկյունի հատակագծով կացարանները, որոնց ներքին հարդարման մանրամասների մեջ իբրև կանոն առկա են պաշտամունքային և տնտեսական օջախները, պատերի տակ կառուցված նստարանները, աշխատանքային զնդանները և այլն: Թեղուտում ևս մենք ունենք նման մանրամասներ, այն տարբերությամբ, որ այստեղ կլոր կացարաններն ունեն փոքր շափեր: Բնակավայրում փոքր շափերի կացարանների գոյությունը պետք է բացատրել այն հանգամանքով, որ Թեղուտում նրանք պատկանում են ոչ թե մեծ գերդաստանների, ինչպես մ.թ.ա. III հազարամյակում, այլ փոքր ընտանիքների, որոնց սեզմենտացիան ընթանում էր ոչ թե կից, այլ առանձին նոր բնակարանի կառուցումով: Մ.թ.ա. III հազարամյակի կից կացարանների առաջացումը պետք է դիտել որպես տոհմի ներսում մեծ գերդաստանների առաջացման հետևանք, որտեղ պաշտամունքային օջախը պահվում էր մայր կացարաններում: Թեղուտի համարյա բոլոր կացարաններում մենք ունենք պաշտամունքային օջախի մնացորդներ, որոնք վկայում են տոհմական հասարակարգի սոցիալ-տնտեսական ավելի ցածր զարգացման մակարդակը:

Աշխատանքային գործիքների միջև եղած նմանությունների տեսակետից ուշագրավ են մ.թ.ա. III հազարամյակի համար տիպական ճանաչված նավակաձև աղորիքի բեկորի և ցլեփված քարե արտադրանքների նմուշների ձևական ընդհանրությունները: Ինչպես հայտնի է, III հազարամյակի ցլեփված քարե արտադրանքներից մանգաղների ներդիրներին հատուկ են մակերեսների նուրբ ռետուշը և բանող կողի ատամնավոր տեսքը:

Թեղուտի բնակատեղիի քարե արտադրանքների հավաքածուի մեջ առկա են երկու ներդիրներ, որոնց մակերեսները ռետուշված են լայն անկյան տակ, իսկ մնացյալները լրացուցիչ մշակման հետքեր չունեն: Սա ցույց է տալիս, որ մ.թ.ա. III հազարամյակում քարի օգտակար գործողության գործակցի բարձրացման նպատակով կատարված մակերեսների մշակման (ռետուշ) պրակտիկան ևս, որոշ իմաստով, իր սկզբնավորումն ունի IV հազարամյակի մշակույթի մեջ:

Առանձնապես հետաքրքիր են խեցեղենի նմուշների վառ դիտված նմանությունները: Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենին հատուկ են սեղմումով արված ակոսավոր, փոքրիկ ներս ընկած հատակները, մետաղական փայլը, սև ու կարմիր գունային երանգները, մանրացված ավազի հետ խառնված կավաշաղախը և այլն: Արժե նկատել, որ այս հատկանիշներով ու ձևերով

կավանթների որոշ տեսակներ առկա են նաև Թեղուտում, ըստ որում մեր ունեցածները միայն ձևերով են նման, իսկ կատարելությամբ շատ կողմերով զիջում են նրանց:

Բացի այդ, արժե հիշել նաև այն, որ Թեղուտի հասարակ հարդախառն կավաշաղախից պատրաստված կավամանների բեկորների նմանները հանդիպում են երբեմն նաև III հազարամյակում: Այսպես, 1967 թ. էջմիածնի Քյուլ-թափայի հյուսիսային լանջի վրա արված ստուգողական հորից հայտնաբերվել է հարդախառն կավաշաղախ ունեցող կավամանի բեկոր, որն ունի բաց կաթնագույն խիստ ճաքճքված մակերես: Թվում է, որ հետագա աշխատանքներով հնարավոր կլինի հաստատել, որ մ.թ.ա. III հազարամյակի որոշ հատվածում հասարակ խեցեղենի արտադրության մեջ դեռևս շարունակվել է կավի հետ հարդ խառնելու պրակտիկան:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված նյութերը խոսում են այն փաստի օգտին, որ Թեղուտի ժամանակաշրջանի ու մ.թ.ա. III հազարամյակի մշակույթների միջև գոյություն ունի երևույթների ընդհանրություն, որոնք դիտվում են թե՛ զարգացման մակարդակների և թե՛ կատարելության աստիճանների տարբերության հիմքի վրա: Հիշատակության են արժանի Հ. Մարտիրոսյանի, է. Խանզադյանի, Ինչպես նաև վրացի հնագետ Կորիձեի այն տեսակետը, որ մ.թ.ա. III հազարամյակի մշակույթի ակունքները պետք է որոնել IV հազարամյակի տեղական մշակույթի մեջ, և այլուր:

Այսպիսով, բերված փոքրաքանակ փաստերը ցույց են տալիս, որ Արարատյան դաշտի ու Հայկական լեռնաշխարհի հնագիտական հետագա ուսումնասիրություններով հնարավոր կլինի էլ ավելի բացահայտ դարձնել մ.թ.ա. IV—III հազարամյակների միջև եղած նյութական մշակույթի կապերն ու զարգացման ընթացքի մանրամասները:

Արարատյան դաշտում Թեղուտին նախորդող և հաջորդող ժամանակաշրջանների հնավայրերի նյութերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թեղուտի բնակավայրի նյութական արտադրության մեջ առկա են նմուշներ, որոնք կապվում են մի կողմից նոր քարեդարյան, մյուս կողմից՝ վաղ բրոնզի ժամանակաշրջանի մշակույթի հետ: Այն հանդես է գալիս որպես նշված դարաշրջանները կապող մի կարևոր օղակ, որը մասամբ ներկայացնում է Հայաստանի և մասնավորապես Արարատյան դաշտի պղնձեքարեդարյան մշակույթի կարևոր հատվածներից մեկը:

Այս խնդիրները պարզելու տեսակետից կարևոր է իմանալ, թե Թեղուտի բնակավայրին հատուկ մշակութային ինչ մնացորդներ կան այլ վայրերում:

Ուսումնասիրություններով պարզվել է, որ Արարատյան դաշտի միայն էջմիածնի շրջանում նյութական արտադրության նույնանման մնացորդներ առկա են շատ հնավայրերում: Նրանք հայտնաբերված են էջմիածնի Մոխրաբլուր (Քյուլ-թափա) բնակատեղիի շրջակայքում, Վերին Խաթունարխի և էջմիածնի պետական տնկարանի միջև ընկած, նախկինում աղուտ, այժմ մշակովի տարածություններից, Զվարթնոցի հնագիտական շրջանից, Քասախ գետի նախկին և այժմյան հունների ափերից (Մըխլ-թափա) և Վ. Քյուլանլուի այգիների մեջ գտնվող Թափեկար, Աղավնատուն գյուղից հյուսիս՝ քարհանքերի մոտից և այլ վայրերից:

Այս հուշարձանների շարքում առավել հետաքրքիր է էջմիածնի շրջանի Աղջաղալա գյուղից հյուսիս, քարքարոտ բլուրներից մեկի վրա հայտնաբեր-

ված հնավայրը, որը գյուղի բնակիչները կոչում են «մմըզի դիրք»: Այստեղ, բացի մակերեսից հավաքված նյութերից, բլրի հյուսիսային լանջում արված ստուգողական խրամատում բացվեց բնակավայրի շինարարական մի փոքրիկ հատված, որի կառույցը, խեցեղենը և քարե գործիքները հար և նման են Թեղուտի բնակատեղիի նմուշներին:

Մ.թ.ա. III հազարամյակի մշակույթին նախորդած ժամանակաշրջանի էլ ավելի հարուստ տարբերակ է միջին-արաքսյան գոգավորության հարավային հատվածում հայտնաբերված Նախիջևանի Քյուլ-թափա բլուր-բնակատեղիի ստորին շերտը կազմող հնավայրը: Ինչպես Թեղուտին, այնպես էլ Քյուլ-թափա I շերտին հատուկ են կլոր հատակագծով կացարանները, հասարակ ավազախառն ու հարդախառն, թաց-հարդարված ու կոկիչով հղկված, երբեմն էլ դեղին անգորսապատ մակերեսներով խեցեղենը և մետաղյա հազվագյուտ իրերը:

Արարատյան դաշտում այսպիսի հնագիտական նյութեր ունեցող այլ հնավայրեր առայժմ հայտնի չեն:

Հայաստանի պղնձեքարեդարյան մշակույթի առաջացման, տարածման ու հետագա ժամանակաշրջանների հետ ունեցած կապերի վեր հանման հարցում կարևոր տեղ ունի նաև հնավայրերի թվագրման շատ բարդ ու տակավին չլուծված խնդիրը: Դժվարությունն այն է, որ այդ մշակույթի ուսումնասիրությունը Անդրկովկասում դեռ նոր է ծավալվել և գտնվում է իր սկզբնական փուլում: Նյութերի անբավարարության հետևանքով դեռևս հնարավոր չէ որոշակի ձևով առանձնացնել նրա զարգացման ընթացքի առանձին աստիճանները՝ կոնկրետ թվագրումներով հանդերձ:

Ռադիո-ածխածնային թվագրման համար անհրաժեշտ նյութերի բացակայության հետևանքով Թեղուտի հավաքածուի ժամանակագրման փորձը կատարել ենք այստեղ հայտնաբերված հնագիտական նյութերը Անդրկովկասի, Հայկական լեռնաշխարհի և հարևան մշակութային օջախների նմուշների հետ համադրության միջոցով:

Ինչպես վերը տեսանք, Թեղուտի կոմպլեքսի նմուշները իրենց ձևերով ու առանձնահատկություններով կապվում են Հյուսիս-միջագետքյան Հալաֆ-օբեյդյան ժամանակաշրջանի նյութերի հետ:

Արարատյան դաշտում այդ դարաշրջանի բնակատեղիներից է Թեղուտի հետ բազմաթիվ նմանություններ ունեցող Քյուլ-թափա I-ը: Մի կողմ թողնելով արդեն կատարված համադրությունները, նշենք, որ, ինչպես Թեղուտում, այնպես էլ այստեղ հայտնաբերվել են գունազարդ խեցու բեկորներ, որոնք պատկանում են հարդախառն և համեմատաբար մաքուր կավից պատրաստված կավամանների: Քյուլ-թափայում (17, 35 մ խորությունից) գտնված բեկորը¹³ իր կավաշաղախով, գույնով ու մակերեսի մշակման տեխնիկայով համապատասխանում է Թեղուտի էԳԹ 1681-ին, իսկ 16,85 և 18, 8 մ խորությունից գտնվածները՝ Թեղուտի էԳԹ 1682-ին: Բացի տեղական գունազարդ խեցեղենից, այստեղ 18,20 մ խորությունում հայտնաբերվել է իսկական Հալաֆյան խեցու բեկոր, որի հորիզոնից վերցված ածուխը ՍՍՀՄ ԳԱ Հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի լաբորատորիայի ռադիո-ածխածնային անալիզներով տվել է շերտի հետևյալ թվագրությունը՝ 477—5770 ± 90, այսինքն՝ 3807 թ. ± 90:

¹³ О. А. Абибулаев, Некоторые итоги..., էջ 154:

Ինչպես նյութական մնացորդների ողջ հավաքածուի, այնպես էլ թվագրման այս տվյալի հիման վրա Ա. Ա. Իեսսենը Քյուլ-թափա I-ը համադրում է Առաջավոր Ասիայում համընդհանուր ճանաչում գտած Հալաֆյան մշակույթի թվագրման հետ¹⁴։

Թեղուտի մշակույթի մնացորդներն իրենց համադրություններն ունեն նաև Աղստևի հովտի հնավայրերում (Շոմու-թեփե, Թոյրե-թեփե, Բաբադերվիշ)։ Ի տարբերություն Քյուլ-թափայի և Թեղուտի, այստեղ գունազարդ խեցին բացակայում է, սակայն բնակարանների մնացորդների, աշխատանքային գործիքների ու խեցեղենի նմանությունները ակնհայտ են։ Որպես բնակարանների ընդհանուր տեսակ թե՛ Քյուլ-թափայի, թե՛ Թեղուտի և թե՛ Աղստևի հնավայրերի համար պետք է նշել կլոր հատակագծով, փոքր տրամագիծ ունեցող կացարանները, հարդախառն դեղին անգորպապատ ու կոկիչով հղկված մակերեսներով խեցեղենը, ինչպես նաև հողամշակութային աշխատանքների հետ կապված գործիքների՝ բրիչների նմանությունը։ ԷԳԹ. 895-ը համապատասխանում է Աղստևի բնակավայրից գտնվածին¹⁵։ Աղստևի հնավայրի այս շերտը ուսումնասիրողները համադրում են Նախիջևանի Քյուլ-թափա ստորին, Մուղան-Ղարաբաղի տափաստանի և Առաջավոր Ասիայի մ. թ. ա. IV հազարամյակով թվագրված հուշարձանների հետ։

Հետաքրքիր են նաև Արարատյան դաշտի Թեղուտ, Քյուլ-թափա I, Վ. Խաթունարիս և Մուղան-Ղարաբաղի տափաստանում հայտնաբերված նմուշների համադրություններով բացահայտված ընդհանրությունները։ Թե՛ Արարատյան դաշտում և թե՛ Մուղան-Ղարաբաղում հայտնաբերված խեցեղենի համար բնորոշ է կավաշաղախի մեջ բուսական խառնուրդի առկայությունը, բաց դույնի անգորպապատ և կոկիչով փայլեցված մակերեսները, ինչպես նաև խեցեղենի գունազարդ տեսակները։ Մշակութային լայն ֆոնի մեջ քննարկման առնելով Մուղան-Ղարաբաղի տափաստանի նյութերը, Ա. Ա. Իեսսենը թվագրում է այդպիսիները մ. թ. ա. V—IV հազարամյակներով։

Մոտավորապես նույն ժամանակաշրջանի բնակատեղիներ են հայտնաբերված նաև Շուլավերի մոտ (Վրացական ՍՍՀ), որտեղ բացված մնացորդները որոշ նմանություններ ունեն Արարատյան դաշտի և մյուս վայրերի նյութերի հետ։

Հալաֆ-Օբեյդյան ժամանակաշրջանի մյուս բնակատեղին Հայաստանում Շամիրամալթին է (Տիլիկի-թեփե, Վանա լճի արևելյան ափին)։ Բնակատեղիի շերտերից ստորինը ճանաչված է որպես տիպիկ Հալաֆյան մշակույթի արեւելյան տարբերակի նմուշներ պարունակող շերտ և թվագրված է մ. թ. ա. V հազարամյակով։ Այս մասին հաստատ վկայություն են տալիս Ե. Բ. Ռեյլին, Կ. Բիտտելը, Վաթսոնը, Զ. Բարնեյը, Ա. Պերկինսը, Զ. Մելլարտը և ուրիշները։ Միջին II շերտում գունազարդ խեցին բացակայում է. նրա փոխարեն հանդես են գալիս գեղեցիկ փայլեցված կավամաններ, որոնց վրա երբեմն առկա են դարչնագույն կետերից բաղկացած անվերժանելի զարդեր, ինչպիսիները գտնված են նաև Թեղուտում։

Առաջին շերտում հայտնաբերված է հարդախառն խեցեղեն, որը հաճախ զարդարված է վերևից ներքև իջնող ալիքաձև պնտով։ Այստեղ կան նաև մետաղյա իրեր։

¹⁴ А. А. Иессен, Кавказ и Древний Восток..., էջ 13։

¹⁵ И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, նշվ. աշխ. էջ 150, նկ. 1, № 3։

Բնակավայրի վերին I շերտը, ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հնագետների կողմից համադրված է Միջագետքյան ետհալաֆյան ու Օբեյդյան ժամանակաշրջանների հնավայրերի հետ և թվագրված է մ. թ. ա. IV հազարամյակով:

Սովետական հնագետ Վ. Ս. Մասսոնը գտնում է, որ Քյուլ-թափա I, Վանի ավազանի Շամիրամալթի I և ինչպես և Պարսկական սարահարթի Գեոյ-թեփե Մ բնակատեղիները պատկանում են մ. թ. ա. IV հազարամյակի մշակույթին: Հնավայրի I շերտի մշակույթի նկատմամբ ավելի զգուշ մոտեցում ունի Ա.Ա. Իեսսենը: Նա գտնում է, որ Շամիրամալթի I-ը և Գեոյ-թեփե Մ-ը իրար հետ կապվում են տեխնիկայի միասնություններ, իսկ գունազարդման տարրերով, ամանների ձևերով իրարից խիստ տարբերվում են:

Վերջին դիտողությունը խիստ կարևոր է, քանի որ Վանի ավազանում Արարատյան դաշտում ու Հայկական լեռնաշխարհի այլ վայրերում առկա են տեղական մշակույթի զարգացման ներքին ընդհանրություններ, որոնց հետագա ճանաչումով հնարավոր կդառնա ցուցադրել Հայաստանի պղնձեքարե դարյան ու առաջավորասիական մշակույթների տարբերությունները: Արարատյան դաշտի վաղ երկրագործական մշակույթի ներկա շերտագրման, թվագրման գործում կարևոր նշանակություն ունեն Շամիրամալթիի, Նախիջևանի Քյուլ-թափայի, Թեղուտի հնագիտական նյութերի, ինչպես նաև պեղումներով բացահայտված մշակութային առանձնահատկությունների ընդհանրությունները: Որպես առավել ակնառու երևույթ պետք է առաջին հերթին նշել այն, որ Թեղուտում, Քյուլ-թափայում, Շամիրամալթի I-ում հայտնաբերված են մետաղե մանր առարկաներ, որոնք վկայում են լեռնաշխարհում մետաղամշակության սկզբնավորման մասին:

Այս երեք հնավայրերում, Վ. Խաթունարխի ու Խարբերդ-Մալաթիայի շերտաններում հայտնաբերված են Հալաֆ-Օբեյդյան ժամանակաշրջանների բուն հյուսիս-միջագետքյան խեցեղենի նմուշներ, ինչպես նաև տեղական պղնձեքարեդարյան գունազարդ ամանեղեն:

Բնակատեղիներից հավաքված զանգվածային խեցեղենի տեսակների միջև եղած նմանությունները ցույց են տալիս, որ լեռնաշխարհում ամենուրեք զարգանում էր տեղական ինքնուրույն մի մշակույթ իրեն հատուկ ձևերով ու պատրաստման բնորոշ եղանակներով:

Որպեսզի ավելի ակնառու դառնա Թեղուտի և Շամիրամալթիի մշակույթների միասնությունը, բերենք մի քանի օրինակ. Թեղուտի ծորակով թասը (էԳԹ. 1848) համադրվում է Շամիրամալթիի հասարակ իրերի B խմբի 1, 4, 6-ի, կամ էԳԹ. 792-ը՝ Շամիրամալթիի գորշ իրերից տախ. № 4, նկ. 1-ինի հետ¹⁶:

Թեղուտում հայտնաբերված Հալաֆյան ոչ գունազարդ իրերը համադրվում են Շամիրամալթի II շերտից հայտնաբերվածների հետ:

Որպես բրիչային երկրագործության տնտեսության բնորոշ գործիք, թե՛ Թեղուտում, թե՛ Աղստևի բնակավայրում և թե՛ Շամիրամալթիում գտնված են միջանցիկ անցքով, ոսկրե բրիչներ:

Հալաֆ-Օբեյդյան մշակութային շրջանի բնակատեղիներից Հայկական լեռնաշխարհում ուշագրավ են Խարբերդ-Մալաթիայի և Մշո դաշտի բնակավայրերը:

¹⁶ V. Jenny, նշվ. աշխ., էջ 288:

Անկարայի բրիտանական հնագիտական ինստիտուտի երթուղային արշավախումբը 1957 թ. Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններում ու Մշո դաշտում հայտնաբերել է մի շարք հնավայրեր, որոնց մակերեսից հավաքված հնագիտական նյութերը մեծ չափով լրացնում են վաղ երկրագործական մշակույթի տարածման եզրագծերը: Բացի առավել հին Հասսունյան տիպերից, Չ. Բարնեյի ղեկավարած արշավախումբը, բուն Հալաֆյան խեցեղենի նմուշներ է հավաքել Հեքիմիանի մոտ Քյուլուգում, իսկ Հինձորի և Քյուլուգի մոտ, բացի ներմուծված Հալաֆյան նմուշներից, վեր է հանել նաև տեղական սղնձեքարեդարյան խեցեղեն:

Օբեյդյան խեցեղեն հայտնաբերվել է Իսակում, Քյուլուգում, Արսլան թեփեում, իսկ միագույն հարդախառն խեցեղեն՝ Մշո դաշտում:

Հայկական լեոնաշխարհի այլ վայրերում Հալաֆ-Օբեյդյան ժամանակաշրջանին պատկանող նյութեր առայժմ չեն հայտնաբերվել:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Արևմտյան Հայաստանի վերը հիշատակված բնակավայրերը ուսումնասիրված են միայն մակերեսային նյութերով, տրոնք, ինչպես հեղինակն է ասում, ունեն սոսկ ուղեցուցային նշանակություն:

Նյութերի ուսումնասիրման այսօրվա վրձակը թույլ է տալիս ասելու, որ Հալաֆ-Օբեյդյան ժամանակաշրջանում Հայկական լեոնաշխարհի գետահովիտներում ու նախալեոնային վայրերում վաղ երկրագործությանը զբաղվող տեղական բնակիչները որոշակի կապերի մեջ են եղել Միջագետքի կենտրոնների հետ: Այդ կապերը, ինչպես ավելի ուշ ժամանակաշրջաններում, այնպես էլ մ. թ. ա. V—IV հազարամյակներում, իրականացվել են լեոնաշխարհի գետահովիտներով ու լեոնանցքներով: Որպեսզի ավելի պատկերավոր դառնան Հայկական լեոնաշխարհի մ. թ. ա. IV հազարամյակի տնտեսության ու մշակույթի զարգացման առաջավորասիական ընդհանրությունները, նշենք նաև Սիրո-Կիլիկյան ու ընդհանրապես արևելյան Միջերկրականյան մշակույթի զարգացման ընդհանուր գծերը, որոնք ակնառու են դարձնում աշխարհագրական շատ լայն միջավայրում վաղ անասնապահական և երկրագործական մշակույթների զարգացման զուգահեռ օրինաչափությունները:

Վերը նշված տերիտորիաների բնակատեղիներից ուշագրավ են Կիլիկիայում Յումուկ-թեփեն, Միջերկրականի արևելյան ափին Ռաս-Շամրա (Ուզարիթ) և Հալեբից մինչև Անտիոք ընկած տարածքի վրա Զուգեյդե, Թեկ-Կորդու բնակատեղիները: Այս հնավայրի համար բնորոշ է Հալաֆյան մշակույթի ուժեղ ազդեցությունը, ըստ որում Հալաֆյան մոտիվները որոշ տեղերում գերիշխում են ոչ միայն բերովի նյութերի, այլև տեղում պատրաստվածների վրա:

Յումուկ-թեփե XIX—XVII շերտերը սերտորեն համադրվելով Ամուկ C-ի հետ, որոշ առումով Ամուկ D-ի և հյուսիս-միջագետքյան Հալաֆյան ժամանակաշրջանի հուշարձանների հետ, տալիս են ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական Հալաֆյան խեցեղենի ու զարդանախշերի նմուշներ: Հետագայում XIV—XII B-ում ավելի ուժեղ դրսևորվում են տեղական, հնից եկող առանձնահատկություններ, որոնք ուղեկցվում են Օբեյդյան նյութերով, իսկ ավելի ուշ F ֆազում արդեն գերիշխում են բուն տեղական նյութերը, որոնք վերաբերում են Օբեյդյան ժամանակներին¹⁷: Մշակույթի զարգացման այս փու-

¹⁷ Ehr. c'1, նշվ. աշխ., 103:

յում Յումուկ-թեփեում Հալաֆյան շքեղ գունազարդ խեցեղենը աստիճանաբար կորցնում է իր ճոխությունը և դառնում անզարդ: Սակայն Հալաֆյան բնորոշ խեցեղենը՝ իր գոյությունը պահպանում է նաև XIV և ապա հետագայում XIII-ում լրիվ ծածկվում է Օբեյդյան մշակույթի շերտերով:

Արևմտա-Հալաֆյան մշակույթի ազդեցության տակ գտնվող Արևելամիջերկրականյան մշակութային տարածքների բնակատեղիներից հետաքրքիր են Ռաս-Շամրա հնավայրի շերտագրական փոփոխությունները, որոնք տիպական են համարյա ողջ Միջերկրականի արևելյան ափերի համար:

Ռաս-Շամրայում այս փուլը ներկայանում է IV A, IV B, IV C և այնուհետև III B, III C շերտերով:

Ռաս-Շամրա IV A շերտը պատկանում է Հալաֆից-Օբեյդին անցնելու ժամանակաշրջանին: Գերիշխում են Հալաֆյան և վաղ Օբեյդյան իրերը: Ռաս-Շամրա VI B-ում գերակշռում են Հալաֆյան մոտիվներ կրող տեղական իրերը: IV A-ում սկիզբ առած տեղական կարմիր մակերեսով իրերը դնալով շատանում են և IV C ու III B-ում նրանք հանդես են գալիս Օբեյդյան իրերի հետ զուգահեռ: Ի վերջո հետագայում մշակույթի մեջ գերիշխող է դառնում տեղականը¹⁸:

Ինչպես տեսնում ենք, մշակույթի զարգացման այս էտապներում Կիլիկիայում և Միջերկրականի արևելյան տերիտորիաներում հարատևել են Առաջավոր Ասիայի մշակույթի ելևէջները, որոնք իրենց դրսևորումն են գտել նաև Հայկական լեռնաշխարհում:

Այստեղ հետաքրքիր է նկատել, որ Յումուկ-թեփե XIX—XVII-ը, Ռաս-Շամրա IV A, IV B, IV C ժամանակագրված են Ամուկ C ֆազով, որոնց հետ միևնույն ժամանակագրական հորիզոնի վրա է գտնվում Շամիրամալթի III-ը: Ինչպես վերը նշված բնակավայրի շերտերում, այնպես էլ Շամիրամալթիում Հալաֆյան մշակույթի նմուշները ուղեկցվել են տեղական բնորոշ խեցեղենով, որոնց հետագա զարգացումը հասցնում է ինքնուրույն՝ տվյալ մշակույթի համար բնորոշ նմուշների գերակշռությանը: Ուշագրավ է նաև այն, որ Արևելամիջերկրականի ափերին անցման էպոխայում դիտվում է Հալաֆյան ճարտարապետության սկզբունքների խարխուլում, առաջ են գալիս կիսագետնափոր, իսկ Պաղեստինում՝ նաև կլոր հյուղակներ, որոնք պարունակում են Հալաֆյան հասարակ, անզարդ, ոչ շքեղ խեցեղեն: Նրանց հետ միասին հանդես են գալիս կճուճներ, որոնք ունեն ելուստներ, իսկ հատակներին առկա են գործվածքի դաջվածքի մնացորդներ¹⁹: Պաղեստինում այս շերտերը թվագրված են 3600—3500 թթ. մ. թ. ա.:

Հայկական լեռնաշխարհի և նրա արևմտյան հարևանների անցյալի մշակույթի զարգացման ընդհանրությունները ցույց են տալիս, որ լեռնաշխարհի որոշակի տերիտորիաներ անպայման դարձել են Հին Արևելքի մշակութային մեծ իրադրությունների մասնակիցներ:

Բացի Հալաֆ-Օբեյդյան վերը հիշատակված բնակատեղիներից, Թեղուտի, հնագիտական նմուշները իրենց համադրություններն ունեն Պարսկական: սարահարթի Գեոյ-թեփե բնակավայրի M շերտի նյութերի մեջ: Հնավայրի ստորին շերտում հայտնաբերված աշխատանքային գործիքների, մետաղե

¹⁸ Նույնի, էջ 103:

¹⁹ J. Mellaart, Earl. Civil..., էջ 127:

առարկաների ու խեցեղենի համեմատական ուսումնասիրության միջոցով հեղինակը այն թվագրում է Օբեյդյան ժամանակաշրջանով և զուգահեռներ է գտնում Շամիրամալթի I-ի հետ: Հեղինակի կարծիքը հետագայում պաշտպանում են նաև սովետական հնագետներ Վ. Մ. Մասսոնը, Ա. Ա. Իեսսենը և այնուհետև ամերիկյան մասնագետներ Գայսոնը, էրիքը և այլք²⁰: Որպեսզի պարզ դառնա Թեղուտի Շամիրամալթի I-ի և Գեոյ-Թեփե Մ-ի միջև եղած մշակութային ընդհանրությունը, բերենք հետևյալ նյութերի համադրությունը:

Թեղուտի ծորակով թասը (էԳԹ. № 1848) համադրվում է Շամիրամալթի B խմբի 1,4—6-ի և Գեոյ-Թեփե № 6 հետ:

Պարսկական սարահարթում Թեղուտի հետ ժամանակագրական կապերով աղերսվում է Պիշիլի-Թեփեն՝ Սուլզուզի հովտում: Նրա հնագիտական նյութերը (խեցեղեն նմուշներ, հարգախառն կավ, դեղին անգորապատ փայլեցված մակերես, քարե և ոսկրե առարկաներ) որ վերաբերում են ուշ Հալաֆյան և վաղ Օբեյդյան ժամանակներին, հարևան են Թեղուտից գտնվածներին: Պիշիլի-Թեփեի նյութերը թվագրված են ինչպես համեմատական մեթոդով, այնպես էլ ռադիո-ածխածնային անալիզներով, որոնց տվյալները համապատասխանում են մ. թ. ա. IV հազարամյակի I կեսին:

Պիշիլի-Թեփեի համար ռադիո-ածխածնային թվագրման արդյունքները հետևյալներն են.

թ. 505	3857	± 88
թ. 504	3734	± 83
թ. 157	3666	± 165
և	3500	± 160

թ. մ. ա.²¹

Այնուհետև ուշագրավ է, որ Թեղուտի բնակարանաշինական ձևերը և բարձրորակ խեցեղենը իրենց զուգահեռներն ունեն հյուսիս-միջագետքյան Թեփե-Գավրա հնավայրի XIX—XVI շերտերի նյութերում, որոնք պատկանում են Հալաֆյան մշակույթից Օբեյդին անցնելու ժամանակաշրջանին: Սրանց թվագրման համար C-14-ը տվել է հետևյալ արդյունքը՝ մ. թ. ա. 3446±325:

Այսպիսով տեսնում ենք, որ Թեղուտի բնակատեղին իր կառուցողական ձևերով, նյութական մշակույթի բնորոշ առանձնահատկություններով կապվում է Հայկական լեռնաշխարհի ու նրա սահմաններից դուրս Հալաֆ-Օբեյդյան անցման ժամանակաշրջանի բնակատեղիների նյութերի հետ: Սրանց ուսումնասիրությունների միջոցով պարզվում է, որ Թեղուտի տիպի մշակույթի մնացորդներ պարունակող բնակատեղիները Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել մ. թ. ա. V հազարամյակի վերջին և IV հազարամյակի ընթացքում, իսկ բուն Թեղուտի բնակատեղին, ամենայն հավանականությամբ, ներկայացնում է այդ մշակույթի զարգացման այն փուլը, որը կարելի է թվագրել մոտավորապես 3800—3600 թթ. մ. թ. ա.:

²⁰ R. H. Dyson, in Ehrich's book, էջ 248:
²¹ R. H. Dyson and J. R. G. Young, նշվ. աշխ., էջ 26:

РАННЕЗЕМЛЕДЕЛЬЧЕСКОЕ ПОСЕЛЕНИЕ ТЕХУТА

(IV тыс. до н. э.)

(Резюме)

Важным этапом первобытнообщинного строя является период становления ранней скотоводческо-земледельческой культуры. В VIII—VI тыс. до н. э. в общественно-экономической жизни Передней Азии происходят грандиозные изменения, которые в археологической литературе известны под названием «неолитической революции».

Суть этих изменений заключалась в переходе первобытного общества от собирательского, охотничьего, кочевго образа жизни к оседло-земледельческому производящему хозяйству. Указанный процесс развития, обусловленный как естественно-географической средой, так и общественными факторами, привел к образованию отдельных раннеземледельческих культурных центров, которые были расположены на территориях Северного Ирака, Палестины, центральной Анатолии, Ирана, Средней Азии, Армянского нагорья и Кавказа.

Основываясь на общественном опыте познания растительного и животного мира, а также функциональных различиях используемых в материальном производстве орудий труда, первобытные коллективы, занимавшиеся скотоводством и ранним земледелием, достигают в VI—IV тыс. до н. э. такого уровня развития хозяйства, которому характерны простейшие оросительные системы, культивация зерна, приручение животных и пр. (Тель-Хассуна, Юумук-Тепе, Чатал-Хуйюк, Джармо, Джейтун, Тепе-Сиалк 1—2). Культурные центры этого периода представлены крупными многослойными поселениями, для нижних слоев которых характерны отдельно сооруженные дома, а для поздних—жилые комплексы многочисленной большой семьи. Поселение иногда бызуют окружены оборонительными сооружениями (Иерихон, Хаджилар).

Экономическое, культурное развитие первобытного общества способствовало появлению сложных общинных сооружений и святилищ (Чатал-Хуйюк).

Последующее развитие раннеземледельческих скотоводческих хозяйств в эпоху энеолита приводит к формированию в них основных отраслей раннеземледельческой экономики.

Повсеместное развитие ткачества, кожевенного производства, обработки камня и других отраслей приводит к новым формам организации: складываются новые производственно-этнические объединения, в которых преобладают патриархальные отношения.

Самым характерным признаком периода энеолита, которым он отличается от предыдущих, является возникновение и начальное развитие металлургии.

На базе производящего хозяйства первобытнообщинные группы в

сравнительно короткий период достигли определенных социально-хозяйственных успехов, которые проявились в функциональной дифференциации и усложнении орудий производства, следовательно, привели к некоторым осложнениям в отношениях между членами общины и к социальным переменам между разными общинами. Подъем основных отраслей производства и ремесел, существовавшие расширяющиеся возможности для производства материальных благ стали стимулом к специализации некоторых определенных отраслей производства внутри племен, к дифференциации общественного имущества и появлению зачатков социальных группировок.

Дальнейшее развитие первобытнообщинных отношений в конце концов приводит к укрупнению племенных объединений, которые позднее становятся основой для догосударственных и раннединастических образований.

В деле познания хозяйственного уклада, этнических и общественных событий раннеземледельческого общества древнего мира большое значение приобретает изучение памятников энеолитической культуры Армянского нагорья и особенности Араратской долины. Одним из поселений указанного периода является памятник «Техут» близ Эчмиадзина, раскопанный и исследованный нами в период 1965—1968 гг.

Поселение состоит из круглых, изолированных маленьких глинобитных или кирпичных жилищ типа землянок и полуземлянок. В развалинах этих помещений сохранились остатки хозяйственных и культовых очагов, подпорки, пристроенные к стенам сидения и прочее. Ближе к хижинам находились хозяйственные ямы, которые иногда были наполнены золой. На территории поселения жилища располагались отдельными группами вокруг площадок. Жилища имеют в диаметре 2,6—3 м и 0,7—1,6 м глубины от дневной поверхности.

Путем широкого сопоставления форм строительства, особенностей планировки доказано, что подобные сооружения существовали на Армянском нагорье и в Передней Азии в VII—IV тыс. до н. э. Поселение принадлежало роду состоящему из парных семей.

Как для всех энеолитических поселений, так и для Техута характерно изготовление орудий из камней разных типов, костей и металла.

Подавляющая масса каменных орудий изготовлена путем скалывания и по своему функциональному значению делится на четыре группы.

1. Ножевидные пластинки. 2. Вкладыши составных серпов. 3. Вкладыши составных ножей и 4. Скребки.

Основную массу каменных орудий составляют различного типа зернотерки, ступки, каменные грузила, ложила изготовленные из вулканического шлака.

Техутские каменные орудия характерны для энеолитического периода развития хозяйства и имеют свои аналоги из многочисленных одновременных поселений Араратской равнины и Передней Азии.

Нередки также и металлические орудия.

С помощью спектрального анализа и изучения микроструктуры удалось доказать, что орудия эти изготовлялись не из природной меди путем холоднойковки, а из плавленной меди с добавлением мышьяка. Современные методы изучения древних металлов на территории Советской Армении и Передней Азии позволяют утверждать, что богатое медными залежами Армянское нагорье в VI—IV тыс. до н. э. было одним из основных центров производства меди в древнем мире, а жители Араратской равнины в это время уже использовали сплав мышьяковистой меди.

Костяные орудия техутского поселения, в основном, земледельческие и бытовые, являются скреблами, рукоятками каменных ножей, проколками, мотыгами и лопатовидными изделиями.

Гончарное дело рассматривается как отдельная отрасль производства, включающего в себя процесс от отбора глины до готового керамического изделия с обжигом и обработкой поверхности. Сравнительное изучение керамических изделий из Техута и некоторых других синхронных поселений Араратской равнины позволило заключить, что в то время существовало несколько способов производства керамических изделий:

1. Формовка посуды из мягкого теста.
2. Формовка посуды на плетеной основе.
3. Спирально-ленточный способ изготовления.
4. Изготовление сосуда на вращающемся круге.

Керамическая посуда изготовлялась из глины с примесью песка или соломы. Поверхность посуды обрабатывалась в сыром виде, иногда наносились узоры с помощью красок. Керамика в основном светло-красного или розоватого цвета, редко встречаются с черной или светло-желтой поверхностью. Некоторые фрагменты керамических предметов являются ранними прототипами основных форм III тысячелетия. Подробное исследование продуктов гончарного производства позволило выявить своеобразие керамики Армянского нагорья и Араратской равнины и установить в то же время существование здесь керамических изделий северной Месопотамии, наличие которых, по-видимому, объясняется обменом или следствием каких-либо иных отношений.

На основе сравнительного сопоставления материалов из Техута, Хатунарха, Агджакалы, Шулавери, Цопи, Арухло, Казаха, Нахичеванской Кюль-тапы и других синхронных поселений исследованы основные отрасли энеолитического хозяйства—земледелие и скотоводство. Изучение остатков злаков и орудий земледелия позволило выяснить, что в IV тыс. до н. э. в Армении осуществлялось примитивное искусственное орошение и мотыжное земледелие. Выявление остатков пшеницы и ячменя в смешанном виде позволяет предположить, что производился смешанный посев злаков, как и в III тыс. до н. э.

Немаловажную роль в хозяйстве играло и скотоводство. Палеозоологическое исследование остеологического материала позволило среди остатков определить виды домашних и диких животных. Были уже одомашнены крупный рогатый скот, козы, бараны; аборигены употребляли также и мясо охотничьих животных—безоарового козла, муфлона, кабана и других более мелких животных. Об определенном уровне скотоводства в Армении и на Араратской равнине в эпоху энеолита говорят также и многочисленные наскальные изображения Гегамских гор и Арагаца, которые представляют яркую картину яйлажного скотоводства. О существовании таких отраслей как ткачество, изготовление рогожи, цыновок, прядильное дело и т. п. свидетельствуют сохранившиеся на керамических изделиях отпечатки. С помощью микроскопического исследования удалось установить, что в эпоху энеолита аборигены Араратской равнины получали пряжу не только из шерсти, но и из коры деревьев и растений. Сырьем для изготовления цыновок служила нежная болотная растительность, которая использовалась как в целом, так и в пресованном виде.


В результате сравнительного анализа культуры в Араратской равнине, северной Месопотамии, Анатолии, в Восточном Средиземноморье, Ираке и в древних культурах Кавказа в их динамическом развитии определены местные корни разбираемой культуры, его своеобраз-

ные черты и те определенные связи, которые существовали между памятниками Араратской равнины и Северной Месопотамии.



В этом глубоком историческом прошлом Армянское нагорье вошло в систему общего переднеазиатского развития и составило его неотделимую часть.

Радиоуглеродный и сравнительный методы датировки 1-го слоя Нахичеванской Кюль-тапы, Казаха, Шулавери, Мухан-Карабаха, Шамирамалти, Харберда, Малатии, Персидского нагорья, Северной Месопотамии, сопоставления всех данных этих памятников позволило нам заключить, что техутское поселение характерно для раннеземледельческого этапа Армянского нагорья, для второй половины V и первой половины IV тыс. до н. э. Что касается более конкретного периода его существования, то это—отрезок времени от 3800 до 3600 гг.



Տ Ա. Խ Տ Ա. Կ Ն Ե Ր




Տախտ. I. Քեղուտի կայծքարի և վանակատե ցլեփված քարե արտադրանքների նմուշներ:




Տախտ. II. Գետաբարեից պատրաստված գործիքները:




Տախտ. III. Թեղուաի ոսկրե գործիքներ:




Տախտ. IV. Հասարակ ավազախառն կավաշաղախից պատրաստված խեցանոթներ:









Տախ. V. Հասարակ խեցեղենի նմուշներ:




Տախտ. VI. Հարդախանն կավաշաղախից պատրաստված խեցեղեն:




Տախտ. VII. Քաներ:



Տախտ. VIII. Համեմատարար մաքուր կավաշաղախից պատրաստված խեցեղեն:




1



0 3

3



0 5




2



0 3

4

Տախտ. IX. Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենը հիշեցնող նմուշներ:



Տախտ. X. Գունազարդ խեցանոթների բեկորներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Է. Վ. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երեւան, 1967:
- Զ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան, Հայաստանի էնեոլիթյան մշակույթի մեկնաբանման հարցի շուրջ, «Լրաբեր» 1967 թ. № 3:
- Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, I հատոր, Երեւան, 1931:
- Ս. Մարգարյան, Նախնադարյան համայնական հասարակարգը Հայաստանում, Երեւան, 1967:
- Օ. Ա. Абибулаев, Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани в 1955 г., МИА, № 67, 1958.
- Օ. Ա. Абибулаев, Археологические раскопки в Кюль-тепе, Баку, 1959.
- Օ. Ա. Абибулаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, СА, № 3, 1963.
- Ա. Т. Асланян, Региональная геология Армении, Ереван, 1958.
- Ս. С. Бальян, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1963.
- Ե. Байбуртян, Культовый очаг из раскопок Шенгавитского поселения, ВДИ, № 4, 1938.
- Н. И. Вавилов, Центры происхождения культурных растений, М—Л., 1936.
- Я. И. Гумель, Раскопки Нагорно-Карабахской автономной области, 1938 г., Изв. Аз. ФАН СССР, № 4.
- Я. И. Гумель, Из памятников материальной культуры древнего Азербайджана, ВДИ, № 1, 1940.
- Я. И. Гумель, Археологические работы в районах Азербайджанской ССР. Изв. ФАН СССР, № 3, 1939.
- Օ. Մ. Джапаридзе, А. И. Джавахашвили, Результаты работ Квемо-Картлийской археологической экспедиции, 1967, Вестник отд. общ. наук Груз. ССР.
- Ս. Ս. Ефименко. Неолитический Мерсин, СА, 1959, № 1.
- Ա. Ա. Иессен. Кавказ и Древний Восток в IV—III тыс. до н. э., Краткие сообщения, № 93.
- Ա. Ա. Иессен Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, № 125, 1965
- Ա. Ա. Иессен, К вопросу о древней металлургии меди на Кавказе, ИГАИМК вып. 120, 1935.
- Կ. Խ. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Л., 1970.
- Բ. Ա. Куфтин, Проблемы энеолита внутренней Картли и Юго-Осетии, ВМГ XIV, В 1945.
- Ա. Ա. Луконин, Неолитическое селище Кистрик близ Гудаут, СА, XI, 1949.
- Վ. Մ. Массон, От возникновения земледелия до сложения раннеклассового общества, Доклады и сообщения археологов СССР, VII Международный конгресс, 1966.
- Վ. Մ. Массон, Средняя Азия и Древний Восток, М.—Л., 1964.
- Վ. Մ. Массон, Новые раскопки на Джейтуне и Кара-тепе, СА, № 3, 1962.
- Վ. Մ. Массон, Энеолит южных областей Средней Азии, Археология СССР, Свод археологических источников, М., Вып. А, 196(5).
- Ա. Ա. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.
- Ա. Ա. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961.

- Р. М. Мунчаев**, Каякентское поселение и проблема Кавказского энеолита, СА, № XXII, 1955.
- Р. М. Мунчаев**, Древнейшая культура северо-восточного Кавказа, МИА, № 100.
- И. Г. Нариманов, Г. С. Исмаилов**, Акстафачайские поселения близ г. Казах, СА, № 4, 1962.
- И. Г. Нариманов**, Археологические исследования поселения Шому-тепе в 1963 г., Археологические исследования в Азербайджане (сборник статей), Баку, 1965.
- Т. С. Пассек**, Первые земледельцы, сборник «По следам древних культур», М., 1951.
- И. Р. Селимханов, Р. М. Торосян**, К определению энеолита Армении, ИФЖ, № 1, 1966.
- И. Р. Селимханов, Р. М. Торосян**, Металлографический анализ древнейших металлов в Закавказье, СА, 1969, № 3.
- И. Р. Селимханов, И. Р. Марешал**, О ранних этапах древней металлургии меди на территории Европы и Кавказа в свете новых понятий и результатов анализа, VII Международный конгресс. Доклады советских археологов, М., 1966.
- Л. И. Соловьева**, Селище текстильной керамики на побережье западной Грузии, СА, XIV, 1950.
- В. И. Сариниди**, Памятники позднего энеолита юго-восточной Туркмении, Археология СССР. Свод археологических источников, М., вып. 3—8, 1965.
- В. И. Сариниди**, Некоторые вопросы древней архитектуры энеолитических поселений Геоксурского оазиса, КСИА, № 91, 1962.
- А. А. Формозов**, Неолит и энеолит северо-западного Кавказа в свете новых исследований, СА, № 3, 1964.
- И. Н. Хлопин**, Геоксурская группа поселения эпохи энеолита, М.—Л., 1964.
- Г. Чайлд**, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956.
- K. Bittel**—Archeologische Funda aus der Turkey, 1934, 1938, 1939.
- W. Belk**—Zeitschrift für Ethnologie, Verhandlugen 1899, 1900, 1902.
- G. H. Brown**—Prehistoric Pottery from the Antitaurus, Anatolian Studies vol. XVII, 1967.
- R. J. Braidwood, B. Howe et other.**—Prehistoric Investigations in Iradi Kurdistan, Studies of Oriental Civilizations No 31. Chicago, 1960.
- R. J. Braidwood, and L. S. Braidwood**—Excavations in the Plain of Antioch, I. O. L. P, London 1960.
- R. J. Braidwood**—The Earliest Village Materials of Syro—Cilicia, P. P. S. 1956.
- B. Brown**—Excavations in Azarbaijan, London, 1948.
- C. Burney**—Eastern Anatolia in Chalcoletic ane Early Bronze Age, Anatolian Studies, vol. VIII, 1958.
- D. Caton—Thompson et E. W. Gardner**—The Desert Fayum, London, 1934.
- R. H. Dyson, G. Young**—The Solduz Valley, Iran: Pisdeli Tepe, Antiquity 1960, No 133.
- W. Ehrich**—Chronologies in Old World Archeology, London, 1965.
- D. H. French**—The Prehistoric Cities of Geok-su Valley, Anatolian Studies vol. XIII, 1963.
- J. Garstang**—Prehistoric Mersin, Oxford, 1953.
- R. Ghirshman**—Foules de Stalk, vol. I, Paris, 1938.
- D. A. E. Garrod**—The Natufian Culture, The life and Economy of a Mesolethic People in the Near East.-Proceéding of the British Academy, vol. XLIII, 1957.
- A. A. Jenny**—Schamiramalti, Prehistorische Zeitschrift NoXIX, в. 1928.
- K. M. Kenyon**—Jericho and its Setting in Near Eastern History, Antiquity No 120, 1956.
- K. M. Kenyon**—Earliest Jericho.-Antiquity, No 129, 1959.
- S. Lloyd, F. Safar**—Tell-Hassuna: Excavations by the Iraqi Government Directorate General of Antiquities in 1943 and 1944, Journal of Near Eastern Studies vol. IX. № 4, Chicago, 1945,
- M. E. Mallowan, J. C. Rose**—Prehistoric. Assyria, The Excavations at Tel-Arpachiyah, London, 1935.
- M. E. Mallowan**—Early Mesopotamia and Iran, London, 1965.

- J. Mellaart**—Earliest Civilizations of the Near East, London, 1965.
- J. Mellaart**—Excavations at Hacilar,-Anatolian Studies vol. VIII. 1958.
- J. Mellaart**—Excavations at Hacilar,-Anatolian Studies vol. IX. 1959.
- J. Mellaart**—Excavations at Hacilar,-Anatolian Studies vol, X. 1960.
- J. Mellaart**—Excavations at Hacilar,-Anatolian Studies vol. XI. 1961.
- J. Mellaart**—Excavations at Catal Hüyük,-Anatolian Studies vol. XII, 1962.
- J. Mellaart** Excavations at Catal Hüyük,-Anatolian Studies. vol. XIII, 1963.
- J. Mellaart**—Excavations at Catal Hüyük,-Anatolian Studies. vol. XIV, 1964.
- J. de Morgan**—La Préhistoire Orientale, t. III, Paris, 1927.
- J. du Plat Taylor et others**—The Excavations at Sakce Gözü, Iraq XII, 1950.
- K. Portington**—Origins and Development of Applied Chemistry, London, 1935.
- V. Oppenheim**—Tell-Halaf, Berlin, 1943.
- L. Perkins** —The Comparative Archeology of Early Mesopotamia, Chicago. 1960.
- E. B. Reily**—Tilkitepedereki K. Kazılar, 1937. Türk Tarich Arkeologya Ve Etnografya Dezgesi IV, 1940.
- E. F. Schmidt**—Tepe Hisaar, Excavations, 1933, vol. XXIII.
- A. Steensberg**—A Bronze Age Art-Type from Hama in Syria, entered for Rope-Trac-tion. Berytus Archeological Studies vol. XV, 1964.
- A. Tobler**—Excavations at Tepe Gawrah II, Philadelphia, 1950.

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էնեոլիթի պրոբլեմը Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում	5
Արարատյան դաշտի բնա-կլիմայական պայմանները	17
Թեղուտի բնակատեղին	21
Աշխատանքային գործիքներ	44
Քարե առարկաներ	44
Ոսկրե առարկաներ	56
Մետաղե առարկաներ	60
Խեցեգործություն	67
Խեցեղեն առարկաներ	72
Ավազախառն խեցեղեն	72
Հարդախառն խեցեղեն	83
Համեմատաբար մաքուր կավաշաղախ ունեցող խեցեղեն	90
Մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենը հիշեցնող նմուշներ	92
Հյուսիսարևելյան և գործվածքի հետքեր կրող խեցեղեն	94
Գունազարդ խեցեղեն	100
Տնտեսություն	
Երկրագործություն	106
Անասնապահություն	108
Տնտեսության այլ ճյուղեր	
Ջուլհակություն, մանածագործություն, խսիրագործություն	109
Հայաստանի պղնձեքարեդարյան մշակույթի տեղը և նրա ժամանակագրման հարցերը	114
Раннеземледельческое поселение Техута (IV тыс. до н. э.) (резюме)	126
Տախտակներ	130
Գրականության ցանկ	140

ՌԱՖԻԿ ՄԱՆՈՒԿԻ ԹՈՐՈՍՅԱՆ
РАФИК МАНУКОВИЧ ТОРОСЯН

ԹԵՂՈՒՏԻ ՎԱՂ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
ննագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հրատարակչական խմբագիր Հ. Գ. ՀԱԿՈՐՅԱՆ
Նկարիչ Գ. Ի. ՆԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓՂԱՆՅԱՆ
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈՐՅԱՆ

ՎՖ 06537

Պատվեր 933

Հրատ. 4259

Տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 22/V 1975 թ., ստորագրված է տպագրության 4/V 1976 թ.:
Տպագրական 9,0 մամուլ, հրատ. 10,1 մամուլ, պայման. 12,6 մամուլ, թուղթ № 1, 70×108¹/₁₆:
Գինը 86 կոպեկ:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24.

Издательство АН Армянской ССР, Ереван-19, Барекамутян 24

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան